

2469

2470

1968-1969

1968-1969

1968-1969

1968-1969

1968-1969

1968-1969

84

U-63



ԳԵՂՏՆԻՔ ԲԱԲԵՂԻ


ՔԱՂՏԵԻՔ ԲԱՐԵՁԻ

ՀԵՂԻՆԱԿ

ԷՕԺԷՆ ՍԻԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Երրորդ հատոր

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԼԱՆ

ՋՄԲԲԵՆԵԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԼԱՆ

1869

ՎԶՎՎՄՎ ԳՎԾՇ ԼՄԳ

124444 240200

440 550

124444 240200

124444 240200

124444 240200

124444 240200

1800

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Բ Ա Ր Ի Զ Ի

ԳԼՈՒԽ Ա.

ՆԱՄԱՆ

ՊՈՒԳՎԱԼԻ ազարակին ժամացոյցը առաւօտեան ժամը ինը կը զարնէր, երբ տիկին ծօրժ ֆլէօր-տը-Մարիի սենեակը կանացուկ մը մտաւ : Նորաստի օրիորդին քունն այնքան թեթեւ էր որ իսկոյն արթնցաւ : Չմերայնի պայծառ արեւի մը ճառագայթները շերտադոյրներէն և վարդագոյն պաստառով պարսիկ կերպամէ վարագոյրներէն անցնելով՝ լա կուսէօղին խցին մէջ կարմրուն թոյր մը կը սրբուէին և իր գունատ ու անուշ երեսին կ'ընծայէին փայլ մ'որով 'ի քնէ զուրկ էր :

— Լա՛ւ ուրեմն, աղջիկս— ըսաւ տիկին ծօրժ դեռհաս օրիորդին անկողնին վրայ նստելով և անոր ճակտէն համբուրելով — Ի՞նչպէս ես :

— Աւելի աղէկ եմ, տիկին... շորհակալ եմ քեզ... :

— Այս առտու շատ կանուխ չարթնցա՞ր :

— Չէ՛, տիկին... :

— Աղէ՛կ նշան է : Այն թշուառ կոյրն և իր օրդին, որոց շերէկ այս տեղ օթեան սուխնք, այգուն ազարակէն մեկնիլ ուզեցին, վախցայ որ գուներուն բացուելու ժամանակը եղած աղմկէն չարթնասա... :

— Խղճալի մարդի՛կ, ինչու համար այսպէս շուտով երթալու ելան :

— Չգիտեմ, երէկ իրկուն, տեսնելով որ քիչ մը հանդիստ ես, խոհանոցն իջայ զանոնք տեսնելու. բայց կ'երևի թէ այնքան յոգներ էին որ կանուխիկէ հանդստանալու հրաման ինդրեր են : Լայր Ըագ-

լէն ըսաւ որ կայրը քիչ մը փակուել է և մեր բոլոր սպասաւորները զարմացեր մնացեր են աղուն հօրը տարած սիրալիր ինամոց վրայ : Բայց , բան մ'ըսեմ , Մարի , փորը ինչ ջերմէ բռնեց , չեմ ուզեր որ այսօր ցրտին դուրս ելնես , սրահը պիտի նստիս :

— Տիկին , ներէ ինձ , այս իրկուն ժամը հինգին երիցատուն երթալու պարտաւոր եմ , տէր հայրը ինձ պիտի սպասէ :

— Ահա այդ անխոհեմութիւն է . ստոյգ եմ որ անհանդարտ գիշեր մ'անցուցիր , աչերդ կտրած են , աղէկ քնացած չես :

— Իբրա է . . . նորէն ահռելի երայներ տեսայ : Նորէն երեւցաւ ինձ այն կինն որ մանկութեանս ատեն զիս տանջեց . ընդոտ արթնցայ ահ ու զողով . . . ծաղրելի տկարութիւն մ'է այս որմէ կ'աւճեմ :

— Իսկ ես այդ տկարութենէդ կը վշտանամ , որովհետեւ քեզ ցաւ կը սրտածառէ , խեղճ աղջիկ . — ըսաւ տիկին ծօրժողորմիկ հողասիրութեամբ մը՝ երբ տեսաւ որ լա կուպէօզին աչերն արտասուքով կը լեցուին :

Ֆլէօր-ար-Մարի իր մայրադորով տիկին ծօրժին վզին փարելով՝ երեսը անոր ծոցը պահեց :

— Տէր Աստուած , ի՞նչ ունիս , Մարի , սիրաս թունաւ կը հանես . . . :

— Ներէ՛ , տիկին , բայց չգիտեմ թէ ինչ սրտածառա երկու օրէ վեր ատեն ատեն սիրաս կը ճնջուի . . . : Չուզելով աչերս արտասուքով կը լեցուին . . . սե սե նախագղածութիւններ ունիմ . . . : Այնպէս մը կ'երեւի ինձ որ զլսիս փորձանք մը պիտի գայ . . . :

— Մարի . . . Մարի . . . քեզ պիտի սպասեմ թէ որ այդպիսի երեւակայական արհաւիրքով պաշարուիս :

Նոյն միջոցին Գլօտին ներս մտաւ , դուրը զարնէն ետեւ :

— Ի՞նչ կուզես , Գլօտին :

— Տի՛րուհիս , Բիէր Արնուվիլէն եկաւ տիկին Տիւպրէօյլի երկանխով . այս նամակը բերաւ ձեզի համար , և ըսաւ թէ շատ ըստիպողական է :

Տիկին ծօրժ հետեւեալը կարգաց բարձրաձայն .

— Եւ մ' սիրելի տիկին ծօրժ , մեծ շնորհ մը պիտի ընես և մեծ հնչնուքէ մը պիտի ազատես զիս եթէ հիմակ ազարակը գաս : Բիէր պատրաստ է քեզ առնելու և կէսօրէն ետեւ նորէն դարձնելու : Իբրա որ խելքըս վրախ չէ և որու գիմեմ չգիտեմ : Պ . Տիւպրէօյլ Բօնդուազ կը գանուի իր ասրները ծախելու համար : Ուստի քեզ և Մարիին կը գիմեմ : Գլարան իր փոքրիկ քոյրը սիրով կը համբուրէ և անոր կ'սպասէ անհամբեր : Զանա ժամը տասն մէկին գալ ճաշելու համար :

— Բու անկեղծ բարեկամուհի Տի՛րուհի Տիւպրէօյլ կինն . . .

— Արդեօք ի՞նչ կայ , — ըսաւ տիկին ծօրժ Ֆլէօր-ար-Մարիին : — Բարեբաղդօրէն տիկին Տիւպրէօյլի գրին ոճը ձախորդ բան մը չցուցներ . . . :

— Ես ալ քեզի հետ պիտի դամ , տիկին , — հարցոյց ըսաւ կուպէօզ :

— Գարդ խոհեմութիւն չէ , ինչու որ սաստիկ ցուրտ է . Բայց

— վրայ բերաւ տիկին ծօրժ — կարելի է որ բաց օդը քեզ սփոփէ թէ որ աղէկ մը ծածկուիս , այս փոքրիկ ճամբորդութիւնը կարելի է օգտակար ըլլայ քեզ . . . :

— Բայց , տիկին — ըսաւ լա կուպէօզ մտածելով — պատուելի երէցը այս իրկուն ժամը հինգին երիցատունը պիտի սպասէ ինձ :

— Իրաւունք ունիս . հինգէն առաջ կը դառնանք , խօսք կտամ քեզ :

— Ո՛հ , շնորհակալ եմ , տիկին , որ չափ գոհ պիտի ըլլամ օրիորդ Գլարան նորէն տեսնելով . . . :

— Գարձեալ — ըսաւ տիկին ծօրժ յանդիմանական անուշ ձայնով մը — դարձեալ քեզ Գլարա կըսես . . . միթէ նա օրիորդ Մարի կը կոչէ քեզ :

— Ո՛չ , տիկին . . . պատասխան տուաւ լա կուպէօզ աչերը վաթառնելով . — բայց ես . . . ես . . . :

— Գնէ՛, որ անդուծ զաւակ մ'ես որ լոկ ինքզինքդ կը տան-
ջես . արդէն մտցար քիչ մ'առաջ ըրած յանդիմանութիւններս .
գնա՛ շուտ և աղէկ մը հագուէ : Տանամէկէն առաջ Արնուվիլ կըր-
նանք հասնիլ :

Այս Գլոտինի հետ դուրս ելնելով՝ տիկին ժօրժ անոր ըսաւ .
— Թո՛ղ Բիէր պահ մը սպասէ , քանի մը ըոպէէն՝ պատրաստ
եմք երթալու :

Այս խօսակցութենէ կէս ժամ ետքը՝ տիկին ժօրժ և Ֆլէօր-տը-
-Վարի՛ Բարիւն շրջակայից հարուստ հողատէրներուն գործածած
տեսակ մը մեծկակ երկանիւ մը կը հեծնէին : Շատ չանցաւ այս կառքն՝
որուն լծեր էին հուժկու ձի մը , և կառավարն էր Բիէր , արա-
գօրէն սահել սկսաւ Պոզ վալէն Արնուվիլ տանող դալարուածամ-
բուն վրայ : Սոյն գեղին մէջ Պ . Տեւպրէօյլ բանել տուած ազա-
րակին ընդարձակ շէնքերն ու մօտակայ հողերն այս փառաւոր կալ-
ուածքին կարեւորութիւնը կը յայտնէին , զոր օրիորդ Աէզարին տը
Նուարմօն իբր օժիտ բերեր էր Պ . տը Լիւսնէյ դքսին :

Բիէրին մորակին շառաչանէն տիկին Տիւպրէօյլ Ֆլէօր-տը-
Վարիին և տիկին ժօրժին գալուստն իմացաւ : Ասոնք կառքէն իջ-
նելով սիրալիր ընդունելութիւն մը գտան ազարակին տիրուհիին և
իր դստեր կողմէն : Տիկին Տիւպրէօյլ շուրջ յիսուն տարու էր .
էր գծագրութիւնն էր անուշ և մարդասէր . իր աղջիկը՝ խաժակն
ու կարմրայտ օրիորդ մը , թուիլ դէմք ունէր որ անմեղութիւն և
բարեսրտութիւն կը բաւէր : Երբ Գլարա իր բարեկամուհիին վրէժն ըն-
կաւ , լա Վուալէօյլ զարմանօք դիտեց որ նա ևս գեղջական հա-
զուստ հագեր է փոխանակ իբր օրիորդ հագուելու :

— Ի՞նչ , դու ալ Գլարա , դու ալ իբր գեղջուհի ծայտեալ ես
— ըսաւ տիկին ժօրժ դեռ հաս օրիորդը համբուրելով :

— Սիթէ պէտք չէ՞ որ ամէն բանի մէջ իր Մարի քրոջն հետեի
— ըսաւ տիկին Տիւպրէօյլ . — Սիրտը չճանդարտեցաւ մինչև որ
բոլ Մարիի պէս ինքն ալ իր չախայէ վտաւակը (casaquin) և

հաստ բանալակէ շրջազգեստը չունեցաւ . . . : Բայց խնդիրն , իմ
սիրելի տիկին ժօրժ . այս փոքրիկ օրիորդներուն խելքին փչած հա-
զատին վրայ չէ՛ — ըսաւ տիկին Տիւպրէօյլ հառաչելով — Եկո՛ւք
քեզի պատմեմ իմ հնհնուքս :

Գլարա՛ իր մօրն ու տիկին ժօրժին հետ սրահը հասնելուն՝ Ֆլե-
լէօր-տը-Վարիին քովը նստաւ , կրակին մօտ ամենէն աղւոր տեղը
անոր տուաւ , բիւրաւոր ինամբ վատնեց , անոր ձեռներն իրեննե-
րուն մէջ սեղմեց տաքցնելու համար , նորէն համբուրեց , և զանի
իր չարածձի փոքրիկ քոյրն անուանեց և մեղմիկ յանդիմանութիւն-
ներ ուղղեց անոր իրեն ուշիկէլ այցելութիւն ընելուն համար . . . : Ե-
թէ ընթերցողը խեղճ լա Վուալէօյլն և երէցին մէջ անցած խօսակ-
ցութիւնը յիշէ , անշուշտ պիտի հասկնայ որ Ֆլէօր-տը-Վարի
բարեկամուհիին քնքուշ և ուշիմ զգուանքը խնդալիր ու վեհերոս
խոնարհութեամբ մը պիտի ընդունէր :

— Ի՞նչ է հողդ , իմ սիրելի տիկին Տիւպրէօյլ — ըսաւ տիկին
ժօրժ — Ի՞նչ ծառայութիւն կընամ ընել քեզի :

— Տէր Աստուած , խիստ մեծ ծառայութիւն մը : Քեզի բանը
պատմեմ : Կարծեմ չզիտես որ այս ազարակը տը Լիւսնէյ դքսու-
հիին յատուկ կալուածքն է : Մեր գործն ուղղակի անոր հետն է
. . . և դքսին վերատեսչին հետ յարաբերութիւն չունինք :

— Իբօք , այդ պարագան չէի դիտեր :

— Հիմակ կ'իմանաս թէ ինչո՞ւ համար այս կէտը քեզ կը յայտ-
նեմ . . . : Հետեւապէս դքսուհիին , կամ իր ատաշին սենեկապանուհի
տիկին Սիմօնին կը վճարենք մեր հողատոյթը : Դքսուհին այնքան
բարի , այնքան բարի է , թէ և քիչ մը վաւժոււն , որ ճշմարիտ
բերկրութիւն մ'է անոր հետ յարաբերութիւն ունենալը . Տիւպ-
րէօյլ և ես անոր սիրուն համար ծովը կը նետուինք . . . : Եւ իրա-
ւի , զարմանալի չէ այս , դքսուհին փոքրիկ աղջիկ մ'էր երբ իր հօ-
րը հանդուցեալ Նուարմօն իշխանին հետ այս տեղ կըլար . . . : Մօ-
տերս վեցամսեայ հողատոյթը կանխիկ ուղեց . . . քառսուն հազար ֆը-
անքի գումար մ'որ , ինչպէս որ կըսեն , միշտ ձեռքի տակ չգտնուիր
. . . բայց սոյն գումարը , մեր Գլարային օժիտը , պահունի ունե-

ինք , և օր չանցած դքսուհին իր ստակը՝ կլորիկ ոսկիի ձևով ստա-
յաւ . . . : Է՛հ , այս մեծ աիկիններն որչափ ձոխութիւն ընելու պէտք
ունին . . . : Սակայն տարիէ մ'ի վեր է միայն որ դքսուհին հողա-
սոյթները ճիշտ պայմանաժամին կը փնտռէ . կարծես թէ ասոն
մը ստրկի պէտք չունէր . . . բայց հիմակ բոլորովին տարբեր է :

— Գեռ չկրցայ հասկնալ , սիրելի տիկին Տիւպրէօյլ , թէ ի՞նչ
բանի մէջ կարող եմ նրաստել քեզ :

— Հիմա՛կ , հիմակ պիտի ըսեմ . այս բաներս պատմելով ուղեցի
հասկցնել քեզ որ դքսուհին մեր վրայ կատարեալ վստահութիւն
ունի . . . : Թո՛ղ թէ տասներկու , տասներեք տարեկան եղած ա-
տենն ինքը Գլարախ կնքամայրն ու հայրը կնքահայր եղաւ . . . և ա-
նոր շատ բարիք ըրաւ . . . : Աւտի երէկ իրիւն սուրհանդակ մը
կըլայ և ինձի սա նամակը կը բերէ դքսուհին կողմէն :

« Իմ սիրելի տիկին Տիւպրէօյլ , պէտք է սնարասմա՛տ՝ վաղը չէ
միւս օր իրիկունը մրդաստանի փոքրիկ տաղաւարը (pavillon) բնա-
կուելու վիճակի մէջ դրուէ՛ . կարեւոր կահ կարասիներ , գորգ , վա-
ջադոյր են . են . այն տեղ փոխադրել տուր : Աւրջապէս բան մը
չպակսի և մանաւանդ՝ կարելի եղածին չափ դիւրատուր (confor-
table) ըլլայ . . . »

— Գիւրադուր , կը լսե՞ս , տիկին Թօրթ , և բառն ալ ստորա-
դժեալ է — ըսաւ տիկին Տիւպրէօյլ , մտախոհ և շիւթ գէմքով մը
իբ բարեկամահին նայելով , ապա շարունակեց :

« Գիշեր ցերեկ կրակ վառել տուր տաղաւարին մէջ խոնաւութիւ-
նը փարատելու համար . վստն զի բաւական ժամանակ կայ որ հոն
մարդ բնակած չունի : Այն տեղ նստելու համար եկող անձին հետ
պիտի վարուիս ինչպէս կը վարուիս ինձի հետ . նոյն անձը նամակ մը
պիտի յանձնէ քեզ և անկից կը հասկնաս թէ քու բարեսէր եռանդէդ
է՛նչ կ'սպասեմ : Նորէն կը վստահիմ՝ քու եռանդիդ և յուսամ՝ որ
զեւ չես մեղադրեր . դիտեմ՝ թէ որչափ բարի ես և անձնուէր : Մը-
նաս բարե , իմ սիրելի տիկին Տիւպրէօյլ : Համբուրէ իմ կողմէս սի-
րուն սանս և հաւատա իմ սիրայիբ զգացումներուս :

ՆՈՒԱՐՄՕՅ ՏԸ ԼԻՒՍՆԵՅՑ

« Յ . Գ . Անարկած անձս միւս օր իրիկունը պիտի գայ : Մի մտա-
նար մանաւանդ , կաղաչեմ , տաղաւարը ըստ կարի գիւրադուր
բնելու : »

— Գիւրադուր , կը սուսնես , նորէն այս շուտիկ ներադժեալ բա-
նը — ըսաւ Տիւպրէօյլ տիկինը գրպանը դնելով ձիւնէյ դքսուհին
դիրը :

— Լա՛ւ , խիստ պարզ կը գտնեմ ինդիբը — վրայ բերաւ տիկին
Թօրթ :

— Ինչպէ՞ս , պա՛րզ մի . . . : Աւրեմն մտիկ չըրիր . դքսուհին յատ-
կապէս կ'ապագրէ որ տաղաւարը ըստ կարի գիւրադուր ըլլայ . ահա
ասոր համար աղաչեցի քեզ որ դաս : Գլարախն հետ արիւն քրտինք
թափեցինք գիւրադուր բառին իմաստը ըմբռնելու և չյաջողեցանք . . . :
Թէպէտեւ Գլարան Ալիլէ-լը-Պէլի զիշերօթիկ վարժարանը գացած
է և չգիտեմ՝ քանի անգամ պատմութեան և աշխարհագրութեան հա-
մալ միջանակ առած է . . . լա՛ւ , արի՛ տես որ այս նորալուր բառը
մեկնելու համար իզնէ աւելի բան չգիտեր . անշուշտ պալատի կամ
բարձր ընկերութեան յատուկ բառ մ'է . . . : Բայց ինչ և է , կրնաս
մտաբերել թէ քանի դժուարին գործ է . դքսուհին յատկապէս կը
խնդրէ որ տաղաւարը գիւրադուր ըլլայ , այն բառը կը ներադժէ ,
երկու անգամ կը կրկնէ և մեկը չգիտենք թէ ի՛նչ ըսել կուզէ :

— Փա՛րք Աստուծոյ , այս մեծ գաղտնիքը կրնամ բացատրել քիչ
— ըսաւ տիկին Թօրթ ժպտելով — այս պարագայիս մէջ գիւրադուր
բառը կը նշանակէ կոկիկ , աղէկ շտկում , դոյ տաքուկ սենեակ մը ,
մէկ խօսքով բնակարան մ'ուր ամէն պէտք եղած՝ նոյն իսկ աւերդ
բաներ կը գտնուին . . .

— Ա՛հ , տէր Աստուած . հիմակ հասկցայ , բայց հոգս ա՛լ աւելի
մեծ է :

— Ի՞նչ պատճառաւ :

— Դքսուհին օթոյնի , կարասիի և ուրիշ շատ մը և այլ բաներու
վրայ կը խօսի . բայց այս տեղ օթոց չունինք . մեր կահ կարասին շատ
հասարակ բաներ են , և ասկից դատ չգիտեմ թէ պոյիք հիւրն սպաւն

մ'է թէ ոչ տիկին մը , և վաղն իրկուն հարկ է որ ամէն բան կազմու պատրաստ ըլլայ . . . : Ի՞նչ ընելու է , ի՞նչ ընելու է , այս տեղ չորս կողմն ծով կտրած է : Իրաւ որ տիկին ծօրծ , խելքս գլխէս պիտի թոխի հիմակ :

— Բայց , մայրիկ — ըսաւ Գլարա — Միթէ՞ հնարը չկայ որ իմ սենեկին կարասին առնես և ես ալ մինչև որ ամէն բան իր տեղը գայ երթամ երեք չորս օր Մարիին հետ Պուզվալ անցնեմ :

— Սենեակդ մի , սենեակդ , զաւակս , ի՞նչ ունիս — ըսաւ տիկին Տիւպրէօյլ ուսերը վեր վերցնելով . — միթէ բաւական . . . բաւական քիչ-բարոք են . . . : Աստուած իմ , Աստուած իմ , ինչպէս ալ կը հնարեն այսպիսի բառեր :

— Աւրեմն այն տաղաւարն ընդհանրապէս անբնակ է — հարցուց տիկին ծօրծ :

— Անշուշտ սա փոքրիկ սպիտակ տունն է՝ միայնակ մըդաստանին ծայրը : Իշխանը դքսուհին համար շինել տուաւ , երբ տապալին օրիորդ էր . քանի իր հօրը հետ ազարակը դար այն տեղ հանգիստ կ'առնուր : Երէք հաս սիրուն սենեակներ ունի , պարտիկն ծայրը հէլլէտիական կաթնարան մը , ո՛ւր դքսուհին իր մանկութեան ատեն կը զուարճանար կաթ ծախելով : Իր ամուսնութենէ հետէ հազիւ թէ երկու անգամ ազարակը եկաւ , և ամէն անգամուն քանի մ'օր փոքրիկ տաղաւարին մէջ անցուց : Առաջին անգամ , ըսածս վեց տարի իայ , ձիով եկաւ բանին հետ . . . :

Ապա , որպէս թէ Գլէօր-տը-Մարիին և Գլարային ներկայութենէ խօսքը յառաջ տանելու կ'արդիլուի , տիկին Տիւպրէօյլ վրայ բերաւ :

— Բայց լեզու , լեզու կը թափեմ և բան մ'ըրած չունիմ . . . : Կաղաչեմ օգնէ ինձ , սիրելի տիկին ծօրծ , օգնէ ինձ այս դժուարին պարագայիս մէջ :

— Կարճ կ'սպենք , առաջ ըսէ ինձ թէ տաղաւարն ինչպէս շատ կուած է հիմակ . . . :

— Հազիւ թէ շտկուած է . սրահին մէջ դետինը փռած փրփրաթ մը , պրտուէ բազմոց մը , նոյն տեսակ թիկնաթոռներ , սեղան

մը և քանի մ'աթոռներ կան և ոչ այլ ինչ : Ինչպէս որ կը տեսնես այս վիճակին մէջ տաղաւարը շատ հեռու է դիւրատուր ըլլալէն :

— Լաւ ուրեմն , ես քու տեղդ դիտես ի՞նչ կընէի . ժամը տասն մէկ է , Բարեղ կը զըկէի ուշիմ մարդ մը :

— Մեր հոգատարը . . . ամենէն գործունեայն է :

— Սքանչելի՛ . . . շատ շատ երկու ժամուան մէջ Բարեղ կընայ հասնիլ . Ծօսէ — ա՛նպէսնի կամ որ և է գորգարարի մը խանութը կերթայ անոր կը յանձնէ ցուցակը զոր պիտի շինեմ տաղաւարին պակասը քննէլն ետև և կ'ապսպրէ , թող զինը չնայի . . . :

— Ա՛հ , անշուշտ . . . ստակին չեմ նայիր ալ , բաւական է որ դքսուհին գոհ ըլլայ . . . :

— Աւտի , ի՞նչ դին որ ուղեն թո՛ղ ապսպրէ , և ըսէ թէ ցանկին մէջ նշանակուած կարասիներն այս իրկուն կամ գիշերը պէտք է որ հոս դանուին , նոյնպէս քանի մը գործաւորներ որ ամէն բան կարգի դնեն :

— Կօնէսի կառքով կընան դալ . Բարեղէն երեկոյեան ժամը ութին ճամբայ կ'ելնէ . . . :

— Եւ քանի որ մինակ կարասիներ պիտի փոխադրեն , օթոցները պիտի դամեն , վարագուրները պիտի կախեն , վաղն իրկուն ամէն բան պատրաստ կընայ ըլլալ :

— Ա՛հ , իմ բարեսիրտ տիկին ծօրծ , ի՞նչ մեծ նեղութենէ կ'ազատես զիս . . . : Երբէք մտքէս անցնելիք չունէր ըսածդ . . . : Իմ Նախախնամութիւնս ես . . . հիմակ շնորհ ըրէ ցուցակը գրելու որ տաղաւարը . . . :

— Դիւրատուր ըլլայ . . . տարակոյս չկայ :

— Ա՛հ , Աստուած իմ , ուրիշ դժուարութիւն մ'ալ կայ . . . : Արդէն ըսի որ չգիտենք թէ դալիք հիւրը այր է թէ ոչ կին :

— Դքսուհին իր նամակին մէջ ա՛յ մը կըսէ , անորոշ բառ մ'է այս . . . :

— Սիրելի տիկին Տիւպրէօյլ , դու այնպէս գործդ կարգի գիր որպէս թէ հիւրդ կին մ'է , եթէ այր ըլլայ , աւելի հանգիստ կը գտնէ :

— Իրաւունք ունիս . . . միշտ իրաւունք ունիս . . . :
Ազարակի սպասուհի մ'եկաւ և ըսաւ որ սեղանը պատրաստ է :

— Հիմակ ճաշի կը նստինք — ըսաւ տիկին ծօրժ , — բայց կա ընդ եղած բաները նշանակելու առենս , դու գնա երեք սենեակներու ընդ բարձրութիւնն ու տարածութիւնը չափէ որպէս զի վարադոյրներն ու դորդերը կանխաւ գնեն :

— Ա'ւ , լա'ւ . . . երթամ շուտ պէտք եղածը սրատուիրեմ մեր հոլատարին :

— Տիրուհիս — վրայ բերաւ սպասուհին — Սղէնսի կաթնահէն ալ վարը կ'սպասէ . իր բոշոր տունը տեղը իշաւար փոքրիկ այլ լակ մ'է . . . մաս որ . . . իր տունը շատ ծանր չէ :

— Թշուառ կին . . . — ըսաւ տիկին Տիւպրէօյլ զթալով :

— Ա'վ է այն կինն — հարցոց տիկին ծօրժ :

— Սղէնսի գեղջուհի մ'է , որ չորս կով ունէր և ամէն աւտու Բարիզ երթալով իր կաթը կը ծախէր ու կ'ապրէր : Իր էրիկն ալ սրայտար մ'էր . օր մ'երկաթ գնելու համար կնիկն հետ Բարիզ կ'իջնէ . և կըսէ թէ իր գործը լմացներէն ետեւ պիտի դայ զինքը սովորաբար կաթ ծախած փողոցէն առնէ և վերադառնայ : Գէշն այն էր որ երեքսանի կաթնուհին անպիտան թաղ մը կ'յաճատէր : իր առտուուն ընելու համար : Երբ իր էրիկը կը դառնայ կը նայի որ կինը քանի մ'ապերատ գինովներու հետ կուտի բռնուեր է , վասն զի իր կաթը չարակամութեամբ գետը թափեր էին : Գարբինը անոնց խօսք հասկնելու կ'աշխատի , սակայն ծեծը կուտէ և ինքզինքը պաշտպանելու ատեն կուտին ատենը դանակի հարուած մը կ'ընդունի և գետինը անշունչ կը վառուի կը մեռնի :

— Ա'հ , ինչ սոսկալի բան . . . — դուչեց տիկին ծօրժ : — Արդեօք մարդաստանը ձեռք ընկաւ :

— Գժբարդօրէն գեռ չգտան : Խառնակութեան ատեն խոյս տուեր է . խղճալի որբւարին կը պնդէ թէ զանի կը ճանչէ , որովհետեւ ստէպ իր ընկերներուն հետ տեսեր է , որ նոյն թաղին բնիկներն են . բայց մինչև այսօր բոլոր խուզարկութիւններն սրբապի ելան : Մէկ խօսքով կաթնուհին իր էրկանը մահուանէն 'ի վեր իր կովերն և :

ուներցած բանի մը կտոր հողերը ծախելու ատիպուեցաւ այլ և այլ պարտքեր վճարելու համար . Սղէնսի գեղեկին տղարակասանն յատկապէս բարեխօս եղաւ իմ մօտ այս կնիկն մնային , իբր ընտիր , պարկեշտ թէև թշուառ արարած մը . ինչու որ երեք զաւակ ունի . և ամէնէն փոքրը տասն երկու տարու կայ չկայ . սարապ տեղ մը գըսանելով անոր տուի և հիմարեկեր է ազարակը հաստատուելու :

— Չեմ գարմանար այդ բարեգործութեանդ վրայ , սիրելի տիկին Տիւպրէօյլ :

— Ինչ նայէ , Գլարա — յարեց ազարակուհին — այն խեղճ կնիկն բնակարանը կ'երթա՞ս կը ցուցնես , մինչդեռ ես հողատարը գտնելով ապապրեմ որ Բարիզ գնալու պատրաստուի :

— Կերթամ , մայրիկ . Մարին ալ հետս պիտի գայ :

— Ի հարկէ , միթէ իրարմէ կրնա՞ք գատուիլ . — ըսաւ ազարակուհին :

— Իսկ ես — վրայ բերաւ տիկին ծօրժ սեղանի մ'առջև նստելով — ցուցակա շինելու սկսիմ որ ժամանակ չանցնի . որովհետեւ ժամը չորսին Գուգվալ գտնուիլ պէտք է :

— Ժամը չորսին . . . ինչո՞ւ այդչափ կ'արտօրաս — ըսաւ տիկին Տիւպրէօյլ :

— Այո' , պէտք է որ Մարին ժամը հինգին երկրատունը գտնուի :

— Ա'հ , թէ որ Լաբօրդ բարի երէցին համար է խօսք չունիմ . . . նուիրակա՞ն է . . . — ըսաւ տիկին Տիւպրէօյլ : — Աւրեմն երթամ ըստ այնմ պէտք եղած պատուէրները տամ . . . այս մեր զաւակներուն խօսքը չհասաւ . . . քիչ մը ժամանակ տանք անոնց որ քիչ մ'աւելի լեզու կարեն :

— Աւրեմն ժամը երեքին ճամբայ պիտի ելնենք , — իմ սիրելի տիկին Տիւպրէօյլ :

— Ճիշտ է . . . : Բայց որչափ չորհրդապարտ եմ քեզ . . . ինչպէ՞ս աղէկ մտածեցի քեզ օգնութեան կանչելու — ըսաւ տիկին Տիւպրէօյլ : — Ելեք նայիմ , Գլարա , ելեք , Մարի' . . . :

Միչդեռ տիկին ծօրժ կը դրէր , տիկին Տիւպրէօյլ մէկ կողմէն և երկու օրիորդներն միւս կողմէն դուրս ելան , Սղէնսի կաթնուհին դալուստն իմացնող սպասուհին հետ :

— Ո՞ր է այն խեղճ կինը— հարցուց Գլարա :

— Իր զաւակներուն, իր սայլակին և իշուկին հետ շտեմարաններուն բակը կը գտնուի, տիրուհիս :

— Մարի, հիմա պիտի տեսնես այն խեղճ կինն— ըսաւ Գլարա ա Առաջօղին թեւը բռնելով — որչափ դեղնած է և ինչ տխուր դէմք ունի իր որբեւորի սև սղովը : Աւերջին անգամ մայրս տեսնելու համար զայուն սիրտս կտոր կտոր եղաւ . իր էրկան վրայ խօսելով առատ արտասուք կը թափէր, և յանկարծ արտասուքը կը դադրէր և մարդասպանին դէմ անհնարինս կը կատողէր : Այն ատեն . . . երկիւղ կ'ազդէր ինձ , այնչափ չար դէմք մը կ'առնէր , բայց այս ալ ըսելու է որ իր ատելութիւնը բնական է . . . թշուառ կին . . . որչափ խղճ ճախներ կան . . . այնպէ՞ս չէ, Մարի :

— Ո՛հ, այո՛, այո՛ . . . որչա՛փ . . . — պատասխան տուաւ լա Առաջօղ և անմտադիր երեւով մը հառաչեց : — Շատ թշուառ արարածներ կան , իրաւունք ունիս , օրիորդ :

— Ի՛հ, — գոչեց Գլարա անհամբերութեամբ ոտքը գետին զարնելով , — ահա նորէն զիս օրե՛րդ կը կոչես , բայց միթէ ինձի դէմ առնուած ես , Մարի :

— Ես առնուած ըլլամ, տէր Աստուած :

— Լա՛ւ ուրեմն , ինչու համար զիս օրե՛րդ կը կանչես . . . : Արդէն գիտես որ մայրս ու տիկին ծօրժ այդ բանին համար քեզ սաստեցին . . . : Ահա իմաց կտամ , եթէ նորէն այս խօսքը կրկնես , աչքդ չորս բայ , յանդիմանութիւն պիտի լսես :

— Գլարա՛, ներէ՛, միտքս ուրիշ տեղ էր :

— Միտքդ ուրիշ տեղ էր . . . երբ ութ ահադին օրէ ետեւ իրարու հետ կը տեսնուինք — ըսաւ Գլարա տրամագին . — միտքդ ուրիշ տեղ է . . . իմ միտքս ալ ուրիշ բանի կ'երթայ . բայց ո՛չ, ո՛չ կը սխալիմ . բան մ'ըսեմ , Մարի . . . քիչ քիչ պիտի կասկածիմ որ հպարտ աղջիկ մ'ես :

Ֆլէօր-տը-Մարի պատասխան չտուաւ իր բարեկամուհիին և դէմքը մեռելի գոյն առաւ . . . :

Որբեւորի սպառնալի կին մը զանի տեսնելով բարկութեան և սոսկուած մի աղաղակ մ'արձակեր էր :

Այս կինը կաթնուհին էր , որ ամէն առտու լա Առաջօղին կաթ կը ծախէր երբ սա օղորուհիին օթեանը կը բնակէր :

Մեր պատմելիք տեսարանն ազարակին մէկ դաւթին մէջ կ'անցնէր՝ նոյն միջոցին որ երկրպարծ ու սպասուհի աշխատանքէ կը դառնաւ : Սայլարանին տակ յին կէս օրուան ճաշն ընելու և ներկայ էին : Սայլարանին տակ կը տեսնուէր իշու լծուած սայլակ մ'որ որբեւորին աղքատիկ կարասին կը պարունակէր . տասներկու տարեկան մանչ մ'երկու աւելի փոքր տղոց օղնութեամբը սայլակը պարպելու սկսեր էր : Կաթնուհին բողբոջի սեւերու մէջ . շուրջ քառսուն տարուէր , և խոժու , առնական ու աներկիւղ դէմք մ'ունէր : արտեանուցը՝ նոր թափած արտասուքէն կարմրած կը թուէր : Երբ Ֆլէօր-տը-Մարին տեսաւ , նախ սոսկուած աղաղակ մը ձգեց , բայց անդէն վիշտը , սրտնալութիւնն ու բարկութիւնը երեսին գծերը կարկամեցին . լա Առաջօղին վրայ վաղեց լծեէն բռնեց կոշտաբար , և ազարակի մարդերունցոյց տայով պոռաց .

— Ահաասիկ թշուառական մ'որ իմ խեղճ էրկանս սպանիչը կը ճանչէ . . . քսան անգամ տեսեր եմ սոյն ոճրաղործին հետ խօսելը երբ Աիէյլ-Տրաբրի փողոցին մէկ անկիւնը կաթս կը ծախէի . ամէն առտու կ'ար ինչէ մէկ սուի կաթ գնելու : Պիտի գիտնայ անշուշտ թէ ո՞վ զարկաւ իմ էրիկս . ինքն ալ , իրեններուն պէս , աւազակներուն դասէն է . . . : Ո՛հ, ձեռքէս չպիտի պրծիս , անզգամ աղջիկ . . . — գոչեց կաթնուհին անիրաւ կասկածներով լիովին կատաղած և Ֆլէօր-տը-Մարիի միւս թեւը բռնեց , մինչդեռ նա գողրոջուն ու շուարած՝ խցս տալու կ'աշխատէր :

Գլարա՛ այս յեղակարծ յարձակումէն քար կտրելով՝ մինչ ցայն կէտ բառ մը չէր կրցեր ըսելու , բայց երբ տեսաւ որ որբեւորին աւելի ևս կը բռնանայ , անոր դարձաւ ու գոչեց :

— Բայց դու խեղճ ես . . . աղէտքդ քեզ կը մոլորցնէ . . . կը սխալիս . . . :

— Ե՛ս կը սխալիմ . . . յարեց գեղջուհին դառն հեղնութեամբ մը — Ի՛ս կը սխալիմ . . . ո՛հ, չէ , չէ . . . դու , նայէ՛, նայէ՛ ինչ-

պէս երեսը մնիկը դարձաւ . . . թշուա՛ն աղջիկ . . . ինչպէս ակն ա՛ն
 ներն իրարու կը դարնեն . . . : Գատաստանի ատենը քեզ խօսե՛
 լու պիտի ստիպէ , հիմա շուտով Գ . քաղաքապետին պիտի երթմանք
 միասին . . . կը լսե՛ս . . . : Է՛հ , պարսպ տեղ գէ՛մ մի կե՛նար . . .
 քաւական ուժեղ թաթ մ՛ռնիմ . . . թէ որ չըլլայ շալակս կ՛առնեմ կը
 տանիմ քեզ :

— Լըբենի՛ դու — դօշեց Գլարա մոլեղին — շուտ կորիւր ասկից
 . . . ինչպէ՛ս կը յանդգնես նախասեղ իմ բարեկամուհիս , իմ քոյրս :

— Քու քոյրդ . . . տիրուհիս , իրա՛ւ կըսես . . . ուրեմն դու ,
 դու ես խե՛նդը . — պատասխանեց որբեւորին բրտօրէն . — քու քոյրդ
 մե . . . փողօցի աղջիկ մ՛որ վեց շաբաթ շարունակ Միջնաքաղաքը
 կը տապալտրիէր :

Այս խօսքին վրայ՝ երկրագործներն սկսան մըմուտլ Ֆլէօր — տը —
 Մարիին գէ՛մ . բնականապէս կաթնուհիին կողմը կը բռնէին , քանի որ
 իրենց դասէն էր և անոր վշտակից կըլլային : Երէք տղաքը երենց
 մօրը ձայները լսելով անոր մօտ վազեցին , բոլորն սովին լալալին՝
 առանց անցած դարձածը հասկնալու : Այս փոքրիկ երեխաններուն տեւքն
 որ նոյնպէս սևեր հագեր էին , գեղացիներուն համակրութիւնն որ
 բեւարիին համար աւելցուց և Ֆլէօր — տը — Մարիին գէ՛մ իրենց սրբա-
 մտութիւնը սաստկացուց : Գլարա այս սրբանալից նշաններէն սոս-
 կալով աղարակին տարատօրնեբուն ըսաւ այլայլած ձայնով մը :

— Գո՛ւրս հանեցէք այս կինը . նորէն կըսեմ որ սրտին ցաւէն
 մեղրեեր է : Մարի՛ , Մարի՛ , ներէ՛ : Տէր Աստուած , այս յիմար
 կինն րբա՛ծը դրա՛ծը չգիտէ . . . :

Լա Աուպէօղ գլխիկը , անշարժ , քար կտրած , տժղոյն , և
 ոչ քայլ մը կառնուր կաթնուհիին բունն ձերբախալութենէ ազատե-
 լու համար : Գլարա կարծելով թէ իր բարեկամուհին այս տեսա-
 քանիս ազգած ա՛հ ու դողէն վճատեր է , նորէն մշակներուն ըսաւ :

— Միթէ չէ՞ք լսեր ըսածս : Ար հրամայեմ ձեզ որ այս կինն
 անմիջապէս վռնտեք . . . քանի որ անդադար նախատինք կը թափէ ,
 իր լըբութիւնը պատժելու համար , մօրս խոստացած պաշտօնը չպի-
 տի ունենայ : այսուհետև ուրքը չպիտի կոխէ մեր աղարակը :

Եւ ոչ երկրագործ մը տեղէն շարժեցաւ Գլարաի հրամանին հը-
 նազանդելու . անոնցմէ մէկը յանդգնեցաւ անդամ ըսելու :

— Իրա՛ւ որ . . . տիրուհիս , թէ որ իբօք փողօցի օրիորդ մ՛է
 և այս կնկան էրիկը սպաննողը կը ճանչէ . . . թող դայ դատաւորին
 առջև դորձը յայտնէ . . . :

— Նորէն կըսեմ որ երբէք աղարակը պիտի չմանկաւ — ըսաւ Գլ-
 արա կաթնուհիին — թէ որ կողտ ընթացքիդ համար օրիորդ Մարիէն
 ներում չիսնդրես :

— Ուրեմն զիս կը վռնտես , օրի՛որդ . . . խօսք չունիմ — պա-
 տասխանեց որբեւորին դառնապէս . — Ելի՛ք երթմանք թշուառ որբերս
 — ըսաւ նա իր գաւախները համբուրելով — նորէն բեռնաւորեցէք
 սայլակը , ուրիշ տեղ երթմանք մեր օրասրահիկը վաստկելու . անշուշտ
 Աստուած մեր վրայ կը դիժայ , բայց դոնէ պէտք է որ տանինք դատա-
 ւորին այս անպիտան աղջիկը , որ պիտի ստիպուի խեղճ էրիկս սպան-
 նողը երեան հանելու . . . քանի որ քաջ կը ճանչէ աւաղակներուն
 խումբը . . . : Արովհետև հարուստ ես , օրիորդ — վրայ բերաւ նա
 Գլարաին նայելով լրբօրէն — որովհետև այս տեսակ արարածներուն
 մէջ բարեկամուհիներ ունիս . . . պէտք չէ ասոր համար . . . աղքատ-
 ներուն հետ խստիւ վարուիս :

— Ճի՛շտ է — ըսաւ մշակ մը — կաթնուհին իրաւունք ունի . . . :

— Ողորմելի կինն :

— Իրաւունք կը խօսի . . . :

— Իր էրիկը սպաններ ես . . . իրաւունք չունի՞ հասուցում խըն-
 գրելու :

— Ոչ որ իրաւունք ունի արգիլելու զինքն որ մարդասպանը զբա-
 նելու համար պէտք եղածն ՚ի դօրժ գնէ :

— Անիրաւութիւն մ՛է զանի ճամբելը :

— Միթէ յանցանք ունի , ինքը , եթէ օրիորդ Գլարաին բարեկա-
 մուհին այնպիսի աղջիկ մը կերեւի . . . որ փողօցիներու թափթփուրն է :

— Այսպէս չեն վռնտեր սրբիկեշտ կին մ՛ընստանիքի մայր մը . . .
 այսպիսի անպիտան աղջիկ մը սիրոյն համար :

Եւ տրտունջները հետզհետէ սպառնական երևոյթ մը կառնուին , երբ Գլարա դռչեց :

— Օ՛րհնեալ է Ստուած . . . ահաւասի՛կ մայրս . . . :

Եւ արդարեւ , տիկին Տիւպրէօյլ մրդաստանին տաղաւարէն դառնալով բակէն կ'անցնէր :

— Լա՛ւ , Գլարա՛ , Մարի՛ , — ըստ աղարակուհին ամբոխին մտտենալով՝ — ճաշի չալիտի դաք . շոտ ըրէք , դաւախներս . . . արդէն ժամանակն ուշ է :

— Մայր իմ՝ — գռչեց Գլարա — սրաշտպանէ քոյրս այս կնկան նախատինքէն — և նա ցոյց տուաւ որբեարին — կաղաչեմ , դուրս հանել տուր զանի : Խելքէ մտքէ չանցած ազտեղի խօսքեր թափեց յանդրնաբար Մարիին դէմ . . . :

— Ինչպէ՞ս կը համարձակի . . . :

— Այո՛ , մայր իմ . . . : Նայէ անդամ՝ մը խղճալն քոյրս ի՛նչպէս կը դողդոջայ . . . հազիւ թէ ոտքի վրայ կարող է կենալու . . . Ա՛հ , իրաւի ամօթ է որ այսպիսի տեսարան մը մեր սուտը անցնի . . . Մարի՛ , ներէ՛ մեզի . . . կ'աղաչեմ . . . :

— Բա՛յց , ի՛նչ կը նշանակէ այս . — հարցուց տիկին Տիւպրէօյլ և անհանդարտ դէմքով չորս կողմը նայեցաւ , լա Կուալէօզին հալածմաշ վիճակը դիտելով :

— Մեր տիրուհին աւելի արդարադատ է , անշուշտ . . . — մրմուռացին մշակները :

— Ահաւասիկ տիկին Տիւպրէօյլ . . . հիմակ դո՛ւ պիտի վճնտուիս — ըստ որբեարին Ֆլէօր-տը-Մարիին :

— Ուրեմն իրա՛ւ է — գռչեց տիկին Տիւպրէօյլ կաթնուհին , որ Ֆլէօր-տը-Մարիին թեկն բռնած էր միշտ — ա՛յդ կերպով խօսելու կը յանդգնիս աղջկիս բարեկամուհիին : Միթէ այդպէս կը փոխաբիւնես իմ երախտիքս : Հանդարտ պիտի թողը՛ս այս դեռահաս օրիորդը :

— Քեզ կը յարդեմ , տիկին , և երախտապարտ եմ քու բարեբարութեանդ — ըստ որբեարին Ֆլէօր-տը-Մարիին թեք թողով :

— բայց զիս ամբաստանելէն և տունէդ տղոցս հետ վճնտելէն առաջ հարց ու փորձ ըրէ այս թշուառ աղջիկը . . . կարելի է երես չունի ուրանալու որ ես զինքը կը ճանչեմ և ինքն ալ զիս . . . :

— Տէ՛ր Աստուած , կը լսե՛ս այս կնկան ըսածը , Մարի՛ . — հարցուց տիկին Տիւպրէօյլ յետին ծայր զարմանալով :

— Ըսէ , միթէ լա Կուալէօզ չէ՞ քու անունդ , այո՛՛ կամ ո՛չ , խոստովանէ — հարցուց կաթնուհին Մարիին :

— Այո՛ . . . — ըստ թշուառուհին կամացուկ և ամօթահար երեսով մը առանց տիկին Տիւպրէօյլին նայելու — այո՛ , այսպէս կը կոչուէի . . . :

— Կը նայի՛ք գռչեցին մշակները բարկութեամբ — ահա կը խոստովանի՛ , կը խոստովանի՛ . . . :

— Այո՛ , կը խոստովանի . . . բայց ի՞նչ է խոստովանածը — գռչեց տիկին Տիւպրէօյլ կիսովին զարհուրելով Ֆլէօր-տը-Մարիին խոստովանութենէ :

— Թողուցէք որ պատասխան տայ , տիկին — կրկնեց որբեարին — պիտի խոստովանի նաև որ Միջնաբաղքին ֆէվ փողոցին մէկ վատահուն տան մը մէջ կը բնակէր , և այն տեղ ամէն առտու մէկ սուի կաթ կը ծախէի իրեն . պիտի խոստովանի նաև որ իմ առջևս խեղճ էրիկս սպաննողին հետ խօսեցաւ . . . : Ա՛հ , քաջ կը ճանչէ զանի , տարակոյս չունիմ . . . տօգոյն երիտասարդ մ'էր որ միշտ կը ծխէր և ^{սպաննորիկ} (casquette) մը , բաղէն մ'ու երկայն մազեր ունէր . անշուշտ ամէր անունը դիտէ . . . : Այսպէս չէ՞ , պիտի ըսե՛ս — պոռայ կաթնուհին ,

— Թեբևս էրկանդ սպաննողին հետ խօսեր եմ , ինչու որ Միջնաբաղքին մէջ դժբաղդաբար բազմաթիւ են մարդասպանները — ըստ Ֆլէօր-տը-Մարի նուազուն ձայնով մը — բայց չըխտեմ թէ որ մարդը ըսել կուզես :

— Ի՛նչպէս . . . ի՛նչ կըսէ — գռչեց տիկին Տիւպրէօյլ ահաբեկ — ի՛նչ մարդասպաններու հետ խօսեր է , կըսէ . . . :

— Ասոր պէս արարածներ ուրիշ ի՛նչ բան գործ ունին . — պատասխանեց որբեարին :

Տիկին Տիւրքեօյլ՝ Ֆլէօր-տը-Մարիին վերջին խօսքերէն չատառուած այս այլանդակ յայտնութենէ ապուշ կը թերլով՝ ամէն բան չատկցաւ, զգուանօք և սոսկումով ընկրկեց, բռնօրէն և յանկարծ իր Գլարա դուստրը՝ որ լա Կուալէօղին մօտեցեր էր բռնելու համար՝ իրեն քաշեց և պուսայ:

— Ա՛հ, ի՛նչ սոսկալի բան... Գլարա զգո՛յշ և զկը: Մի՛ մօտե՛նար: այս վատազգի օրիորդին... Բայց ի՛նչպէս տիկին ծօրծ իր սուհնն առաւ այս աղջիկը, ի՛նչպէս համարձակեցաւ զանի ինձ ներկայելու, և թողուց որ իմ աղջիկս անոր...: Աստուած իմ, Աստուած իմ, բայց ահօճիկ է այս...: Հաղիւ թէ կընամ՝ հաւատալ տեսածիս: Բայց չէ՛, չէ՛, տիկին ծօրծ այսպիսի անխոյսել բան մ'երբէք չընեք, անշուշտ մեզի պէս խարուած պիտի ըլլայ... ապա թէ ոչ...: ա՛հ, դարձելի գործ մ'ըլած պիտի ըլլայ:

Գլարա՛ այս անազորուն տեսարանէն վհատ ու ահաբեկ կարծէր թէ կ'երազէ: Իր անակող սղիտութեամբը չէր կարող ըմբռնել այն սոսկալի թշուառներն որով իր բարեկամուհին կը հալածուէր՝ իր սիրտը կտոր կտոր եղաւ, անբնարտաբով լցան լա Կուալէօղին ապշութիւնը դիտելով՝ որ լուռ ու մունջ և կորակօր իրը պատժապարտ մ'ըլի դասաւորներուն սուջև կը կենար:

— Եկո՛ւր... Եկո՛ւր իմ աղջիկս — բաւ տիկին Տի: սրէօյլ՝ Գըլարային, սոգա Ֆլէօր-տը-Մարիին կողմը դատնալով — իսկ դու անարթան ազջիկ, ողորմած Աստուած քու կեղծաւորութիւնդ պիտի պատժէ: Ի՛նչ երեսով յանձն առիր որ իմ աղջիկս... առաքինու թեան հրեշտակ մը, քեզ իր բարեկամուհին, իր քոյրն... իր բարեկամուհին... իր քոյրը... կոչէ... քեզ... որ աշխարհիս ամենէն վաստակներուն թափթփուքն ես: ի՛նչ ըրբութիւն...: Ի՛նչ երեսով պարկեշտ մարդերու հետ կը տեսնուիս, մինչդեռ դու պէտք է բանտ երթաս նամաներդ դանդաղ համար...:

— Հա՛, հա՛, գոչեցին մշակները: — սէտք է որ բանտ Երթոյ մարդասպանը կը ձանչէ՛ նա: — Եւ կարելի է որ անոր դաւակիցն է միտն:

— Ար տեսնե՞ս որ Աստուած և արդարութիւն մը կայ — բաւ որ քեարին իր բուռը լա Կուալէօղին ցոյց տալով:

— Իսկ քեզ, թշուառ կին — բաւ տիկին Տիւրքեօյլ կաթնուհին — քեզ ոչ միայն չպիտի ձամբեմ՝ այլ շտորհասարտ պիտի մե՛նամ այդ ծառայութեանդ համար, որով այս թշուառական աղջկան դիմակը վար ստիր:

— Շա՛ն աղէկ, մեր տիրութիւն, հա՛, արդար է... մրմնացին մշակները:

— Եկո՛ւր, Գլարա — յարեց ազարակուհին — տիկին ծօրծ պարտաւոր է իր ընթացքը արդարացնել թէ ոչ կենացս մէջ երբէք հետը տեսնուելիք չունիմ. ինչու որ եթէ ինքն ալ ծուղակն ընկած չէ, ըսել է թէ մեզի հետ սոսկալի կերպով մը կը վարուի:

— Բայց, մայր իմ, տե՛ս անդամ մ'այս խեղճ Մարին...:

— Թո՛ղ ամօթէն սատկի, եթէ կուզէ, ինչ փոյթս: Քամահրէ զանի...: Չեմ ուղեր որ սոսկ մ'անոր մօտ մնաս: Այսպիսի արարած մ'է որուն հետ խօսիլդ անդամ անպատուութիւն կընայ բերել քեզ:

— Աստուած իմ, Աստուած իմ, ա՛հ մայրիկ — բաւ Գլարա մօրը դիմադրելով որ զինքն առնել տանել կուզէր — չցիտեմ ինչ կը նշանակեն այս բաները...: Թերևս Մարին յանցաւոր է, ինչպէս որ դու կըսես, բայց նայէ՛, նայէ՛... որչափ ակար է... գոնէ քիչ մը դու թ ունեցիր անոր վրայ:

— Ա՛հ, օրիորդ Գլարա, շատ բարի ես և ինձ կը ներես: Ճըճ մարիտը ակամայ խաբեցի քեզ... այս բանս ինձ ծանր կ'երևէր ստե՛պ... — Ըստ Ֆլէօր-տը-Մարի իր պաշտպանուհին վրայ անասելի երախտադիտութեան ակնարկ մը նետելով:

— Բայց մայր իմ, ուրեմն այդչափ քարսիրտ ես — գոչեց Գլարա սրտամմիկ ձայնով մը:

— Գու՛թ ունենամ... անոր վրայ: Երթա՛նք... եթէ տիկին ծօրծ զանի չառներ չտաներ և մեզ չազատեր, ազարակին դռնէն դուրս պիտի նետէի այս թշուառուհին, իբր ժանտահար (pestiféré)

— սպասախանեց խտրու տիկին Տիւպրէօյլ, և իր աղջկը քաշքշեց որ վերջին անգամ մ'ալ լա կուպէօղին դառնալով գոչեց :

— Մարի՛, քոյրս, չդիտեմ թէ ինչո՞ւ կ'ամբաստանենք քեզ, բայց ստոյգ եմ որ յանցաւոր չես, և միշտ կը սիրեմ քեզ :

— Լուէ՛ . . . լուէ՛ . . . — ըսաւ տիկին Տիւպրէօյլ իր ձեռնն աղջկին բերնին վրայ դնելով — լուէ՛ : Բարեբաղդօրէն ամէն մարդ տեսաւ որ այս գլուխը գաղտնիքը յայտնուէին ետև՝ սոյն կորած օրիորդին հետ վայրկեան մ'անդամ մինակ չմնացիր . . . այնպէս չէ՞ բարեկամներ :

— Հա՛, հա՛, տիկին — ըսաւ մշակ մը — կը վկայե՞ք որ օրիորդ Գլարան վայրկեան մը չմնաց այս աղջկին հետ, որ անտարակոյս գողուհի մ'է, քանի որ մարդասպաններ կը ճանչէ :

Տիկին Տիւպրէօյլ Գլարան քաշեց տարաւ : Լա կուպէօղ իր բոլորն առնող քինաուու գոռհին մէջ տեղ մնաց առանձին : Թէև տիկին Տիւպրէօյլ անդադար յանդիմանութիւններ կը թափէր Ֆլէօր-ալը-Մարիին գլխին վրայ, սակայն սա անոր և Գլարային ներկայութենէ չէր յուսար որ այս տեսարանս ցաւալի հետևութիւններ կ'ունենայ և փոքր ինչ հանդարտ էր, սակայն երբոր անոնք մեկնեցան դեղձուհիներուն ճանկին աակ մնալուն բոլորովին ուժէ ընկաւ և ստիպուեցաւ աղարակին ձիերուն խորին ջրաբքին քուին (parapet) վրայ կռթնելու . . . : Ի՛նչ սրտաշարժ էր սոյն եղկելին այս դէրբը : Եւ ի՞նչ սպառնալից էին դանի շրջապատող գեղացիներուն խօսքերն ու շարժումները : Լա կուպէօղ՝ այն քարաշէն եզրին վրայ յենած քան նստած՝ իր փոքրիկ կլոր գտակը պատող ծաղկեայ կարմիր թաշկինակին քառակուսի ծայրերովն իր վիզն ու կուրծքը քողարկած՝ անշարժ էր և վշտալիութեան ու համբերութեան սրտագրաւ սրտկեղը կ'ընծայէր :

Ֆլէօր-ալը-Մարիէն քանի մը քայլ հեռի կիցեր էր որբեարին՝ որ յաղթական դէմքով և տիկին Տիւպրէօղի անէծքներէն աւելի ևս կատղած՝ իր գաւակներուն և մշակներուն ցոյց կտար թշուառ օրիորդը քինու և ատելութեան շարժումներով . . . : Աղարակին մարդիկը . . .

որ սլար բռներ էին անոր չորս դին, անպատկառ իրենց չարակամ միտումներն երևան կը հանէին . իրենց կոշտ դէմքն ոչ միայն սըրտմտութիւն և զայրոյթ, այլ դոճհիկ հեղնութիւն մը կ'արտայայտէր . կիններն աւելի կատղած էին և ընդվզած . լա կուպէօղին սրտայոյղ կերպարանն իրենց մոլեգնութեան թեթևագոյն պատճառը չէր : Այր կերպարանն իրենց մոլեգնութեան թեթևագոյն պատճառը չէր : Ասկէ ներուն հետ իբր համապատիւ տեսնուեր էր մինչև այն օրը : Ասկէ զատ՝ Արնուվիլը մշակներէն մէկ քանին իրենց նախորդ վարմունքին 'ի նսրաստ վկայութիւն մը տալ, և Պուզվալի աղարակին մէջ ամենուրեք փափաքելի սլաշտօն մը ստանալու անկարող գտնուելով՝ տիկին նուն փափաքելի սլաշտօն մը ստանալու անկարող գտնուելով՝ որուն արդիւնքը հարկաւ իր պաշտպանած օրիորդն այժմ կը կրէր :

Անկիրթ մարդկան առաջին շարժումներն ծայրայեղ . . . ընտիր կամ դարձել են . . . բայց սոսկալի ու վտանգաւոր կը դառնան երբ դուռը կը կարծէ թէ իր կոշտ վարմունքը կ'արդարանայ իր ատելութեան կամ բարկութեան ենթակայ գտնուող անձերուն հիմնաւոր կամ անհիմն յանցանքին պատճառաւ : Թէև այս աղարակին մշակներէն շատերն իրաւունք չունէին լա կուպէօղի դէմ այնչափ զայնրանալու, սակայն անոր ներկայութիւնը տարափոխիկ մոլեգնութիւն մը կ'աղդէր ամենուն . կարծես թէ ամբթապարտ կը մնային նկատելով թէ ինչ ստորին կարգէ անձ մ'էր այն թշուառ աղջկին որ կը խոստովանէր նաև թէ մարդասպաններու հետ ստէպ խօսեր է : Ասկից աւելի մեծ դրդու մը պէտք էր սոյն ամբոխին զայրոյթը բորբոքելու, որ աւելի ևս կրակ առաւ տիկին Տիւպրէօյլի ընթացքէն :

— Այս ողորմելին քաղաքապետին տանիլ պէտք է — ըսաւ մէկը .
— Հա՛ . . . հա՛ . . . և թէ որ քալել չուզէ, զանի կը +էէ+ ևէ քանիէն+ :

— Եւ բաւական երեսի ջուր պէտք է որ գեղին սլարկեշտ աղջկիններուն պէս հաղուի — յարեց աղարակին ամենէն սպեղ քաւթառը :
— Իր գառնկի պէս դէմքը անտողը — վրայ բերաւ ուրիշ մը — ճաշակ անդամ կտայ անոր առանց խոստովանանքի :

— Պատարագ տեսնելու ալ ինչո՞ւ չ'երթար այս դէմընդը :
 — Լըբենին . . . մեռնը պահաս էր :
 — 'Նայէ՛ սա սնալիտանին մեր գլխաւորներուն հետ ալ կ'երէր
 կը նստէր . . . :
 — Որպէս թէ մենք անոր ոտից տակի մըջուններն է'ինք . . . :
 — Բարեբաղդաբար ամէն բան իր կարգին կ'այ :
 — Ա՛հ , պիտի բանաս բերանդ և պիտի ստիպուիս ձեռք տալու
 ժարդասորսնը . . . — դոչեց որբեւարին : — դու ալ մի և նոյն խմբէն
 ես . . . : Ա՛յնպէս մը կ'երեւի ինձ որ այն օրն ալ անոնց հետն էիր :
 Շո՛ւա , շուտ ըրէ , հիմա որ ամէն բան երեւան ելաւ , լայկանութիւն
 նը ստակ չաժեր : Յո՛յց տուր մեզի սա դէմըդ , տեսնելու արժանի է :
 Եւ որբեւարին նորասի օրիտրդին երկու ձեռները բռնի վար ա
 ռաւ , մինչդեռ նա իր արտասուակի երեսը կը պահէր : Լա կուալէօղ
 արդէն ամօթէն դեմնէ՛ դեմին անցած՝ սկսեր էր գողոլը սոյն վայ
 րագ անձերուն ճօնկին տակ դանուելուն . իր երկու ձեռները միա
 ցուց , իր աղբրօղակն ու վեհերտա աչերը կաթնարար կնիսն դար
 ցուց և իր անուշ ձայնովն ըսաւ :
 — Տէր Ասպուած , բայց տիկին . . . երկու ամսէ՛ վեր ես Պուդ
 վալի աղարակը քաշուած եմ . . . ուստի չէի կրնար ներկայ դանուել
 այդ ըսած ձախտող դէպքին . . . և . . .
 Ֆիլէօր-տը-Մարիին երկչոտ ձայնը այս զայրազին աղաղակներէն
 ընդմիջեցաւ :
 — Քաղաքապետին տանինը զանի . . . թող հոն ապ իր բացատ
 րութիւնը :
 — Ելի՛ր , ձամբայ ելի՛ր , դեղանի՛դ :
 Եւ սպառնացող ամբօլը քիչ քիչ լա կուալէօղին մօտեցաւ . խոկ
 սա մեքենայէս իր թևերը խաչի ձև բռնելով՝ ազդիս անդին կը նստ
 յեր սրտաթուռա և կարծես թէ օդնութիւն մը կը խնդրէր :
 — Ա՛հ , — վրայ բերաւ կաթնուհին — սպրապ տեղ չորս դիդ
 կը նայիս , օրիորդ Գլարան հոս չէ որ բեղ սրաշոյանէ : և մեր ձեռ
 քէն աղատելը չունիս :

— Բարէ՛ , տիկին , իմ միտքս փախչիլ չէ — ըսաւ Ֆիլէօր-տը
 Մարի գողոլ՝ շուն . ես ալ կը վստիարիմ որ ինձի ինչ հարցում էր ը
 նին սխառասխան տամ . . . բանի որ անկից կրնաս օգտիլ . . . : Բայց
 ես ինչ ըրի այսիմ չորս կողմն կեցողներուն , որ անդադար կ'սպառ
 նան . . . :
 — Գու սա ըրի՛ր որ մեր տէրերուն հետ քովէ քով դացիր , երբոր
 մենք , որ քեզնէ՛ հազար անգամ աւելի կ'աժենք , հետու կեցանք . . .
 ահա այս միտքն ըրի՛ր մեզ :
 — Ասկից զամ՝ ինչո՞ւ համար ուղեցիր որ այս որբեւարին և իր զա
 ւակներն վնասեն աղարակէն — ըսաւ ուրիշ մը :
 — Ես չուղեցի , օրիորդ Գլարան . . . կուզէր . . . :
 — Սո՛ւա է . . . — վրայ բերաւ մշակն անոր խօսքը ընդհատելով
 — դու բերանդ անգամ չսայիր անոր ներուժը խնդրելու , դո՛հ էիր որ
 իր հացը բերնէն ատնեն :
 — Չէ՛ , չէ՛ , անոր համար ներում՝ չինդրեց :
 — Ի՞նչ դէ՛շ սիրա ունի :
 — Թշուառ որբեարի մը . . . և երեք զուակի տէ՛ր :
 — Եթէ անոր համար բարեխօս չեղայ — ըսաւ Ֆիլէօր-տը
 Մարի — սրտաձառն այն է որ բառ մ'անգամ ըսելու ոյժ չունէի :
 — Մարդասպաններու խօսելու ոյժ ունէի՛ր :
 Ինչպէս որ ժողովրդային յուզման մէջ կը պատահի , այս դեղա
 ցինները , որ աւելի սողուշ էին քան չար , կը դրդուէին , կը զայրա
 նային , իրենց յատուկ խօսքերուն աղմկէն կը քինեային և իրենց
 դո՛հին դէմ՝ ժայթքած նախատանաց չափովը կը բորբոքէին :
 Երկրագործներուն շրջանը հեռոցհեռէ՛ Ֆիլէօր-տը-Մարիին կը մօ
 տենար սպառնալի . ամէնքը կը շարժէին խօսելու ատեն . խոկորբե
 ւարին բողբոլովն դիւահարեր էր : Լա կուալէօղ՝ որ խորին ջրար
 քէն միտակ իր յեռած քիւովը զատուեր էր , վախցաւ որ զինքը ջուրը
 կը նետեն , և դռնեց իր աղբրօղակի ձեռներն անոնց երկնցներով :
 — Ատուած իմ , ի՞նչ կուզէր իզնէ : Կ'աղաչեմ մի՛ դախը ինձ . . . :
 Եւ որովհետեւ կաթնուհին շարժելով միշտ կը մօտենար և իր

Երկու բուռը զրեթէ անոր երեսին վրայ կը գեէր, Ֆլէօր-տը-Մարի աճ ու գողէն կրնակին վրայ ընկնելով գոչեց:

— Կաղերսեմ, տիկին... այդչափ մի՛ մօտենար, զիս հիմակ ջուրը պիտի ձգես:

Ֆլէօր-տը-Մարիին այս խօսքերը սոյն ուսմիկ մարդոց անազորուն խորհուրդ մը առաւ: Գեղջական կատակ մ'ընելու մտօք, որով ըստեպ կիսամեռ կը մնայ մարդս, ամենէն կատարին գոչեց:

— Լուղա՛կ մը... շուտ լուղակ մը տանք անոր...:

— Հա՛, հա՛... ջու՛րը... ջու՛րը... — կրկնեցին ամենքը քահ քահ խնտալով և մոլեզկն ծափ զարնելով:

— Շատ աղէկ մտածեր էք... աղւոր լուղա՛կ... չմենիր:

— Թո՛ղ սարվի ինչպէս կըլլայ պարկեշտ մարդերու մէջ մաննելը:

— Հա՛, հա՛, ... ջու՛րը... ջու՛րը...:

— Այս առտու ալ սառոցը խորտակեցին:

— Փողոցներու աղջիկը Արնուվիլի ազարակի բարի մշակներուն յիշատակն ասով մարէն չպիտի հանէ:

Ֆլէօր-տը-Մարի այս վայրենի աղաղակներն, այս վայրագ կատակները լսելով, բոլոր այս ապշօրէն զայրացած դէմքերուն կատողութիւնը տեսնելով՝ որ դէպ իրեն կը մօտենային բառնալու համար, կարծեց թէ մեռնելու ժամը հասաւ...: Իր նախորդ սարսափին գառն զոհօնակութիւն մը յաջորդեց. իր աչաց այնպիսի դոյներով կ'երևար սպառն որ փառք տուաւ մտովին Աստուծոյ իր տառապանաց վախճան տալուն. բերնէն տրտունջ մը չհանեց, ծնկի վրայ սահեցաւ, իր կրծքին վրայ բարեպաշտօրէն երկու ձեռները խաչաձև դրաւ, աչքը դոցեց և աղօթելով սպասեց: Մշակները լա Կուալէօզին դիրքէն ու անմուռնչ համբերութենէն պատկառելով՝ պահ մը վարանեցան իրենց վայրենական խորհուրդը 'ի գործ դնելու. բայց կանացի դասէն իրենց տկարութեան վրայ կշտամբուելով՝ սկսան նորէն լուտալ՝ որպէս զի չարակամ զիտաւորութիւնն զլուխ հանելու աւրիանան:

Կատաղինքն ընէն երկու հողի Ֆլէօր-տը-Մարին վերցնելու վրայ

էր, երբ այլայլած, հնչալի ձայն մը անոնց գոչեց:

— Կեցի՛ք:

Նոյն միջոցին տիկին ծօրժ, որ սոյն ամբօխը ճեղքելով ճամբայ բացեր էր, լա Կուալէօզին մօտ հասաւ, որ դեռ ծնկի վրայ էր, իր թևերուն մէջ զանի գրկեց և վերուց պոռալով:

— Ոտք ելի՛ր, զաւակս... ոտք ելի՛ր, իմ սիրական աղջիկս. միանակ Աստուծոյ առջև մարդս սարսաւոր է ծուներ դնել:

Տիկին ծօրժին դիրքն ու կերպարանն այնքան սողու էին ու տիրական որ դեղացիները յետս ընկրկեցան և ափ 'ի բերան մնացին: Սրտմտութենէն՝ երեսներն որ սովորաբար աժգոյն էին, սաստիկ կարմրեցան: Մշակներուն վրայ ձիւ ակնարկ մը նետեց և անոնց ըսաւ բարձր ու սպառնալի ձայնով մը:

— Թշուառակահներ... չէք ամչնար, և այս թշուառ օրիորդին դէմ այդպիսի բռնութիւններ կը գործէք...:

— Ինչո՞ւ որ...:

— Իմ աղջիկս է այս՝ — դոչեց խստիւ տիկին ծօրժ մշակին խօսքն ընդմիջելով: Մեր պատուելի Լաբորդ երէցը, զոր ամէն մարդ կօրհնէ ու կը յարգէ, կը սիրէ ու կը պաշտպանէ զանի, և անոր յարգածը պէտք է որ ամենուստ յարգուին:

Այս պարզ խօսքերէն ամբօխը պատկառ կեցաւ: Նոյն երկրին մէջ իբր սուրբ մը կը նկատուէր Պուզվալի երէցը և շատ դեղացիներ քաջ զխտէին թէ որչափ հող ու խնամք կը տանէր լա Կուալէօզին համար: Այլ սակայն քանի մը լին մրմունջներ սկսան նորէն լուռի. տիկին ծօրժ անոնց նշանակութիւնն ըմբռնեց և պոռաց:

— Եթէ այս թշուառ նորատի օրիորդն աշխարհիս ամենէն գէշն ու ամենէն անարգն ըլլար, դարձեալ անոր դէմ՝ ձեր բռնած ընթացքը զընելի պիտի երևէր: Ի՞նչ պատճառաւ պատժել կուզէք զինքը՝ այդ իրաւունքն ուսկից առիք: Միթէ ձեր ոյժէն, եւ միթէ վատութիւն ու ամօթ չէ ձեզի համար անպաշտպան աղջիկ մը չարչարելը: Եկո՛ւր, Մարի, եկուր իմ սիրական զաւակս, մեր տունը դառնանք. գոնէ այն տեղ քու յարգը ու պատիւդ կը ճանչեն...:

Տիկին Ժօրժ Ֆլէօր-ալը-Մարիին թեէն բռնեց. մշակներն իրենց ընթացքին կողուած թիւնը հասկնալով ամօթահար՝ ակնածութեամբ մէկընի քաշուեցան : Մինակ որբեւորին յառաջ անցաւ ու տիկին Ժօրժին ըսաւ անվեհեր :

— Ե՛ս, ե՛ս առանկ լեզուներէ չեմ խաբուիր : Այս աղջիկը մինչ չե որ շահապէս առջև էր իկին սպանդի դորժին համար իր մկայուած թիւնը չնայանէ ասկից երնելիք չունի :

— Ի՞մ սիրելի բարեկամուհի — ըսաւ տիկին Ժօրժ ինքզինքը բռնելով — Ի՞մ աղջիկն այս տեղ վկայութիւն տալու պարտաւոր չէ բռնաւ. այսուհետեւ, եթէ դատաւորը արժան տեսնէ անոր վկայութիւնը խնդրելու, այն ատեն կը կանչուի և ես ալ անոր հետ կ'դամ : . . . Աստի առ այժմ ոչ որ իրաւունք ունի զանի հարց ու փորձ ընելու :

— Բայց, տիկին . . . քեզի ըսի որ . . .

Տիկին Ժօրժ որբեւորին խօսքը կտրեց և խտիւ պատասխանեց .

— Կրած աղէտքը հաղու թէ կրնայ արդարացնել վարմունքը, որ մը պիտի դայ որ զղջաս պիտի այդ բունն, զրդուիչ և անխորհուրդ ընթացքիդ վրայ : Օրիորդ Մարին ինձի հետ Պուզվալի աղաբակը կը բնակի, դատաւորին իմաց տուր այս բանը, քանի որ արդէն դանդասող ներկայէր ես, և մենք անոր հրամանին սպասե՛ք պիտի :

Որբեւորին այս խոհական խօսքերուն բան մը չ'կրցաւ պատասխանել. ջրարբին քիւին վրայ նստաւ և իր զաւակները զրկելով սկսաւ լալ դառնասպէս : Այս տեսարանէն քանի մը վայրկեան հաքը, Բիէր կառքը բերաւ, տիկին Ժօրժ և Ֆլէօր-ալը-Մարին անոր մէջ մտան Պուզվալ դառնալու համար :

Արնուլլի աղաբակուհիին ամիս առջևէն անցնելու ատեն՝ ըստ Աուալէօղ Գլարան տեսաւ, որ կ'լար կիսբայ շեքողուրի մ'ետին կեցած՝ և իր թաշկինակովը Ֆլէօր-ալը-Մարիի եթմաս բարեի նշան մ'ըր ըսաւ :

— Ա՛հ, տիկին, ի՛նչ ամօթ ինձի և ինչ ցաւ քեզի համար — ըսաւ Ֆլէօր-ալը-Մարի իր ողբեղիւր մօրը՝ երբ Պուզվալի աղաբա-

կին փորքիկ սրահին մէջ անոր հետ առանձին մնաց : Կարծեմ թէ ընդ միշտ քէնցար տիկին Տիւարէօյլի հետ, և այս ալ իմ պատճառաւ : Ա՛հ, ի՞մ նսխազղածութիւններս . . . : Աստուած պատճեց զիս այն կիին ու իր դուստրը խաբելու համար . . . զժտութեան որոմ մ'եղայ քու և բարեկամուհիդ մէջ . . . :

— Ի՞մ բարեկամուհիս . . . աղէկ կին մ'է, զաւակս, բայց քիչ մը զրուխը թեթեւ է . . . : Սակայն բարի սիրտ մ'ունենալուն՝ ստոյգ եմ որ վաղը պիտի զղջայ իր այսօրեայ խենդ աւ խելաւ բարեկամեան վրայ . . . :

— Բարէ՛, տիկին, մի կարծիք թէ, տէր Աստուած, քեզ յանցաւոր կը դատեմ զանի անբասիր հանելու համար . . . կարելի է ինձ տածած բարեսրտութիւնդ մոլորեցուց քեզ . . . Գու տիկին Տիւարէօյլի տեղն անցիր . . . և եթէ իմանաս որ քու սիրական աղջկիւն ընկերուհիս . . . էր . . . ինչ որ էի ես . . . ըսէ՛ . . . կը ժաէիր անոր մնացական սրտմտութիւնը գսրովել . . . :

Տիկին Ժօրժ Ֆլէօր-ալը-Մարիին այս հարցումին բառ մ'անդամ դժբաղդօրէն չգտաւ պատասխանելու համար և նա շարունակեց խօսքը սրտայտլ :

— Ամենուն առջև կրած այն արատալի տեսարանս՝ վաղը ամէն աշխարհ պիտ' իմանայ : Աւիս ինձի համար չէ, բայց ո՛վ զիտէ թէ որ հիմակ օրիորդ Գլարային համբար . . . բոլորովին անով աղարտած չէ . . . քանի որ զիս իր բարեկամուհին, իր քոյրն անուանեց : Պարտաւոր էի ի՞մ առաջին շարժումին հետեւիլ . . . օրիորդ Տիւարէօյլի համար ունեցած համակրութեանս դէմ զինիլ . . . և անոր անելութեանն աչքս առնելով, ինձ ցոյց տուած բարեկամութենէ հեռանալ . . . : Բայց մտոցայ մեզ իրարմէ զատող հեռաւորութիւնը . . . և ահա կը տեսնես որ պատիժս դտայ, ո՛հ, անողորուն պատիժ մը . . . վասն զի անդարմանելի քեաս մը հասուցի թերեւս այն բարեմայն ու առաքինի օրիորդին . . . :

— Աղ՞իկս — ըսաւ տիկին Ժօրժ պահ մը մտածելէն ետև — իրաւունք չունիս այդպէս ցաւազին սաստել ինքզինքը. անցեալը ան-

պարտ չէ . . . այո՛ . . . ամենևին անպարտ չէ . . . սակայն ինչու առ
 ոչ ինչ զրեւ զղջումովդ մեր պատկառելի երէցին պաշտպանութեան
 արժանի ըլլալդ : Միթէ անոր ու իմ յանձնարարութեամբս արիկին
 Տիւպրէօյն ճնրհայայցա՞ր . միթէ ինքը բու ընտիր ընտիր ձիրքդ տես-
 նելով ինքնայորդոր բեզի չկապուեցա՞ւ . . . Միթէ ինքը չպահանջեց
 որ Գլարան քոյրդ անուանես : Ասկից զատ՝ ինչպէս կարելի էր՝ ա-
 պաշտիդ վրայ վտաս ըլլալով՝ ձանձնել բու անցեալդ և վերա-
 կենդանութիւնդ աւելի տաժանելի . . . թերևս անհնարին ըմել, բանի
 որ պիտի յուսահատէիր, բանի որ պիտի անարդուէիր այնպիսի մար-
 դերէ, որ եթէ քեզի պէս անոք ու անօղնական մնային, երբեք քե-
 զի պէս պատուց և առաքինութեան զրացում իրենց արտին մէջ չպի-
 տի պահէին : Այն որքևարի կնկան յայտարարութիւնը դժպէսի աղե-
 տալի է, բայց կարող էի անոր առաջն առնելով քու աղաղայ ան-
 դորութիւնդ յեղակարծ պատահարի մը զոհել :

— Ա՛հ, արիկին, իմ վիճակիս անկայուն և թշուառ ըլլալուն մէկ
 անպայտցն ալ այն է որ իմ սիրոյս համար, անցեալս քողարկելու ի-
 րաւունք ունեցար և Գլարաի մայրն ալ սոյն անցեալին համար ի-
 րաւունք ունեցաւ զիս քամահելու, այո՛, քամահելու . . . ինչպէս որ
 ամէն մարդ այսուհետև պիտի քամահէ զիս, վասն զի Արնուվիլի ա-
 դարակը պատահած դէպքին լուրն ամէն տեղ պիտի հոչակուի, ա-
 մէնքը պիտի իմանան . . . : Ա՛հ, ամօթահար պիտի մեռնիմ . . . ու
 ժարդու մ'անջ և երեսու երես պիտի չունենամ :

— Եւ ոչ իմ առջևս, զաւակս, — ըսաւ արիկին ծօրծ առատ արտուք
 թափելով և թեքերը բանալով Ֆլէօր-տը-Մարիին — այլ սակայն
 արտիս մէջ պիտի գտնես միշտ մօր մը դորովն ու անձնութիւ-
 նը . . . : Ուրեմն արիացիր, Մարի, անպաշտիդ դիտակցութեամբը զօ-
 րացիր : այս տեղ բոլորտիքդ մինակ բարեկամներ ունիս, Լաւ ու-
 թեմն, այո տունը աշխարհդ պիտի ըլլայ . . . : Բու վախցած համբա-
 լին առաջը կ'առնեսք : մեր բարի երէցն ազարակին մշակները կը ժող-
 վէ, որ քեզ այնչափ կը սիրեն և անցեալին վրայ ճշմարտութիւնը կը
 յայտնէ . . . : Հաւատա՛ ինձ, զաւակս, իր խօսքն այնպիսի ներդոր-

ծութիւն մ'ունի որ այս յայտարարութեամբ աւելի ևս համակրու-
 թիւն պիտի գրաւես :
 — Բեզ կը հաստամ, արիկին, և պիտի հաղանդիմ : Երէկ ե-
 լեցը մեր խօսակցութեան ատեն ըսաւ որ վշտալի անպաշտարաներ
 պիտի կրեմ, ահա կ'սկսին անոնք և պէտք չէ որ զարմանամ : Կոյն-
 պէս ըսաւ որ իմ վիշտերս օր մը պիտի վարձատրուին . . . : Ես ալ
 կը յուսամ . . . : Բու և անոր թեկն տակ՝ այս փոքր ձանձնները պիտի
 կրեմ անարտունջ :

— Բիշ ատենէն պիտի երթաս զինքը տեսնելու, և անոր հո-
 դեշահ խրատները լսելու . . . : Ահա արդէն ժամը չորս ու կէս է,
 երկրաստուեր դնալու պատրաստուէ, աղջիկս . . . : Ես ալ Արնուվիլի
 ազարակը պատահածը Պ . Ռօստոլֆին դրով պիտի իմաց տամ . . . :
 Յատուկ զրատար մ'իմ զիրս անոր ձեռքը պիտի հասցնէ . . . : ասպ
 դամ պիտի բարի երէցը գտնելու . . . վասն զի սակալակական է որ ե-
 լեքնէս միասին խօսինք :

Բանի մը վայրկեանէ ետքը՝ լա Աուալեօղ ազարակէն կ'երևէր
 դարուփոս ձամբէն երկրաստունն երթալու, ո՛ւր արջի օրը Մէդը տէ-
 քօլ և Գօրդիյար միաբաներ էին գտնուելու :

Կնչպէս որ արիկին ծօրծին և Պուգվալի երէցին հետ ունեցած խօ-
 սակցութիւններէն յայտնի եղաւ, Ֆլէօր-տը-Մարի իր բարերար-
 ներուն յորդորներէն այնպէս արևուարար օգուտ քաղիր էր, անոնց
 սկզբունքն այնպէս աղէկ իւրացուցեր էր որ իր անցեալ վատթարու-
 թեան մտածելով հետզհետէ կը յուսահատէր : Բանի իր ազնիւ զգա-
 ցումներն աճեր արդիւնաւորեր էին իր ասրած պատուոյ ու անարատ
 մթնոլորտին մէջ՝ նոյնպէս միտքը զարգացեր էր : Եթէ Ֆլէօր-տը-
 Մարիին բանասկանութիւնն ընդհատ բարձր, զգայնութիւնն ընդհատ
 դողորիկ, երեւակայութիւնն ընդհատ վատվտուն ըլլաք, աւելի հեշտիւ
 պիտի մխիթարուէր, բայց դժբաղդօրէն օր մը չէր անցներ առանց
 յիշելու, կամ լա ևս ըսել, զպալու զգումնօք ու երկիւղով խառն
 վշտակրութեամբն իր նախկին կենաց ամօթալի աղէտքը : Երեւակայէ

տասնվեց տարեկան օրիորդ մ'որ, անմեղ, անարատ՝ և իր անմեղքութեան ու անարատութեան զգացումը կրող, դժոխային իշխանութեան մը ձեռք օկրոհիլին վատանուն կասկիտին մէջ նետուի և այս դրժնեայ կնոջ ճանկին տակ անշարժ մնայ. . . : Այս էր ահա Ֆլէօր-տը-Մարիին համար անցելոյն վերջործութեանը (réaction) ներկային վրոյն : Միթէ դիւրին չէ՞ այսուհետև ըմբռնել թէ լա Աուալէօղ ինչ հետունէր սրտին մէջ անցածին դէմ, կամ ինչ բարոյական հար- ընդդէմ ներդործութեամբ (contre-coup) կը տաղնապէր չարաչար, թէ և երէցին խոստովանելու չէր իշխած, և կը վշտադնէր այն տղին մէջ խեղդամահ չմեռնելուն համար :

Այն որ փորը ինչ կը մտածէ և կենաց փորձառու է՝ մեր ընկերքի բեր ցնորք չպիտի նկատէ : Այո՛, Ֆլէօր-տը-Մարի ինամբի և կարեկցութեան արժանի էր ոչ վրայն երբէք սէր չզգալուն համար, այլ վասն զի իր զգայարանքն միշտ սառու ներհուն մնայեր էին : Եթէ ստէպ Ֆլէօր-տը-Մարիէն նուազ փափկասուն կիներ ամուսնութեան օրինական անանութիւններէն և առաջատի առաջին դիշեքուան բռնապըօսիկ ցանկութիւններէն ետև՝ անդապելի զղուանօք երկայն ատեն կը համակուին . . . : Երբ չէ ռեմն զարմանալ որ այս եղիւնը աղմկին՝ օկրոհիլին ձեռք զինուցած և տասնվեց տարեկան հասակին մէջ Միջնաքաղաքը ասպատակող վայրի կամ կատաղի անբաններու խմբին մէջ ընկեցիկ՝ անհնարին ստակում և երկիւղ զգացած և սոյն կցնոցէն բարոյապէս անարատ ելած ըլլայ . . . :

ԳԼՈՒԽ Բ.

ՄԵՐ ՈՒ ՓՈՍ ԺԱՄԲԱՆ

ՄԵՐԻՆ հորիզոնին վրայ մարը կը մտնէր. դաշտավայրն ա՞ մնջի էր և լռիկ : Ֆլէօր-տը-Մարին երիգատունը երթալու համար կը մտնէնար այն դարուփոս ճամբուն անցքին՝ ուսկից անցնելու պարտաւոր էր, և ըբ խորաձորէն կաղ տղու մը դուրս ելնելը տեսաւ որ միջնաքաղաքն մը և կապոյտ սաղաւաքաիկ մը հաղեր էր. արք

տեսաւալին կ'երեւէր և լա Աուալէօղը հետուէն տեսնելուն դէպ անոր կողմը վաղցց :

— Ո՛հ, իմ բարեսիրտ տիկին, դժա՛ իմ վրայ, կ'աղաչեմ՝ ըսաւ աղերսալի երեսով մ'երկու ձեռները միացնելով :

— Ինչ կուղես, ի՞նչ ունիս սղաս— հարցոյց անոր լա Աուալէօղ կարեկիր :

— Ախո՛ս, իմ բարի տիկին, իմ հանկիս որ շատ պատաւ, շատ սիրուաւ է, սա տեղ վարն ընկաւ խորաձորէն իջնելուն և մեծ վտանգէ մ'անցաւ . . . կը վախնամ որ սրունքը կուարեց . . . : Շատ արկար եմ և չեմ կրնար անոր օղնել որ ոտք ելնէ . . . : Ողորմած Աստուած, ի՞նչ ընեմ թէ որ օգնութեան չհամնիս : Խեղճ հանկիս կարելի է որ մեռնի :

Լա Աուալէօղ՝ փորքի կաղին ցաւակից գոմուելով՝ դռնէց :

— Ես ալ շատ ուժով չեմ, սղաս, բայց կարելի է օգնեմ՝ քեղ հանկիկ վերցնելու . . . : Շուտ անոր մօտ երթանք . . . : Ես սա վարի աղարալը կը բնակիմ . . . թէ որ խղճալի պառաւը չկարենայ մեզի հետ քալելով հոն երթալ, պիտի գնամ մէկը զրկեմ որ բերէ :

— Ո՛հ, իմ բարի տիկին, ողորմած Աստուած անշուշտ պիտի օրհնէ քեղ . . . : Այս կողմէն . . . երկու քայլ անդին դարուփոս ճամբուն մէջ է, ինչպէս որ արդէն ըսի. սեսէն իջնելու ատենն ընկաւ խեղճ հանիս :

— Ուրեմն դուք այս կողմերը չէք բնակիր— հարցոյց լա Աուալէօղ Գորդկարի ետևէն գնալով՝ զոր արդէն ընթերցողն անշուշտ ճանչեց :

- Չէ՛, բարի տիկին, Էզուանէն կզանք :
- Եւ ո՛ւր կ'երթայիր :
- Բարի երէցին տունն՝ որ սա վարի բլրին վրայ կը բնակի . . .
- Ըսաւ Պրա-Ռուժին սղան՝ Ֆլէօր-տը-Մարիին վստահութիւնն աւերցնելու համար :
- Կարելի է հայր Լաբօրդին երիցատունը :
- Հա՛, իմ բարի տիկին, պատուելի Լաբօրդին տունը. իմ խեղճ հանկիս զանի շատ, շատ աղէկ կը ճանչէ . . . :

— Եւս ալ անոր մօտ երթալու վրայ էի, ինչ հանդիպում ըսաւ Փլէօր-տը-Մարի դարուփոռ ճամբուն մէջ վորք առ վորք յառաջանալով:

— Հանիկա... ահա հասայ, հասայ... քիչ մ'ալ համբերէ. . . քեզի օղնութիւն կը բերեմ. . . — պոռայ Գօրգիյար, որպէս զի իմաց տայ Մէգր տէքօլին և լա Շուէզին որ իրենց որսը բռնելու պատրաստ դնուին:

— Քու հանիդ ասկից հեռու տեղ մ'ընկած չէ՛ ուրեմն — հարցուց լա Աուալէօլ:

— Չէ՛, բարի տիկին, սա հաստ ծառին ետին ընկաւ, որ ասկից քսան քայլ հեռու և ճամբուն դառնալու կողմն է:

Յանկարծ Գօրգիյար կանկ առաւ:

Գաշտալայրին ըռութեան մէջ երիվարի մը *Էրգե-ճը* (galop) ըլլաւ:

— Նորէն ամէն բան ձախորդ դարձաւ — ըսաւ ինքնովին Գօրգիյար:

Գօրգիյարի և լա Աուալէօլին կեցած տեղէն քանի մը կանգուն հեռու՝ ճամբան զգալի պոռայ մը (coude) կար, նոյն պոռայէն ձիաւոր մ'երեւան ելաւ: Երբ աղջկան մօտեցաւ՝ ձին կեցուց. . . : Նոյն միջոցին ուրիշ ձիու մը ընդոստումը (trot) ըսուեցաւ, և քանի մը բոպէ ետքը տգասաւոր մը վրայ հասաւ, որ արծթէ կոճակներով դորշ տաւատով, ճերմակ կաշիէ վարտիք և դարձած կօշիկներ հազեր էր: շիկափով նեղ դօտիով մ'իւր տիրոջը *Տալիս-ճը* (առձիդ վերարկուն) մէջքէն կոպեր էր ետեի կողմը: Իսկ սա արուրազոյն հաստոյր զգեստ մ'ու բաց մոխրի թոյր բաղէն մը հազեր էր պարզօրէն և աշխատ, առհմիկ և հիանալի զեղեցիկութեամբ նմայդ մը կ'աշտանակէր վայելուչ ու շնորհալի. թէև երիվարն արդէն երկայն արշաւ մ'ըրեր էր, սակայն իր ոսկենշոյլ թաւին (robe) շողուն փայլն և ոչ թեթև նամէտ մը (moiteur) կ'արտատէր: Սոյնիկէն (groom) ճանձկէն ձին՝ որ իր տիրոջմէն քանի մը քայլ հեռի կեցաւ ճնշարժ, նոյնպէս ըսալի և աղնիւ ցեղէ կը սերէր: Գօրգիյար այս

թիւերէն և չքնաղ ձիաւորը տեսնելուն Սէն-Րըմի դերկումը ճանչեց, որ կը կարծուէր թէ տը Լիւանէյ դքսուհիին սիրահարն է:

— Սիրուն օրիորդ — ըսաւ զերկումը լա Աուալէօլին՝ որուն դեղեցիկութեանը զարնուեցաւ — շնորհ կ'ընէք Արնուվիլ զեղին ճամբան ինձ ցոյց տալու:

Փլէօր-տը-Մարի՛ այս պատանիին խորունկ աւ ժպիւրհ ախարիկն առջև իր աչերը վար առնելով՝ պատասխանեց:

— Պարեն դար ու փօս ճամբէն ելնելէն ետև՝ աջ կողմի ուղին կը զարնէք, այս ուղին կեռասենիներուն անցքը կը տանի ձեզ, ուսկից շիտակ Արնուվիլ զեղը կը համարէ:

— Մեծապէս շնորհապարտ եմ ձեզ, դեղանի օրիորդ. . . : Գուք աւելի որոշ տեղեկութիւններ տուիք ինձ՝ քան այն պատան՝ զոր ասկից քանի մը քայլ անդին՝ ծառի մ'աքը ընկած գտայ: անոր բնորէն ուրիշ բան չլսեցի այլ միայն հեծեծանքներ:

— Իմ խեղճ հանիկա է. . . — մըմուաց Գօրգիյար արտում ձայնով մը:

— Հիմակ ուրիշ հարցում մ'ալ ունիմ — վրայ բերաւ Սէն-Րըմի խօսքը լա Աուալէօլին ուղղելով — կրնա՞ք ըսել ինձ թէ՛ Արնուվիլ զեղը՞ Պ. Տիւպրէօյի ազարակը զիւրաւ կը գտնուի՞:

Լա Աուալէօլ այս խօսքէն՝ որ առաւօտեան տաժանելի դէպքը իրեն կը յիշեցնէր, սարսուռ մ'զգաց ակամայ, և սրտասխան տուաւ:

— Ազարակին շէքերն Արնուվիլ երթալու համար հետեւելիք անցքիդ երկու կողմերը կը գտնուին, պարտն:

— Իմ շնորհակալութիւնս կը կրկնեմ, դեղանի օրիորդ — ըսաւ Սէն-Րըմի և ընդ վաղ սպայիկն հեռ առաջ բռեց:

Գերկումին չքնաղ երեսը՝ Փլէօր տը Մարիին խօսելու աստն՝ փորք ինչ պարզեր էր: բաց երբ միակ մնաց, խորին մտաւանջութեան մը պոկուն ու մթին երեւոյթ մ'առաւ: Փլէօր-տը-Մարի՛ յիշելով այն անձանօթ անձն՝ որուն համար տիկին Լիւանէյի հրամանաւ Արնուվիլի ազարակին տաղաւարն արտօրնօք կը պատրաստէին, իսկոյն մտաբերեց որ այն անձը այն նորատի զեղեցիկ ձիաւորը պիտի ըլլայ:

Նժողոմներուն վարդը դեռ ևս տասանեց սառուցէն քարացած դե-
տինը, սպա նուաղեցաւ, դաղրեցաւ և ամէն բան նորէն իր սողի լը-
ւու թեան մէջ մտաւ . . . : Գորդիյար շունչ առաւ : Իր դաւակից-
ներուն խրախոյս և ազդ տալու համար, որոյմէ մին, Մէդր ա՛է-
քօլ, ձիււորներուն անպէն խոյս տուեր էր, Պրա-Ռուժին որ-
դին գոչեց :

— Հանիկա ահա եկայ . . . լաւ կնկան մը հետ որ քեզ պիտի
օղնէ . . . :

— Ըո՛ւտ, շո՛ւտ, տղա՛ս, սա ձիււոր պարտնը քանի մը վայրկեան
կորսնցնել տուաւ մեզ . . . — ըսաւ լա կուսէօզ աւելի շուտ քայ-
լելով՝ որպէս զի դարուստ ճամբուն անկիւնը հասնի :

Այն ինչ հոն հասաւ՝ լա Ըուէդ, որ այն տեղ կը կենար գոչեց .
— Հասի՛ր, հոգի՛ :

Ապա լա կուսէօզին վրայ ցատկելով՝ լա Ըուէդ մէկ ձեռնով ա-
նոր վզէն բռնեց և միւսով շրթերը սեղմեց, մինչդեռ Գորդիյար
դեռ հաս օրիորդին ոտքն իյնալով՝ սրունքներուն կը սլուէր որ չը-
կրնայ քալել :

Այնպիսի արագութեամբ կատարուեցաւ այս բանն որ լա Ըուէդ
ժամանակ չունեցեր էր լա կուսէօզին դէմքը քննելու . սակայն այն
սուղ միջոցին որ Մէդր ա՛էքօլ իր պլած ծակէն ելնելու կը ջանար,
և առ խարխափ յառաջ կը ար դրդելակով՝ պատաւը իր վաղեմի որ-
սը ճանչեց :

— Բեկըիօ՛ղն է . . . — ստուաց նա սուաջ ապշելով . սպա վայ-
րաբ նիծութեամբ յարեց : — Նորէն սողես ելար դու . . . : Ա՛հ,
անշուշտ սագանը քեզ կը զրկէ ինձ . . . քու ճակատաղիրդ է միշտ
ճիւղանիս տակ իյնալ . . . : Արջասպս կտրքին մէջն է . . . , այս ան-
գամ ա՛լ սիրուն երեսդ պիտի լուսա՛նսու . . . : Ինչու որ կուսա-
կան կերպարանքդ իմ ջեղէրո՞ւ կը դպի . . . : Մա՛րդ, կարողը քուկդ
է . և նայէ որ քեզ չխածնէ և լա բռնէ, մինչդեռ զանի պիտի
յիսթթենք . . . :

Մէդր ա՛էքօլ իր երկու հոժկու ձեռքովը լա կուսէօզը վերուց :

Ք դեռ ևս ճիկ մը չհանած՝ լա Ըուէդ վերարկուն անոր զլուխը նե-
տեց և սլինդ մը պլեց : Ֆլէօր-ար-Մարի բուսէի մէջ այսպէս կապ-
ուելով՝ շարժում մ՛ընելու կամ օգնութեան կոչելու անկարող եղաւ :

— Հինակ, ծրարը շալկէ նայինք, հոգի . . . — ըսաւ լա Ըուէդ :
Հէ՛, հէ՛, հէ՛ : . . . Սէն-Մարգէնի ջրանցքին խզուած կնկան կապ-
ջէ՛ն չափ ծանր չէ այս . . . այսպէս չէ՞, մարդս : — Եւ որովհետեւ
այս խօսքիս աւազակը կը դողդղար դիշերուան դարհուրելի երազը յի-
շելով, միակնուհին վրայ բերաւ : — Այդ ի՛նչ է, ի՛նչ ունիս հո-
ղի . . . կարծես թէ կը սրբիսա . . . առ առօտէն ՚ի վեր ականներդ
ատեն ատեն իրարու կը զարնեն իբր թէ ջերմ՝ ունիս, և ան ատեն
դէպ ՚ի վեր օդը կը նայիս որպէս թէ անոր մէջ բան մը կը փընտ-
ոես :

— Ի՛նչ կոշտ ու կլոր վարսետորդի է . . . ճանձերուն թուշիւր կց
նայի — ըսաւ Գորդիյար :

— Ըուտ քայէնք, ճամբայ ա՛ռ մարդս, աղէկ մը սլուէ Բէկ-
ըիօդիս . . . հիմա կարդին է — վրայ բերաւ լա Ըուէդ երբ տեսաւ
որ աւաղակը քնացող մանկիկի մը պէս Ֆլէօր-ար-Մարին իր բա-
զուկներուն մէջն առաւ : — Ըիտակ . . . շիտակ կտրքը քար :

— Բայց ո՞վ պիտի առաջնորդէ զիս — հարցուց Մէդր ա՛էքօլ
խոր ձայնով մը և իր հերակնէսեան թևերուն մէջ դիւրաշարժ և
թեթեւ բեռը սեղմեց :

— Մեծ զլուխ ծերս, ինչպէս ամէն բանի կը մտածէ — ըսաւ
լա Ըուէդ :

Եւ իր շարժ մեղիքի ընելով՝ ոսկրուտ վիզը ծածկող կարմիր մե-
տաքաէ թաշկինակը հանեց, կիսովին ոլորեց և Մէդր ա՛էքօլին ըսաւ :

— Բերանդ (gargoine) բա՛ց, ահա աներուդ մէջ առ թաշկինակիս
ձայրը և լա մը սեղմէ . . . Գորդիյարն ալ միւս ծայրը ձեռքը կ՛առ-
նու, և անոր ետեէն կ՛երթաս . . . ընտիր կցրին . . . ընտիր շուն մը
. . . : Հոս եկու՛ր, լակոտ :

Փոքրիկ կաղը սաստանեց, ցած ձայնով մը շունի պէս կաղխանձեց,
ձեռնովը թաշկինակին միւս ծայրն առաւ և այսպէս Մէդր ա՛էքօլի

առանջորդեց, մինչդեռ լա Շուէդ շուտ ընդ փոյթ կը քայլէր Պարսպիցի իմաց տալու համար, երբ Քլէօր-տը-Մարի լա Շուէդին և Մէդը տէքօլին լծին տակ ընկան՝ այնպիսի սարսափ մ'զգաց զոր աւելոյ՞ համարեցինը նկարագրելու: Բոլորովին նուազեցաւ և թևթև ընդդիմութիւն մ'անգամ չըրաւ:

Քանի մը վայրկիւնէ ետքը՝ լա Կուպէօղ Պարսպիցի կատըր փոխադրուեր էր: Թէև մութը կոխեր էր՝ կատըին վարագոյրները դոյնցին, և երեք դարանակալները իրենց գրեթէ կիսամեռ որսին հետ Սէն-Տընիի գաշար գիւմեցին, ուր Թոմաս Սէյդօն իրենց կ'սպասէր:

ԳՂՈՒԽ Գ.

ՔԼԵՍԵՍ Տ'ԱՐՎԻԼ

Ընթերցող, անշուշտ ներողամիտ կը լայ մեզ որ մեր գիւցազնուհիներէն մին այսպիսի փափուկ վիճակի մը մէջ կը ձգենք, վիճակ մ'որուն վախճանը վերջէն պիտի պատմենք:

Պարտ է յիշել որ Ռօտտըֆ մեծ վտանգէ մ'ազատեր էր աիկին տ'Արվիլը, վտանգ մ'որ Սառաի նախանձէն ծագեր էր, Պ. տ'Արվիլը իմաց տալով՝ մարքիդուհիին անխոհեմութեամբ շնորհած ժամողրութիւնը Պ. Շարլ Ռօպէրին: Իշխանն այս տեսարանէն սաստիկ յուզուելով՝ Գանըլ փողոցի սունէն էր, իր սունը գացեր էր, և միւս օրուան ձգեր էր օրիորդ Ռիկօլէդին և մեր արդէն անարկած ողորմելի ընտանիքին ընելը այցելութիւնը: Ըստ որում, կարծէր թէ անոնց պիտայից հողը տարուեր է, անոնց համար մարքիդուհիին յանձնած ստակին միջոցաւ, որպէս զի ողորմասիրական երեւոյթ ունեցող այցելութիւնն Պ. տ'Արվիլի աչքին աւելի հաւանական թուի: Գժբաղդօրէն Ռօտտըֆ անտեղեակ էր որ Գօրգիլյար սուած քոսկը յափշտակած է, և արդէն զիտենք թէ փոքրիկ կաղն ի'նչ յանդրդնութեամբ կատարեց այն դողութիւնը:

Ժամը չորսին միջոցներն իշխանը հետևեալ դիրն ընդունեց... Տարւօք կին մը բերեր էր զայն և առանց պատասխանին սպասելութողէր գացեր էր:

Տէր իմ, «Կեանքէս աւելի անդին բան մը կը սարսափորիմ՝ ձեզ իմ խորին երախտադիտութիւնս այսօր իսկ կը փափաքէի յայտնել: Թերևս վաղը ամօթաբարտութիւնը զիս անխօս դարձնէ...: Եթէ Չ. Վ. այս իրկուն իր այցելութեամբը զիս սթատուէ, պիտի լրացնէ այս օրն, ինչպէս որ սկսաւ, վեհանձնական գործով մը:

ՏՕՐՊԻՅՆԻ-ՏՂՐՎԻԼ

«Յ. Գ. Տէր իմ, ինձ պատասխան տալու ծանրութիւնը մ'առնէր, բոլոր իրկունը տունը պիտի գանուիմ:»

Թէև Ռօտտըֆ կը հրճուէր աիկին տ'Արվիլի նշանաւոր ծառայութիւն մ'ընելուն՝ սակայն միւս կողմէն կը ցաւէր որ այս առթիւ յանկարծ իր և անոր մէջ բունի մտերմութիւն մը կը հաստատուի:

Ռօտտըֆ ամիս մը աիկին տ'Արվիլի հետ շարունակ անտուէլէն ետև՝ զաղբեր էր անոր մօտ դեղերեղու, վասն զի Պ. տ'Արվիլի բարեկամութեան մատնու ըլլալ չէր ուզեր, թէև Քլէմանտի ոչիմ շնորհներէն և սրտադրաւ դեղեցկութենէ յուզուած կ'երեւէր ու անոր վրայ ջերմ համակրութիւն մը կը տածէր: Ուստի * * * զեսպա նատունը Թոմ ու Սառաի մէջ գաղանի լսած խօսակցութիւնը քանի յիշէր կ'այլայլէր: Սառա իր ատելութեան և նախանձին իբր փաստ և իրաւամբ՝ մէջ բերեր էր, աիկին տ'Արվիլի գրեթէ յանդէտս զգացած անկասկածելի սէրն սու Ռօտտըֆ: Սառա այնչափ հնարաղէտ, այնչափ նրբամիտ, այնչափ մարդկային սրտի հմուտ էր՝ որ անսարակցոյ հասկցած պիտի ըլլար թէ Քլէմանտ իր վրայ խորին սպաւորութիւն մ'ընող մարդէ մ'ինքնիկը մտցուած, անդոնուած կարծելով՝ նենդաւոր բարեկամուհի մը թեթաղութիւններուն տու բնու զիջեր, և Պ. Շարլ Ռօպէրի և երևակայական թշուառութիւններուն կարեկից գոհուեր էր՝ առանց Ռօտտըֆը լիովին սրտէն հանելու: Ուրիշ կիներ իրենց անդէն սիրած մարդուն յիշատակին հաւատարիմ մնալով՝ հրամանաբար ըն մե լամարձոտ ակնարկներուն անսարբեր կը մնային: Ուրեմն Քլէմանտ տ'Արվիլ կրկնակի մեղապարս եղաւ, թէև ինքը թշուառու:

Թեան հրապոյրին չգիմացաւ և պարտուց վառվառն զգացում մը
 Թերևս եշխանին յիշատակին միանալով՝ յիշատակ մ'որ միշտ սրտին
 խորը կը հսկէր, անդարմանելի մոլար քայլէ մը զինքը կը սրահ-
 պանէր :

Ռօտովֆ աիկին տ'Արվիլի հեռ ունենալը սեսութեան մտածելով
 այլանդակ աւ անհեղեղ խորհրդածութիւններու մէջ կ'ընկղմէր :
 Հաստատ միտքը դրած ըլլալով աւ այն ունեցած հակումը զսպել,
 մերթ կ'ուրախանար որ զանի սիրելէն պիտի կարենայ դադրել, մերթ
 դառնապէս կը տրտմէր որ անոր վրայ մինչ ցարդ ունեցած համա-
 քումը վարատեցաւ :

Քլէմանտ տ'Արվիլին ալ իր կողմէն անհամբեր կ'սպասէր այս տե-
 սութեան : Իր աիրական երկու զգացումներն էին՝ վշտալի շփոթու-
 թիւն՝ երբ Ռօտովֆին վրայ կը խորհէր : Խորին ատելութիւն՝
 երբ Պ. Շարլ Ռօպէրին կը մտածէր : Այս հակասակութեան ,
 այս ատելութեան պատճառները շատ էին : Աին մ'իբ հանդստութիւ-
 նը , իր պատիւը վտանգի մէջ կը դնէ մարդու մը համար , սակայն
 երբէք չներեր անոր՝ եթէ անոր ձեռօք նուաստկամ ծաղրելի վիճակի
 մը մէջ ընկնի : Արդ՝ տիկին տ'Արվիլին՝ որ տիկին Բիբլէի հեզնական
 զրոյցներուն և թշնամալի ակնարկներուն նշաւակ եղեր էր , ամօթէն
 մազ մնաց պիտի մեռնէր : Այս բաւական չէր : Երբ Քլէմանտ Ռօ-
 տովֆէն իմացաւ զսնուած վտանգը՝ արտորնօք հինգերորդ դասիկներ
 ելեր էր . սանդուղն այնպիսի ձև մ'ունէր որ վեր ենկելու ատենը Պ.
 Շարլ Ռօպէրը անսեր էր իր շողշողուն պարեգօտը հաղած , այն
 միջոցին որ իբ արասած կնիսն ոտքի թեթև ձայնը լսելով դուռը
 կէս մը կը բանար գեղածիծաղ , վստահ և յաղթական գէմբով մը
 . . . : Հրամանատարին լսկրը ու անձուռնի հազատին ձևէն մարքի-
 զութիւն հասկցաւ որ մեծապէս սխալեր է այս մարդուն վրայ ունե-
 ցած կարծիքին մէջ : Իբ սրտին բարութենէ , բնաւորութեան վեհ-
 անձութենէ այնպիսի վտանգաւոր քայլ մ'առնելու մղուելով՝ Քլէ-
 մանտ չէ թէ սիրոյ՝ սյլ արդահատութեան զրդմամբն ւոյն ժամադ-

բութիւնը շնորհեր էր անոր , որպէս զի Լիւանէյ դքսին՝ * * * դես-
 սանատունը ցոյց տուած ծիծաղելի վարմունքին համար զինքը մը-
 խիթարէ : Ընթերցողին կը թողուր երեակայել թէ տիկին տ'Ար-
 վիլ Պ. Շարլ Ռօպէրը տեսնելուն ինչ դող ու զզուանք զգաց . . .
 այն Շարլ Ռօպէրն՝ որ կանխաւ իբր յաղթական հաղուեր էր . . .

Տիկին տ'Արվիլի սովորաբար նստած փոքր սրահին ժամացոյցն ար-
 դէն ժամը իննը զարկեր էր : Լուի Ժե.ի և Աերաշնութեան (Re-
 naissance) ժամանակին յարդն ու զարդը այնչափ ստեղծ գործածեր
 էին նորասիրութիւններն (modiste) ու զինեպանները , որ մարքիզու-
 ճին , ամէնընտիր ճաշակի տէր կին մը , հրամայեր էր որ այնքան
 դուհիկ դարձած ճոխութիւն մ'իբ սենեկին մէջ չտեսնուի և թողեր
 էր որ տ'Արվիլի ապարանին այն մասերուն մէջ միայն մուտ ունենայ,
 որոնք հանդիսաւոր հիւրընկալութիւններու համար յատկացած էին :
 Չկար կահ մ'այնքան վայելուչ ու հոյակապ քան այն սրահինն՝ ուր
 մարքիզուճին Ռօտովֆին կ'սպասէր : Սրահակն (tenture) ու վա-
 րադոյրներն , աւանց վիժակի (pente) և երկններու , հնդկային յար-
 դազոյն կերտասէ շինուած էին . սոյն փայլուն երեսին վրայ՝ համա-
 զոյն անխալ մետաքսէ՛ , չքնաղ և քմածին (capricieux) յորինուած
 ասեղնակերտ նկարներ կ'երևէին : Ալանսօնի կրկնակ կիտանիշ վարա-
 զոյրներ ապակիները կը ծածկէին լիովին : Գուները վարդեփայտէ-
 էին և զեղաղարուած նրբակերտ քանդակեալ ոսկեզօծ արծթէ քի-
 ւերով , որ շուրջ կը պատէին դրան ամէն մէկ ճակտին (panneau)
 վրայ . մէկ ոտք տրամադիծ ունեցող Սէվրի յախճապակէ ձուածն
 շքադրամ՝ մը կատարուն և հիանալի փայլութեամբ թոշուններ և
 ծաղկներ կը ներկայէր , Հայլինբրուն շրջանակները նոյնպէս և սրա-
 հակին նուրբ գաւազանները վարդափայտ էին և մի և նոյն ոսկեզօծ-
 եալ արծթէ զարդերով զեղաղարդ : Ճերմակ մարմարիոնէ կրակա-
 բանին ծիրն և իբ հնատիպ գեղեցկութեամբ և գողտրիկ ճաշակովը
 շինուած երկու անդրիններ (cariatide) Մարքէդդիի վարպետ գըր-
 չէն (ciseau) ելեր էին : Այս մեծ արհեստաղէտը յանձն առեր
 էր սոյն զմայելի հրաշակերտը քանդակել՝ անշուշտ յիշելով որ Պէն-

ալընուդոն ալ չէր անդոններ բղուկներ (aiguïère) և զէն ու զարդ յօրինելու : Երկու ոսկեգօծ (vermeil) աշտանակ և երկու ջահ՝ իբր խումբ խումբ անբլիթներ (figurine) զոր կողքեր ուշի ուշով քանդակեր էր, կը զարդարէին ժամացոյցը՝ այս ժամացոյցը արեւելեան յապիսէ կուտանի մը (socle) վրայ՝ լաժուարուէ միակտուր քառակուսի հասար մ'էր, (bloc) իր վերէն ունէր լայն ու շքեղ ոսկեղէն արծնեայ սիլիճ մը՝ (coupe) մաքրարարով ու սաւտակնով զարդարուն և Գլօքանիսի Վերաշինութեան ամենէն գեղեցիկ ժամանակը Քնուած էր : Վէնէտիկի գարտեքն ելած շատ մ'ընտիր և միջին մեծութեամբ պատկերներ կը կատարելագործէին այս փառաւոր և վայելուչ արագին գեղն ու զարդը :

Այս սիրուն սրահը՝ հիանալի նորաձեւութեան մը շնորհիւ՝ մեզ միկ լուսաւորուած էր լամպարով մ'որուն անողորկ բիւրեղեայ գունգը կիսովին կ'երեւէր բնական ծաղիկներու վնջի մը մէջ : Թարթի կասարյա , ծիրանի և ոսկեղոյն կուժ մը՝ խորունկ ու սհագին կը պարունակէր սոյն ծաղիկներն և իբր ջահ մը՝ ձեղունէն կախուած էր արծթէ երեք խոշոր օղակներով՝ որոց սրաստառակ բոյսերու բազմամիկ զայարի բուներ ոլորուեր էին . քանի մը ճապուկ (flexible) ու ծաղկալիք ոտներ կուժէն դուրս վիժելով՝ զալարազեղ ծոպերու պէս՝ կը ծածանէին շնորհալի՝ ծիրանի , սկի և կապոյտ գոյներով արծնեալ (émailler) յախճապակին վրայ : Այս պարագաներն՝ թէև աննշան մանր կը նկարագրենք՝ որպէս զի տիկին տ'Արվիլը ընդարդոյս ընտիր ճաշակին վրայ գաղափար մը ասնք (որ ընտիր մտքի ալ անվրէպ նշանն է), նոյնպէս և բացատրենք թէ կան զանազան աղէտներ որ աւելի զառնակսիւծ կ'երեւին՝ երբ ամենուն աչքին կեանքը երջանիկ և փափաքելի ընող երեւոյթներու հետ զխմայատիկը մը կ'ընծայեն :

Վարդապոյն կերպասով լիովին սրտած մեծ թիկնաթոփ մը վրայ նստեր էր Քլեմանս տ'Արվիլ , որ իր բնական մազերով զարդարուն , հաղեր էր սև թաւի շրջազգեստ մը , որուն վրայ իր լայն փողկապին հրաշակերտ բանուածն և անզղեակիսն ոճով տափառ թեքները (manchette) կը նկարուէին , և կ'արգիլէին որ թաւիկն

սևութիւնն իր ձեռներուն և վզին ձիւնափայլ սպիտակութեան հետ որոշապէս տըքի չզարնեն :

Քանի Ռօտովֆին հետ ընելիք տեսութեան ժամը կը մօտենար՝ մարքիստ հիւն այլայլութիւնը կ'աւելար : Այլ սակայն իր մտատանջութեան վերջ տուա հաստատուն որոշում մ'ընելով . բաւական խորհրդածելէն ետև՝ միտքը դուռ մեծ . . . անագորոյն զաղանիք մը յայտնել Ռօտովֆին , յուսալով որ իր ծայրալիք վստահութեամբ կրնար անոր փախարելի համարումը շահիլ : Ա. Ռօտովֆ ունեցած նախորդ հակուք երախտադիտութենէ արծարծուելով՝ նոր զօրութեամբ մը կը գրգռէր : Նախազգածում մ'որով սիրող սիրտերը հաղիւ կը խաբուին՝ կրտէր իրեն թէ լոկ զիպուածով չէր որ Ռօտովֆ ճիշտ ժամանակին եկաւ զինքը ազատելու համար , և թէ քանի մ'ամսէ վեր իրեն հետ տեսակցութիւնը դարբեցնելուն բուն պատճառն անտարբերութենէ տարբեր զգացում մ'է : Անորոշ բնազդում մը Քլեմանսի մտքին մէջ կատարածներ կը յարուցանէր Սառայի սիրոյն անկեղծութեան վրայ : Քանի մը վայրկիւնէ ետքը՝ սենեկապան մը ներս մտաւ մեղմիկ մը դուռը զարնելէն ետև :

— Մարբիզուհի , արգեօք կը հաճիք ընդունելու տիկին Ասմօնն և օրիորդը :

Տիկին տ'Արվիլ գլխովը հաւանութեան նշմայր մ'ըրաւ և իր դուստրը կամայով մը սրահը մտաւ :

Չորս տարեկան աղջիկ մ'էր , որ անշուշտ չքնաղ երես մը սիրտի ունենար եթէ այնչափ հիւանդոտ , գունատ և յետին աստիճան նիհար չըլար . Քլեր (այս էր աղջկան անունը) թէև տկար՝ դէպ իր մօրը փութաց թեւերը բանալով : Աերասաղոյն ժապարէններու երկու հանդոցներ իր քունքին մէն մի կողմէն կարեր էին թուի մազերն , որ հիւսուած և պառկած էին ճակտին երկու կողմը , այնքան վատառող էր որ գորշ մետաքսէ բանդակամած (ouaté) պարեզօտ մը (douillette) հաղեր էր , փոխանակ շլարէ սիրուն շրջազգեստ մը հագնելու , որ զլիկ զարդին յարմար նարօտներով յօրինուած և բաւական բաց կըլան , որպէս զի վարդապոյն փորրիկ թե-

ւերն , թարմ ու մնչուտի պէս ուսերն երևին , ինչպէս որ կայտառ մանկիկներն ունին չքնաղ 'ի տես : Քլէրի մեծ սև աչերը կարծես թէ ահազին կ'երևէին՝ այնչափ զողաւոր էին իր այտերը : Թէև երևոյթը սուսայտ՝ երբ Քլէր՝ իր մօրը ծնկերուն վրայ նստաւ , որ տեսակ մը տրտում և եռանդուն գորովանքը զանի կը համբուրէր , գողտրիկ ու շնորհալի ժպտո մ'եկաւ իր դէմքը պարզեց :

— Անկից 'ի վեր ինչպէ՞ս կը դանուի , տիկին Ասթօն — հարցոյց մարբիզուհին դայեկին :

— Բաւական աղէկ է , տիկին , թէև պահ մը վախցոյց որ . . . :

— Ի՞նչ , նորէն — գոչեց Քլէմանս , և իր դուստրը սրտին վրայ սեղմեց ակամայ ահ ու դողի շարժումով մը :

— Բարեբաղդօրէն , տիկին , սխալեր էի — ըսաւ դայեակը — ախար նորէն չընեսց . օրիորդ Քլէր հանդիսաւ անցոյց օրը , և վայրկեան մը միայն տկարութիւն զգաց . . . : Ախորէն ետև քիչ քնացաւ , բայց ձեզ տիկինս դրկեղէն առաջ չուզեց պառկելու երթալ :

— Սիրական փոքրիկ հրեշտակս — ըսաւ տիկին ա'Արվիլ իր աղջիկին շատ մը պաշխիկներ տալով :

Քլէր մանկային խնդութեամբ սոյն դղուանքը կը հատուցանէր , երբ պայիկ մը սրահին դրան երկու փեղկերը բացաւ և ծանոց .

— Նորին վսեմութիւնն ժէրօլդէյնի մեծ - դուքսը :

Քլէր՝ իր մօրը ծնկերուն վրայ կեցեր՝ իր երկու թևերն անոր վրին փարեք գորովալիւր կը համբուրէր զանի : Քլէմանս Ռօտուլֆը տեսնելուն կարմրեցաւ , դուստրն օթոցին վրայ դրաւ մեղմիկ , նշան ըրաւ տիկին Ասթօնին որ առնէ տանի և ոտք ելաւ :

— Անշուշտ կը ներէք ինձ , — ըսաւ Ռօտուլֆ ժպտելով՝ մարբիզուհին յարդանօք բարևելէն ետև — որ իմ հին փոքրիկ բարեկամուհիին հետ ծանօթութիւնս նորողեմ , քանի որ զիս մոռցած պիտի ըլլայ վախճամ : — և փոքր ինչ ծուելով ձեռնը Քլէրին երկնցոյց . . . : Փոքրիկ օրիորդը 'ի սկզբան իր երկու խոշոր աչերն անոր յանոց հետաքրքիր , ապա զանի ճանչելով , գլխովը սիրուն նշան մ'ըրաւ և իր նիհար մատերուն ծայրումն անոր համբոյր մը զըլեց :

— Միթէ ճանչցա՞ր վսեմափայլ տէրն , աղջիկս — հարցոյց Քլէմանս Քլէրին , որ հաստատական կերպով գլուխը ծռեց և նոր համբոյր մ'ուղղեց Ռօտուլֆին :

— Վերջին տեսութենէս 'ի վեր իր առողջութիւնը աւելի կ'աղդուրած կը գտնեմ — ըսաւ հոգատարութեամբ Քլէմանսին դառնալով :

— Տէր իմ , լաւաղցն կ'երևի , թէև միշտ ցաւազար է :

— Մարբիզուհին և իշխանն՝ որ իրենց մտալուտ տեսութեան խորհելով շփոթեր էին , դո՛հ էին որ Քլէրին ներկայութենէ սոյն տեսութիւնը քանի մը բոսէ ետ մնաց . բայց դայեակը խոհեմաբար օրիորդը տանելուն՝ Ռօտուլֆ և Քլէմանս միայնակ մնացին :

Տիկին ա'Արվիլի թիկնաթոռը կրակարանին աջ կողմը դրուեց էր , որուն վրայ Ռօտուլֆ կանգուն ըլլալուն արմկովը թեթև մը կը յեռուր : Քլէմանս երբէք այնքան զարնուած չէր իշխանին ազնիւ և շնորհալի դէմքէն . երբէք ա՛նոր ձայնն այնքան անուշ և հնչուն երեցած չէր իրեն : Ռօտուլֆ զգաղով թէ որչափ դժուարին է մարբիզուհին այն խօսակցութիւնն սկսիլ , անոր ըսաւ :

— Տիկին , անարժան մատնութեան մը զո՛հ ընկեր էիք . Սառա Մակ-Արէկօր կոմսուհին մէկ վատ քաւթիւնս (délation) քիչ մնաց որ ձեզ 'ի կորուստ պիտի մատնէր :

— Աւրեմն ճշմարիտ է , տէր իմ — գոչեց Քլէմանս : — Իմ նախադրած ումներս անհիմն չէին . . . : Եւ ի՞նչպէս Ձեր վսեմութիւնը վերահաստ եղաւ . . . :

— Երէկ * * * կոմսուհին պարահանդէսը երևան հանեցի դիպուածով սոյն անօրէնութեան դաղտնիքը : Չմերային պարտիզին մէկ անքոյթ կողմը նստեր էի : Սառա կոմսուհին ու իր եղբայրը՝ չկասկածելով որ դալարսուէտ անտառակ մը զիս իրենցմէ կը բաժնէ , եկան ու իմ մօտս իրենց խորհուրդն բուն և ձեզի լարած դարանին վրայ խօսակցելու : Այս սքառնալից վտանգը ձեզ հաղորդելու համար տիկին Ներվալի ստորահանդէսը դայի շտապաւ , ձեզ այն տեղ գտնելու յուսով , բայց հանդէսը եկած չէիք : Ձեզ ուղղակի դրել , նամակս

մարքիզին ձեռքն ընկնելու վտանդն աչք առնել էր, քանի որ անոր կասկածներն անշուշտ արդէն շարժած պիտի ըլլային : Առաջոցն սեւեռի Գանրը փողոցն երթալ քեզ տղատել, Սառա կոմսուհին մատնու թիւնն ՚ի դերեւ հասնելու համար : Ար ներէք, այնպէս չէ՞, ձեզի երկարօրէն խօսելուս նիւթի մը վրայ որ անշուշտ անախորժ պիտի ըլլայ ձեզ : Եթէ ձեր բարեսրտութեան ներշնչած դիրն չըլկէիք . . . կենացս մէջ այս խնդրոցն վրայ ձեզ խօսելիք չունէի :

Պահ մը լուծիւն պահեւէն ետեւ՝ տիկինն ա՛րքիւն Ռօտովին ըսաւ :

— Իմ երախտագիտութիւնս ձեզի յայտնելու միակ միջոց մ'ունիմ, տէր իմ . . . այն է ձեզ խօստովանութիւն մ'ընել զոր ուրիշ մէկու մ'ըրած չեմ : Այս խօստովանութեամբ ձեր առջևն անդասիր չպիտի ելնեմ, բայց թերեւս այնքան մեղապարտ չէք զանեք իմ ընթացքս :

— Բայց ՚ի բաց ըսեմ, տիկին — վրայ բերաւ Ռօտովի ժպտելով — իմ կայտնութիւնս ձեր առջևը շատ փափուկ կը գտնեմ :

Քլէմանտ՝ Ռօտովին այս թեթեւ լեզուէն զարմացած՝ անոր երեւոր նայեցաւ շփոթալի :

— Ի՞նչ ըսել կուզէք, տէր իմ :

— Պարագայի մը շնորհիւ որուն տեղեակի ես, սափալուստ եմ, . . . փոքր ինչ ախտեան կանգնիլ սրտաբնարի մ'անթիւ, որ Սառա կոմսուհին պժղալի ծուղակէն ազատելն ետեւ՝ արժանի չէր այնչափ ուշադրութիւն գրաւելու . . . Բայց — յարեց Ռօտովի անուշ և սիրալի ծանրութեան երեւոյթով մը — ամուսինդ գրեթէ իմ եղբայրս է : Հայրս իր հօրն գորովալիք երախտագիտութիւն մը նուիրեք էր . . . Ուստի տուանց կատակի կը շնորհաւորեմ ձեզ որ ամուսնիդ հանգըստութիւնն ու անպահովութիւնը վերահաստատեցի :

— Ձեր բարեկամութեամբ Պ. ա՛րքիւն պատուելնուդ համար է, տէր իմ, որ ես սլ յատկապէս կը փափարիմ ճշմարտութիւնը շնորհիւ յայտնել ձեզ . . . Թէ համակրութեան մը վրայ, որ ձեզ չարաշուք ընտրութիւն մ'երեւցած պիտի ըլլայ, ինչպէս որ է երօք . . .

Թէ իմ վարձուցիս վրայ՝ որ նախատեսման է այն անձին զոր ձեր վստեմանապարտութիւնն գրեթէ իր եղբայրը կ'անուանէ . . .

— Տիկին, երջանիկ և հպարտ եմ երբ ձեր վստահութեան ամենախաթեթեւ մէկ նշանը կը տեսնեմ : Սակայն, ներեղէք ինձ ըսելու ձեր ակնարկած համակրութեան վրայ թէ աւելի անսուտ գիտատիրութեան մը յորդորուեցաք քան Սառա Մակ-Արէկօր կոմսուհին թեւազրու թեանէ, քանի որ նա իր պատճառներն ունէր ձեր կորուստը յարգաբերու . . . : Գիտեմ նաև որ երկայն ժամանակ վարանեցաք մինչև որ ձեր ողբացած ընթացքը բռնելու որոշումն ըրիք :

Քլէմանտ զարմանօք գիտեց իշխանը :

— Ար զարմանաք այս խօսքիս : Աւրիշ օր մ'իմ գաղանիքս ձեզ կը հաղորդեմ, որպէս զի ձեր աչքին վհուկ մը չ'երևիմ — վրայ բերաւ Ռօտովի ժպտելով : — Բայց միթէ ձեր ամուսինը բողբոլին հանդարտութիւնը գտա՞ւ :

— Այո՛, տէր իմ — ըսաւ Քլէմանտ աչերը վար ստնելով ամօթապարտ — և, կը խոտովանիմ, ծանր կը թուի ինձ երբ կը նայիմ որ ներում կը խնդրէ իզնէ վրաս կասկածելուն՝ և իմ ողորմասէր գործերուս նկատմամբ համեստ լուծեանս վրայ կը հիանայ :

— Իր պատրանաց մէջ երջանիկ է, այս կողմէն մը մեղադրէք ինքզինքնիդ . միշտ մի և նոյն անուշ վերապակին մէջ պահեցէք զանի . . . : Եթէ ներելի ըլլար ինձ թեթեւօրէն խօսիլ այս գէսը իս վրայ, եթէ խնդիրը ձեր վրայ չգտունար, տիկին . . . պիտի ըսէի որ կին մ'իր ամուսնին համար աւելի հրապուրելի երեւոյթ մը կ'աւանու երբ զաղանի պահելու յանցանք մ'ունի : Ոչ որ կրնայ երևակայել թէ փոքր ինչ պարտաւոր խիղճ մը ի՞նչ սրտադրաւ փաղաքշանք կը ներշնչէ . . . : Գեռհասակ եղած ատենս — յարեց Ռօտովի ժպտելով — միշտ անորոշ անվստահութիւն մը կ'զգայի ախանայ՝ երբ սիրոյ շերմագին նշաններ տեսնէի, և որովհետեւ ես ալ իմ կողմէս համեմել կ'երեւի միայն երբ ներում խնդրելու վիճակի մէջ գտնուէի, տեսնելով որ ներգամտօրէն սիրալիք վարմունք մը, որով ես ալ երեւիլ կուզէի, կը գուցենն ինձ, վստահ էի որ այս ընտիր համամտութիւնը . . . փոխադարձ անհաւատարմութիւն մը կը սքօղէ :

— Այլընտրանքով ձեր վեհանաճառութիւնը, տէր իմ...: Ներքին է ձեզ այժմ կատակ ընել և մոռնալ այն վտանգն որմէ զիս պահպանեցիք...: Բայց իմ ձեզնի ըսելիքս այնչափ ծանրակշիռ, այնչափ մըթին է, այնչափ այս առաւօտեան դէպքերուն հետ յարաբերութիւնունի: խորհուրդներդ այնքան օգտաւէտ կրնան ըլլալ ինձ որ կ'ազդեսեմ ձեզ յիշելու ձեր իմ պատիւս ու կեանքս ազատել...: այո՛, տէր իմ, կեանքս...: Իմ ամուսինս զինուած էր, զիս սպաննել կողեր...: Ինչպէս որ իր ընթացքին վրայ սաստիկ զզարուլ խոտովանեցաւ:

— Տէր, Աստուած... — դռնեց Ռօտովի բռնն այլայլութեամբ մը:

— Այս իր իրաւունքն է... վրայ բերաւ տիկին տ'Արվիլ:

— Ազդաչեմ, տիկին — պատասխանեց Ռօտովի այս անդամ ծանր գէմքով մը — հաւատացէք ինձ, անկարող եմ ձեզ վերաբերող իրերուն անկարելից մնալ, եթէ փոքր ինչ առաջ կատակ ըրի, սլատաւուն այն էր որ չէի ուզեր ձեր միտքը այս առաւօտեան դէպքով տրտման համակել, դէպք մ'որ անտարակոյս սոսկալի այլայլութիւն մ'ազդած է ձեզ: Հիմակ, տիկին, երկիւղած ուշադրութեամբ մտիկ պիտի ընեմ ձեզ, քանի որ շնորհ կրնէք ըսելու ինձ թէ իմ խորհուրդներս կրնան ձեզ օգտակար ըլլալ:

— Ա՛հ, շատ օգտակար, տէր իմ: Սակայն այդ խորհուրդները ինդրելէն առաջ՝ ներեցէք ինձ ըսելու քանի մը խօսք ձեզ անծանօթ անցեալիս վրայ... ամուսնութեանս նախորդ տարիներուն վրայ:

Ռօտովի հաւանութիւն ցցուց, Քլէմանս շարունակեց:

— Տասը տարեկան էի՝ երբ մայրս կորուսի — ըսաւ նա՛ արուօր մը աչքէն հոսելով. աւելորդ է ըսել թէ որչափ կը պաշտէի զինքը. երևակայեցէք, տէր իմ, երկրիս վրայ բարութեան տեսլական պատկերը. առ իս գործը ծայրալիւ էր. անոր մէջ դառն վիշտերու խորին միթարութիւն մը կը գտնէր...: Ընկերութիւնները չէր սիրեր, փախկատուն կաղմուածք մ'ուներ, ի բնէ միայնասէր, ու իր միտքը

զուարճութիւնն եղած էր կրթութեանս հողը տանիլը. վասն զի իր հաստուն, բազմազան հնուութեամբը ամենէն ձեռնհասն էր իր վրայ սուած պաշտօնին: Գատեցէք, տէր իմ, թէ որչափ մեծ եղաւ թէ մօրս և թէ իմ զարմանքն երբ տաս տարու եղած ատենս, նոյն միջոցին որ իմ դաստիարակութիւնս գրեթէ աւարտած էր, հայրս մօրս վատառողջութիւնը սլատաւ բռնելով՝ իմացուց մեզ որ խիստ աշխուսեցի կին մ'որ իր թշուառութիւններուն համար կարեկցութեան արժանի էր, մօրս սկսածն աւարտելու յանձնառու պիտի ըլլայ...: Ի սկզբան մայրս գէմ կեցաւ հօրս առաջարկութեան: Ես ալ ազատեցի որ անոր և իմ մէջ օտար կին մը չբերէ. անուրբելե եղաւ մեր արաստքն առ ոչ ինչ գրեթէ: Տիկին Ռօյան, որ Հնդկաստան վախճանող հազարասիտի մը որբւարին էր...: Ինչպէս որ կըէր, մեր տունը եկաւ բնակելու և դաստիարակութիւն պաշտօն վարելու սահմանուեցաւ ինձի համար...:

— Ի՞նչ, միթէ այն տիկին Ռօյանն է որուն հետ ձեր հայրն աւսուցացաւ գրեթէ ձեր ամուսնութենէ անմիջապէս ետքը:

— Այո՛, տէր իմ:

— Միթէ շատ գեղանի է:

— Ըստ բաւակրանին սիրուն, տէր իմ:

— Շա՛տ մտացի ուրեմն:

— Աղծաւորութիւն... խորամանկութիւն ունի... և ոչ այլ ինչ...: Շուրջ քսան հինգ տարեկան էր, տոկոյն գեղձան մտքը՝ գրեթէ սպիտակ արականուց ունէր, և մեծ ու կլոր բաց կապոյտ աչեր...: Իր գէմքը հլու էր և աղու (doucereux), բնաւորութիւնն անդթութեան չափ նեղաւոր՝ ի վերին երեսս երեսպաշտ էր ցածութեան չափ:

— Այլ իր կրթութիւնը:

— Բողբոլին աննշան, տէր իմ, և չեմ կարող հասկնալ թէ ինչպէս հայրս, որ մինչև այն ատեն պատշաճութիւններու գերի էր, չմտածեր էր որ այս կնկան ապիկարութիւնը պիտի երևան հասնէր մեր տունը գտնուելուն ճշմարիտ նպատակն և գայթակղութիւն պի-

տի սրամառուէր: Մայրս ըսաւ անոր՝ թէ տիկին Րօլան ամենապէտ անձ թ'է. հայրս պատասխան տուաւ՝ այնպիսի շեշտով մ'որուն գիմադրութիւն չըլար, թէ գիտուն կամ ոչ, այս գեուհաս և բարեկիր կինն անյլէպ պիտի վարէ իրեն յանձնուած պաշտօնը: Այս բանս վերջէն իմացայ: Այն օրէն մայրս ամէն բան դուշակեց և սաստիկ վշտացաւ, ոչ այնչափ, կարծեմ, հօրս անհաւատարմութեան, որչափ այն ներքին անկարողութիւններուն վրայ որ պիտի ծագէր սոյն հասարկցութենէ... և որուն համբաւը կրնար մինչև ակննջը հասնիլ:

— Բայց, արդարև, իր յիմարական սիրոյն նկատմամբ անգամ, ձեր հայրը ծուռ հաշիւ մը կրնէր կարծեմ սոյն կինը իր տանը մէջ մտցնելով:

— Տէր իմ, ձեր զարմանքն աւելի պիտի սաստկանայ եթէ իմանաք որ հօրս սէս կարգապաշտ և (formaliste) սէզ (entier) բնաւորութեան տէր մարդ քիչ կայ. այսպէս ամէն սրտաշունթութիւն առ թան կոխելու համար... տիկին Րօլանի անչափ ազդեցութիւնը սէտք էր, և այս ազդեցութիւնն այնքան ստույգ էր որքան որ նա հօրս ունեցած բուն սիրոյն քողին տակ կը սրահէր:

- Բայց այն ժամանակ հայրդ քանի՞ տարեկան էր:
- Շուրջ վաթսուն տարեկան:
- Եւ միթէ այս գեուհաս կնկան սիրոյն կը հաւատարմէ:
- Հայրս իր ժամանակին ամենէն նորաձև մարդն էր... տիկին Րօլան իր բնազդովն կամ հնարագէտ խորհուրդներուն անսալով...
- Խորհուրդներ... և ո՞վ էր իր խորհրդատուն:

— Վերջէն պիտի ըսեմ, տէր իմ: Քաջ գիտնալով որ սիրականը իր մարդ մը, երբ ծերութեան տարիքը հասնի, կ'ախորժի իր արտաքին ճրից վրայ շողորթութիւններ ըսել, մանաւանդ երբ այս դովեսաներն իր կենաց ամենէն գեղեցիկ օրերը յուշ կ'ածեն, կը հաւատարմէ, տէր իմ, այս կինն սկսաւ իմ հօրս երեսին շէն շնորհը գովել, ահոր հասակին ու ձեւին աննման վայելչութիւնը գովել, և հայրըս վաթսուն տարեկան էր... Թէև իր բարձր իմացականութիւնը կը հռչակեն սակայն հայրս այս գուեհիկ ծուղակին մէջ կուրորէն ըն-

կաւ: Անտարակոյս՝ այս էր և է տակաւին սոյն կնկան ազդեցութեան սրամառուն անոր վրայ... Իրաւի, տէր իմ, թէև վիշտը կը համակէ զիս, ծիծաղս ակամայ կը շարժի երբ կը յիշեմ ամուսնութենէս առաջ տիկին Րօլանի խօսքը թէ՛ իբրևն հասնութիւնը կենաց ամենէն գեղեցիկ հասակն է... իրաւ է որ այս իբրևն հասնութիւնը միայն յիտուն հինգ կամ վաթսուն տարուան հասակէն կ'սկսէր:

- Այսինքն ձեր հօրը հասակէն:
- Այո՛, տէր իմ... Ահա այն ատեն միայն, կըսէր տիկին Րօլան, միտքն ու փորձառութիւնն իրենց յետին զարգացումը կընտանան, այն ատեն միայն աշխարհիս մէջ բարձր կացութիւն մ'ունեցող մարդ մ'իրեն վայել յարդն ու համարումը կը վայելէ, նոյնպէս այն ատեն միայն իր բոլոր կերպարանն, իր ձեւերուն շնորհն կատարելութեան կը հասնին, քանի որ նոյն ժամանակը մարդուս դիմադրութիւնը շնորհալի կայտառութեան և անուշ գգնութեան երկնային տիպար մը կը ներկայէ: Ի վերջէ մերամաղձութեան թեթև նըշոյլ մ'որ ՚ի փորձ երեւան ելած պատրանսայ անհրաժեշտ արդիւնքն է... իբրևն հասնութեան անդիմադրելի հրապոյրը կ'աւարտէր. և տիկին Րօլան կը փութար յարելու թէ՛ այս հրապոյրն անդին արժէք մ'ունի միայն ուշիմ և սրտեայ կիներուն համար՝ որ բաւական ճաշակ ունին քառսուն տարեկան փոքրիկ առահակներու պատանկան խոսկայոյղ քրքիջները անդոսնելու, որոց բնաւորութիւնն երբէք ապահովութիւն մը չընծայեր և մանկային աննշան կերպարանը գեու զուրկ է այն բանահիւսական վսեմ երեւոյթէն որ կենաց խորին գիտութիւնը կ'արտափայլէ:

Ռօտուֆ ծիծաղը չկրցաւ բռնել տիկին ա՛՛՛՛՛՛՛՛ Սերվիլի իր մօրուին (belle-mère) սրտակերն այսպիսի հեգնական աւիւնով մը նկարագրելուն վրայ:

- Բան մը կայ որուն համար, ըստ իս, աններելի են ծիծաղելի մարդիկ— ըսաւ նա մարբիղուհիին:
- Ի՞նչ է այդ բանը, տէր իմ:
- Իրենց չարամտութիւնը... որ կ'արդիլէ անոնց վրայ հաս-

դարտ սրտով ծիծաղելու :

— Կարելի է որ այդ բանն ալ իրենց մէկ հնարքն է— ըսաւ Քրէմանս :

— Շատ հաւանական է , սակայն ցաւարի բան մ'է այս : Ըստ որում , օրինակի համար , եթէ կարենայի մոռնալ տիկին Բօլանի ձեզ հասուցած կամաւոր չարիքը , շատ պիտի դուարձանայի անոր հնարած էրայան հասնութեան խնդրին վրայ , քառսուն տարեկան թիթև սօլիկ պարմաներու (étourneau) դէմ , և ըստ իր կարծեաց , կ'երևի թէ այս խոշոր թեթևսօլիկները նոր աշխարհի կը ծնեն , ինչպէս կրտսին մեր հին պապերը :

— Ամենէն շատ իմ ասելու թիւնս գրգռողը մօրս դէմ բռնուած զղուելի ընթացքն է . . . իմ ամուսնութեանս համար դժբաղդօրէն ազգու աջակցութիւն մ'ունենալն է— ըսաւ տիկին տ'Արվիլ պահ մը դեղեկէն ետև :

Ռօտոլֆ զարմանօք անոր նայեցաւ :

— Պ. տ'Արվիլ ձեր բարեկամն է , տէր իմ— վրայ բերաւ Քրէմանս հաստուն (ferme) ձայնով մը : — Արտասանած խօսքիս ծանրութիւնը կը ճանչեմ . . . : Աւերջէն պիտի հարցնէք անշուշտ եթէ իրաւացի են : Բայց այժմ տիկին Բօլանի դառնամ , որ իբր գաստիարակուհի սահմանուեցաւ , թէև գլխովին անկարող էր : Մայրս հօրս հետ այս կիտին վրայ ծանր վէճ մ'ունեցաւ , և այնուհետև հայրս ալ սկսաւ սատնութեամբ վարուիլ մեզի հետ . այն օրէն մեր սենեակը քաշուած ապրեցանք , մինչդեռ տիկին Բօլան հրապարակաւ տան տիկնութեան պաշտօնը կը վարէր , միշտ դաստիարակուհիի տիպօր պահելով :

— Արդեօք մայրդ ո՞րչափ կը վշտանար :

— Ոչ այնչափ իրեն՝ այլ ինձ համար , տէր իմ . վասն զի սպասուած կը մտածէր . . . Առողջութիւնն , որ արդէն շատ տկար էր , աւելի ևս տկարացաւ և ծանր հիւանդ եղաւ . բողբոն անպէս բերուրո տան բժիշկը , Պ. Սօրպիէ մեռնի . մայրս՝ որ մեծ վտահաւթիւն զննէ , անոր վրայ , չափազանց դաւ դրաց : Տիկին Բօլան Բտարացի

Խիստ արժանաւոր բժիշկ մ'ունէր իբր բարեկամ , կրտսեր . հայրս խաբուելով (circonvenir) երբեմն անոր խորհուրդ հարցուց , անկից օգուտ տեսաւ և մօրս առաջարկեց . մայրս ալ , բարէ՛ , իր բժիշկն ըրաւ զանի և իր վերջին հիւանդութեան ժամանակ նա խնամեց զինքը . . . : — Այս խօսքին տիկին տ'Արվիլի աչքին արտասուքով լցան : — Տէր իմ , կամչնամ այս տկարութիւնս յայսնելու— յարեց նա — բայց որովհետև տիկին Բօլան առաջարկեց սոյն բժիշկը հօրս , տկամայ հակակրութիւն մը կ'ըզայի անոր համար (թէև այն ատեն իրաւունք մը չունէի) . ահ ու դողով նկատեցի որ մայրս անոր կը վտասահի , սակայն դիտութեանը մասին տօքտօք Բօլխտորին . . . :

— Ի՞նչ կրտսեր , տիկին , — դռնեց Ռօտոլֆ :

— Ի՞նչ ունիք , տէր իմ— ըսաւ Քրէմանս Ռօտոլֆին կերպարանին երևոյթէն ապուշ կըլծած :

— Բայց ո՛չ— ըսաւ իշխանն ինքն իրեն խօսելով— անտարակոյս կը վրիպիմ . . . այս ըսածը հինգ վեց տարի առաջ պատահեր է , մինչդեռ ըսին ինձ թէ Բօլխտորին շուրջ երկու տարիէ 'ի վեր Բարիլ կը դանուի , սուտ անուշով մը . . . երէկ տեսած անձս ճիշտ նոյն ինքն . . . այն խարեբայ Պրատամանտին է . . . : Սակայն . . . ի՞նչ ֆրական դիպում . . . մի և նոյն անունն ունեցող երկու բժիշկ . . . : Տիկին , քանի մը խօսք ևս ըսէք սոյն Բօլխտորի տղքտօրին վրայ— ըսաւ Ռօտոլֆ տիկին տ'Արվիլին , որ անոր կը նայէր ևս քան զևս զարմանալով — քանի՞ տարեկան կար այս Բտարացին :

— Մօտ յիսուն տարեկան :

— հասցա իր գէմը . . . կերպարանն :

— Չա՛րադուշակ . . . երբէք չպիտի մոռնամ բաց դոյն կանաչ աչքին . . . արծառի կտցին պէս կորածև քիթը . . . :

— Նոյն ի՞նքն է . . . ճիշտ ի՞նքն է . . . — դռնեց Ռօտոլֆ — և միթէ կը կարծէ՞ք տիկին , որ տղքտօր Բօլխտորին տակաւին Բարիլ բնակի :

* Ալ յիշենք ընթերցողին որ Բօլխտորին անունի բժիշկ մ'էր երբ Ռօտոլֆին դաստիարակութեան գործն իր վրայ առաւ : (Ծ . 4.)

— Չ'դիտեմ, տէր իմ: Հօրս ամուսնութենէ մօտ տարի մ'ետորը Բարիզէն մեկնեցաւ. բարեկամութիւնքէս մէկը՝ որուն բժիշկն էր այն ժամանակ այս Իտալացին. . . տիկին տը Լիւսնէյ. . . :

— Տը Լիւսնէյ դքսուհին. — գոչեց Ռօտոլֆ :

— Այո՛, տէր իմ. . . : Ինչո՞ւ կը զարմանաս :

— Ներուի ինձ պատճառը չյայտնելու. . . : Բայց տիկին տը Լիւսնէյ այն ատեն ի՞նչ կըսէր ձեզ այս մարդուն վրայ :

— Կըսէր թէ Բարիզէն մեկնելէն ՚ի վեր ստէպ իրեն մտայի նա մակներ կը գրէր պտրած երկիրներուն վրայ, վասն զի շատ ճամբորդութիւններ կընէր. . . : Իսկ հիմակ. . . կը յիշեմ որ շուրջ աւիս մը կայ, երբ տիկին տը Լիւսնէյի հարցոյցի եթէ միշտ Բօլխտորէն գիր կ'ըստանայ՝ շիտած երեսով մ'ինձ պատասխան տուաւ թէ շատ ատենէ վեր անոր վրայ լուր մ'առած չունի, թէ ի՞նչ ըլլալն ոչ որ գիտէ, թէ ոմանք կըսեն նաև որ մեռած է. . . :

— Յիրաւի՛ զարմանք են. . . — ըսաւ Ռօտոլֆ տիկին տը Լիւսնէյի ճամբարտակ Պրատամանտիին ըրած այդ յիշելով :

— Արեմն դուք այս մարդը կը ճանչէք, տէր իմ :

— Այո՛, սև բաղդէս կը ճանչեմ. . . : Բայց, խնդրեմ, շարունակեցէք ձեր պատմութիւնը, վերջէն պիտի ըսեմ ձեզ թէ ի՞նչպէս մարդ է սոյն Բօլխտորին. . . :

— Ինչպէ՞ս, այս բժիշկը. . . :

— Աւելի լաւ է ըսել զարշելի օձիւրներով թաթախուած մարդը :

— Ռճիրնէր. . . — գոչեց տիկին տ'Արվիլ ահաբեկ : — Ի՞նչ, այս մարդն. . . տիկին Բօլանի բարեկամը, մօրս բժիշկն ոճիրներ գործած է. և մայրս քանի մ'օր հիւանդութիւն քաշելէն ետև՝ անոր ձեռքը մեռաւ. . . Ա՛հ, տէր իմ, իմ նախազգած ուսմերս անհիմն չէին :

— Չե՞ր նախազգած ուսմերը :

— Այո՛. . . քիչ մ'առաջ այս բժիշկին վրայ ունեցած համակրութեանս վրայ խօսելու ատենս՝ որովհետև տիկին Բօլանի ձեռք մեր տունը մտեր էր. . . ձեզ ամէն բան չէի յայտներ, տէր իմ. . . :

— Ինչպէ՞ս :

— Կարծէի որ թերևս անմեղ մը կ'անրաստանեմ, իմ վիշտերու դառնութեան շուտով կը միտիմ : Բայց այժմ ամէն բան երեւան պիտի հանեմ, տէր իմ : Մօրս հիւանդութիւնը հինգ օրէ վեր կը տեւէր. ես կը հսկէի միշտ անոր վրայ : Իրկուն մը մեր տան պատշգամն ելայ քիչ մը պարտիզին օդը ծծելու : Քառորդէ մ'ետքը մնութիւնը դարձայ : Տիկին Բօլանի սենեկին դռնէն ելող աղօս լուսով Պ. Բօլխտորին դուրս ելնելը դիտեցի : Այս կլինն անոր հետն էր : Ես մթին մէջն էի, և չէին կարող զիս տեսնել : Տիկին Բօլան խիստ ցած ձայնով քանի մը խօսք ըսաւ զօր չկրցայ լսել : Բժիշկը աւելի բարձր մինակ սա խօսքով պատասխանեց : Ասալ չէ՞ օր, եւ որովհետև տիկին Բօլան տակաւին ցած ձայնով կը խօսէր անոր՝ բժիշկը այլանդակ շեշտով մը վրայ բերաւ : — Ասալ չէ՞ օր, քանի չէ՞ օր, վաղ չէ՞ օր. . . :

— Այս խօսքերն ի՞նչ իմաստ ունէին :

— Ի՞նչ իմաստ, տէր իմ : Չորեքշաբթի Բօլխտորին, վաղ չէ օր. . . կըսէր, ուրբաթն օր. . . մայրս կը մեռնէր. . . :

— Ա՛հ, ի՞նչ ահօնելի բան. . . :

— Այս աղէտալի դէպքէն ետքը զիս ազդականի մը տուն տարին, որ իմ տարիքիս պահանջող զգուշութիւնը մոռնալով՝ յայտնեց ինձ աներկեան թէ՛ քանի իրաւունք ունէի տիկին Բօլանն ատելու, և միտքս բացաւ այս կնկան սպառազին մէջ ունենալիք փառաւեր յոսերուն վրայ : Այն ատեն լաւ ևս ըմբռնեցի թէ ի՞նչ տառապանք քաշած է մայրս : Առաջին անգամ որ հայրս տեսայ սիրտս կտոր կըտոր եղաւ. եկեր էր որ զիս առնու և Նօրմանտիա տանի, ուր մեր առաջին սգալի օրերը պիտի անցնէինք : Ճամբան յայտնեց ինձ անպակաս և իբր խիստ բնական բան մը թէ՛ իր և իմ լաւ բաղդէս, տիկին Բօլան տան հսգն վրան պիտի առնու, ինձ ստաջնորդ և ու բարեկամութիւն պիտի ըլլայ :

Երբ Օպիէ հասանք (այս է հօրս կալուածքին անունը) մեզ դիմաւորող առաջին անձն եղաւ տիկին Բօլան : Մօրս մահուան օրն այն

տեղ եկեր հաստատուեր էր : Իր հլու և աղու երեսին վրայ դիւրին է ընշմարել ներքին յաղթական ինդուլթիւնն զոր չէր կարող բողբոմ զին քողարկել : Իմ դարուս այն երդիծական ու շարակամ ակնարկն որ իմ վրայնետեց՝ երբեք չպիտի մոռնամ, կարծես թէ ինձ ըսել կուզէր : — Ես այս տեղ իմ ասնս մէջն եմ, դու հիւր մ'ես : — Արելիք նոր ցաւ մ'ալ ունէի . մարդավարութեան սննդերէն պակասուած թեմէ, ըսէք, կամ լայլորշ անխոհեմութեմէ՝ այս կիկնն իմ մօրս սեներական ընտրեր էր բնակելու համար : Սքստնութեանս մէջ՝ զանդատեցայ հօրս այս դժգոհի ընթացքէն . հայրս խստիւ պատասխանեց ինձ թէ ամենեւին պէտք չէ որ զչարիմ . քանի որ տիկին Բօլանն էբբ երկրորդ մայր մը նկատելու և յարգելու վարժիլ պէտք եմ : Ըսի անոր թէ այս նուիրական անունը սրբապղծել է . և անոր բարկութիւնն աչքս աւնետլով՝ տիկին Բօլանի դէմ ունեցած ատելութիւնս ամէն առթիւ կը յայտնէի . քանի քանի անգամ բարկութեան բրդաւ և սոյն կնիսն առջև զիս սաստեց : Ար յանդիմանէր միշտ որ ապաշորոհ և անդրայ եմ և Նախախնամութեան ծեղ դրուած այս մխիթարիչ հրեշտակին յարգը չեմ ճանչեր : Օր մ'անոր ըսի . — Ա՛ղաչեմ, հայր իմ, մինակ ձեզի համար խօսեցէք : — Այն ատեն աւելի խստիւ վարուեցաւ ինձի հետ : Տիկին Բօլան , իր մեղաբոյր ձայնով մէջ մտաւ և իմ թերս բռնեց յետին կեղծաւորութեամբ : — Ներողամիտ եղեր Քրէմանսին, կըսէր նա . — մեր շացած ընտիր անձին ներշնչած արամութիւնն այնչափ բնական է ու գովելի , որ անոր վիշտը յարգելու , և մինչև անգամ անիրաւ կատարածներուն ցաւակից ըլլալու պարտաւոր ենք : — Լաւ ուրեմն — կըսէր ինձ հայրս և հլանալով ցոյց կտար տիկին Բօլանը — կը ըսէք ի՞նչ կըսէ . քանի բարեխիրս , քանի վեհանաճն է : Շուտ ներուով ինդրեցէք իրմէ : — Մայրս զիս կը տեսնէ ու կը ըսէ . . . երբէք այս վատութեան պիտի չկարենայ հանդուրժել . . . ըսի հօրս, և դուրս ելայ , թողնով զինքը որ տիկին Բօլանը մխիթարելու և անոր սուտ ու պատիր արտաւոր սրբելու սպարապի . . . : Ներեցէք, տէր իմ, եթէ այս աննշան սրբադաները մանր կը պատմեմ, բայց անով

միայն կրնաք ըմբռնել թէ այն ժամանակն ի՞նչ կեանք կ'անցնէի : — Կարծեմ թէ այս ատենին տխուր և ճշմարիտ տեսարաններուն ներկայ կը գտնուիմ . . . : Քանի քանի ընտանեաց մէջ նոյն դէպքերը սլատահած են և դեռ ևս կը պատահին . . . բայց հայրդ ի՞նչ տնուեով կը ներկայէր տիկին Բօլանը դրացիներուն : — Եբբ իմ դատարարակուհիս և իր բարեկամութիւն . . . և ամէնքը անոր կը հաւատային : — Աւելորդ կը համարիմ հարցնելու եթէ հայրդ մի և նոյն միայնութեան մէջ կ'ապրէր : — Բայ ի քանի մը սլատահական այցելուներէ , որ դրացիութեան և գործերու յարաբերութեամբ կը յաճախէին մեր տունը , ոչ որ կը տեսնէինք , հայրս խանդով զվառ և անշուշտ տիկին Բօլանին թախանձանքին զիջանելով , հազիւ թէ երբ ամէն վերջը մօրս սուղը հանեց , պատճառելով որ սուղը . . . մարդ իր սրտին մէջ կը պահէ . . . : Իր պաղութիւնն իմ վրայ օր օրի կ'աւելնար . իր անտարբերութիւնն այն աստիճանի կը հասնէր որ իմ հասակին անյարմար ազատութիւն մը տուեր էր ինձ : Նախաձաշի ատեն կը տեսնէի զինքը . ապա սենեակը կը մտնէր տիկին Բօլանի հետ՝ որ իր թղթակցութեան պաշտօնը կը վարէր . և վերջն ալ կտրքով կամ հետի դուրս կ'երէր անոր հետ , ու ճաշէն ժամ մ'առաջ տուն կը գտնար . . . : Տիկին Բօլան նորաթիթիթ աղջկի պէս կը հազուէր կը շքուեր չքնաղ , հայրս ալ սյնպէս մանրակրկիտ էր իր հազատին համար որ այլանդակ կ'երևէր իր հասակին նկատմամբ : Երբեմն ճաշէն ետքը կամայ ակամայ սյլ և սյլ անձերու այցելութիւնը կ'ընդունէր , և ապա մինչև ժամը տասը տիկին Բօլանի հետ տասպալի կը խաղար , անկից ետքը թեք կտար անոր և մօրս սենեակը կը տանէր ու կը քաշուէր : Իսկ ես ըստ հաճոյս կ'անցնէի օրերս , երբեմն ձի կը հեծնէի սպասաւոր մը հետս աւնետլով , երբեմն դղեակը շրջապատող անտառները ման կգայի վեր վար : Անգամ մ'անհասարկն տրտմութեամբ համակուած նախաձաշի չգացի , հայրս և ոչ իսկ հոգ ըրաւ . . . :

այդ խօսքդ . . . իսկ այն կի՛նն . . . :

— Տիկին Բօլան դու չի՛կ այլ խիստ դիւրին հնարով մ'ոյս խօսակցութեան վերջ տուաւ . — Աստուած իմ, Աստուած իմ, — գոչեց և ընկաւ մարեցաւ . . . : Այս դիպումին շնորհիւր երկու հանդիսատեսս դրայիններն օգնութեան կանչելու պատրուակով զուրս ելան, ես ալ անոնց հետևեցայ, մինչդեռ հայրս սրտեռանդ խնամք սկսաւ վասնել տիկին Բօլանին :

— Արդեօք ո՛րչափ մեծ եղաւ ձեր հօրը վայրոյթն երբ ձեզ նուրէն տեսաւ :

— Միւս առտու սենեակս եկաւ և ինձ լսաւ : — Արսէս զի ապագային մէջ երեկեան տեսարանները չլրինուին, ահաասիկ կը յայտնեմ որ իմ և ձեր սղին տաժանելի ժամանակը անցնելուն, տիկին Բօլանին հետ սլիտի կարգուիմ : Աւտի այնուհետև պարտաւոր էք այն յարգական մարգավարութեամբ վարուիլ որուն արժանի է . . . իմ կէն . . . : Մասնաւոր պատճառներ ունիմ որ դուք իղնէ առաջ կարգուիք . ձեր մօրը հարստութիւնը մէկ միլիոն է, և այս է ձեր օժիտը : Այս օրէն յարմար ամուսնութիւն մը ձեզ պատրաստելու սլիտի աշխատիմ անդադար և արդէն ձեզի համար եղած առաջարկութեան մասին սլիտի բանակցիմ :

Այս խօսակցութենէ ետքը աւելի միայնակ կեանք մ'անցուցի : Ճաշի ժամանակները միայն կը տեսնէի հայրս, որոնք մթին լուսութեամբ մը կ'անցնէին : Այնպիսի տխուր արտում կեանք մը կը վարէի որ անհամբեր կ'ստրաւէի այն ժաման որ հօրս առաջարկելը որ և է ամուսնութիւնը բնդունիմ . . . , Տիկին Բօլան մօրս վրայ գէշ խօսելու գաղբիւն էտե՛ վրէժը կը լուծէր զին ամէն վայրկեան տանջելով, իմ մօրս վերաբերող բաները կամաւ կը դործածէր որ զին զայրացնէ . իր թիկնաթողը, իր բանուածքի դործին, իր մասնաւոր դրքատան դիրքերը, և մինչև անգամ իր քարտիսի պահարանը զոր ես ձեռօքս բաներ և անոր մէջ տեղը իր դրոշմը նշանակեր էի : Այս կի՛նն ամէն բան կը սղծէր . . . :

— Ա՛հ, քաջ կ'ըմբռնեմ թէ ինչ սոսկում կը պատճառէին ձեզ այս սրբասղծութիւնները :

— Ասկից զատ միայնութիւնն աւելի ևս կը դառնայնէ վիշտեղբ . . . :

— Եւ միթէ մտերիմ մը շունէիք որ ձեր սիրան անոր բանաք :

— Ա՛հ . . . : Այլ սակայն անձի մը կողմէն բարեկամութեան նշան մը տեսայ որ սիրտս շարժեց և հարկ էր որ լուսաւորէ զիս իմ ապագայի վրայ : Տիկին Բօլանը խօսիւ կըստմբա՛ծ օրս ներկայ զրտնուորդներէն մին էր Պ . Տօրվալ ր ծեր ու պարկեշտ նօտար մը, որուն մայրս քիչ շատ բարիք ըրած էր : Հօրս հրամանին համեմատ՝ երբ սրահն օտար անձեր գնառէին վար չէի իջնէր . . . հետևապէս Պ . Տօրվալն անկից ետքը նորէն տեսած չէի երբ՝ օր մը խորհրդաւոր երեսով մ'եկաւ զին ծառատանը գննելու, որ իմ սովորական ձեմելիքս էր, և զին զարմացուց ըսելով : — Օրբորդ ր կը վախնամ որ հայրդ վթայ չհասնի՛ . ա՛ւ, կարգա սա նամակը, յետոյ կրակը նեռէ, ամենակարևոր խնդիր մ'է որ քեզի կը սլատկանի . . . : — Եւ շուտ մը հեռացաւ դնաց : Պոյն նամակին մէջ կը յայտնէր թէ զիս Պ . տ'Արվիլ մարքիլին հետ կարգելու միտք ունին : Այս առաջարկութիւնն ամէն կերպով յարմար կ'երևէր . Պ . տ'Արվիլէ ընտիր ընտիր յատկութիւնները կը գովէր . գեռահասակ, հարուստ, ազնուամիտ, զեղաղէմ էր, և սակայն Պ . տ'Արվիլ հետոյ հետեւ երկու օրիորդներու հետ ամուսնանալու տուաջարկութիւններ ըրեր և ընտանեաց կողմէն յանկարծ որոշեալ ամուսնութիւնը լուծուեր էր . . . : Նօտարը կըսէր որ թէև այս լուծման պատճառը չլիտէ, սակայն սարսահմաններ է նոյնը կանխաւ իմաց տալու ինձ, առանց սնդելու որ այս դժառութեան շարժառ իթն աննպաստ է Պ . տ'Արվիլին : Այն երկու օրիորդներէն մին Պ . տը Պօրբիար՝ Գաղղոյ մէկ աւագանիի դուստր էր, միտը լարտ Տըսէի : Պ . Տօրվալ այս գաղտնիքը կը հաղորդէր ինձ այն պատճառաւ որ հայրս անհամբեր ըլլալով օր առաջ ամուսնութեան դաշինքը որոշելու՝ իր անխաբիւ՛ծ պարագաներուն կարևորութիւն մը չէր ընծայեր :

— Արդարև — լսաւ Ռօտովֆ պահ մը խորհելէն ետև — հիմա՛ն կը յիշեմ որ ձեր ամուսնիք մէկ տարուան միջոցի մէջ հետաջետէ

ինացոյց ինձ որ երկու կողմէն ամուսնութեան առաջարկութիւններ եղած են իրեն և այն ինչ խօսքիսպր տալու վրայ էր՝ յանկարծ ետ մնացեր են, շահու վերաբերեալ քանի մը կէտերու պատճառաւ . . . ինչպէս որ ինքը կըսէր :

Տիկին տ'Արվիլը դառն ժպիտ մ'ըրաւ և պատասխանեց :

— Հիմակ ճշմարտութիւնը պիտի յայտնուի, տէր իմ . . . : Ծերունի նօտարկին համակը կարգալէն ետե՛՛ հետաքրքրութիւնս մտաւորութեանս հետ աւելցաւ : Ա՛վ էր Պ. տ'Արվիլը . հայրս անոր խօսքն ըրած չէր ինձ : Ի գուր յիշատակներս գրողոցի, այսպիսի անուն մը չէի յիշեր : Շատ չանցաւ տիկին Բօլան Բարիլը գնաց և ինձի զարմանք պատճառեց : Իր ուղևորութիւնն շատ շատ ութ օր պիտի տւէր . սակայն հայրս այս սակաւատե բաժանման առթիւ խորին տրամուլիւն մ'զգաց . իր բնաւորութիւնը դառնացաւ և սկսաւ աւելի մեծ ստույգութեամբ վարուիլ հետս : Մինչև անգամ երբ օր մ'ինչպէս ըլլալն հարցուցի՝ բերնէն սա պատասխանը փախաւ . — Ցաւազար եմ և պատճառը դուք էք : — Պատճառն ե՞ս եմ, հայր իմ : — Անտարակոյս . զիտէք թէ որչափ սովորած եմ տիկին Բօլանի ընկերութեան և այս պնդուածութիւնն կ'ինն, զոր դուք նախատեսցիք, այս ուղևորութիւնն ըրաւ ձեր օրախոս համար և այսպէս իրմէ հեռու մընացի : Տիկին Բօլանի իմ օգուտն համար ցոյց տուած եռանդը զիս վախցուց . հեռուէն հեռու զգացի որ դործն իմ ամուսնութեան վրայ կը դառնայ : Ար թողում ձեզ երևակայել, տէր իմ, թէ ի՞նչ մեծ ուրախութիւն զգաց հայրս երբ իմ ապագայ մօրուս վերադարձաւ . Միւս օրն իմաց տուաւ ինձ որ իր սենեակը երթամ . իրենին հետն էր : — Երկար ժամանակէ վեր ձեր ամուսնութեան գործին վրայ կը խորհէի : Ամսէ մը ձեր սուգը կը լմնայ : Վաղը հոս պիտի գայ տ'Արվիլը մարքիզը, տոհմիկ, հարուստ և ձեր երջանկութիւնը յարգարելու կարող պատանի մ'է : Արդէն ձեզ տեսեր է ընկերութիւններու մէջ և այս միութեան ցանկացող է . արդէն գրամական խնդիրները կարգի գրուած են : Աւտի վեց շաբաթէն ամուսնանալն ձեզմէ կ'ստուգուի ունի : Իսկ ընդ հակառակն, ձեր խելքին փշելով՝ թէ և

չեմ յուսար, այս անտիկնալ առաջարկութիւնը մերժէք, ես դարձեալ պիտի կարգուիմ, ինչպէս որ որոշեր եմ, երբ սուղի ժամանակս լրանայ : Եթէ առաջարկութիւնս մերժէք, այժմէն պարտաւոր եմ յայտնելու ձեզ . . . որ ձեր ներկայութիւնը տանս մէջ այն ատեն միայն հաճելի պիտի ըլլայ ինձ երբ խոստանաք թէ ի՛նչպէս պիտի յայտնէք իրեն արժանի եղած սէրն ու յարգանքը : — Ար հասկընամ ձեր միտքը, հայր իմ : Եթէ Պ. տ'Արվիլը չընդունիմ դուք պիտի կարգուիք, և այն ատեն անպատե՛՛ չըլլար որ ես ալ Սաքրէ-Քէօր կուսարանը քաշուիմ : — Ինչպէս որ կուլէք — պատասխանեց հայրս պարզաբնութեամբ մը :

— Ա՛հ, այդ տկարութեան գործ չէ, այլ անգթութեան . . . գոչեց Ռօտոլֆ :

— Գիտէք, տէր իմ, ինչո՞ւ համար հօրս գէմ ամենաթեթեւ քէնն անդամ պահած չեմ, վասն զի տեսակ մը կանխատեսութեամբ կը գուշակէի, աւա՛ղ, որ օրին մէկը շատ սուղի պիտի նստի իրեն տիկին Բօլանի համար ունեցած կոյր տարփանքը . . . : Եւ, փա՛ռք Աստուծոյ, այս օրը գեւ չհասաւ . . . :

— Եւ միթէ ձեր նօտարկին ձեզ իմաց տուած երկու ամուսնութիւններու վրայ, որ յանկարծ ետ մնացեր էին այն բնաւորեաց կողմէն որոց Պ. տ'Արվիլը պիտի միանար, հօրդ բան մը չըսի՞ք :

— Այո՛, տէր իմ . . . : Մի և նոյն օրն աղաչեցի հայրս որ վայրկեան մ'ինձ շնորհէ մասնաւոր խօսակցութեան համար : Տիկին Բօլան յանկարծ ելաւ ու գնաց : — Անդգիմութիւն մը չունիմ, հայր իմ, առաջարկած ամուսնութեանդ — ըսի անոր — միմակ իմացայ որ Պ. տ'Արվիլը երկու անգամ ամուսնանալու կիսին վրայ է եղեր . . . : — Լա՛ւ, լա՛ւ — վրայ բերաւ նա խօսքս կարեւոր . — ըսելիքդ հասկըցայ : Այդ անհամաձայնութիւնը գրամական քանի մը նկատումներու առթիւ տեղի ունեցեր է, սակայն Պ. տ'Արվիլը անուսին ամենն ին արատ մ'եկած չէ : Եթէ ձեր առարկութիւնն այս է միայն կրնաք ինքզինքնիդ ամուսնացած համարել . . . և երջանկօրէն ամուսնացած, վասն զի ես քու երջանկութեանդ փախաբող եմ :

— Անտարակոյս տիկին Բօլան ուրախութենէ թուաւ սոյն միութեան վրայ :

— Ուրախութենէ թուաւ . այո՛, տէր իմ— ըսաւ Քլէմանս դառնապէս : — Ո՛հ, արգարև , ուրախութենէ թուաւ . . . ըստ որում այս միութեան հեղինակն ինքն էր . ինքն առաջին խորհուրդը տուեր էր հօրս . . . զիտէր թէ ի՛նչ պատճառաւ Պ . Թ'Արվիլի նախորդ երկու ամուսնութեան բանակցութիւններն ետ մնացեր էին . . . և հետևապէս կ'երէր կը մըկէր որ անոր միանամ :

— Բայց ի՛նչ էր նպատակը :

— Արէժը կուգէր լուծել սոսկալի վիճակի մը մէջ ընկղմելով զիս . . . :

— Իսկ հայրդ . . . :

— Հայրս՝ տիկին Բօլանի սուտ ու պատիր խօսքերուն հաւատաւ լով իրօք կարծեց թէ Պ . Թ'Արվիլի նախորդ ամուսնութեան դործը դրամի խնդիրներու պատճառաւ չէ յաջողեր :

— Ի՛նչ սոսկալի դատարութիւն . . . : Սակայն զազանի պատճառն ի՞նչ էր :

— Հիմակ պիտի բացատրեմ , տէր իմ : Պ . Թ'Արվիլի Օպէէ եւ կաւ , իր կերպերը , խելքը , դէմքը հաւնեցայ . բարեհամբոյր հով մ'ունէր . բնակարութիւնը մեղմ ու փոքր ինչ ախուր էր : Իր վրայ երկու ներհակ յատկութիւններ զիտեցի որ թէ զարմանք և թէ ախորժ կը սրտաճառէին ինձ . իր միտքը մշակուած էր , նիւթական կացութիւնը նախանձելն , ծնունդը երևելն . այլ սակայն՝ երբեմն իր կերպարանն որ սովորաբար ազդու էր և անվեհեր , տեսակ մը երկչոտ հլու թիւն , վհատութիւն , երկմտութիւն կը յայտնէր որ զիս շատ կը շարժէր : Նոյնպէս ախորժ կ'զգայի տեսնելով որ սիրալիր բարեորտութեամբ կը վարուէր զինքը մեծցնող սպայիկ մը հետ , և որմէ պէտք եղած խնամքը միայն կ'ընդունէր : Իր դայէն քիչ մը ժամանակ ետքը , Պ . Թ'Արվիլի երկու օր փակուած մնաց իր սենեակը . հայրս զինքը տեսնել ուղեց . . . ծերունի սպասաւորը գէժ կ'էջաւ՝ պատճառ բերելով թէ տիրոջն անդարը սաստիկ բռնելուն՝ ամենեւին մտրդ չընդունիր իր քովը : Երբ Պ . Թ'Արվիլի դուրս երաւ՝ զինքը շատ գու-

նաս , շատ փոխուած դոսայ . . . : Աւերջէն զիտեցի որ տրտնազին անհամբերութիւն մը կ'զգար երբ սոյն անցաւ որ անհանգստութեան վերայ խօսք բացուէր . . . : Պ Թ'Արվիլի հետ քանի տեսութիւն ընէի այնչափ անոր վրայ համակրական ձիւքեր կը գտնէի . . . : Երջանիկ ըլլալու այնչափ սրտաճառներ ունէր որ երջանկութեանը մէջ գաւսած համեստութիւնը կը գտնէի . . . : Մեր ամուսնութեան ժամանակն որոշուելուն՝ մեր սպաղայ խորհուրդներու մասին՝ իմ որ և է փափաքս կը դուշակէր ու կը կատարէր : Աթէ երբեմն իր թախտութեան սրտաճառը հարցնէի՝ իր մօրը , իր հօրը վրայ կը խօսէր , որ կըտէր , քանի ուրախ պիտի ըլլային իր սրտին և ճաշակին հաւանած մէկ օրիորդն իրեն կին առնելուն : Անշտորհ բան մ'ըրած կըլլայի եթէ այս ինձ դգուելի խօսքերուն հաւատ չընծայէի . . . : Պ . Թ'Արվիլի տիկին Բօլանի և հօրս հետ ՚ի սկզբան ինչ յարաբերութեամբ սպրիկս գուշակեց , թէ և այս վերջին իմ ամուսնութեանէս գոհ , քանի որ իրենը կը փութացնէր , սկսեր էր կաթողին զնալ հետս : Ուր ուրեմն՝ մեր խօսակցութիւններու մէջ՝ ընտրանք և զգուշութեամբ հասկըցուց ինձ որ իմ նախորդ վիշտերուս պատճառաւ թերևս աւելի շատ կը սիրէ զիս . . . : Այս սովիւ ես ալ յարմար գատեցի անոր յայտնել որ հայրս նորէն կարգուելու միտք ունի , և երբ այս միութեամբ հարստութեանս կրելը փոփոխութեան վրայ կը խօսէի , Պ . Թ'Արվիլի շթողոց որ խօսքս աւարտեմ և անշահախնդրութեան արհի ոլի մը ցցուց ինձ : Այն ընտանիքներն որոց հետ խնամութիւն պիտի ընէր մարքիզը յետին ծայր ժլատ պիտի ըլլային , կը մտածէի ինքնուովին , որ անոր հետ զբամական դժուարութիւններ յարուցած էին :

— Ճիշտ ես ալ այդպէս զիտեմ զինքը— ըսաւ Գոստըֆ — մէշտ սրտեայ , վեհանձն և փափկասիրտ . . . : Բայց միթէ այն երկու ես մնացած խնամութիւններու խօսքը չըրի՞ք անոր :

— Կը խոստովանիմ , տէր իմ , որ անոր անկեղծ , բարեմօյն սիրտը զիտելով՝ սոյն խնդիրը քանի մ'անդամ լեզուիս ծայրն եկաւ . . . բայց առ ահի որ իր անկեղծութիւնը , իր բարեսրտութիւնը կը վի-

բաւորեմ, չհամարձակեցայ այն նիւթին վրայ խօսիլ . . . : Քանի մեր ամուսնութեան որոշեալ օրը կը մօտենար, այնչափ Պ. տ'Արվիլ ինքզինքը բարեբաստիկ կը համարէր . . . : Սակայն երկու երեք անգամ միմիկն արամուտեամբ մ'ընկճած տեսայ զինքը . . . օր մը մանաւանդ աչերն իմ վրայ յառեց, որոց մէջ արտօսը մը կը դառնար, կարծես թէ սրտին վրայ բեռ մը կար և կարևոր դադանիք մ'ունէր զոր կուգէր, այլ չէր ժտեր, հաղորդել ինձ . . . : Եր նախորդ երկու խնամութիւններու յիշատակն եկաւ միտքս . . . : Ստուգիւ գող ելաւ սիրտս . . . դադանի նախադրածում մ'ազգեց ինձ որ կարելի է թէ իմ բոլոր կենացս թշուառութիւնը կը պատրաստէնա . . . սակայն հօրս տունէն հեռանալու այնքան փոյթ ունէի որ երկիւղս փարատեցի :

— Եւ միթէ Պ. տ'Արվիլ ձեզի չբացուեցաւ :
 — Ա՛յ . . . : Երբ իր մերամաղձութեան պատճառը հարցնէի, կը պատասխանէր ինձ. — Ներեցէք ինձ ինքրեմ, իմ երջանկութիւնս միմիկն է . . . : — Այս խօսքը՝ զոր սրաաշարժ ձայնով մը կ'արտասանէր, փոքր ինչ հանդարտեցուց զիս . . . : Սակից զատ, ինչպէ՞ս կարող էի . . . Ճիշտ այն պահուն որ աչերն արտօսութիւն լի էին, անցերոյն նկատմամբ թշնամալի կասկած մը յայտնել անոր : Ամուսնութենէս քանի մ'օր առաջ Օպիէ հասան Պ. տ'Արվիլի փեսաւէրներն (temoin) Պ. տը Լիւսնէյ և Պ. տը Սէն-Բըմի. մինակ մօտ ազգականներուս հրաւեր զրկեցինք : Երարողութենէ անմիջապէս ետքը՝ Բարիզ պիտի երթայինք . . . : Պ. տ'Արվիլը համար սէր չէի զգար, այլ մանաւոր համակրութիւն մը. իր բնաւորութիւնը յարգանք կ'ազդէր ինձ . . . : Այս աղէտալի միութեան հետևորդ դէպքերն եթէ չպատահէին, անշուշտ աւելի փափուկ զգայմամբ մ'անոր պիտի կատուէի . . . : Վերջապէս ամուսնացանք . . . :

Այս խօսքին՝ տիկին տ'Արվիլի գոյնը թեթեւ նետեց, կարծես թէ ուժէ (résolution) ընկաւ : Ապա շարունակեց .
 — Իմ ամուսնութենէս անմիջապէս ետքը՝ հայրս գրկեց զիս գորովազին : Տիկին Բօլանն ալ համբուրեց զիս, չէի կարող հանդիսականներուս առջև կեղծաւորութեանն այս նոր փորձը մերժել . իր չոր

ու սպիտակ ձեռնոցն իմն ցաւոյնեղու շափ սեղմեց և ականջիս փսփաց նենդածէտ անուշութեան շեշտով մը՝ զոր երբէք չպիտի մոռնամ : Երբեմն երջանկութեանդ աստն ինձի մտածեցէք, վաճա՛ զէ այդ ամառնուս թիւնէս յայն կարաբեցի . . . — Բարէ՛, այն աստն անզօր էի այս խօսքին ճշմարիտ իմաստն ըմբռնել : Մեր միութիւնը ժամը տասնամէկին կատարուեցաւ. անմիջապէս կառք մտանք . . . մեր հետն առնելով սպասուհիս և Պ. տ'Արվիլի սպայիկը. այնչափ արագ կ'երթայինք որ երեկոյեան ժամը տասին Բարիզ պիտի դանուէինք : Պ. տ'Արվիլի լուութիւնն և թախծութիւնն զարմանք պիտի պատճառէին ինձ թէ որ արդէն չզիտնայի, ինչպէս որ ինքը կըսէր, թէ իր եղջանիւնիւնը Տիկին է : Ես ալ միւս կողմէն սաստիկ յուզուած էի. մօրս մահէն վեր առաջին անգամն էր որ Բարիզ կը դառնայի, միայնակ կը դառնայի, էրկիս հետ զոր վեց շաբաթէ վեր ձանչեր էի, և դեռ առջև օրը բառ մ'անդամ ըսած չէր որ յարգական մարգավաբութեան մը դրոշմը չկրէր : Մարդիկ բնաւ ՚ի համար չեն առնուր այն երկիւղն որով օրիսրդ մը կ'զգածուի վաբքի և կեցութեան յանկարծական փոփոխութեան մ'երևոյթէն՝ որով նոյն իսկ բարեկիրթ անձեր կը վարձուին, երբ իրենց կիներ կըլլանք . . . : Բնաւ խորհող չկայ որ կին մը չէ կարող քանի մը ժամուան մէջ իր երկչտութիւնն ու օրիորդական ձեւերը մոռնալ :

— Եւ արդարեւ միշտ բարբարիկ և վայրենական սովորութիւն մ'է, ըստ իս, իբր որս կին մ'առնուլ տանիլը կոշտաբար, մինչդեռ հարկ էր որ ամուսնութիւնը սիրուելու համար՝ սիրոյ ամէն հնարներն, դորովոյ ամէն հրապոյրներն ՚ի զորժ դնելու իր առունքին նուիրադործութիւնն ըլլար :

— Արեմն կարող էք ըմբռնել, տէր իմ, թէ ինչ անորոշ սարսափով մը պաշարուած Բարիզ կը դառնայի, այն քաղաքն՝ ո՛ւր հազիւ թէ մայրս տարիէ մ'ի վեր մեռեր էր : Տ'Արվիլի սպարանը հասանք . . . :

Նորատի կնկան այլայլութիւնն աւելցաւ, հրատապ փայլութեամբ մ'այտերը վառիլ սկսան և ողորմազին ձայնով մը յարեց նա : — Սա-

կայն հարկ է որ ամէն բան իմանաք . . . ասոյ թէ ոչ . . . ամենէն քամահելի անձը պիտի երևիմ ձեր աչքին . . . : Լա՛ւ ուրեմն . . . — վրայ բերաւ նա յուսահատ արիութեամբ մը (résolution) — ինձ յատկացած սենեակը սարին . . . միայնակ թողոցին զև . . . : ժամէ մ'ետքը Պ . . . տ'Արվիլ եկաւ զև գտնելու . . . ահ ու գողէս կիսամեռ էի . . . հեծկլաանքէս շունչս կարեր էր . . . իր կիներն էի . . . հարկ էր հնազանդել . . . : Սակայն շատ չանցաւ ամուսինս սոսկալի աղաղակ մ'արձակելով թեւս բոնեց իբր թէ պիտի խորտակէր . . . ընդունայն կ'աշխատիմ իր երկաթապիլի ձեռքէն ազատիլ . . . իր գուլթը հայցել . . . ձայնս չսեր . . . ջաճիդ ահոնել շարժումներէն երեսը կը կարկամի . . . իր աչերն այնպիսի արագութեամբ կը դառնան իրենց շրջանին մէջ որ զև կը թռվեն . . . իր ծոպած բերանն արիւնայլն փրփրով լի է . . . իր ձեռքը կը պրկէ զև անդու . . . : Յուսահատական ճիգ մը կընեմ . . . վերջապէս իր ձգտուն մատերը թեւս կը թողուն . . . և կը մարիմ այն մեջոցին որ Պ . . . տ'Արվիլ այս իր ահարկու ջաճոցային ճղհաժամին (paroxysme) մէջ կ'ողորի . . . : Ահա այս եզաւ իմ առաջոստի գիշերը , աէր իմ . . . : Ահա տիկին Բօլանի վրէժխնդրութիւնը :

— Գժբա՛ղղ կ'ին . . . — ըսաւ Ռօտտլի տառապարդին — կ'իմանամ . . . լուսնոտ է եղեր . . . : Ա՛հ , զարհուրելի բան . . . :

— Այս բաւական չէ . . . — յարեց Քլէմանս կսկծոտ ձայնով մը — ո՛հ , այն մահաշուք գիշերն . . . անիծեալ ըլլայ բնաւին . . . : Իմ աղջիկս , այս գժբաղղ փորրիկ հրեշտակը սոյն սոսկալի ախար ժառանգեց . . . :

— Դաւա ձեր աղջիկը . . . : Ի՛նչպէս , իր գեղնութիւնը . . . իր տկարութիւնը :

— Այո՛ , նոյն ախան է . . . Աստուած իմ՛ , նոյնը , և բժիշկները կը կարծեն թէ անոր հիւանդութիւնը անբուժելի է . . . վասն զի ժառանգական է . . . :

Տիկին տ'Արվիլ գլուխը ձեռներուն մէջ պահեց և այս վշտալի յայտնութենէն ճնշուելով՝ խօսք մ'անդամ ըսելու արիութիւն չուսեցաւ :

Նոյնպէս Ռօտտլի ափ 'ի բերան մնաց : Իր երևակայութիւնը՝ հարօանեաց այս գիշերուան սոսկալի գաղտնիքին առջև կ'ընդգրկէր ահարեկ :

Իր աչաց առջև կը բերէր այս նորատի օրիորդն՝ որ մօրը մեռած քաղաքը դառնալուն արդէն այնչափ տրտում ըլլալով՝ անձանօթ տուն մը կը մտնէ լոկ մարդու մը հետ՝ որուն համար համակրութիւն մը , յարգ կ'զգար իրաւ , բայց չէ թէ սէր , չէ թէ այն զգացումն որ զմայլօրէն կը յուզէ , չէ թէ այն աւիւնն որ կը հրահրէ , չէ թէ այն օրինաւոր և փոխադարձ խանդն որով կ'ին մ'իբ սրբազին երկիւղը կը մոռնայ . . . ո՛չ , ո՛չ , ընդ հակառակն՝ ամօթապարտ ահով դողը կը մոռնայ . . . ո՛չ , ո՛չ , ընդ հակառակն՝ ամօթապարտ ահով դողը զոջուն՝ Քլէմանս հին կը հասնի . . . տրտմալի , սառ կորած , սրբտաբեկ , ճակատը ամօթէն շառաղունած , և աչերն արտօսքով լի . . . : Իր բաղդին կը համակերպի . . . ասպա , փոխանակ շնորհապարտ սիրոյ և կաթողին խօսքեր լսելու՝ որպէս զի շնորհած երջանկութեան համար սխփում մ'ընդունի . . . իր ոտներուն տակը կը տեսնէ մոլորադին մարդ մ'որ կը գալարի , կը փրփրի և մարդուն անբուժօրէն բաժին ընկող ահաւելի ախտի մը պժգալի թալթալումներու մէջ կը մտնէ . . . :

Եւ այս հերիք չէ . . . իր աղջիկը . . . անմեղ հրեշտակիկ մը նոյնպէս 'ի ծնէ նոյն ախտով կը ճարակի . . . :

Այս վշտալի ու տխուր խոստովանութիւնները Ռօտտլիին դառն մտածութիւններ կը ներշնչէին :

Այս է ահա սոյն երկրիս օրէնքը , կըսէր նա ինքնովին :

Անարատ ու գեղանի նորատի օրիորդ մը , աղէտաբեր գաղտնապահութեան մ'աննենդ ու աներկիւտ նահատակը կըլայ և իր ճակատաղիքը զարհուրելի հիւանդութեան աէր մարդու մը հետ կը կցորդէ , ախտ մ'որ իր զաւակներուն իբր ժառանգութիւն պիտի ձդէ . դըժբաղղ կ'ինն այս սոսկալի գաղտնիքը կ'իմանայ . . . :

Ի՞նչ կրնայ ընել :
 Ո՛չ ինչ . . . :
 Ո՛չ ինչ , այլ միայն տառապիլ ու լայլ , ո՛չ ինչ , այլ միայն իբր

զգուանքն ու ստիւումը զսպելու ջանալ . . . ո՛չ ինչ, այլ միայն իր օրերը կսկիծներու և ահ ու վահի մէջ անցնել . . . ո՛չ ինչ, այլ միայն իրեն բռնաղբօսիկ ու հալումաշ կեանաց շրջանէն դուրս՝ թերևս մեղապարտ սիփփումներ փնտուել:

Անուրանալի է, կըսէր Ռօտովֆ, որ այս տարօրէն օրէնքը կ'ըրոշադատեն մարդս՝ մարդկութեան եպերելի շանթահար բաղդատու թիւններ ընելու . . . :

Սոյն օրինաց մէջ անասուններն մարդէն դերազանց կ'երեւին, թէ անոնց տրուած խնամոց, թէ զարգացման պայմաններու, թէ պաշտպանութեան, թէ զանազան երաշխաւորութիւններու կողմէն . . . : Աւստի ելիւր անասուն մը գնէ, եթէ օրէնքին նախատեսած մէկ հիւանդութիւնն սակարկութեանէ ետև՝ անոր վրայ տեսնուի . . . վաճառքը անվաւեր է . . . : Հետևապէս, գիտէ անգամ մը, թէ ինչ անօրէնութիւն, ընկերութեան դէմ ինչ քրէական յանցանք մ'է դատապարտել ասուն մ'որ երբեմնակի հազող, խօշ կամ կաղ անասուն սը պահէ : Բայց զայթակողութեան քար մ'է, բայց ոճիր մ'է, բայց անման հրէշային գործ մ'է այն : Մտածէ անգամ մը գատապարտուիլ պահելու, բայց ընդ միշտ պահելու, մինչ ՚ի մահ պահելու, ջորի մ'որ կը հազայ, ձի մ'որ կը խօշի, էշ մ'որ կը կաղայ : Արդեօք ինչ սոսկալի հետևութիւններ չունենար այս բանը համայն մարդկային ազգի փրկութեան համար . . . : Եւ հետևապէս սյուսիս պարագայի մէջ, ո՛չ սակարկութիւնը կ'ազդէ, ոչ խօսք կը զօրէ, ոչ պայմանագիր մը կը բռնադատէ . . . : Ամենազօր օրէնքը կը հասնի և արդէն կապուածը կը քակէ . . . :

Բայց երբ խնդիրն Աստուծոյ պատկերին ստեղծուած էակի մը վրայ դառնայ, երբ խնդիրն այնպիսի նորաբոյս օրիորդի մը վրայ է որ, մարդու մ'անկեղծութեան անմեղօրէն հաւատ ընծայելով՝ անոր կը միանայ և առտու քունէն արթննալուն ինքզինքը լուսնոտի մը կողակեցը կը գտնէ, այնպիսի թշուառ արարածի մ'որ սոսկալի հիւանդութեամբ մը կը տաղնասպի, որուն բարոյական և նիւթական հետևութիւնները սոսկալի են, ախտ մ'որ կընայ ընտանեաց մէջ գծտութիւն

և ատեւութիւն սերմանել, հեռզհետէ ճարակել և ապագայ սերունդը եղծել . . . ո՛հ, այն օրէնքն՝ որ կաղ, հազող և խօշ անասուններու մասին այնչափ անողոքելի է, այն օրէնքն որ հիւանալի նախաստեղծութեամբ չներեր որ վատազգի ձի մը ծննդազորութեան յարմար սեպուի . . . այն օրէնքը կ'զգուշանայ այսպիսի թշուառ միութեան կապը խզելու . . . :

Այս կապերը նուիրական են . . . անլոյծ են . մարդկան և Աստուծոյ դէմ մեղանշել է զանոնք խորտակել :

Արդարև — կըսէր Ռօտովֆ — մարդս երբեմն ամօթալի հեզութեան մ'ու ամբարտաւանութեան դարշելի ետևութիւն մ'ունի . . . : Անասունէն աւելի ստորին կարգ մը կ'իջնէ, ինքն իրեն զայցած ապահովութիւններն անոր կ'ընծայէ, և իր ամենէն ահարկու խօթութիւնները կը հարկադրէ, կը նուիրադործէ, կը մշանջնաւորէ մարդկային և երկնային օրինաց անալլայութեան վահանիններքև պահելով :

Ռօտովֆ շատ կը մեղադրէր Պ. ա'Արվիլը, բայց զանի քէմանսին առջև անբասիր հանելու մտադրեց, թէ և մարքիզուհիին ցաւալի յայտարարութիւններուն նայելով՝ համոզուած էր որ մարքիզն անոր սրտէն բոլորովին ելեր էր : Բաւական խորհելէն ետև՝ Ռօտովֆ ըսաւ իւրովի : Պարտաւորութենէ ստիպեալ՝ հեռացայ կնիկէ մը զորը սիրէի . . . և թերևս ինքն ալ ինձի համար զաղտնի հակում մ'ունէր : Սրտի դատարկութենէ կամ արգահատութենէ համարէ՛ փոքր ինչ ևս ու իր պատիւը, իր կեանքը սլտի կորուսէր յիմար մարդու համար՝ զոր թշուառ կը կարծէր : Եթէ՛ փոխանակ անորմէ հեռանալու, իմ ինամօքս, սիրովս և յարգովս շրջապատէի զանի, այն տտեն իր անունն իմ ծայրալիւր ակնածութեամբս ամենաթեթև արատ մը չէր ստանար և իր էրկանը կասկածներն երբէք չէին դրդոներ, մինչդեռ այս ժամուս Պ. Շարլ Ռօպէրին սնապարծութեան (fatuité) դրեթէ զո՛հ ընկած կը գտնուի, և կը վախնամ որ Պ. Ռօպէր այնչափ անխոհեմ կերպով պիտի վարուի Պրչափ որ խօհեմ ըլլալու իրաւունք մը չունի : Ասկէ զատ՝ ո՛վ կարող է ապա-

հոյ՛նէլ այժմ, որ թէև վտանգներէ անցաւ, տիկին տ'Արվիլի սիրտն միշտ անդադ ախտի մնայ: Այսուհետև անհնարին է որ նորէն իր ամուսնին հաւատարիմ երևի...: Այսպիսի նորաբոյս, գեղանի, սիրազբաւ և սառն թշուառութեան համակիր բնութեան տէր կին մը... Ինչ վտանգներու, ինչ փորձանքի չ'ենթարկիր: Իսկ Պ. տ'Արվիլ քանի քանի կսկիծներ ու վիշտեր ախտի կրէ: Ինչ տեսակ ճակատադիր է իրը... քանի որ նախանձոտ է և սիրատենչ իր կնկան, որ անկարող է ամուսնութեանն սոսջին աղէտապէ գիշերն զգացած զգուսնքն ու սարսափը զսպել:

Քլէմանս՝ ճակատը ձեռքին յենած, աչերն արտասուալի, շփոթութենէ պայտերը կրակ գարձած՝ այնչափ այլայլեր էր սոյն յայտարարութիւնն ընելով՝ որ Ռօտովֆին ակնարկէն կը խորշէր:

— Ա՛հ, հիմակ— ըսաւ Ռօտովֆ երկարայտև լութենէ մ'ետև— Պ. տ'Արվիլի տրամութեան շարժառիթը կ'ըմբռնեմ, տրամութիւն մ'որուն ազբխւն անոք էի գտնել... կ'ըմբռնեմ վիշտը...:

— Իր վիճար— գոչեց Քլէմանս — լաւագոյն է, տէր իմ, որ խոճի խայթն ըսես... եթէ երբէք կ'զգայ... վասն զի երբէք այս օրինակ ոճիք մ'այցչափ սառնութեամբ պտորաստուած չէ...:

— Ոճիք մը... տիկին:

— Եւ ուրիշ ինչ կրնայ ըլլալ, տէր իմ, անոյժ զօրով մը կաշկանդել նորատի օրիորդ մ'որ ձեր պատուոյն կը վտահի, մինչգեո. ոև բաղդն՝ ահ ու սարսափ ազգող հիւանդութեամբ մը կը ճարակէ ձեզ. ոճիք չէ՛, հասար ինչ է թշուառ գտակ մը նոյն աղէտից դատապարտել անվրէպ... Ո՛վ կը բռնադատէր Պ. տ'Արվիլն որ երկու մատաղ ընէ: Միթէ կոյր, անաստ տրիփն էր... ամենեխն, իր քնաց յարմար կը գտնէր իմ տոհմն, հարստութիւնս և անձս և պարհանասոր ամուսնութեան մ'ուղեց կատարել, որովհետև ամուրիի կեանքէն անշուշտ տաղտկացեր էր...:

— Տիկին... գոնէ՛ դու թ ունեցիր...:

— Գո՛ւթ...: Գիտէ՞ք թէ ով արժանի է զթոյս, իմ զթոյս... իմ աղջիկս... այս քստմնելի միութեան անմեղ մատաղք, ո՛հ,

քանի քանի զիշէլներ և օրեր անոյցի անոր սնարին մտ, իր ցուերն ինչ դառն արտասքներ քաղած են սրտէս...:

— Բայց հայրն ալ... մի և նոյն ցաւերով կը տառապէր անարժանապէս:

— Բայց արի տես որ հայրն է իր զաւակը ցաւաղար մանկութեան, թառամ պատանեկութեան, և եթէ սպրի, անշէն և հալուամաշ գոյութեան մը դատասպարտողը, վասն զի չպիտի կարգուի: Ո՛հ, իմ անհուն սէրս չպիտի ներէ որ նա ևս իմ բաղդիս վիճակի և օրին մէկը ինձի պէս անխուսելի ախտով մը բռնուած զաւկին վրայ լայ...: Այս մասնութեամբ այնչափ մեծ եղաւ տառապանքս՝ որ յար և նման մասնութեան մը մեղսակից կամ դաւակից չ'ախտի ըլլամ:

— Ո՛հ, իրաւունք ունիք... ձեր մօրուին վրէժխնդրութիւնն ահոնելի է...: Սակայն, համբերութիւն... թերևս ձեր վրէժխնդրութեան ժամն ալ հասնի... — ըսաւ Ռօտովֆ պահ մը խորհելէն ետև:

— Ինչ ըսել կուզէք, տէր իմ, — հարցուց Քլէմանս զարմանաւ նալով իր ձայնին ել և էջէն:

— Գրեթէ միշտ... բարեբաղդ գտնուած եմ ինձ ծանօթ անդ՝ զամենբուն պատուհասը, ո՛հ, անագորոյն պատուհասը տեսնել — յարեց նա շեշտով մ'որ Քլէմանսը դող հանեց: — Բայց ձեր ամուսինն ինչ ըսաւ այն տառապաղին զիշերուան հետևեալ օրը:

— Այլանդակ միամտութեամբ մը յայտնեց թէ իր ախտին զաղտնիքը վեր հանելով՝ խօսք կապը ետ տուեր են այն ընտանիքներն որոց հետ ինամութիւն պիտի ընէ եղեր...: Այսպէս երկու անգամ մերժում կրելէն ետև... նորէն ժպրհեր է... ո՛հ, անօրէնութիւն մ'է արդարև...: Եւ ընկերութեան մէջ ահա այսպիսի անձ մը սրտի և պատուոյ տէր տոհմիկ պատանի մը կ'անուանի:

— Գո՛ւթ, տիկին, որ միշտ բարեսիրտ էք, անդու իր գառնաք:

— Անդու թ եմ, վասն զի վասօրէն խաբեցին զիս...: Պ. տ'Արվիլ զիտէր որ բարի եմ, ինչո՞ւ համար անկեղծօրէն սիրտն ինձ բացաւ, և բոլոր ճշմարտութիւնը ինձ չ'այցանեց:

— Այն ատեն թերևս մերժէիր . . . :

— Այդ խօսքը միայն զինքը կը դատապարտէ , տէր իմ , եթէ այդպիսի երկիւղ մ'ունէր , իր վարմունքը անօրէն դաւաճանութիւն մը կը դառնայ :

— Բայց ձեզ կը սիրէր . . . :

— Եթէ կը սիրէր , միթէ զիս իր ետութեան զոհելու սլարտաւոր էր . . . : Աստուած իմ , այնչափ կը տանջուէի , այնչափ կը շտապէի հօրս տունէն հեռանալու , որ եթէ անկեղծ ըլլար և ինձ նկարար գրէր իր աղեկէզ և մենաւոր կացութիւնը որուն դատապարտուած էք իր սոսկալի և դժուակ ձախտագրէն , թերևս սիրտս ու գութս շարժէր . . . : Այո՛ , այնքան աննենդ և միանդամայն հէք տեսնելով զինքը՝ կարելի է չէի իշխեր իր առաջարկութիւնը մերժելու , և եթէ այսպէս իմ անձնուիրութեանս հեռուութիւնները կրելու նուիրական պարտաւորութեան յանձնառու ըլլայի , անշուշտ իմ խոստումս աւրիաբար կը կատարէի : Բայց երբ զիս իր իշխանութեան տակ առնելէն ետև՝ իմ սէրս և գութս բունի ստանալ կուղէ , բայց երբ յանուն ամուսնական պարտուց այս սէրն ու գութը պահանջելու կ'եղնէ , մինչդեռ ինքը պարկեշտ մարդու պարտուց կը դրժէ , ահա այն ատեն յիմարութեան և վատութեան գործ մ'ըրած կ'ըլլայ . . . : Հիմակ , տէր իմ , ձեզ կը թողում գասել իմ կեանքս , իմ անագորոյն պատրանքս : Պ . տ'Արվելն անկեղծութեան վրայ մեծ էր հաւատս , և նա զիս չարաչար պատրեց . . . : Իր անուշ և վեհերոտ մեղանդձութիւնն իմ հոգս դրաւեր էր և այս մեղանդձութիւնը՝ որուն շարժառիթը հայրենաւանդ յիշատակներ էին կըսէր , իրօք անդարմանելի հիւանդութեան մը զիտակցութիւնն էր . . . :

— Բայց վերջապէս , եթէ այս մարդն օտարական մը , թշնամի մ'անդամ ըլլայ , պարտաւոր էք անոր տառապանաց կարեկցել , ձեր սիրտն ազնիւ է ու վեհանձն :

— Բայց միթէ կարո՞ղ եմ ամոքել այս տառապանքը : Գոնէ ձայնս լսելի ըլլար , գոնէ շնորհապարտ ակնարկ մ'իմ կարեկիւր ակնարկիս պատասխանէր . . . ամենևին . . . : Ո՛հ , տէր իմ , չգիտէք թէ ինչ ահօնել է այն դձուածամն , ո՛ւր մարդս բան մը չտեսներ , բան մը չլսեր , բան մը

չգիտար , և իր ցնորական վիճակէն կ'եղնէ միայն տեսակ մը վայրագ տագնապի մը մէջ ընկնելու համար : Երբ աղջիկս սոյն ախտով կը բռնուի , ՚ի հարկէ կ'ողջամ , սիրտս կը խորտակի , լալազին կը համբուրեմ մահառիթ թաղէն կարկամած փոքրիկ թեւերը . . . : Բայց իմ աղջիկս է նա . . . իմ աղջիկս . . . և երբ այսպէս իր տառապիլը կը տեսնեմ , հազար անգամ աւելի իր հայրը կանիծեմ : Երբ զաւկիս ցաւերը կը դադրին , երկիս դէմ իմ զայրոյթս ալ կը դադրի . . . այն ատեն . . . այո՛ , այն ատեն կը ցաւիմ անոր վրայ , վասն զի բարեմիտ եմ . իմ ատելութեանս վշտագին կարեկցութեան զգացում մը կը յաջորդէ . . . : Բայց վերջապէս միթէ՞ քէն և տաժանելի արգահատութիւն մը հետզհետէ զգալու , միթէ՞ ըստ երեւոյթին վաղամտութիւ կեանք մ'ունեցող ողորմելի զաւկի մը վրայ լալու համար միայն տաան եօթ տարեկան ամուսնացայ : Իսկ աղջիկս դարմը՝ ներուի ինձ , տէր իմ , յանդիմանութեան մ'առաջն առնելու , որուն անշուշտ արժանի եմ , և թերևս նոյնն ընելու չէք համարձակիր : Աղջիկս այնքան հրապուրելի է որ սիրտս անով շատանալ պէտք էր , վասն զի կաթողին կը սիրեմ զանի . սակայն այս սրտակէզ սէրն ներկային մէջ այնչափ դառնութեամբ , ասպաղային համար այնչափ երկիւղով խառն է , որ իմ դորովս զաւկիս համար միշտ յարտասուս կը փղձկի : Իմ սիրտս անոր մօտ կը տրորի , կը հաշի , կը յուսահատի անդու : Ըստ որում անոր ցաւերուն , որ անբուժելի են , կըսեն , դարման մը զտնելու անզօր եմ : Ա՛ւ՛ւ ուրեմն , այս մղձուկ ու ժահաբոյր մը թնորտէն դուրս ելնելու համար . . . կասկացութեան մ'երազեր էի , որպէս զի անոր անուշութեան մէջ ասպուէն , հանդիստ մը գտնեմ . . . : Բարէ՛ , կը խոստովանիմ որ սլատրեր եմ , անարժանօրէն պատրեր եմ , և ահա նորէն իմ ամուսնիս ինձ սահմանած վշտալի կեանաց կը վերադառնամ : Ըսէք , տէր իմ , այսպիսի կեանք մը վարելու արժանի՞ էի : Միթէ ես միայն պարտաւոր եմ այն յանցանաց որոյ հատուցումն այս անտու Պ . տ'Արվիլ իմ մահուամբս սիսի վճարէր : Գիտեմ որ մեծ են յանցանքս , այնչափ մեծ որչափ որ իմ ընտրու-

Թեանս առջև ամենթասպարտ եմ: Բարեբաղդ եմ զոնէ, որ Շարլ Բժժ պէրի մասին Սառաի և իր եղբորը մէջ անցած խօսակցութեան կերպով մը վերհասու գտնուելով նոր խոստովանութիւն մ'ընելու հուսած տութենէ զիս կ'աղաատէր. . . : Բայց յուսած որ հիմակ ձեր առջևը արժանի եմ թէ կարեկցութեան և թէ մեղադրանքի :

— Անհար է բացատրել ձեզ, աիկին, թէ ինչ ատիճան շարժեց սիրտս սրտամուծիւնդ. ձեր մօրը մահէն մինչև աղջկիդ ծնունդն ի՞նչ հաշտուած հողեր, ի՞նչ թաղուն վիշտեր կրեր էք. . . զուք որ այնչափ փայլուն, հիանալի և նախանձելի էք. . . :

— Ո՛հ, հաւատացէք ինձ, տէր իմ, երբ կին մը տեսակ մը աղէտից ներքև կը տատապի, անտանելի է իրեն անդադար ընել սա խօսքը: Քանի՛ երջանիկ է. . . :

— Արդա՛րև, ս'ըչափ տածանելի է: Ան՛լ, բայց մինակ զուք այդ հակադէմ անսպորոյն վիճակին մէջ չէք տանջուիր: շատերը կ'երևին ի՞նչ որ իրօք չեն. . . :

— Ինչպէ՞ս, տէր իմ:

— Ամուսինդ ամենուն աչքին ձեզնէ աւելի երջանիկ կ'երևի անշուշտ. . . քանի որ ձեզ կը վայելէ. . . : Եւ սակայն ձեզի չափ ցաւակցութեան արժանի չէ՞. իր կեանքէն աւելի դժուակ կ'անք մը կ'սո՛յ: Ձեր առջևը մեծ յանցանքներ ունի. . . սակայն անտոյ ահաւելի պատիժը կը տանի: Ար սիրէ նա ձեզ, ինչպէս որ արժանի էք. . . քաջ զիտէ որ առհարկ անդապելի հակամուծիւն մը կ'զղար իրեն համար. . . : Իր վշտալին, աստածէտ աղջիկն աչքին առջևը կենդանի յանդիմանութիւն մ'է. . . : Այս հերթը չէ, նախանձն ալ զինքը կը չարչարէ. . . :

— Եւ միթէ դարման մ'ունիմ այդ քանին, տէր իմ. . . անշուշտ նախանձտ ըլլալու առիթ չտամ անոր, պիտի ըսէք. . . քա՛ջ է: Բայց քանի որ սիրտս և ոչ մէկու մը տաղու պարտաւոր եմ, ի՞նչ երաւունքով անոր տամ, Լաւ զիտէ որ իրաւունք մը չունի: Ձեզի պատմած այն ստակալի տեսարանէս ՚ի վեր զատ կ'ապրինք, սակայն

մարդկան առջև մարդավարութեան պահանջած յարդանքն անոր չեմ զանար. . . և ոչ խօսք մ'ըսած եմ մէկու, բայց ՚ի ձեզնէ, այս դաղանիքին վրայ. ուստի պիտի համարձակիմ օւրիշէ խնդրելու չլրցած խորհուրդս ձեզմէ խնդրելու :

— Եւ կը հաւատեմ ձեզ, աիկին, որ եթէ ըրած ծառայութիւնս վարձքի մ'արժանի է, ձեր վստահութեամբն հազար անգամ հատուցումը ընդունած պիտի ըլլամ: Արդ՝ քանի որ ինչէ խորհուրդ կուզէք և համարձակօրէն խօսելու ինձ կը ներէք. . . :

— Ո՛հ, կ'աղերսեմ, տէր իմ. . . :

— Ուրեմն կ'իշխեմ ձեզ ըսելու որ, ձեր անգին յատկութիւններէն մին ըստ օրինի չգործածելով. . . շատ մը վայելումներ կը կորուսէք, որ ոչ միայն ձեր սրտին պիտոյքը կընան շատայնել, այլ ձեք առանին վիշտերն սիրովի, և այն աշխոյժ, և կիծու այլապէս թիւններուն պէտքը և — յարեց իշխանը ժպտելով — կը համարձակիմ էաւ ըսելու (ներեցէք կամանց վրայ ունեցած գէշ կարծիքիս) դաղանիքի ու քութեան համար կիներուն ունեցած բնածին ճաշակը ըրացնել, քանի որ այնչափ ազդեցութիւն ունին իրենց վրայ:

— Ի՞նչ ըսել կուզէք, տէր իմ:

— Ըսել կուզեմ որ, եթէ բարիք ընելով չէ՞սնչու շնորհ ընէք, աւելի մեծ հաճոյք ու բերկրութիւն չէք կրնար զգալ:

Տիկին տ'Արվիլը զարմանք նայեցաւ Ռօտովիին երեսը:

— Եւ քաջ կը հասկնար — վրայ բերաւ նա — որ ըսել չեմ ուզեր թէ անհող, զրեթէ արհամարհելի կերպով մը ձեզի անձանօթ թշուառներու առատ ողորմութիւն զրկէք, թշուառներ որ շատ անգամ երախտեացդ անարժան են: Բայց եթէ դուք ալ ինձի պէս երբեմնակի նախախնայութեան դերը խաղաք, օչիտի խոստովանիք որ տեսակ մը ողորմատէր գործեր վարական բերկրանք կ'աղդեն:

— Երբէք չէի երազեր, տէր իմ, զթասիրութիւնը այդ կերպով. . . զքօսանի նկատմամբ ըմբռնել — ըսաւ Քլէմանս ըստ կարգէ ժպտելով:

— Այս դիւտը ամէն տաղտկալի բաներու ստիկումիս պարտաւոր եմ ստիկում մը՝ զոր իմ պաշտօնատէրներս ինձ ներշնչեցին՝ երբ՝ մահաւանդ՝ իրենց հետ քաղաքական խնդիրներու վրայ կը բանակցէի։ Բայց մեր շէքսպէրէ բարեգործութեան դատնալով՝ աւաղ, անշահախնդիր անձերու առաքինութեան զուրկ եմ ես, որ ուրիշներու ձեռք ողորմութիւններ կը բաշխեն։ Եթէ մինակ սենեկապահներէս մին զրկէի Բարիզի ամէն մէկ նահանգին քանի մը հարիւր ոսկի նուիրելու համար, կը խոստովանիմ ամօթապարտ որ այս տեսակ առատաբարութեանէ ախորժ մը չպիտի զգայի։ մինչդեռ իմ դիտյած կերպովս երախտիք ընեն աշխարհիս մէջ ամենէն շէքսպէր բանն է։ Այս բառը կը գործածեմ յատկապէս, ըստ որում ինձի համար կը նշանակէ . . . ամէն ինչ որ հաճելի է, ամէն ինչ որ զմայլելի է, ամէն ինչ որ հրախրելի է . . . Եւ արդարեւ, տիկին, եթէ կը հաճիր ինձ գաւաիկց դստուիլ այս տեսակ խոսակցի խաղէ մէջ, պիտի տեսնէք, նորէն կըսեմ, որ անտես առնելով գործին աղնուութիւնը, չկայ հետաքրքրական, սրտազրաւ և հրապուրելի . . . երբեմն ալ զըւարձալի տեսարան մ'որչափ սոյն ողորմասիրական արկածները . . . Ասկից զատ՝ մարդ ինչ զազանուողի ձեւեր կը բանեցնէ իր բարեգործութիւնը պրոպելու . . . Ի՞նչ զդուշաւոր ընթացք մը բռնէ որ չճանչուի . . . Ի՞նչ այլազան, բուռն այլայլութիւններ կ'ընդունի . . . տեսնելով այն բարի ու հէք արարածներն որ ուրախութեան կըսն և ձեզ կ'օրհնեն . . . Յիրտի, երբեմն այս աւելի յանկուցիչ է քան նախանձոտ կամ անհաւատարիմ սիրահարի մ'անհամ կերպարանքը, և իրապէս, ուրիշ յատկութիւն մը չունին սիրահարները . . . Ի՞նչ հեռուն երթամ, իմ ակնարկած այլայլութիւններս այս առաւօտեան կըսած յուզմանցը կը նմանին, երբ Գանըլ փողոցը կը դիմէիր . . . Գարձեալ անյայտ մնալու համար պարզօրէն կը հագուիր ու տունէն դուրս կ'ելէր սրտաթուստ՝ անշուք երկանի մը կը հեծնէր անձկութեամբ, և չտեսնուելու համար վարպետները կ'իջեցնէր, և ապա աչքը չորս կողմը դարձնելով որ ծանօթ ակնար-

կի մը չհանդիսիր, աղքատիկ տեսքով տուն մը կը մտնէր ծածուկ . . . Ճիշտ այս առաւօտեան պէս, ինչպէս որ ըսի . . . Եթե սա սարբերութիւնը կայ որ այն ատեն կըսէիք։ «Եթէ ճանչուիմ, կորսուած եմ»։ Իսկ այժմ պիտի ըսէք. «Եթէ ճանչուիմ, օրհնութիւններ պիտի լսեմ։ Բայց քանի որ պաշտելի ձրիցը հետ համեատութիւն ունիք . . . ամէն նենդամէտ, սատանայական հնարքները կը գործածէք . . . որ օրհնութիւններ չլսէք»։

— Ա՛հ, տէր իմ — դոչեց տիկին ա՛նքովիլ սրտաշարժ յուզմամբ — դուք զիս կ'աղաատէք . . . Ենչոր եմ բացատրելու թէ խօսքերէդ ի՞նչ նոր տեսիլներ, ի՞նչ սիտիւնելի յոյսեր կը ծնին սրտիս մէջ։ Շատ ձիշտ կըսէք . . . մտովին և սրտով ջանալ պաշտելի ընելու անձը տասապեալ անձերու . . . զրեթէ սիրել է . . . Ի՞նչ կըսեմ . . . սիրելէ աւելի է . . . Երբ իմ հեռուն նշմարած օրերս՝ աւմթալի վերպակէ մը հեռեւելիք օրերու հետ բաղդատեմ, աւելի դառն յանդիմանութիւններ կ'ուզեմ անձիս . . .

— Մեծապէս կը վշտանամ — վրայ բերաւ Ռօտովի ժպտելով — ըստ որում իմ միակ փափաքս է անցեալը մոռնալու օդնել ձեզ և ՚ի փորձ համոզել որ սրտի սիտիանքը բաղմութիւն են . . . Բարեոյն և չարին միջոցները սաեպ սոյն են զրեթէ . . . լոկ Չիեհանը կը զուսազանի . . . Եթէ խօսքով . . . եթէ բարին չարոյն չափ հրաւիրելի և շէքսպէր է, ի՞նչ հարկ կայ վերջինն ընտրել։ Ար հաճի՞ք որ ձեզի գուհի բաղդատութիւն մ'ընեմ։ Ինչո՞ւ համար շատ մը կիներ այնպիսի մարդիկ իբր սիրահար կ'ընտրեն որ իրենց ամուսիններէն շատ ստորին են, վասն զի սիրոյ ամենէն մեծ վայելումը դրժուարութեան հրապոյրն է. վասն զի թէ որ սիրոյ մէջէն փարսանք ամէն երկիւզ և անձկութիւն, ամէն քարոսն, գաղտնիք և վտանգ, անդին ոչ ինչ չմնար, կամ փոքր բան մը, այսինքն սիրահարը . . . իր նախկին սարդութեան մէջ. ՚ի վերջէ, քիչ շատ այն մարդուն արկածը պիտի գտնար գործը, որուն կըսէին — ընդէ՞ր չես կարգուիր այն այրի կ'սոջ՝ բու սիրուհիդ հետ։ — Աւաղ, սաեպ մտածեցի այդ բանին վրայ — կը պատասխանէր նա — բայց

հետեցի որ այնուհետև ո՛ր պիտի երթամ իմ երեկոյեան ժամերն անցնելու : »

— Հաս իրաւ է , տէր իմ — ըսաւ տիկին ա՛՛րջիկ ժպտելով :

— Լաւ ուրեմն , եթէ այն երկիրն , անձկութիւնը , հոգերն ըզրգացնելու և անու՛ ձեզ հրասուրբութու միջոցը պանեմ , եթէ դադար նիքի և արկածներու համար ձեր ունեցած բնատուր ճաշակը , խօրագիտութեան և քրտութեան հակումը արդիւնաւոր գործեմ (կը տեսնէք որ ակամայ կը յայտնեմ միշտ կանայի սեռին վրայ քստմնեքի կարծիքս) — յարեց Քօստոլֆ զուարթօրէն — միթէ ձեր անսասա , անողոք բնագումները՝ վեհանձնական ձրից չեմ վերածեր . բնագումներ՝ որ եթէ ՚ի բարին գործածուին ամէնընտիր են , եթէ ՚ի չար՝ աղէտաբեր . . . : Ըսէ՛ք նայիմ . . . փոփոք ո՛ւնիք ինձի հետ ամէն սեռակ բարեգործական դարմաներ , ողորմասիրական ծուղակներ լարել : Մեր ժամադրութեան վայրերը , դրակցութիւնը . . . մեր գաղտնիքը կունենանք , նա մանաւանդ՝ մարքիզէն ծածո՛ւկ պիտի գործենք , վասն զի ձեր այցելութիւնը Մօրէլենց տունը՝ անշուշտ կասկածներ տուած պիտի ըլլայ արդէն : Աերջապէս , եթէ կը զիջանիք օրինաւոր . . . դաւադրութիւն մը կը կազմենք միասին :

— Աւրախութեամբ , երախտագիտութեամբ կընդունիմ այս բանաբանը՝ ընկերակցութիւնը , տէր իմ — ըսաւ Քլէմանս : — Եւ մեր վիսյասանութիւնը սկսելու համար , վաղուրնէ պիտի երթամ այն եղիկներուն տունը՝ որոյ դժբաղդաբար այս առտու քանի մը միտթարական խօսքեր ուղղեցի միայն . վասն զի կաղ սողայ մ՛իմ շեփոթութենէս ու երկիւղէս օգուտ քաղելով՝ ձեր ինձ տուած քստկը յափշտակեց . . . : Ա՛հ , տէր իմ — յարեց Քլէմանս , և իր կերպարանը սրահ մը կենդանութիւն ազդող անուշ զուարթութիւնը կուրուս — եթէ տեսնէք թէ ի՛նչ տաւապանք . . . ի՛նչ ստակալի տեսարան . . . ո՛չ . . . ո՛չ . . . չէի կարծիր բնաւ որ այսպիսի աղէտներ կան . . . և կը տրտնջամ . . . և իմ բազդս կ՛անիծեմ . . . :

Քօստոլֆ չուզելով յոյց տալ տիկին ա՛՛րջիկ թէ որչափ իր սիրտը շարժած է անոր այս վշտակցութեան վրայ , որ հոգւոյն գեղեց-

կութիւնը կ՛արտայայտէր , վրայ բերաւ ինզպառն :

— Եթէ կը ներէք ինձ , Մօրէլենց ընտանիքը մեր շրջանէն գուրս պիտի ձգեմ . ինձ պիտի յանձնէք այս թշուառներուն հոգը և պիտի խոստանաք մանաւանդ այն տիտուր տունը չվերադառնալու . . . վասն զի այն տեղ կը բնակիմ . . . :

— Գ՛ո՛ւք , տէր իմ . . . միթէ կանտակ է . . . :

— Ընդ հակառակն , շատ իրաւ է . . . բնակարանս անշուք է թէ և . . . երկու հարիւր Փրանք տարեկան վարձք , վեց Փրանք տնտեսութեան զին՝ զոր առատասարսութեամբ կը վճարեմ՝ զունապանուհիին՝ այն տիկին Բիլլէն , ահարկու պատան ուր ձեզի ծանօթ է , բայց անոր փոխարէն՝ Գանբլ թաղին ամէնէն սիրուն պճուկ (grisette) օրիորդ Ռիկօլէզն ինձ դրացուհի սուսիմ , և կը խոստովանիք որ հազար ութ հարիւր Փրանք վասակող գործակատար-վաճառականի մը համար (ըստ որում՝ գործակատար անունով կը ճանչուիմ) այս վիճակս բաւական վայելուչ է . . . :

— Տէր իմ , ձեր անակնկալ ներկայութիւնն այն աղէտաբեր տան մէջ կը հաստատէ ձեր ըսածին ճշմարտութիւնը . . . աներկմտեմ որ վեհանձնական գործի մը համար այն կողմերը կը գեղեցիկ : Բայց ինձ համար ի՛նչ ողորմասիրական գործ պահած էք , ի՛նչ գեր խաղալու կը սահմանէք զիս :

— Միտթարիչ հրեշտակի մը պաշտօնը պիտի ըլլայ ձերինը , և ներեցէք այս անպիտան բառիս , նրբամիտ և ներդաւոր սատանի մը դերը . . . վասն զի կան այնպիսի փափուկ ու վշտալի վէրքեր՝ որոյ բոյժն ու դարմանը կին մը միայն կրնայ տալ . նոյնպէս կան այնպիսի վէտ , կասկածոտ և թագուն աղէտներ որ հազուադիւրս սրամտութիւն մը պէտք է զանոնք երեսն հանելու և անդխաղութի հրասուրբ վտասահութիւն ներշնչելու :

— Եւ ե՛րբ արդեօք ձեր այդ ենթադրած սրամտութիւնն , այդ յաջողակութիւնը պիտի կարենամ ՚ի գործ ածել . — հարցուց տիկին ա՛՛րջիկ անհամբեր :

— Յուսամ թէ քիչ տոնէն , ձեզ արժանի յաղթանակ մը պիտի տանիք , բայց պէտք է որ բոլոր ձեր մարխալէլական հնարքն գործածէք :

— Եւ ո՞ր օրը, տէր իմ, այդ մեծ գաղտնիքը պիտի հաղորդէք ինձ :

— Այդ նայի՛ք... արդէն ժամադրիք ըլլալու հարկ կայ... ։ Շնորհ կրնէ՛ք զիս չորս օրէն ընդունելու :

— Ինչո՞ւ այդչափ ուշ... — ըսաւ Քլէմանս պարզմտօրէն :

— Հասկա գաղտնիքն, հասկա պատշաճութիւններն ո՛ւր դէհնը ։ Մտածեցէք անգամ մը, թէ ո՞ր մեզ դաւակնից կարծեն, անշուշտ մեղնէ պիտի խորշին, և թերևս այն ատեն ձեզ զրեղու պիտի ըստիպուեն... ։ Ո՞վ էր այս իրիտն նամակդ ինձ բերող տարօք կինը :

— Մօրս մէկ հին սենեկապանուհին, նոյն ինքն ասպահովութիւն, խոհեմութիւն է :

— Արեւմն անոր պիտի ուղղեմ՝ նամակներս որ ձեզի յանձնէ : Եթէ ինձ պատասխան տարու շնորհ ընէք, այսօրէս գրեցէք : Աստուծոյ Ռօտորֆ Բլեմէ Կոլոյ : Թող սենեկապանուհին թղթատունը ձգէ ձեր գրերը :

— Ես կը ձգեմ, տէր իմ, իմ հետևողս պտոյս, ինչպէս որ սովորեմ, ընելու ատենս... :

— Միթէ առէպ հետևողս գուրս կ'ենէ՞ք :

— Ելք օդը գեղեցիկ է, օր չեմ անցնէր :

— Սքանչելի՛ է : Այդ սովորութիւնն ամէն կին իր ամուսնութեան մտչն ամբաներէն պարտաւոր է ունենալ... Սովորութիւնը... թէ վատ... և թէ լաւ նախատեսութեան մէջ... Իբր վկայութիւն մէջ կը բերուի... ։ Նախորդ մ'է (un précédent) ինչպէս որ փաստաբանները կրտն, և այս սովորական պրոցաներն վերջէն վտանգաւոր մեկնութիւններու առիթ չեն ընծայեր... ։ Եթէ կին ըլլայի (և խօսքը մեր մէջը մնայ, կը վախեմ թէ խիստ ողորմասէր և թեթեւ կին մը իր լրջայի) կարգուելու հետեւեալ օրը, անմեղօրէն յետին ծայր խորհրդաւոր կերպեր կ'առնուի... ։ Ամենէն շատ աչքի զարնող և կատիածելի երևոյթներ կը դասէի ուշմտօրէն... արդէն ըսած նախորդ հաստատելու մտօք, որպէս զի օրին մէկը կարող ըլլամ այն երթալ իմ տնակներու... կամ սիրահարիս :

— Բայց այդ ձեր ըսածը սոսկալի նենդ մը կը ծածկէ, տէր իմ — ըսաւ տիկին տ'Արվիլ ժպտելով :

— Բարեբաղդ էք, տիկին, որ այս նախատեսութեան օգուտն ու իմաստութիւնը հասկնալու վիճակին մէջ չէք գտնուիր... ։

Տիկին տ'Արվիլ այս անգամ չժպտեց, այլ աչեւն վար առաւ փարմրեցաւ և ըսաւ տրամադին :

— Գլխասիրտ չէ՛ք, տէր իմ :

Առաջ Ռօտորֆ զարմանօք նայեցաւ մարքիզուհիին, յետոյ վրայ բերաւ :

— Հասկցայ միտքդ, տիկին... ։ Բայց վերջին անգամ մը՝ ձեք վարմունքը Պ. Շարլ Ռօսկերի մասին լաւ մը կը լռենք : Ա՛նն թագրեմ թէ օրին մէկը բարեկամուհիներէ մէկը ողորմելի մուրացկան մը ցոյց կտայ ձեզ՝ որ նուազուն աչեր՝ և յուսահատ եղանակաւ մ'իջարկնոր կը փչէ անցորդները ՚ի դուր շարժելու համար : Ահա բարեաղբատ մը — կըսէ ձեր բարեկամուհին — եօթը դասակ և կայր, խուլ, համր և այն կին մ'ունի... — Ա՛հ թշուառ մարդ — կըսէք անոր զթասիրաբար ողորմութիւն տարով, և ամէն անգամուն որ մուրացկանին կը հանդիպի՞ ձեզ հեռուէն տեսնելուն, աչերը կ'աղերսեն, սրինգը աղիտորմ ձայներ կը հանէ և ձեր ողորմութիւնն փր պարկին մէջ կը ձգէք : Օր մը բարեկամուհիիդ գրգռմով այս բարի տնանկին վրայ հեղհեղ գուրգ աւելնալով՝ թէ և սիրտդ կը պատրէր նա չարամտօրէն, յանձն կ'առնէր զթասիրութեամբ իր չքաւոր և խեղճ տնակին մէջ տեսնել ձեր թշուառ... ։ Ար հասնիք այն տեղ. բարէ՛, ո՛չ մաղսաշունչ սրինգ, ոչ ողորմագին և աղերսալի ակնարկ կը տեսնէք... այլ աշխարհ, գուարթ ու կայտաութշուառական մ'օր զինեպանի մ'երզը կը քրթնի... ։ Նախն գլխութեան կը յաշորդէ քամահանք... վասն զի զարուստ մը քարէ աղտոյի տեղ առեր էիք, ոչ աւելիօ, ոչ պակաս : Միթէ իրաւ չէ՞ ըսածս :

Տիկին տ'Արվիլ իր ժպիտը չկրցաւ բռնել սոյն տարօրէն առաւ կին վրայ և Ռօտորֆին պատասխան տուաւ :

— Արչափ որ ընդունելի է այդ արդարացումը, տէր իմ, ինձ շատ գիւրբին կը թուի :

— Սակայն իրապէս աղնիւ և առադասիրտ անխոհեմութիւն մը գործեցիք . . . : Քանի՛ քանի՛ միջոյններ ունիք զայն քաւելու և խիղճդ ամաքելու . . . : Բայց այս իրիւն Պ. տ'Արվիլը չպիտի՞ տեսնեմ :

— Ա՛չ, տէր իմ . . . առաւօտեան դէպքէն այնքան սաստիկ սիրտն յուզու որ . . . հիւանդ է — ըսաւ մարբիպուհին մեղմ ձայնով մը :

— Ա՛հ, կը հասկնամ . . . — պատասխանեց Ռօտովի սրտմաղի :

— Օ՛ն, արեացիք . . . : Ձեր կեանքին նպատակ մը, ձեր վիշտերուն սիրտում մը կը պակսէր, ինչպէս որ կըսէիք . . . : Թոյլ տուք ինձ յուսալ որ իմ աննարկած ապագային մէջ պիտի գտնէք այն սիրտ փումը . . . : Այն ժամանակ ձեր հոգին այնպիսի անուշ մխիթարութեամբ պիտի լեցուի, որ քէնդ ձեր ամուսնին դէմ անկողնի սպառ պիտի փարստի : Ձեր զուկին համար տարած հոգի անոր համար ալ պիտի տանէք . . . : Իսկ այս փոքրիկ հրեշտակին զարով՝ հիմակ որ անոր ախտաժէտ վիճակին պատճառը դիտեմ, կը համարձակիմ ըսելու որ լիովին անցոյս չըլլաք . . . :

— Միթէ կաթիլի՛ է, տէր իմ, և ինչպէ՛ս — դոչեց Քլէմանս ձեռներն իրարու միացնելով երախտագիտութեամբ :

— Բողոքովին անձանօթ՝ պլ խկաս դիտուն բժիշկ մ'ունիմ. երկար ատեն Ամերիկա մնաց. կը յիշեմ որ այն ահոելի ախտով բրուհուած քանի մը դերմներ գրեթէ հրաշալի կերպով բժշկելուն վրայ ինձ խօսած է :

— Ա՛հ, տէր իմ, և միթէ հնարին է . . . :

— Չափէն աւելի յուսալու դիոյշ եղիք. յետոյ պատրանքն տա՞ծ անելի կը դատնայ . . . : Մինակ բողոքովին չյուսահատինք . . . :

Քլէմանս տ'Արվիլ՝ Ռօտովի աղնիւ կերպարանին անասելի շորհարարութեան ակնարկ մը կը նետէր . . . այն իշխանին որ անհրաժեշտ ինչպէս իր ինքնին, շորհարարութեամբ և բարեարտութեամբ զինքը կը քիթիթարէր : Եւ ինքն իրեն հարցոց թէ ինչպէս Պ. Շաբլ Ռօպէ-

բին զարնուեր էր . . . : Այս դադարին իրեն ահոելի երեցաւ :

— Քանի շորհարարութեամբ ձեզ, տէր իմ — ըսաւ նա այլայլուն ձայնով մը. — Սիրտս կը հանդարտէք, աղջկա առողջութեան համար կը յուսադէք ինձ, նոր ապագայ մ'իմ առջև կը պարզէք որ թէ սիրտում, թէ բերկրութիւն և թէ արժանիք մը . . . պիտի հայթայթէ : Միթէ իրաւունք չունէի՞ ձեզ գրելու այն մտօք որ եթէ հաճիք այս իրիւն մեզի դալու, ինչպէս որ սկսաք, պիտի աւարտէք ձեր օրն, այս է բարի դործով մը . . . :

— Գոնէ ըսէք նաև, տիկին, որ ոչ միայն իմ սիրած բարի դործերէն մէկն է . . . այլ հրապուրանօք, զուարճութեամբ լի է — ըսաւ Ռօտովի ոտք եղնելով, ըստ որում սրահին ժամացոյցը այն ինչ տանն մէկ ու կէս կը զարնէր :

— Երթաք բարեաւ, տէր իմ, մի՛ մոռնաք Գանրլ փողոցին աղքատիկ ընտանիքին վրայ քիչ օրէն ինձի լուրեր հաղորդելու :

— Ա՛աղն առտու զանոնք պիտի տեսնեմ . . . վասն զի չզիտէի դժբաղդօրէն որ այն փոքրիկ կառն կաստեր է ձեզնէ այն քակր . . . և կարելի է որ այն ողորմելիներն սոսկալի վիճակի մէջ կը գտնուին : Չորս օրէն, խնդրեմ չմոռնաք, պիտի դամ ձեզի յայտնելու թէ ինչ դեր պիտի ունենաք, ինչպէս յանձն առիք . . . : Սակայն կանխաւ կըսեմ որ անհրաժեշտ պիտի ըլլայ ձեզ ծպտիլ :

— Ի՞նչ ծպտիլ, ո՛հ, ի՞նչ կըջանկութիւն, ի՞նչ կերպ ծրարում պէտք է, տէր իմ :

— Առ այժմ չեմ կարող ըսել և ընտրութիւնը ձեզի պիտի թողում :

Երբ իշխանը տուն դարձաւ՝ բաւական դոհունակութիւն զգաց որ իր խօսակցութիւնն ընդհանրապէս տիկին տ'Արվիլի վրայ ներգործեց իր նպատակն էր այս նորատի կնիկն միտքն ու սիրտը, որ անըստ պիտի հակակրութեամբ մ'ամուսնէն հեռացեր էր, զբաղեցնել բարեպաշտական դործերով, բաւական վիպային հետաքրքրութիւն և սէրէն դուրս խորհրդաւոր հրապոյր մ'ազլել անոր՝ որպէս զի իր

երևակայութեան և հողոյն պիտոյքն շատանան, և այսպէս նոր սի-
րոյ մը ծուղակէն զանի զերծ պահել:

ԳԼՈՒԽ Դ.

ԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻՆ

ԹՅՆԵՐԵՒՍ մտալուած չէ որ Գանրը փողոցի տան ձեղնայար-
կին (mansarde) մէջ թշուառ ընտանիք մը կը բնակէր՝ որուն գըլ-
խաւորն էր Մօրէլ անուն, ակնահաս բանուոր մը: Հիմակ այս սը-
խուր բնակարանը պիտի տանինք ընթերցողը:

Առաւօտեան ժամը հինգ է: Խորին է լուծիւնն արտա-
քուստ, գիշերը մութ, ստոնայի կը ձիւնէ... Գառակուսի սըզ-
տիկ տախտակի մը վրայ երկու ճղկի յենած կանթեղ մը կայ՝ որուն
դեղին և սուրճն նշոյլը հաղիւ թէ ձեղնայարկին խաւարէն թափ
կ'անցնի՝ նեղ, ցած խցիկ մ'որուն լոկ երրորդ մասը տանիքին սա-
հուկ դարէն (pente) կերտած պշտակ մ'ունի. (lambbris) տանիք
մ'որ յատակին հետ խիստ սուր անկիւն մը կը կազմէ: Ամէն կող-
մէն կանաչիկեկ աղիւսներուն ստորեը (le dessous) կը տեսնուի: Ժա-
մանակէն սեցած բոով ծեփուն միջնորմներն՝ որ անհամար ծեպե-
րով փեռեկած են, իրենց ցեցակեր բարակ սախտակները կը ցուցը-
նեն. անկեան մը մէջ խարխուլ դուռ մը սանդղին վրայ կը բացուի:
Գեախնն որ անանուն գոյն մ'ունի, և ժահահոտ է ու լպրծուն,
ասդիս անդին վատուն յարդի շեղեր, տժգին (sordide) հոտոխոր
և խոշոր ոտկորներ ցիր ու ցան կ'երեկին, զոր ազքասն հոտած մնի
անպիտան վաճառողներէն կը գնէ, որպէս զի անոնց վրայ գտնը-
ուած կռճիկները կրծէ...

Այսպիսի սոսկալի աղտոտութիւն մը խառնակ ընթացքի, կամ պար-
կեշտ հիբուլթեան մը նշանն է միշտ, բայց այնչափ դժնեայ և յու-
սահատական՝ որ մարդ անոր ներքե կը ճ'նշուի, կը տրորի և սոյն
տղմէն ելնելու ոչ կամք, ոչ ոյժ և ոչ պէտք կ'զգայ. անոր մէջ կը
թաւալի ինչպէս անասուն մ'իւր որջին մէջ:

Յօրեկը՝ Մօրէլի անիկը՝ նեղ, երկայնաձև և ձևնին շեղակի կող-
մը շինուած երդով մ'որ ապակիէ վանդակ մ'ունի՝ կը լուսաւորուի
և կեռուկէ մը (cremaillere) միջոցաւ կը բացուի ու կը գոցուի:
Այս պահուն ձիւնի խիտ խաւ (couche) մը սոյն երդը կը ծածկէր:
Գրեթէ ձեղնատան կեդրոնը՝ ակնհասին սրապղին վրայ գրուած
կանթեղը՝ տեսակ մը գեղնուկ լուսնի ծիր մը կը յօրինէ՝ որ փոքր
առ փոքր նսեմանալով՝ վերնայարկին ստուերին մէջ կ'անհետի, ըս-
տուեր մ'որուն մէջ անդ անորոշակի կը ծրագրին քանի մը ճերմակ
կերպարաններ:

Տրապազին վրայ՝ որ կաղնիի անտաշ փայտէ շինուած կոշտ, իւղոտ
և ճարպալի քառակուսի ծանր սեղան մ'էր, կ'եռան, կը փալփլին,
կը շողան ափ մ'անդամանդի և սուտակնի քարեր որ հիմնակի խոշ-
բութիւն ու փայլ ունին:

Մօրէլ բուն անդամանդի ակնահաստ էր և չէ թէ սուտ քարերու,
ինչպէս որ ինք կըսէր՝ և ինչպէս որ Գանրը փողոցի տան մէջ կը կար-
ծէին... Այս անմեղ ստին շնորհիւ՝ իրեն յանձնուած դահար-
ներն այնչափ դիւրագին բաներ կ'երեկէին որ կարող էր զանոնք իր սու-
նը պահել առանց վախնալու որ կը կողտպտուին:

Այսչափ հարստութիւններ՝ այսչափ թշուառ էակի մը ձեռքը յան-
ձնուած տեսնելով՝ աւելորդ կը համարինք Մօրէլի ուղղութեան վը-
րայ խօսելու:

Ակնհատը՝ որ անթեկն աթոռակի մը վրայ նստեր և յոգնու-
թենէն, գրտէն, քնհատութենէ դադրեր էր, ձմերային երկար գի-
շերուան մ'աշխատութենէ ետե՛ իր ծանրաբեռ գլուխը՝ թմրած թե-
ւերը տրապազին վրայ կը ձգէ. իր ճակատը սեղանին վրայ հորեղնա-
պէս գրուած լայն յեսանի մը կը յենու, որ սովորաբար ձեռնամուխ
մը միջոցաւ կը շարժի. անոր մօտ պողոճատիկ բարակ սղոց և քանի
մ'ուրիշ գործիներ ցիր ու ցան կ'երեկին. արհեստաւորն՝ որուն ճա-
ղատ և ալեւոր մաղերով պատած գանկը կը տեսնուի՝ մերկ մարմնին
վրայ հագեր է գորշագոյն կերպասէ հին բաձկնակ մ'ու կտաւէ
անշահ տափաստ մը. իր եքէլ-շէն բզկի բզկի մուճակներն հագլու կը

Ճածկեն իր ցրտահար ոտներն որ դետինը կը կոխեն . . . : Այս ձեղնայարկին մէջ այնպիսի սառնալի, կծու ցուրտ կընէ որ ակնահաստին մարմինը մերթ ընդ մերթ կը սարսոփ, թէև նկուն և ուժաթափ կարծես թէ խորին քունի մէջ կը դտնուի . . . :

Կանթեղին պատրոյցին երկայնութենէ և ածուխ կտրելէն կլինայուի որ բաւական պտենէ վեր Մօբէլ կը ննջէ, իր ծանր շունչը կը լսուի միայն, վասն զի այս ձեղնաստան միւս վեց բնիկները . . . անքուն կը հսկեն . . . :

Այո՛, այս նեղ ձեղնատան մէջ եօթը հոգի կ'ապրին :

Հինգ մանուկ և ամենէն սղօտիկը չորս տարու է, . . . խակ ամենէն մեծը հազիւ թէ տաններկու դարեկան . . . :

Նոյնպէս իրենց ապիկար մայրը . . . :

Նոյնպէս ութնամանի ապուշ կլին մը . . . իրենց մօրը մայրը . . . :

Յուրաքանչեւ յետին ծայր բքալի է, վասն զի այսքան սնձուկ միջոցին մէջ զիջուած եօթ անձերու բնական քաբութիւնը չամորեր սոյն սառնալի օդը, վասն զի այս տուայտ, վտիտ, սարսուռայ (grelottant) նկուն մարմինները, սղօտի երեխայէն բունէ մինչև հանին . . . շատ տէր (calorique) կարգաբերէն, ինչպէս որ կլսեն բնագէտները :

Տան տէրէն զատ՝ որ սրահ մը թմրեր է, վասն զի ոյժը հատեր է, ամէնքն արթուն էին, այո՛, ամէնքը . . . վասն զի ցուրտը, անթութիւնը, հիւսնողութիւնը մարդուս ուշերը բայց . . . շատ բաց կը սրահեն . . . : Շատերը չղիտեն թէ ազքատին համար ի՞նչ հազուադիւր բան մ'է խորունկ կենսատու քունն՝ որով զօրէ իր ոյժը կաղդուրել, վիշտերը մոռնալ և այնուհետև ուրախ, զուարթ, և որ և է ծանրակիր աշխատութեան տոկուն արթննալ : Այսպէս նիրհելու համար ցրտէ, անթութենէ և հարումաշ հոգերէ ազատ ըլլալ պէտք է :

Այս արհեստագէտին թշուառութեան անսխի իրեն յանձնուած գոհարներուն արժողութեան հետ համեմատելով՝ մարդ կ'ապրի այս հակապատկերէն որ թէ տաղնասլ և թէ հիացում կ'աղղէ իրեն : Այս

թշուառն աչաց ատջեն ունի անդադար իր ընսանիքին աղիոզորմ տեսարանը . չկայ բան մ'որ չտատապէ զիրենք՝ նօթութենէ բունէ մինչև յիմարութիւնը, և նա կը յարգէ այն դոհարները՝ սրտնյմէ մին՝ բաւական է իր կինը, տղաքը, ծանր ծանր մաշող զրկումներէ և աղէտներէ փրկել : Անտարակոյս իր պարտքը կը կատարէ . . . սարգապէս սրարկեշտ մարդու վայել պարտք մը, բայց որովհետև այս պարքը պարզ է, միթէ ասկէ կրնայ հեռելիլ որ անոր գործադրութիւնը նուազ վէհ է և զեղեցիկ : Միթէ պարտուց կատարումն աւելի մեծ արժէք մը չստանար երբ դժուարակիր պարագաներու մէջ կը տեսնուի : Այս արհեստագէտն որ սոյն դանձին մօտ այնքան հէգ և հաւատարիմ կ'երևի, միթէ անթիւ և դուրդ դուրդ բանորներու մեծագոյն մասը չներկայե՞ր, որ ընդ միշտ թշուառութեան դատատապարտեալ են իրաւ, բայց հանգարտ, ժիր, համբերող ըլլալով՝ առանց դառն և քինասէր ցանկութեան . . . կը տեսնեն իրենց աչաց ատջև հարուստներուն շքեղ ճոխութիւնը : Աերջապէս աչնիւ, ըսփոփելի չէ՞ նկատել, որ չէ թէ զօրութիւնը, չէ թէ սարսափը՝ այլ լոկ Բարձրագոյն ուղիղ զբոսորդ մ'է որ թուաք կը կանդնէ սոյն ժողովրդային ովկիանոսին դէմ, որ յորդելովը բոլոր մարդկային ընկերութիւնը կրնայ՝ կուլ տալ : Եւ սհա այն տոնն՝ որ անսխիտ մարդն իր հոգւոյն և մտքին բոլոր ուժովը չվշտակցիր սոյն վեհանձն արտերուն որ այսչափ աղէտներու, արիութեան և համբերութեան փոխաբէն՝ կուզեն միայն փոքր տեղ ճը արևուն ներքև :

Գտնանք այժմ, այս ահաւոր, այլ աւաղ խիտ իրական թըշուառութեան մէկ օրինակին՝ զոր իր սոսկալի մերկութեան մէջ նկարագրելու փորձ պիտի փորձենք :

Ակնահատը մինակ բարակ պատտառ մը և վերմակի կտոր մ'ունէր, որ իր խելագար հանիին բաժին ընկնելով՝ ապուշ և վայրագ ինքնասիրութեամբը չէր ուղեր որ իր խշտեկին վրայ ուրիշ մը պառկի : Չմոռուան սկիզբը կատղեր և զրեթէ խղեր էր փոքրագոյն երեխան որ անոր անկողինն մէջ կը ննջէր . . . չորս տարեկան խեղճ պղտի օ-

ընդ որ մ'որ ժամանակէ մ'ի վեր կուրծքի հիւանդութիւն ունէր, և իր եղբայրներուն ու քոյրերուն հետ պատկած յարդէ անկողնին մէջ չարաչար կը մնէր. . . : Վերջէն սլիտի բացատրենք այս կերպ պատկերում եղանակն՝ որ ստէպ ազբասնեբու մէջ կը գործածուի. . . : Ասոնց մօտ կենդանիներն իբր հեշտաաէր էակներ կրնան համադուիլ, վասն զի իրենց խշտիբը կը փոխեն :

Ահա այս է ակնհասին բնակութեան ներկայած կատարեալ պատկերն՝ երբ մարդուս աչքը կը թափանցէ այն կիսատուներն՝ որուն մէջ կանթեղին աղօտ նշքնները կ'անհետին :

Յեւրոյն երկայնքն՝ որ միւս պատերուն չափ խօնաւ չէ, պառախելազարին խշտեակը գեաթնը փոռած է : Այ ինչ չղմէր նա իր գլուխը՝ որ բաց է, և իր ճերմակ մաղբը, որ շատ խորունկ կը լրտուած են՝ տափանջ ճակատով գանկին ձեւը կը ծրագրեն : Իր խիտ ու մոխրագոյն յօնքը կը հովանաւորեն աչքին խորունկ ծիրերն, ու ըոց մէջ ահարկու գայլ անեցող ակնարկ մը կը շոգայ : Իր գոգաւոր, կասապոյն ու բիւր կնձիւններով խորշումած այտերն երեսին և կրակին ցոլած սկզբներուն փակած են : պառան ինքն իր վրայ ու լորած՝ և թուշը ծնկերուն գրեթէ կսքած մէկ կողմի վրայ կը պառկի և մոխրի գոյն ծածկոյն ներքե կը գողողայ, որ շատ կարճ ըլլալով՝ իր բոլոր մարմինը չծածկեր և բաց կը թողու ոսկրուս սրբունքն ու իր հաղած ծուխի ծուխի հին կոճկէնի մը ծայրը. . . : Այս խշտեակը ժահ հաս մը կը բուրէ. . . :

Հանին սնաբէն քիչ մը հեռու պատին զուգահեռական գծով՝ փռուած է հինգ տղոց անկողնի տեղ ծառայող յարգալիք պատար :

Եւ ահա այսպէս :

Ատալին լայնքին ամէն մէկ կողմը պտտուեր և ազա սոյն յարդին՝ կամ լաւ ևս, այս տամուկ և նողկալի կուլին մէջ տղաքը գլորեբ են, պատառը թէ տուանի և թէ վերմակի տեղ կը բռնէ :

Երկու սզակ աղջիկներ՝ որոցմէ մին ծանր հիւանդ է, մէկ կողմէն կը սրախան, միւս կողմէն երեք փոքրիկ տղաքներ : Թէ աղջիկ

և թէ տղայ հաղուած պառկած են, եթէ կարելի է հաղուտ անուանել քանի մը գծուծ ցնցատիներ : Իրենց տեղոյն, վատոյժ, ցաւագար երեսը կիսովին կը ծածկուին թանձր, դեղձան, աղտոտ, խոռձակ, ձիգ մաղբով՝ դոր կամաւ իրենց մայրը կը թողու որ երկրնան վասն զի անով քիչ մը ցրտէն կը պահպանուին : Տղաներէն մին՝ պրկուս մատերով մինչև թուշը կը քաշէ խշտեկին պատարը՝ որպէս զի լաւ մը գոյուի. . . միւսը՝ մատերը ցրտէն պահպանելու համար՝ կտաւը ակուններով կը բռնէ որ իրարու կը զարնեն : Իսկ երրորդը իր երկու եղբայրներուն մօտ կը սեղմի որ տաքայ :

Աղջիկներէն մին՝ բարակ ցաւէ հաղումաշ իր փոքրիկ ողորմելի դէմքը՝ որ արդէն կասպոյն և ակտուոր գեղճութիւն մ'ուսնէր՝ հինգ տարեկան քրոջը ստած կը ծըն վրայ գրեր էր. . . և այսպէս ընդունայն կ'աշխատէր տաքնեւ զանի իբ թեւերուն մէջ ածախալի խնամքով մը. . . :

Հղիկին խորը և տղոց խշտեկին գիմացը դրուած յարդէ պատաստի մը վրայ՝ ակնհասին կինը գաղանի տենդէ մ'ու վշտալի հիւանդութենէ մը ոգեսպառ ընկեր պառկեր է և քանի մ'ամսէ վեր ոտք երկելու անկարող : Մատէն Մօրէլ երտուն ու վեց տարեկան է, Ասպոյս բամբակէ թաշկինակ մ'իւնկուն ճակատին բուրտիբը կատրէ է, որով իր ոսկրուս երեսին մաղճոտ դեղնութիւնն աւելի աչքի կը զարնէ : Գորշագոյն բոլորակ մը կը շրջապատէ իր խոր և մարած աչքը : Իր կատրուս շրթերուն վրայ արիւնային ձեղքեր կան : Իր տրտմալին վճատ կերպարանը, իր աննշան դիմադծերը կը յայտնեն որ անուշ բնաւորութեան տէր կին մ'է, բայց արիւթեան և ժիրութեան զուրկ և հեռակայէս անզօր գանուելով սև բաղդին դէմ սգօրելու, կը ծուխ, կը գայթի և կը կոծի : Տիար, յոյլ և միամիտ ըլլալով՝ Մատէն պարհեշտ մնացեր էր, վասն զի իր էրիկը պարհեշտ էր : Եթէ ինքն իր գլխին ձգուէր՝ թերեւ տգիտութիւնն ու թշուառութիւնը զանի վատթար և յուր ճամբու մէջ մղէին : Կը սիրէր նա իր զուտներն, իր ամս սինը, սանիայն բաւական արիասիրտ ու տոկուն չէր իրենց սովորական թշուառութեան՝ սուանց դառն

երտուանջի՛ հանդուրժելու : Շատ անդամ՝ ակնահասան՝ որ իր անընդձ հատ աշխատութեամբ սոյն ընտանիքը կը հողար , կ'ստիպուէր իր գործը թողուլ և դալ այս հէք հիւանդոտ կիներ միխթարել : Մօբէլ՝ իր կիներ տաքցնելու համար՝ անոր անշահ, ծակոտէն հաստ կը սուտէ ծածկոցին վրայ այնպիսի հին ու կարկտուն լաթեր նետեր էր նր գրաւատունէն անդամ՝ մերժուեր էին :

Թոնիը մը, տապակ մ'ու ծայրահատոր սան մը , գեանին վրայ ցիր նու ցան, մէկ երկու հատ զիղած թասեր , տաշտ մը , լաթ լուպլու աակտակ մ'ու կճէ խոշոր թակոյկ մ'որ տամալին (toit) մէկ անկիւնը խարխուլ և հովէն յարածամ շարժուն դրան մօտ դրուած է , ահա ատնք են սոյն ընտանիքին բոլոր ունեցած կահ կարասին :

Ճրագ մ'որուն բոյն աղիւններուն ծակեբէն փշող հովէն կը տատանի , կը լուսաւորէ այս ոգորմելի պատկերն և այն հնոտի ու չքօտի քրերուն վրայ մերթ իր սմոյն ու երերուն նշոյնները կը սփռէ : մերթ տրասպղին վրայ դրուած՝ ուր ամիսահատը կը նիրհէ , անդամանդեայ և սուտակին քարերու շողայիկ (éblouissant) հոյլը (fouilli) բիւր շնգերով ու երփն երփն կայծիկներով կը փայփլէ :

Թէպէտ ձեղնայարկին մէջ խօրին լուծիւն մը կը տիրէ , սակայն այն տեղ բնակող եղիկներն՝ բոլորն ալ արթուն են . . . մեծ մաս մէն բռնէ մինչև փոքրիկ տղեկը՝ ամէնքն ակնահաստին կը նային ակնապիշ՝ որ իրենց միակ յոյն , միակ սարուէն է :

Պարզմիտ ինքնասիրութեամբ մը կը տազնային զանի անդործ և աշխատութենէ յոգնած դադրած տեսնելով :

- Մայրն իր զաւակներուն հոգն ունի .
- Տղաք ինքն իրենց հոգը կը տանին .
- Այուշ կիներ հոգ մը չունի . . . :

Սակայն սոյն ածուշ կիներ յանկարծ ելաւ նստաւ , սուտակի պէս դեղուկ , չոր ու երկայն թևերը կմակսքի նման կրծքին վրայ խաչաձև դրաւ , քթթելով լոյսը դիտեց և ապա յամբօրէն ոտք ելաւ իր ծածկոյթին կտորը պատանքի պէս ետեէն քաշքշելով : Այս կիներ քարձը հասակ մ'ունէր , իր ածիլուած գլուխը չափէն աւելի փոքր

կ'երեւեր . ջրածիգ շարժում՝ իր ստորին , և տու կախ շուրթը կ'երերէր . այս ժահադէմ դիմակը վայրագ ապշու թեան մը ախպարը կ'ընծայէր :

Խելագարը կամացուկ մը տրասպղին մօտ եկաւ : տղու մը պէս որ գեան (mésait) ընելու կը պատրաստուի : Երբ ճրագին հասաւ՝ լուսին մօտեցուց իր երկու դոյրոջ ձեռներն սրոց նիհարութիւնն այն աստիճանի էր որ ստորակայ լոյսը անոնց կապոյտ թափանցիլութիւն մը կտար : Մասէն Մօրէլ իր իշտեկէն սրուուին ամէն շարժումները կը դիտէր . իսկ սա ճրագին բոյնն ստանալու ետեէ ըլլալով՝ գլուխը կը ծռէր և ախմար հետարբորութեամբ մը սեղանին վրայի շողողուն մեքիկներուն (rabis) և անդամանդներուն փայլունը կը նկատէր : Այսպէս հիացած մնալով՝ խելագարն իր ձեռներն ճրագին ևս մօտեցուց ու այրեցաւ . . . և վայրագ ձայն մ'արձակեց :

Այս աղաղակէն Մօրէլ արթնցաւ ընդօստ՝ և գլուխն աշխուժով մը վերուց : Քաւաւուն տարեկան մարդ մ'էր՝ ուշիմ , աննեց և անուշ այլ թշուառութենէ թոռմած ու հաշած դէմք մ'ունէր նա . ծաղիկէն խորշումած երեսին ստորեւ քանի մը շարթուան արեխառն մօրուսով մը ծածկուեր էր . շտահաս կնճիւններ արդէն իր կուտո ճակատը ալ կօսեր էին , իր բորբոքած արտեանունքն քնատ դիշխրներու տքնութենէ կարմրեր էին : Ինչպէս որ ստէպ կը տեսնուի վատոյժ կնգմունածքի տէր լանուորներու մէջ՝ որ նստուկ աշխատութեան գերի ըլլալով՝ ստիպուած են գրեթէ անշարժ դիք մը պահել օրն՝ ի բուն նոյնպէս ակնահաստին վտիտ հասակը այլակերպեր էր . . . : Եր տրասպղին վրայ անդուլ կոր 'ի կոր մնալու և ձախ կողմը ծռելու ըստիպուած ըլլալով՝ որպէս զի իր յետանը շարժէ , Մօրէլ քար ոտկը դարձեր և օրը տասն երկուսէն ցտասն հինգ ժամ այս վեճակը պահելուն մարմնին մէկ մասը կորարեկ կամարեր էր : Իսկ իր ահեկին թևը՝ յետանն անդադար գործածելէն ջրային անհարին ոյժ մը ստացեր էր , մինչդեռ ալ թևն որ միշտ անշարժ էր՝ տրասպղին վրայ անդամանդներուն երեփեփեք (facette) յետանին բռնելու համար , ահուելի նիհարութեան երեւոյթ մ'ունէր . իր վտիտ սը-

քունքն՝ որ մարդի պակսութենէ գրեթէ չքացեր էր՝ հասկն թէ իբր տուայտ մարմինը վերցնելու կը զօրէր, որուն բոլոր մտուկը, բոլոր էութիւնը, բոլոր ոյժը մինակ այն մասին մէջ կեդրոնացած կ'էր քեզին՝ որ անընդհատ աշխատութենէ կը մարդուէր . . . :

Եւ ինչպէս որ նոյն ինքն Մօրէլ կըսէր սրտամմիկի հեղութեամբը ոչ այնքան անձիս համար կերակուր կուտեմ . . . որչափ յետանը դարձնող բազուկս կողբուրելու համար . . . :

Անրահատն ընդոստ արթննալով՝ յիմար կինը տեսաւ դէմ առ դէմ :

— Ի՞նչ ունիս և ի՞նչ կուզես, մամիկս . . . — ըսաւ անոր Մօրէլ. նազաւ տեղի մեզմ ձայնով մը յարեց առ ահին որ ՚ի քուն կարծած ընտանիքը չարթնցնէ :

— Գնա՛, տեղդ սրտուկէ և մամիկ . . . Աղմուկ մի՛ հաներ, Մատուէն և տղաքը քնացոր են :

— Արթուն եմ . . . Ատէլը սաքցնելու կ'աշխատիմ — ըսաւ առ ջինեկ աղջիկը :

— Անթուրութենէս չկրցայ քնանալ — վրայ բերաւ տղեկներէն մին . — Երէկ օրիորդ Աիկօչէզին տունն երթալով՝ ճաշ ընելու կարգն իմն չէր :

— Ողորմելի՛ տղաք — ըսաւ Մօրէլ վշտաբեկ — կարծէի թէ կը քնանար . . . գոնէ :

— Կը վախնայի որ չարթնցնեմ քեզ, Մօրէլ — ըսաւ կինը . — թէ ոչ՛ քիչ մը ջուր պիտի ուզէի . շատ ծարաւի եմ, տենդս նորէն սաստիկ բռնեց :

— Հիմակ կը բերեմ — սրտասխամեց բանորրը . — բայց առաջ մայրդ պառկելու զրկեմ . . . Քեզի կըսեմ, թող սա քարերը տեղը — ըսաւ պառաւին, որ նոյն պահուն խոշոր սուտակ մ'առնել կուզէր, և աչքն այն փայլուն քարին վրայ անկեր էր : — Գնա՛, տեղդ գնա՛, պառկէ, մամիկ — կրկնեց Երահատը :

— Սա՛, . . . սա՛, . . . — պատասխանեց յիմարը ցոյց տալով երանձկացած գոհարը :

— Հիմակ պիտի աւրուինք — ըսաւ Մօրէլ ձայնը բարձրացնելով, որպէս զի իր կետուրը վախնայ, և անոր ձեռքը մեղմիկ մ'անդին հրեց :

— Տէ՛ր, տէ՛ր Աստուած, որքան ծարաւի եմ, Մօրէլ . . . — մրմուռաց Մատուէն : — Եկուր քիչ մը ջուր տուր ինձ, սնաշէն . . . :

— Բայց ի՞նչպէս գամ . . . ինչպէ՞ս թողում որ մայրդ գոհարներուն դպի . . . որ նորէն անգամանդ մը կորուսէ . . . ինչպէս որ տարի մը կայ . . . և Աստուած միայն դիտէ . . . Աստուած զիտէ թէ որչափ տղեկ նստաւ ինձ . . . այն անդամանդը . . . և որչափ նեղութիւն պիտի քաշենք դեռ ևս անոր համար :

Եւ ակնհասոր տրտմանք երեսով մ'իր ձեռքը ճակտին տարաւ . . . ասա յարեց խօսքը տղոց մէկուն ուղղելով :

— Ֆէլիքս, ե՛լ, քիչ մը ջուր սուր մօրդ, տղաս, քանի որ արթուն ես :

— Ձէ՛, չեմ ուզեր որ երէտ, կ'սպասեմ, կարելի է կը մտի — վրայ բերաւ Մատուէն :

— Անկողնս ալ գրսի օդին չափ ցուրտ է — ըսաւ աղեկը ոտք երկնելով :

— Ի՛՛հ, քեզ կըսեմ, հանդարտ կենանս պիտի . . . գոչեց Մօրէլ սրտունալի ձայնով մը, որպէս զի խելագարը վռնատէ, թէ և նա տրտաղէն չէր զատուեր և գոհարներէն մին առեղաւ կը պոչէր :

— Մայրիկ, թակոյկին ջուրը սառել է — սրտաց Ֆէլիքս :

— Արեմն սառը կտրէ — ըսաւ Մատուէն :

— Շատ կարծր է . . . ոյժս չբաւեր :

— Մօրէլ, գոնէ սա թակոյկին սառը խորտակէ — ըսաւ Մատուէն սրտունալի և անհամբեր ձայնով — քանի որ ջրէ դատ բան մը չունիմ խմելիք . . . դէթ ջուր խմեմ . . . ծարաւի մեռցնելու միտք ունիս իս . . . :

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ համբերութիւն է Ի՞նչ կուզես որ ընեմ . . . մայրդ գլխիս վրայ կեցեր է — պտուռաց թշուառ ակնհասոր :

Եւ իրօք խելագարին ձեռքէն կտրող չէր ազատիլ, որ եղած գիմադրութենէ աւելի դրօշմիլ սկսեր էր և զայրագին մոնջիւն մը կ'արձակէր:

— Գողդ կանչէ զանի— ըսաւ Մօրէլ իր կնիկան: — Երբեմն բեզ ժօիկ կրնէ, բեզ...

— Մայր իմ, դնա՛ պառկէ, թէ որ խելօք նստիս... քեզի խաչկէ պիտի տամ, որ այնչափ կը սիրես:

— Սա՛... սա՛... — վրայ բերաւ խելագարն այս անգամ բռնի կորդէլ ուղելով աչքը անկած սուտակնը:

Մօրէլ կամացուհ մը հրեց զանի, բայց ընդունայն:

— Տէ՛ր Աստուած, մինչև որ մտրակովդ անոր աչքը չվախցնես ձեռքէն ազատելը չունես— դոչեց Մատէն — այս միջոցով միայն կրնաս զանի զսպել:

— Աւ հարկի ըսածդ պիտի ընեմ, թէև փախուկ է... բայց պառաւ կին մը մտրակի հարուածներով սպառնալ... միշտ խելքիս դէմ է— ըսաւ Մօրէլ: Ապա խօսքը պառաւին ուղղելով՝ որ զինքը խաճնելու կ'աշխատէր և ձեռնուր բռներ էր, իր ամենէն ստակալի ձայնը հանեց ու պոռաց:

— Աչքդ բաց, մտրակը պիտի ուտես... թէ որ շուտ մ'անկողինդ չդառնաս:

Այս սպառնալիքը դարձեալ անօգուտ եղաւ:

Յետոյ տրապղին վրայէն մտրակն առաւ, սաստիկ շոնչեց և պառաւին սպառնաց անոր ընելով:

— Շո՛ւտ, շո՛ւտ դարձիր անկողինդ:

Մտրակին թնդիւնէն խելագարը նախ տրապղին քովէն հասրձեպ հեռացաւ. ապա կայ առաւ, ակուններուն տակ մոնչեց և իր փեսային վրայ զայրալիք ակնարկներ արձակեց:

— Անկողինը... անկողինը... — կրկնեց Մօրէլ յառաջ գալով և իր մտրակը նորէն շաչելով:

Այն ատեն պառաւը ետ ետ շարժելով՝ անկողինը դնաց և կրուփն ակնհաստին ցցուց:

Իսկ Մօրէլ այս անագորոյն տեսարանին վերջ տալ և իր կնիկան ջուր հասցնել փափաքելով՝ խելագարին խիստ մտտ եկաւ, վերջին անգամ մ'ալ իր մտրակը սնտիկ հնչեցուց, առանց անոր դպելու, և սպառնական ձայնով մը կրկնեց:

— Անկողինը դարձիր... շո՛ւտ, շո՛ւտ...:

Պառաւը, իր ահ ու դողէն սկսաւ տակալի կերպով ոռնալ, իր խշտեկին վրայ ընկաւ կիռուզ ըրաւ, ինչպէս շուն մ'իր շնյարկին (chenil) մէջ, առանց զօղանձը դատելու: Մանկտին ահաբեկ կարծելով թէ իրենց հայրը պառաւը կը ծեծէ, պոռային լալաղին:

— Մի՛, մի՛ ծեծեր մամիկը, մի՛ ծեծեր, մեղք՛ է:

Անհար է նկարագրել այս դիշերային տեսարանին դուժալի տըպաւորութիւնն, այն միջոցին որ մանկտին ողբալի աղաղակներ կ'արձակէր, խելագարը մոլեգին կ'ոռնար և ակնհաստին կինը վշտալի տրտունջներ կը հանէր:

Ակնհատ Մօրէլը շատ անգամ մեր պատմած տեսարանէն աւելի տխուր տեսարաններու մէջ գտնուեր էր, սակայն իր մտրակը տրապղին վրայ նետելով բռուն յուսահատութեամբ մը դոչեց:

— Ո՛հ, ի՞նչ կեանք, ի՞նչ կեանք է իմն...:

— Ի՞նչ յանգանք ունիմ ես թէ որ մայրս խելագար է— ըսաւ Մատէն լալով:

— Հասցա՛ իմ մեղքս ի՞նչ է— ըսաւ Մօրէլ: — Իմ միակ փափաքս ի՞նչ է, ձեր ամենուն համար արիւն քիրտ թափել...: Գիշեր ցորեկ դորձիս գլուխն եմ... այլ բերնէս զանգատ մը չեկներ... և ողբան որ ոյժս ներէ, պիտի աշխատիմ: Բայց իմ արհեստս բանելու տանն, չեմ կրնար նաև խենդի, հիւանդի և արդոյ պահապանն ըլլալ...: Չէ, երկին արդար չէ, վերջապէս, ո՛չ, արդար չէ... չափէն աւելի է այս թշուառութիւնը մարդու մը համար— ըսաւ ակնհասար ողորմաղին շեշտով մը:

Եւ իր աթոռակին վրայ ընկաւ վշտաբեկ գլուխը ձեռներուն մէջ պահելով:

— Բանի որ մայրս հիւանդանոցէն մերժեցին, որովհետև բաւա-

կան խենդ չե եղեր, ես, ես ի՞նչ կուզես որ ընեմ... ըսէ...
— պատասխանեց Մատէն իր թուլաշունչ (trainant), վշտադին ու
աղիոգորմ ձայնովը. — Երբ չես կարող պէտք եղածին դարմանը
սանիլ, ի՞նչ օգուտ ունի էրուիլ ու տանջուիլ:

— Ա՛յ ինչ — ըսաւ բանւորը, և աչերն՝ որ արտաքով թրջեր էին՝
որբեց. — այո՛, օգուտ մը չունի... շատ իրաւ ես: Բայց երբ մար-
դուս չորս կողմը ծով կտրի, ինքզինքէն կ'երէ...:

— Ա՛յ, Աստուած իմ, Աստուած իմ, կը պատկանիմ... կը դող-
դղամ և տենդը կ'երէ կը մըկէ իս... ըսաւ Մատէն:

— Քիչ մը սպասէ, հիմակ ջուր կը բերեմ՝ քեզի:

Մօրէլ տամայլն տակ գտնուած կուծն առնելու գնաց... Զրին
վրայ սառը դժուարաւ կտորելէն ետե՛ւ սոյն սառնալի հեղուկէն թաս
մը լեցուց և կնկանը խշտեկին մօտեցաւ, որ իր ձեռները կը կար-
կատէր անհամբեր:

Բայց վայրիկ մը խորհեցէն ետեւ ըսաւ անոր:

— Ա՛յ, այս ջուրը շատ պաղ է... տենդդ բռնած միջոցին...
խմելը կրնայ մնասել քեզ...:

— Ի՞նչ, մնաս է, հոգդ է հատեր, տո՛ւր, շո՛ւտ, նայիմ...:

— վրայ բերաւ Մատէն դատնասէս — աւելի շուտով շունչս կը
փչեմ... և դու ալ իզնէ կ'աղատիս... — ու այն ատեն մինակ
խենդի ու տղոց պահապանը կըլտաւ: Հիւանդը կը սլակի:

— Ինչու համար պղտէս կը խօսիս ինձի հետ, Մատէն: Մի-
թէ իս չես ճանչեր... — ըսաւ Մօրէլ արտումութեամբ: — Ա՛ղա-
չեմ իմ կրակիս վրայ եղ մի՛ թափեր, հազիւ թէ աշխատելու հա-
մար քիչ մը խելք և ոյժ կայ վրաս... գլուխս արգէն իմն չէ,
կը վախնամ որ ունեցած խելքս ալ կորուսեմ... և այն ատեն
ձեր վերջն ո՛ւր կ'երթայ: Մինակ հոգս ձեզի համար է... թէ որ
լոկ իմ չոր գլուխս ունենայի, բնաւ վաղուանը չէի մտածեր...:
Փառք Աստուծոյ, գեան իր տեղն է և ամենուն համար կը հոսի:

— Խեղճ Մօրէլ. — ըսաւ Մատէն դորովալի — ճշմարիտը,
իրաւունք չունէի ըսելու սրտնեղութեամբ մ'որ քեզ ձեռքես

ազատել կուզեմ: Մի՛ մեղադրեր իս... գէշ մտքով չըսի...
չէ՛, ինչո՞ւ որ, իրօք... թէ քեզի և թէ մեր զաւակներուն օ-
գուտ մը չունիմ...: Տասն վեց ամե՛տ վեր անկողին պառկեր եմ...
Ո՛հ, տէր Աստուած, ի՞նչպէս կը պատկանիմ... կ'աղաչեմ, քիչ
մը ջուր տուր՝ խմելու:

— Քիչ մ'ալ համբերէ, թասը ձեռներուս մէջ տաքցնելու կ'աշ-
խատիմ...:

— Ի՞նչ աղւոր սիրտ ունիս, քանի սպաշնորհ եմ որ ծանր
ծանր խօսքեր կըսեմ քեզի...:

— Ողորմելի՛ կին... գիտեմ որ ցաւերդ նեղսիրտ ըրեր ևն քեզ...
ինչ որ կուզես ըսէ ինձ, բայց մ'ըսեր թէ ինձ բեռ մ'ես և
ատկէ գլխ աղաթել կուզես...:

— Բայց քեզի ի՞նչ օգուտ ունիմ:

— Մեր զաւակներն ալ ի՞նչ օգուտ ունին մեզի:

— Աշխատութիւնդ աւելցնելու միայն:
— Անշուշտ, բայց ձեր սէրն է միայն որ ինձ գորութիւն կը-
տայ երբեմն օրը քսան ժամ աշխատելու, այնպէս որ ահա տձև ու
հաշմոս էակ մը դարձայ...: Ի՞նչ, միթէ կարծես թէ մինակ իմ
անձիս համար այս ըրած արհեստս կը բանէի: Ո՛հ, ամենեւին, կեան-
քը բնաւ գեղեցիկ բան մը չէ, անոր մեաս բարև կըսէի:

— Ես ալ այնպէս — վրայ բերաւ Մատէն — թէ որ զաւակներս
չըլտային, մինչև հիմակ պիտի ըսէի քեզ, Մօրէլ, բաւական ապրե-
ցար, ես ալ նոյնպէս, եկուր այս մեր տառապանքին վերջ տանք,
կրակ վառելու չափ ժամանակի կարօտ է...: Բայց այս զաւակներն,
այս զաւակներն... ո՛ւր թողունք:

— Աը նայիս հիմա որ անոնք ալ օգուտ մ'ունին — ըսաւ Մօ-
րէլ հիանալի պարզմտութեամբ մը: — Լաւ ուրեմն, ա՛ն, իմե՛
նայիմ, բայց ումպ ումպ, ինչու որ դեռ պաղ է:

— Ո՛հ, շնորհակալ եմ, Մօրէլ — ըսաւ Մատէն անյայտ-
թեամբ ըմպելով:

— Հերիք է... հերիք է...:

— Ա՛հ, շատ պազ էր... սարսուղուս կ'աւելնայ... — ըսաւ Մատէն թասը յանձնելով անոր :

— Տէր Աստուած, քեզի արդէն ըսի... շատ ցաւ կ'զգաս... :

— Գողալէն ոյժս հասաւ... կարծես թէ չորս կողմն սատողջ կտրեր է... :

Մորէլ բաձկոնակը հանեց, իր կնկան ոտներուն վրայ դրաւ և կունակն ու կուրծքը բաց նստաւ. խեղճը շապիկ չունէր :

— Բայց դու ա՛յսպէս պիտի ստոխս... Մորէլ :

— Հիմակ նորէն պիտի հագնիմ բաձկոնակի թէ որ շատ պազիմ :

— Թշուա՛ւ մարդ... ա՛հ, շատ իրաւունք ունիս, երկին անկրաւ է... մեր մեղքն ի՞նչ է որ այսչափ խեղճութիւն քաշենք... մինչդէռ ուրիշները... :

— Ամէն մարդ... մեծ ու պղտիկ իր հողն ունի... :

— Շի՛շտ է... բայց մեծերն չունին այն հողերն... որ ստամոքսը կը կրծեն և բոլոր մարմինը գող կը հանեն... : Բան մ'ըսեմ, երբ ատեն ատեն կը մտածեմ որ այդ յղկած անգամանդներ բող մէկուն գնովը կրնանք մենք և մեր զաւակները հանդիստ ապրել, ծանր կ'երևի... : Եւ ինչի՞ կը ծառայեն այս անգամանդները :

— Եթէ այս բանս որիշներս քննէ՛ կը ծառայէ ըսելով երթանք, ծայրը չենք գտներ... : Իբր թէ ըսէիր. ի՞նչ օղուտ ունի՞ տիկին Բիրէլի հրամանադատ անուանած պարոնին այն առաջին գտտիկոնը զոր վարձու բռներ ու շակեր է թէ և բնաւ եկած բնակած չունի... : Ի՞նչ օղուտ ունին իրեն համար աղոր պաստառներ, աղոր վերմակներ ունենալ, քանի որ ուրիշ տեղ կը բնակի :

— Շատ իրաւ է... այն կարասիներով մեր տնակին պէս քանի քանի հատ կրնան զարդարուիլ... թո՛ղ որ տիկին Բիրէլ ամէն օր կրակ կը վառէ որ խոնարութենէ կտհերը չարուին... : Այնչափ աղոր տաքութիւն պարապի կ'երթայ, երբոր մենք և մեր զաւակներն ցրտէն վէտ կը կտրինք... : Բայց դու նորէն պիտի ըսես ինձ, Մենք կ'ա՛հ կարասի չենք... ո՛հ, հարուստներն, ի՞նչ քար սիրտ ունին... :

— Ուրիշներէն աւելի չեն, Մատէն... : Բայց չգիտեն թէ ինչ քան է թշուառութիւնը, հասկցա՛ր... : Երջանիկ կը ծնին, երջանիկ կ'ապրին, երջանիկ կը մեռնին, ի՞նչ առթիւ կուզես որ մեզի մըսածեն... ինչպէս որ ըսի... սպէտ են... ի՞նչպէս կրնան գաղափար մ'ունենալ ուրիշներուն քաշածին վրայ : Եթէ շատ նօթի ըլլան, մեծ կըլլայ իրենց ուրախութիւնն ալ... ինչու որ աւելի լաւ կուտեն... : Եթէ ցուրտը սաստիկ կոխէ, ուղածնին է, քեղեցիկ աստիճանի կանուանեն, և իրաւունք ունին. եթէ հետիոտն դուրս ելնեն, ետքէն տաքուկ կրակարանի մը մօտ կը նստին, և սառէն ետև աւելի աղոր կըայ իրենց կրակը. ուստի մեր վրայ շատ չեն ցաւիր, քանի որ անօթութիւնն ու ցուրտն իրենց զուարճութիւն կը դառնան... : Ար հասկընաս հիմա, չգիտես, չգիտես... : Կարելի է որ, եթէ իրենց տեղն ըլլայինք, մենք ալ նոյնը կընէինք :

— Արեմն աղքատներն անոնցմէ շատ աւելի աղէկ են, քանի որ իրարու կ'օգնեն... : Այն պղտի բարեսիրտ Բիկօլէդ օրիորդն որ շատ անգամ իմ և զաւակներուս վրայ հիւանդութեան ժամանակ հսկեր է, երեկ Թէրոմն ու Բիէրը հետը տարաւ ճաշը մէկտեղ ընելու համար : Եւ իր ճաշն ալ ի՞նչ է. թաս մը կաթ և հաց : մի տարիքին մէջ մարդուս ակտրժակը տեղը կըլլայ. անսարակոյս կնքվինքը զրկած է... :

— Խեղճ աղջիկ, այո՛, շատ բարեսիրտ է : Եւ ինչո՞ւ համար, վա՛նս զի նեղութիւն ի՞նչ է գիտէ... : Եւ ասոր համար միշտ կ'ըսեմ, թէ որ հարուստները գիտնային :

— Հոսպ ո՛ւր մնաց այն կինն որ առջի օր շիտթած դէմքով մ'եկաւ մեզ հարցնելու եթէ բանի մը պէտք ունինք. հիմակ որ գիտէ նա, և աղէկը գիտէ թէ ինչ տեսակ բան են թշուառները... լա՛ւ, ինչո՞ւ համար չերեցաւ :

— Կարելի է նորէն գայ, ինչու որ, թէ և զարհուրած կ'երևէր, շատ անուշ և շատ բարի դէմք մ'ունէր :

— Վայ, դու ալ միշտ հարուստներուն կողմը կը տաշես, բաւառջևդ ամէն հարուստ իրաւունք ունի... կարծես թէ հարուստ

ներն մեզնէ տարբեր խմորով մը շաղուած են :

— Ես ատանկ բան մը չըսի— վրայ բերաւ Մօրէլ մեղմիկ սը . — ասոր ներհակն ըսի թէ մեղի պէս անոնք ալ իրենց պակասութիւններն ունին . . . : Գծբաղդութիւնն այն է . . . որ անտեղեակ են . . . Գրծբաղդութիւնն այն է , օրինակի համար , որ ոճիրներ գործող անդադամները գտնելու համար գործակալներ շատ կան , իսկ յետին աղէտից տակ ճնշուող ընտանիքի տէր պարիշտ բանուորներ փնտոող գործակալներ չկան բնաւ . . . և հետեւապէս ժամանակին իրենց օգնող չըլլալով՝ երբեմն փորձանքի կը հանդիպին . . . : Աղէկ բան է չարութիւնը պատժել , թերեւս աւելի լաւ է զայն արդիլել . . . : Օրինակի համար , մինչև յիսուն տարիք առ արինի կը մնաս , սակայն անհասարկն տառապանքը , հօթութիւնը քեզ չարութեան կը զրգեն . . . և ահաւասիկ նոր անդամ մ'ալ երեւան կ'երևէ . . . մինչդեռ եթէ գիտնային . . . : Բայց ի՞նչ բռնի կ'օգտէ այս մտածութիւնը . . . աշխարհս այսպէս է . . . : Յուսահատ ու ազրատ եմ , և այսպէս կը խօսիմ . . . թէ որ հարուստ ըլլայի , կ'երուխումի և հարկիրի վրայ պիտիխօսէի . . . : Բայց ըսէ նայիմ , խոճալի կին , դու ի՞նչպէս ես :

— Միշտ նոյնն եմ . . . սրունքս ինն չէ . . . : Բայց դու . . . դու կը դողդղաս . . . առ սա բաճկոնակ . . . մարէ սա ճրագը որ պարագ սեղ կը վառի . . . լուսնալու վրայ է :

Եւ արդարեւ , տոգոյն նշոյլ մ'երգին շրջանակը պատող ձիւնին մէջէն դժուարաւ սահելով՝ սկսեր էր սոյն անակին ներսի կողմը տխուր լոյս մը տրուել և անոր տեսքն աւելի ահուելի գործել . . . : Գիշերաւիս մուլթը այս թշուառութիւններուն գոնէ մէկ մասը կը սքողէր . . .

— Ախտի սպասեմ որ աղէկ մը լուսնայ որպէս զի գործի սկսիմ :

— Ըսաւ ակնհասոր իր կնիկան յարգէ պատասխին ծայրը նստելով և իր ճակատը երկու ձեռներուն վրայ յենլով :

Գանի մը բուռն լուռ կենալէն ետեւ՝ Մատէն անոր ըսաւ :

— Երբ գայ պիտի տիկին Մաթիէօն՝ գործած քարերդ առնելու համար :

— Այս ատու . . . մինակ սուտ անդամանդի մ'երեսիկը ունիմ՝ տաշելու . . . :

— Սուտ անդամանդ . . . դու որ անդին անդամանդներ կը տաշես , թէև տան մէջ կարծեն թէ շինծու են :

— Ի՞նչպէս , ուրբեմն գործը չդիտես . . . Բայց իբրևուրք ունիս , երբ անցածն օր տիկին Մաթիէօն եկաւ , դու քնացեր էիր . . . : Տաս հատ շինծու անդամանդ տուաւ ինձ , այսինքն Ռէնի տաս հատ խիճեր որ աաշեմ , ճիշտ նոյնչափ ընտիր և խոշոր ակներուն պէս՝ սր նոյն օրը բերեր էր և տրապղիս վրայ մեղքիկներուն հետ դրեր եմ . . . երբէք այս անդամանդներուն պէս յատակ դոյնով քարեր չէի տեսեր . այն տասը քարերն անշուշտ վաթսուն հազար Փրանքէն աւելի կ'ածեն :

— Եւ ինչո՞ւ համար սուտ քարերով անոնց նմանը շինել կտայ քեզ :

— Մեծանուն կին մ'որուն սեպհականութիւնն են այն ընտիր քարերը . . . կարծեմ դքսուհի մ'է , ակնագործ Պ . Պօտուէնէն ինդրեր է որ իր գոհարեղէն զարդերը ծախէ . . . և անոնց տեղ սուտ քարերով զարդեր շինէ : Տիկին Մաթիէօ , որ Պ . Պօտուէնի միջնորդուհին է , յայտնեց ինձ այս բանս՝ գոհարները բերելով՝ որպէս զի սուտ քարերուն մի և նոյն կերպն ու ձևը տամ . տիկին Մաթիէօ այս գործին մէկ մասն ալ ուրիշ չորս ակնհասներու յանձներ է , որովհետեւ բառտուն յիսուն քար կայ տաշելու . . . : Ես չէի կարող ամէնն ալ ընելու . . . այս ատու պատրաստ պիտի ըլլայ և Պ . Պօտուէնին ժամանակ պէտք է այս սուտ քարերը շինել և յօրինել տալու . . . : Տիկին Մաթիէօ կըսէ թէ սոէպ կ'իններն այսպէս գաղտնի Ռէնի խիճերը անդամանդներու տեղ կ'անցնեն :

— Ուրեմն կը նայիս որ սուտ քարերն ալ բուն անդամանդի չափ գործ կը տեսնեն , և մեծանուն կ'իններն որ զարդարուելու համար անոնք կը դնեն , երբէք հատ մ'անդամ զոհելով մեղի պէս թրշուառներ միթարելու չեն մտածեր :

— Իսեղձ կ'իսս . ինչո՞ւ այդպէս ծուռ կը դատես , վիշտդ քեզ անիրաւ կ'ընէ . . . : Ո՞վ գիտէ թէ մեք , Մօրէլիք , թշուառ ենք :

— Ո՞հ , ի՞նչ մարդ , ի՞նչ մարդ ես դու . . . : Մարմնիդ կտոր

կրտսեր ընեն, դարձեալ շնորհակալ եմ պիտի ըսես:

Մօրէլ իր ուսերը շարժեց արդասատուութեամբ:

— Այս առտու ի՞նչ սրբաբոց ունի քեզ վճարելիք տիկին Մաթիէօն — վրայ բերաւ Մատիէն:

— Տալիք մը չունի ինձ, օրովհետեւ արդէն հարիւր քսան Փրքանք իրմէ ինձ անցած է...

— Ո՛չ ինչ, Բայց առջի օր մեր վերջին քսան սուն ալ հատու... Գանկ մ'անդամ չկայ տան մէջ:

— Ճիշտ է — ըսաւ Մօրէլ յուսակաւոր գէւքով մը:

— Հիմակ ի՞նչ պիտի ընենք,

— Ես ալ չգիտեմ...

— Եւ հացադործն ալ ասկից ետքը անպտիկ տալ չուզեր մեզի...

— Իրա՛ւ է... քսանի որ տիկին Բիրէէն հացի մը քառորդ փոխառի երէկ:

— Արդեօք Պիւրէդ խաթունը մեզի քիչ մը ստակ փոխ չտար կըսես:

— Մեզի փոխ տայ... Հիմակ որ մեր ամէն բաները դրաւ առաժ է, ի՞նչ բանի վրայ կուզես փոխ տայ... միթէ մեր զաւակները պատանդ ձգենք... — ըսաւ Մօրէլ դառն ժողտով մը:

— Բայց մայրս, տղաք և դու մինակ լսար մը հաց կերաք... Անօթութենէ ալ մեռնիլ պէտք չէ... Ծանցանքը քուկդ է... ահաւոր ողորմասիրական ընկերութեան գիւմար գրել չտուիր այս տարի ալ:

— Մինակ կահ կարասի ունեցող աղքատները կ'արձանագրուին... իսկ մենք ալ չունինք... կարծեն թէ տունի տեղի տէր մարդիկ ենք: Աղքատանոցը մոռնելու համար տղաք գոնէ բաղէն մ'ունենալու են, մերինները հին ու մին շորեր ունին, իսկ ողորմասիրական գիւմարին դարձել հարկ էր՝ անուս գրել տալու համար՝ քսան անդամ երթալ գալ, վասն զի սխալման չունինք... և այս ալ պէտք եղածէն աւելի ժամանակի կորուստ մը պիտի ըլլաք...

ինչու որ, ի՞նչ նպաստ պիտի տային մեզ, ամէն աֆր հաց մը և քսան հինգ օրն անդամ մը կէս լիտր միս:

— Ուրեմն ի՞նչ ընենք...

— Կարելի է որ երէկ մեղ վնասող տիկինը չմոռնար կդայ...

— Հա՛... թէ որ բան չունիս, յուսայ... Բայց տիկին Մաթիէօ հարիւր սու մը փոխ կտայ կարծեմ քեզի... տաս տարիէ վեր անոր գործին կ'աշխատիս... անշուշտ այս նեղութեան մէջ չթողուր ընտանիքի տէր պարկեշտ բանուր մը:

— Չեմ կարծեր որ անկից բան մը ելնէ. ձեռքէն եկածն ըրաւ մաս մաս մինչև հարիւր քսան Փրքանք տալով ինձ, բաւական խոշոր կէկ գումար մ'է այս անոր համար: Անդամանդի միջնորդուհի մը ըլլալուն և իր զամբիւղին մէջ երբեքն յիսուն հաղար Փրքանքի արժէք ունենալուն, ըսել չէ թէ հարուստ է: Երբ ամիսը հարիւր Փրքանք վաատկի, շատ գոհ կըլլայ, ինչու որ բաւական ծախս ունի... երկու քեռ աղջիկ ունի մուսցանելու: Հարիւր սու անոր աչքին գիտե՞ս որ մեծ բան է, ինչպէս մեզի ալ... և կան միջոցներ որ մարդ այս գումարն ալ չդաներ... ինչպէս որ գիտես: Արդէն ուր մարդ այս գումարն ալ չկրնար հարկաւ իր և իրեններուն բերնին հացը կտրել և մեզի տալ:

— Ահա ասանկ կըլլայ միջնորդներու համար աշխատիլը, մեծ ակնավաճառներու համար աշխատելու տեղ, անոնք այնչափ պահանջող չեն ըլլար... Բայց դու ալ այնչափ կ'սպասած աւել ես որ կաշիք ալ քերթեն փոյթի չէ... Այս ամէնը քու գլխէդ կը քաշենք:

— Իմ գլխէ՞ս մի: — պողաց թշուառը սոյն անհեղեղ յանդիմանութենէ զայրանալով — ըսէ, միթէ մեր բոլոր խեղճութեան պատճառը մայրդ չէ: Թէ որ մօրդ կորուսած անդամանդը վճարելու չստիպուէի... հիմակ պահուստի ստակ կ'ունենայի, օրողչէքս ձեռքս կ'անցնէր, հիմակ հաղար հարիւր Փրքանք քսակ կըլլար, գումար մ'որ ինայութեան արկղէն փոխ առինք, որպէս զի Պ. Ժաք Գէրանի, որ Աստուծոյ կրակին գայ, փոխ տուած հազար երեք հարիւր Փրքանքին հետ կորուստը փոխարինենք:

— Դու դեռ կը յամառիս, և չես ուզեր այն մարդէն բան մը

խնդրելու . . . : Իբաւ է որ շատ ազահ է . . . և մեր խնդիրը չկատարել որ անշուշտ . . . բայց մե՞զք կը գործես փորձ մ'ընելով . . . :

— Ես՝ այն մարդուն . . . այն մարդուն . . . դիմեմ . . . — գոչեց Մօրէլ — աւելի աղէկ ունիմ որ իս կախին . . . : Մի՛ . . . մի՛ խօսիր ինձ այն մարդուն վրայ . . . թէ ոչ խելքս գլխէս պիտի թռի . . . :

Այս խօսքս ըսելով ակնահաստին կերպարանն՝ որ սովորաբար անուշ էր և բարեհամբոյր, արտում՝ արիւթեան մ'երևոյթ մ'անուա . . . թեթև կարմիր գոյն մ'իր երեսը սրասեց իր, նստած խշտեկէն շտապով ոտք ելաւ և ձեղնայարկին մէջ սկսաւ սրբաբիլ խռովայոյց : Թէև անձև ու վտիտ տեղք մ'ունէր այս մարդը, սակայն իր զիջքն ու դէմքը վեհանձն սրտմտութիւն մը կ'արտայայտէր :

— Ես չարասէր մարդ մը չեմ — գոչեց նա — կենացս մէջ մէկու մը գէշութիւն ըրած չեմ . . . բայց դիտե՛ս որ . . . այն նստարը . . . ո՛հ, այն նստարին՝ ինձ հասուցած չարիքին չափ չարիք կը մաղթեմ :

— Ապա, իր երկու ձեռները ճակատին վրայ դնելով՝ վշտալի ձայնով մը մըմտաց. — Աստուած իմ, ինչո՞ւ համար իմ սև բաղդէս, որուն արժանի չեմ, ես և իմիներս, ձեռք ու ոտք կապուած՝ իբր գերի այն կեղծաւորին ճանկին տակ մնամ : Միթէ իրաւունք ունի՞ իր հարստութիւնը գործածել, որպէս զի ի կարուստ մասնէ, ապականէ, տառապէ այն անձերն որոց կործանումը կուզէ, այո՛՛ ապականէ, տառապէ . . . :

— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ — ըսաւ Մատէն — թափե՛ կատողութիւնդ անոր դէմ . . . իբր թէ մեծ բան կը շահիս թէ որ քեզ բանտը նետել տայ . . . ինչպէս որ օրին մեկը պիտի ընէ, այն հազար երեք հարիւր ֆրանքի փոխանակադրին առթիւ՝ քանի որ քեզի դէմ դատաւճիւր մը ձեռք ձգեց . . . : Պոչէ՞ք բոնած է, ինչպէս թողուն մը դերձանի մը ծայրէն : Ես ալ քեզի չափ կ'ատեմ զանի, այն նստարը, բայց քանի որ անոր իշխանութեան տակը կը գանուինք . . . առ հարկի պէտք է . . . :

— Թողու՛լ որ անպատուէ մեր աղջիկը, այնպէս չէ՞ — գոչեց ակնահաստը որոտալիբ :

— Տէ՛ր սղորմեա՛, այդ ի՞նչ ձայն է, աղաքն արթնցան . . . քեզի կը լսեն . . . :

— Ա՛հ, վա՛հ, և ի՞նչ փոյթս է — վրայ բերաւ Մօրէլ ահաւոր հեղինութեամբ մը — այս ալ մեր միւս երկու աղջիկներուն աղւոր օրինակ մը կը լըլայ, անոնք ալ թող պատրաստուին . . . թէ որ օրին մէկը նստարին խելքին փչէ և զանոնք ուղէ . . . : Միթէ անոր իշխանութեան տակը չե՞նք, ինչպէս որ միշտ կըսես . . . : Նայիմ՝ քեզ և կրնէ որ իս բանտ կրնայ դնել . . . բայց ի՛նչ բայ խօսէ նայիմ . . . պէտք է որ մեր աղջիկն անոր ձեռքը յանձնենք, այնպէս չէ՞ :

Յետոյ այս թշուառն իր անէծքը դադարեցուց սաստիկ հեծկտաւ լէ մը բռնուելով : Վասն զի այն սրբաբիլը և բարեբարոյ մարդը չէր կարող սոյն վշտալի հեղինութեան լեզուն երկար առնն շարունակել :

— Ո՛հ, իմ զաւակներս — ստուայ նա առատ առատ արտասօք թափելով — իմ խեղճ զաւակներս, իմ Ղուիղս . . . իմ բարի և գեղանի Ղուիղս . . . շա՛տ գեղանի . . . շա՛տ գեղանի է . . . բարէ՛ . . . և մեր բոլոր թշուառութիւններն ահա ասկից կը ծաղկն : Եթէ այնչափ գեղանի չըլլար, նստարն այն գումարն ինձ փոխ տալու չէր առաջարկեր . . . : Աշխատասէր եմ և ուղիղ, ակնալաճառը կրնար ինձ պայմանաժամ տալ և այս ծեր հրէշին պարտական չէի մնար, և մեզի ըրած ծառայութիւնէ շարաչար օղուտ քաղելու չէր համարուած կերպով անպատուել ուղեւոր . . . և ոչ օր մ'անոր տունը ձակեր՝ աղջիկս անպատուել ուղեւոր . . . և ոչ օր մ'անոր տունը կը թողուի իմ Ղուիղս . . . : Բայց պէտք է . . . պէտք է դուրս ծռել . . . իր ճիրանին տակն եմ . . . : Ո՛հ, թշուառութիւնը . . . թշուառութիւնը . . . ի՞նչ նախատինքներ կու տալու կ'ստիպէ մարդս :

— Բայց ի՞նչ ճար կայ . Ղուիղին ըսաւ . « Թէ որ տունէս երթիս, հայրդ բանտ կը դնեմ . . . »

— Հա՛, իբր յետին արարած մը կը նկատէ նա աղջիկս և հետը դուզելով կը խօսի :

— Թէ որ բանը միտակ այդ ըլլար, ճարը կը գտնուէր, բայց եթէ նստարին քովէն հեռանայ, օճիքէդ պիտի բռնել տայ, և

այն ատեն երբ բանտ երթաս, ես մինակս, մեր գաւակներուն և մօրս
հետ ի՞նչ կուզես որ ընեմ, թէ որ Լուիլ ուրիշ տուն մը ամիսը
քսան Ֆրանք ալ վաստիկի, միթէ անով վեց հոգի կրնանք ապրիլ:

— Այո՛, կարելի է ապրելու համար կը թողունք որ Լուիլը
անպատուի:

— Միշտ չափէն անդին կ'անցնիս, նօտարն անոր ետեւէն ընկեր է
իրնաւ... Լուիլն ասանկ ըսաւ մեզի, բայց զիտես թէ որչափ
համեստ է:

— Ո՛հ ճիշտ է, անարխի և ժիր, և բարի է նա...: Երբոր
հիւանդութեանդ սրամառաւ մեր քաջած նեղութիւնը տեսաւ և
մեր վրայ բեռ չթալալու համար ուղեց գործի մանել; ա՛հ չքափ
քեզ այն ատեն թէ սիրտս ինչպէս կտոր կտոր եղաւ...: Լուիլն
սպասուհի... անարդեալ և նուաստացած տեսնեմ... ան որ ՚ի
բնէ այնքան հպարտ էր՝ որ խնտալով... կը յիշե՞ս, այն ատեն
կը խնտայինք, իշխանակի կը կոչէինք զանի, վասն զի կրտէր միշտ
որ մեր անշուք անխիղ մաքուր մաքուր պահելով փոքրիկ պալատ մը
պիտի դարձնէ...: Իմ սիրական աղօթիկս, իմ ճոխութիւնս պիտի
ըլար զանի քովս պահելը, երբոր զիշերները գործիս կը սարա-
պէի...: Ուստի երբ իր բարեմայն ու վարդ երեսն և իր շագանակ
կի դոյն սիրուն աչերն, իմ առջևս ստեղ, տրապիս մօտ կը տեսնէի
և անոր երգելը կը լսէի; աշխատութիւնս այնքան ծանր չէր երևեր
ինձ: Խեղճ Լուիլ, քանի ժրասէր ու միանգամայն դուարթ էր...:
Մինչև անգամ մօրդ աչքին լոյսն էր և անոր ուզածը կը կատարէր...:
Բայց իրաւ որ, երբ խօսէր, երբ երեսդ նայէր; անհնար էր
իր սիրտդ չբացուէր և չհաւանէր չըսէր...: Ի՛սկ քեզ; Մատ-
լէն, ինչպէս կը հողար; կը խնամէր; ինչպէս կը զուարճացնէր
քեզ...: Հասկա իր եղբայրներուն; իր քոյրերուն վրայ հոգի
կտար...: Ամէն բան ընելու կ'ապիկէր...: Ուստի մեր երջանկու-
թիւնն... ամէն բան...: Լուիլին հետ թո՛ւնս գացին:

— Աղաչեմ, Վօրէլ, այդ բաները միտքս մի՛ բերեր... սիրտս
կը ճմլես — ըսաւ Մատլէն յարտասուս փղձկելով:

— Եւ երբ կը խորհիմ որ թերևս այն ձեր հլէջը...: Եր
հաւատմս... այս դաղափարը զլուխս կը դարձնէ... ներսէս կը
դրդեն իս որ երթամ սպաննեմ զանի և ես ալ ետքէն մեռնիմ...:

— Հասկա մեր ի՞նչ պիտի ըլլանք; Նորէն կըսեմ, չափազանցը
կը մտածես միշտ: Արեւի է որ նօտարը Լուիլին հետ կատակել
ուզած է: Գիտես որ ամէն կիրակի օրեր պատարագի կ'երթայ; քա-
հանաներու հետ կը տեսնուի...: Ասն մարդիկ որ կըսեն թէ աւելի
ապահով է անօր շահու տալ ստակ՝ քան ինայութեան արկղիւն
վստահել:

— Ատիկց ի՞նչ կ'ելնէ, հարուստ և կեղծուոր մարդ մ'է...:
Քաջ կը ճանչեմ Լուիլը... պարկեշտ է... այո՛, բայց կաթոյին
կը սիրէ մեզ; իր սրտէն արին կը քալէ մեր աղէտից համար:
Գիտէ նա որ եթէ ես չըլլամ ամէնքնիդ անօթութեան պիտի մեռ-
նիք, և եթէ նօտարը սպառնաց անոր որ իս բանտ պիտի նետէ...:
կարելի է որ թշուաւ աղջիկս յանձն առաւ...: Ո՛հ, գլուխս...:
քանի մտածեմ այս բանիս՝ կարծեմ թէ պիտի խեղդանամ:

— Տէր ողորմեա՛, թէ որ ատանկ բան մ'ըլլար, նօտարն անոր
ստակ, ընծաներ տուած պիտի ըլլար, և ստոյգ եմ որ ատնք իրեն
համար չեր պահեր, մեզի ալ կը նպաստէր, և...:

— Լուի՛... խելքէս մտքէս անգամ չանցնի որ ատանկ կարծիք
ներ ունիս դու... միթէ Լուիլ կը չիջանի... Լուի՛ղ...:

— Ձէ թէ իրեն համար... այլ մեզի համար...:

— Լուի՛... նորէն կըսեմ, մի՛ խօսիր... դողս կը հանես...:
Ձգիտեմ թէ առանց ինձի ի՞նչ ջրի մէջ պիտի ընկնէիր... իմ
գաւակներս ալ մեկտեղ, քանի որ այնպիսի անշահ գաղափար-
ներ ունիս:

— Ի՞նչ անշահ բան ըսի:

— Ո՛չ ինչ...:

— Լաւ ուրեմն, ինչու համար կը վախնաս որ...:
Ախահատը իր կնկան խօսքն ընդմիջեց անհամբերութեամբ մը
ըսելով:

— Այլ վախճամ . . . վասն զի երեք ամէ վեր կը գիտեմ թէ ամէն անդամուն որ Լուիզ Տոս կգայ և իս կը համբուրէ . . . կը կարմրի :

— Անշուշտ քեզ տեսնելու ուրախութենէն :

— Այս ամ ամօթէ . . . օրէ օր իր տրամուծիւնը կ'աւելնայ . . . :

— Ինչու որ մեզ օրէ օր դժբաղդ կը գտնէ : Ասկից զամ երբ նօտարին վրայ կը խօսեմ, կրսէ թէ ալ չսպառնար քեզ բանտ գնելու :

— Այո՛, բայց ի՞նչ սրայմանաւ չսպառնար անոր, ահա այդ բանը չըսեր, և գիտեցի որ իս գրկեցու ատեն կը կարմրի . . . : Ատուած իմ, արդէն քանի մեծ դէշուծիւն մը կը գործէ տան տէր մը երբ պարկեշտ աղջկի մ'որուն ասրուստն իրմէ կախում ունի, կրսէ : «Անձնատուր եղիւ ինձ, թէ՛ ոչ քեզ կը վունտեմ». և թէ որ դան վրայ յօշոտեցի թիւն ուզելու, պիտի ըսեմ որ անպիտան արտաբաժ մ'ես որով ուրիշ տեղ գործ չես կրնար գտնել . . . » Բայց երբ կրսէ : «Անձնատուր եղիւ ինձ, թէ ոչ հայրդ բանտ կը գնեմ :» Երբ այս պիտի խօսք մը կրսէ գիտնալով որ բոլոր ընտանիքը սոյն հօրն աշխատանքովը կ'ապրի, ո՛հ, հազար անգամ աւելի ծանր յանցանք մ'է :

— Եւ երբ կը մտածեմ որ սա տրամադիւ վրայի անդամանդներէն մէկը միայն աւելում նօտարին սլարտըք սալ, անոր տունէն մեր աղջկը հանել և մեր քովը պահելու կարող կըլլաս . . . — Ըսաւ Մատէն կամայուկ մը :

— Ձեռքդ ի՞նչ կ'անցնի եթէ հազար անգամ մի և նոյն բանը կըրկենես . . . : Հարկաւ եթէ հարուստ ըլլայի, աղքատ չէի ըլլար-վրայ բերաւ Մօրէլ վշտալի անհամբերութեամբ մը :

Այս մարդուն սրտին մէջ իրաւասիրութիւնն այնքան բնատուր, կամ լաւ ևս ըսել, այնքան բնակից (organique) էր, որ մտքէն անգամ չէր անցնէր թէ իր կինն վշտաբեկ ու չքաւորութենէն դառնալէր կրնար գաղտնի գէշ խորհուրդ տածել և անոր ուղղասիրութիւնը փորձել :

Ուստի ակնահասար շարսյարեց դառնալի :

— Աս հա՛րկի համբերել պէտք է : Երանի՛ անոնց որ կարող

են զաւակին իրենց մօտ պահել և դարաններէ պահպանել, բայց ժողովրդեան մ'աղջկիը ս'վ կը պահպանէ . և ոչ մէկը . . . : Եթէ բան մը շահելու տարիքը մտնէ՝ առտու իր գործարանը կ'երթայ և իրկուծը կը դառնայ . նոյն պահուն մայրն իր ու հայրն ալ իր կողմէն կ'աշխատի : Ժամանակն է մեր դրամագլուխը, և հայն այնքան սուղ է որ մեր զաւակներուն վրայ հսկելու արարայոյ միջոց մը չունինք, և անկէ ետքը անանկ օրիորդներուն խառնակ վարքին գէմ գանդատներ կը լուռին . . . իբր թէ ծնողքնին իրենց մօտ պահելու ճար, կամ դուրս գտնուած ատեննին անոնց վրայ հսկելու ժամանակ ունին : Այն, զուակ, հայր թողու ցաւին մօտ տառապանքն ոչ ինչ էն . . . : Մանաւանդ մեղի պէս խեղձերուն համար ընտանեկան կեանքը օգտաշատ և օփովելի կրնար դառնալ . . . : Եւ այն ինչ մեր զաւակներն խելահաս կըլլան, և կստիպուինք անոնցմէ բաժնուիլ :

Նոյն պահուն ձեզնայարկին դրան զարկին դրողունով մը :

ԳՆՈՒՍ Ե.

ԳՆՏԱՎՃԻՒ

ԱԿՆԱՀԱՏԸ դարմացած . . . տեղէն երաւ և դուռը բացաւ : Երկու հողի ձեզնայարկը մտան :

Մին որ նիհար ու երկայնահասակ էր, խոցոտ անպիտան և խիտ ու սև ալէխառն կիսմօրուսով սրատած դէմք մ'ունէր, ձեռքը կապարասպատ վերջ մը բունէր, ճմրած փեղոյր մը և կանաչ ցեխոտ երկար տառատոկ մը՝ ամրասլէս կոճկած՝ հագեր էր : Իր անթաւ (râpé) թաւէ օձիքը բաց կը թողուր երկայն, կարմիր և անգղի վրէն նման բերձած վիզ մը . . . : Այս մարդուն անունն էր Մալիքօրն :

Միւսն որ աւելի փոքր էր հասակաւ՝ թէև նոյնպիսի ցած, կարմիր, խօշոր ու յոյր կերպարան մ'ունէր՝ տեսակ մը ծաղրելի ճոխութեամբ հազուեր կապուեր էր : Անդամանդէ փնջեր իր կասկածելի մաքրութեամբ շարկին ծալքը միացուցեր էին, և ոսկեղէն շիթայ մը

նկովտիակերտ չին կերպասէ ներքնակին վրայ օձտելով՝ աչքին կը
զարնէր դեղնուկ մոխրի գոյն ասուէ զգեստը . . .

Այս մարդուն անունն էր Պուրտէն :

— Ա՛՛՛՛, ինչպէս տնանկ աղքատ կը հոսի այս տեղ — ըսաւ Մա-
լիքորն սեմին վրայ կենայով :

— Իբաւ է որ մուշկ չհոտիր : Ըուն շան որդի, ի՛նչ տեսակ
ծուխեր են ասոնք — վրայ բերաւ Պուրտէն արհամարհոտ և զզ-
ուանք յայտնող շարժում մ՛ընելով . ասլա դէտլ ՚ի բանորին մօտե-
ցաւ, որ զարմանօք նոյնպէս սրամտութեամբ անոր երեսը կը նայէր :

Նոյն միջոցին կիւ բաց դրան մէջէն Գօրդիլյարի չարաբոյր, մտա-
դիր և խորամանկ դէմքը տեսնուեցաւ : որ ծածուկ այս անձանօթ
անձերուն ետեւէն դալով կը գիտէր, կը լրտեսէր : մտիկ կընէր :

— Ի՛նչ կուզէք — ըսաւ խորխտաբար ակնահատը՝ այս երկու
մարդերուն կողմ ընթացքէն աստիկ վերադարձաւ :

— Ժէրօմ՝ Մօրէլը — պատասխանեց անոր Պուրտէն :

— Ե՛ս եմ . . . :

— Ախահատ բանւօրը :

— Ես ինքն եմ :

— Ապահով ես :

— Գորէն կըսեմ՝ որ ե՛ս եմ . . . : Համբերութիւնս կը հասցնէք
. . . ի՛նչ կուզէք . . . ըսէ՛ք կամ դուրս ելէք . . . :

— Ի՛նչ մարդաւար է մէկ հոգին էյ . . . չնորհակալութիւն . . . :
Ինձ նայէ : Մալիքորն — յարեց Պուրտէն իր ընկերին դառնալով —
Այս տեղ հոգիս չկայ . . . Սէն — ըմբի դերկումնին տան ջնմանիր :

— Ճիշտ ըսիր . . . բայց երբ հոգիս կայ : առջևդ պատ կ'են ընէ
. . . ինչպէս Շայօ փողոցը տեսանք : Ճնձղուկն առաջի օրէն թև առեր
գացեր էր . . . և դեռ ողջ է, մինչդեռ ասանկ միջատներ իրենց շնայա-
կին կը փակին կը մնան :

— Անտարակոյս, ասանկները քաջ մանել կուզին որ լաի ըս-
տանան :

— Կե՛րէի թէ քոյլը (պարտապէր) միամիտ մարդ մ'էր . . . աս-

տառը երեսէն աւելի սղի պիտի նստի իրեն . . . բայց իր դիտնա-
չիք բանն է :

— Իբաւոր — ըսաւ Մօրէլ սրամտութեամբ — թէ որ արբած չըլ-
լայիք, ինչպէս որ ձեր երեսէն կ'երևի, մարդ բարկանալու տեղ
ունի . . . : Ըուտով տունէս դուրս ելէք :

— Հէ՛, հէ՛, կը լսես ի՛նչ կըսէ սա հորածը (désolé) — պոռայ
Պուրտէն՝ նախատական ակնարկութիւն մ'ընելով ակնահատին խո-
տորնակ հասակին : — Մտիկ ըրիր, Մալիքորն իր հորածը կոչելու
պարծենկոտութիւնն ունի . . . այս աղբնոցը՝ ուր շուն կապես չը-
կենար . . . :

— Ողորմած Աստուած, ողորմած Աստուած — գոչեց Մտալէն՝
որ մինչև այն ատեն ան ու գողէն բառ մ'անդամ չկըցեր էր ար-
տասանել — կանչէ՛, օղնութեան կանչէ . . . կարելի է որ դող են . . . :

Աչքը չորս բաց անդամանդներու վրայ . . .

Եւ յիբաւի Մօրէլ դիտելով որ այս երկու անձանօթ չարագէմ
անձերը փոքր աւ փոքր գոհարները դրուած տրապղին կը մօտենան՝
կարծեց թէ անոնց միտքը դէշ է, իր սեղանին քովը վազեց և եր-
կու ձեռօքը թանկազին քարերը ծածկեց :

Գօրդիլյար՝ որ շարունակ ականջը անկեր կը լրտեսէր՝ Մատէնին
խօսքերը աղէկ լսեց : արհեստաւորին շարժումը դիտեց և ինքնովին
ըսաւ :

— Նայէ՛ . . . նայէ՛ . . . նայէ՛ . . . կարծէին թէ տուտ անդա-
մանդ տաշող է : թէ որ քարերը շինձու ըլլային բնաւ կողոպուելէ
չէր վախնար . . . : Ասի դիտնալու բան մ'էր, ուրեմն Մաթիէօ
խալթունն ալ որ ստէսլ հոս կգայ քոն անդամանդի միջնորդուհի
է . . . : ըսել է թէ իր դամբղին մէջ ճշմարիտ անդամանդներ ունի
. . . : Գիտնալու բան : այս բանս ըս Շուէդին պիտի ըսեմ — յարեց
Պրա — Ռուժին տղան :

— Եթէ տունէս դուրս չե՛նէք, փառադրին ձայն պիտի տամ —
ըսաւ Մօրէլ :

Մանկային այս տեսարանէն զարհուրելով՝ սկսան լալ և պառաւ
խելադարն ելաւ նստաւ . . . :

— Թէ որ փաստորը կանչելու իրաւունք ունեցող մը կայ . . . այդ իրաւունքը մենք ունինք . . . կը լսե՞ս կորած մարդ — ըսաւ Պուրտէն :

— Վասն զի թէ որ դէմ դնես պահակը պիտի օդնէ որ քեզ բանտ տանենք — յարեց Մալիքօրն : — Իբրաւ է որ մեզի հետ խաղարարը մը չունինք , բայց թէ որ անոր ընկերու թենէ կ'ախորժիս՝ հիմակ պիտի երթանք իր անկողնէն տաք տաք ելած մէկը գտնենք . . . : Պուրտէն գնա նայիմ գտիր և բեր . . . :

— Ե՛ս բանտ պիտի երթամ . . . Ե՛ս — պոռայց՝ Մօրէլ բողոքողին ապշած :

- Այո՛, դուն , Գլիշին . . .
- Գլիշի՛ — կրկնեց արհեստաւորն վայրայ դէմքով մը :
- Բաւական հաստ դուրս մարդ մը չէ՞ — ըսաւ Մալիքօրն :
- Աւելի սարը ըսեմ . . . բանտ պիտի մտնես պարտքի համար — վրայ բերաւ Պուրտէն :
- Դո՛ւք . . . զո՛ւք . . . էք արդեօք . . . նօտարին . . . ա՛հ , Աստուած իմ . . . :

Եւ բանտորն իր աթոռակին վրայ ընկաւ մեռելի պէս դեղնած՝ առանց բառ մ'ըստ աւերջնելու :

— Առևտրական ատենանին պահակներն ենք , քեզ բռնելու եկեր ենք , թէ որ կարենանք . . . : Հիմա խելքդ տեղ ըրա՛ւ , տեսար ս'ա :

— Մօրէլ . . . Լուիզին տիրոջը մտրհակն է . . . մեր բանը բուսաւ — պոռաց Մատէն ազիոզորմ ձայնով մը :

— Ահա դատավճիռը — ըսաւ Մալիքօրն իր ազոտոտ ու եղոտ թըղձ թակալէն կնքեալ արձանագիր մը հանելով :

Ըստ սովորաբանին սոյն դատավճիռն մէկ մասը գրեթէ անիմանալի ձայնով մը մրմուռէն ետե՛ վերջին խօսքերը յստակ արտասանեց , որոնք արհեստավարին համար դժբաղդօրէն խիստ նշանակական էին :

« Աւերջանան կերպով դատելով արեանը էք դատարարք Պ. Թերօ՛ Մօրէլը Պ. Բիէր Բոյի — Թան վճարուածի՛ վճարելու , որ և է օրինական

* Հնարագէտ նօտարն իր յատուկ անուամբը դատ վարել չկրնալով՝ Մօրէլէն ատորագրեալ Բոյ թուղթ մ'աւեր և երբորդի մը ձեռքը փոխանակագրերը քահ շեւ տուեր էր :

ժըղոցաւ նոյն իսկ յերբակալութեամբ հաղար երէ՛ հարեալ ֆրանս րոսիոս հանրերէյ , Բողո՛ւ եղա՛ծ օրէն , և ապէ՛ զայս դատարարանական ծախոաց ալ էլ դատարարքէ :

Տուեալ և դատարար ՚ի Բարիլ , Սեպտեմբեր 13էն ևն . ևն .

— Հասցա Լուիզ , Լուիզ ո՛ւր է — գոչեց Մօրէլ գրեթէ մղրբած , որ կ'երևէր թէ այս ոճէն ոչ ինչ չէր իմանար — ո՛ւր է : Ըսել է թէ նօտարին տունէն ելեր է , քանի որ զիս բանտարկել կտայ . . . Լուիզ . . . Աստուած իմ , ի՞նչ եղաւ Լուիզը :

— Ո՞վ է այդ Լուիզը — ըսաւ Պուրտէն :

— Կարճ կապէ — վրայ բերաւ Մալիքօրն կոշտաբար — միթէ չե՛ս տեսներ որ կը զառանցէ : Ճամբայ ելնենք — և Մօրէլին մօտեցաւ — օ՛ն , քալենք , դէպ ՚ի ձախ . . . օ՛ն յատաջ (décanniller) օդ առնելու պէտք ունիմ , այս տեղ թոյն կը ծծեմ :

— Մօրէլ , մ'երթար : Դէմ կեցիր — գոչեց Մատէն մնորագին — դարկ , սպաննէ այս անպիտանները : Ո՛հ , ի՞նչ վախկոտ ես . . . : Պիտի ձրեւս երթաս , մեզ երեօի վրայ պիտի թողուս :

— Մեծ մեծ ջարդէ , տիկին — ըսաւ Պուրտէն հեղնական դէմքով մը : — բայց դիտցիր որ ե՛թէ մարդդ վրաս ձեռք վերցնէ , գրուելը կը ձգվեմ ասով — յարեց նա իր կապարէն վերջը ոլորաձև դարձնելով :

Իսկ Մօրէլ բողոքողին Լուիզին վրայ խորհելով իր բողոքտիքն ըսուած խօսքերը չէր ըսեր : Յանկարծ իր դէմքը խնդութեամբ պարզեցաւ և սրոպ :

— Լուիզ նօտարին տունէն ելեր է . . . ամենայն սիրով բանտ կ'երթամ . . . : — Բայց իր չորս դին աչք մը նետելով գոչեց : — Հասցա կին . . . հասցա իր մայրը . . . հասցա իմ միւս զաւակներս . . . ո՞վ պիտի կերակրէ : Ո՞վ ինձ բանտին մէջ գոհար կը յանձնէ դործելու համար . . . պիտի կարծեն թէ իմ անկանոն վարքս է պատճառ սոյն բանտարկութեան . . . : Բայց կ'երևի թէ իմեններուս մահը կուղէ , մեզ ամէնպիսի ալ սպաննել կուղէ նօտարը :

— Նորէն , նորէն կըսեմ , վերջը պիտի բերե՛ս — ըսաւ Պուրտէն — վերջապէս իլիկս անցաւ . . . : Ըուտ մը հաղուէ և ճամբայ ելնենք :

— Իմ բարի պարոններս, քիչ մ'առաջ ըսածներուս համար ներում կը խնդրեմ, — գոչեց Մատեն իր պսակած տեղէն: — Չէ, այնչափ քարտիրոս չէք որ Մօրէլը բանտ գնէք: . . . Ո՛ւր առնեմ գլուխս երթամ իմ հինգ զաւակներովս և մօրս հետ՝ որ խնդ է, ահա, չէք զխտեր: . . . սա տեղ իր պատտովն մէջ կղկեր կեցեր է: . . . խնդ է այն, իմ բարեօրոտ պարոններս: . . . խնդ է: . . . :

— Յա քերծուած պառս'ւր:

— Ճիշտ է, այո՛, քերծուած է, ո՛հ, կնտակը: . . . — բտա Մալիքօրն ինտպէն ճաթելով — կարծէի թէ զլուխը ճնամակ փաթեթ մը կսպեր է: . . . :

— Տղաքս, այս բարեւեր պարոններուն ոտքն ընկէք — պոռաց Մատեն, որ վերջին ճիգ մ'ընել կուզէր գործակալները շարժելու համար: — աղաչեցէք որ ձեր խեղճ հայրը չսպաննի: . . . մեր միակ օգապահիլը ճարողը: . . . :

Իրենց մօրը հրամանին չնայելով տղաք կլային և զարհուրելով չէին համարձակեր իրենց խշտեկէն ելնելու:

Խեղցնոր կինն՝ այս անսովոր աղմկէն՝ երկու գործակալներուն անտէն, զոր չէր ճանչեր, սկսաւ խորաձայն ոտնալ պատին մէկ անկունը աւելի ևս կղկելով: Մօրէլ կարծես թէ իր բոլորտիքն անցած բաներուն անտարբեր էր: այս պատահարն այնքան ստակալի էր և անակալալ, այս ձերբակալութեան հետեւութիւններն այնքան զարհուրելի կ'երևէին իրեն որ կարծէր թէ տեսածը երազ է: . . . : Արդէն ամէն տեսակ զրկանքէն ակորացած ըլլալով ուժաթափ, գունատ, դժներես, աթոռակին վրայ նստած նկուն, թևերն առ 'ի կախ և գլուխը լանջին վրայ ընկած կը մնար: . . . :

— Է՛հ, յանկարծակիներ թափին: . . . վերջը պիտի բերե՞ս: . . . — գոչեց Մալիքօրն: — Միթէ կարծես թէ հարսնիքի տուն է այս: Բայէ, յառաջ անցիր թէ ոչ հիմակ կը քաշեմ կը տանիմ քեզ:

Գործակալը ձեռքը Մօրէլին ուսին վրայ դրաւ և սաստիկ ցնցեց գանի: . . . Այս սարսուռիքն, այս շարժումը աղոց սիրտը թունաւ հանեցին: Երեք մանկիկներն իրենց պատտառէն ելան կիսամերկ և

բարդդին եկան տուտարական պահակներուն ոտքն ընկնելու, ձեռքերն ին միացած և ակողորսմ ձայնով մը գոչելով:

— Վաղաչե՛ք: . . . մի՛ սպաննէք մեր հայրը: . . . :

Յրտէ և սարսափէ սարսոռղ այս թշուառ մանկիկները տեսնելով Պուրտէն՝ թէ և 'ի բնէ քար սիրտ էր և այս տեսակ տեսարաններու վարժ գրեթէ ներքին յուզմունք մը զգաց: Իսկ իր անգութ ընկերը՝ իր սրունքն աղատեց կոշտաբար տողոց ձեռքէն անոր որոնքն որ փաթթուեր էին սղերսագին ձայներ ձգելով:

— Է՛հ, է՛հ, չարաճճինե՛ր: . . . : Այս ի՞նչ շան տանջանք էլ ո՛ւր կերթար մեր բանը թէ որ գործերնիս միշտ ասանկ մուլքորներու հետ ըլլար: . . . :

Սգալի դէպք մ'այս տեսարանս աւելի ահուելի գործեց: . . . : Պորթիկ աղճիկներուն մէջ առջինեկն՝ իր հիւանդ քրոջ հետ խշտեկին մէջ պսակած ըլլալով յանկարծ պոռաց:

— Մամա՛, մամա՛, չգիտեմ թէ Ատէն ի՞նչ ունի: . . . : Բոլորովին սղաղ է: Շարունակ ինձի կը նայի: . . . և ա՛լ շունչ չունի: . . . :

Հալումաշ խեղճ աղջիկն այն ինչ հոգին մեղմիկ մը փչեր էր անմոռնչ, իր ակնարկը կաթողին սիրած քրոջը վրայ սևերելով: . . . :

Անհնար է նկարագրել ակնահատին կնոջ ձգած աղաղակն երբ այս բօթալի լուրն իմացաւ, վասն զի ամէն բան գուշակեց: . . . ոգէսպառ, ջլաձիգ աղաղակ մ'էր այն որ մօր մը սրտին խորերէն կ'երևէր:

— Քոյրս մեռելի դէմք ունի, Աստուած իմ, Աստուած իմ, կը դողամ — գոչեց աղջիկն իր անկողնէն դուրս նետուելով և զ'նաց ահարեկ մօրը զիբղն ընկաւ:

Իսկ ակնահատին կինը մոռնալով որ իր գրեթէ անդամալոյծ ոտները զինքը կրելու անկարող են բուռն ճիգ մ'ըրաւ կանգնելու և մեռած աղջկան մօտ վաղելու: բայց ոյժ չունէր և յետին յուսահատական աղաղակ մ'արձակելով դետինն ընկաւ նկուն:

Այս աղաղակը Մօրէլի սրտին մէջ արձագանք գտաւ: իր թրմ

բուժենէ սթափեցաւ, դէպ ՚ի պաստառը ցատկեց, իր չորս սարե-
կան աղջիկը գրկեց :

Մեռած դտաւ զանի . . . :

Յրտէն և չքաւորութենէն մահը շուտ մը հասեր էր . . . թէև
իր հիւանդութիւնը, որ թշուառութեան արդիւնքն էր, մահատու-
էր . . . : Արդէն իր սլլտի հէք անդամները կարկամեր ստտեր է-
ին . . . :

Մօրէլ՝ որուն մաղերը յուսահատութենէ և սարսափէն գլխին վը-
րայ տնկուէր էին՝ անշարժ կը կենար՝ իր աղջկին գիակը թևերուն
մէջ բռնած՝ և անարտօսը, պիշ (fixe) և կարմրուն աչքով մը զանի կը
նկատէր :

— Մօրէլ . . . Մօրէլ . . . տուր ինձ Ատէլը — կը գոչէր հէք մայրն
իր թևերը դէպ իր էրկան ստարածելով : — Ձէ՛, ստոյգ չէ, չէ, մե-
ռած չէ՛ նա . . . պիտի տեսնես հիմա, շնչովս պիտի տարցնեմ
զինքը . . . :

Խելագարին հետաքրքրութիւնը շարժեցաւ՝ երբ տեսաւ որ եր-
կու գործակալներ կը մտնեային ակնահաստին՝ որ իր զուկին մար-
մինէն չէր ուզէր դատուիլ : Պատաւը դադրեցաւ ունայէն, իր խըշ-
տեկէն ելաւ, կամացուկ մը մտա եկաւ, իր ժահաղէմ ու ապուշ
զլուխն Մօրէլի ուսին վրայէն երկնցուց . . . և քանի մը վայրկեան
հասնին իր թուին գիակը նկատեց . . . : Խելագարն իր վայրագ ապ-
շուժեան սովորական երևոյթն միշտ սուներ. բայէ մ՛ետքը սովալ-
լուկ գազանի մը պէս տեսակ մը խուռչային, վայրենի յօբանջ մը
արձակեց, յետոյ, իր խշտեակը գառնալով անոր վրայ ընկաւ և
պոռաց :

— Անօթի՛ է, անօթի՛ :

— Ար տեսնէ՞ք, պարոններ, կը տեսնէք, սա իմ չորս տարու-
Ատէլ ար՛իկս . . . : Ատէլ է անունը, Գեռ երէկ իրկուն զինքը գըր-
կեցի, և այս առտու . . . ահա ապիկ : Պիտի ըսէք անշուշտ որ պէտք
է Գո՛ճ ըլլամ, այնպէս չէ՞, որովհետև հացի կարօտ հողի մը թօ՛ղ
պակաս ըլլայ — յարեց բանւորը վայրագ երեսով մը :

Իր զլուխը սասանել սկսեր էր այս կրկնակի փորձանքներուն
ներքև :

— Մօրէլ, կուզեմ՝ աղջիկս կուզեմ — գոչեց Մատէն :

— Իրաւունք ունիս, դուն ալ պէտք է որ վայելես, ըստ կարգի
. . . — պատասխանեց ակնահաստը, և ստաբաւ դաւանի իր մօրը
գիւրը գրաւ :

Ապա իր դէմքը ձեռներուն մէջ պահեց երկար հառաչ մ՛ար-
ձակելով :

Մատէն՝ որ իր էրկան պէս մտրտեր էր, աղջկին մարմինը խըշ-
տեկին յարդին մէջ գրաւ ծածկեց, տեսակ մը վայրենի նախանձով
ու խանդով անոր կը նայէր, մինչդեռ միւս գաւակնիւրը ծունր գրած
կը հատկապէս ողբալին :

Գործակալներն՝ որ պահ մ՛ի գուլթ շարժեր էին աղջկին մահուան
վրայ, նորէն իրենց սովորական կոշա ու դաժան ընթացքը շարու-
նակեցին :

— Հո՛ս նայէ, պարոն — ըսաւ Մալեքօրն ակնահաստին — աղջիկդ
մեռաւ, գժբաղդութիւն մ՛է, ամէնքնիս ալ մահկանացու ենք, մեր
ձեռքէն բան մը չկար, և ոչ քու . . . : Պէտք է որ մեզի հետ դաս
դեռ ուրիշ մարդ մ՛ալ ունինք բռնելու, այսօր որսն առաւ է . . . :

Մօրէլ ականջ չէր կատեր այս մարդուն :

Բոլորովին սգալի խորհուրդներուն մէջ ընկրմած՝ ակնահաստը սուղ
և խեղտուկ ձայնով մը կըսէր :

— Սակայն անհրաժեշտ է որ աղջիկս թաղեմ . . . անոր վրայ
հսկեմ . . . այս տեղ . . . մինչև որ դան վերցնեն մեռելը . . . : Թա-
ղել . . . բայց ի՞նչպէս. բան մը չունինք . . . : Իսկ գազազն . . . թ՛վ
պիտի սայ մեզ գազազը վարկով : Ա՛հ, փոքրիկ գաղաղ մը . . . չորս
տարեկան աղջկան մը համար . . . սուղ չէ ասանկ գաղաղ մը . . .
մեռելակառք ալ չուզէր . . . թևի տակ ալ կառնուի այս մեռելը
, . . . : Հա՛, հա՛, հա՛, — յարեց նա սոսկալի քահ քահ թը ձգելով —
ի՛նչ մեծ երջանկութիւն է իմն . . . թէ որ տաանութ տարեկան
մեռնէր, Լուիզին տարիքն հասնէր, մեծ գաղաղ մը վարկով չպե-
տի տային ինձ . . . :

— Բայց կը նային , բարեկամ , այս թշուառականը հիմակ խելքը պիտի թողնէ — ըսաւ Պարսկէն Մալիքօրին . — անգամ մը դիտէ աչքերը . . . սարսափ կ'աղբեն . . . : Ինչքէ գլուխդ ժողկէ , մարդ . . . և ահա անդիկէն ալ խելագարն անօթութենէն կ'ոռնայ . . . : Ի՞նչ տեսակ ծուխեր կ'ն ասոնք . . . :

— Բայց պէտք է վերջ տալ . . . : Թէև այս մուրոյցիանին ձեր բակալութեան գինը 76 ֆրանք 73 սանդիս ուրոշուած է , սակայն կրնանք իրաւամբ ծախսը 230 ֆրանքի հասցնել : Պարտատէր գայլը պիտի վճարէ . . . :

— Աւելի աղէկ է ըսես պիտի ստակը կոխէ , ինչու որ այս ապիկարը պիտի ծակը մանէ . . . ինչու որ այս պիտի կրէ բոլոր առգանքը . . . :

— Երբոր ափ իր պարպատէրին 2300 ֆրանք գլխադրամը , շահերը , ծախսն ու ամէն բան հատուցանէ . . . բաւական պիտի տաքնայ . . . :

— Անշուշտ այս տեղին պէս փայտ չպիտի կտրի , որովհետև մարդ հոս կը սառի . . . — ըսաւ դործակալն իր մատերուն մէջ փրչելով : — Գործը լմնցնենք , առնենք տանինք մարդը , թող ճամբան եթէ դործ չունի կոծի . . . : Մեր յանցանքն ի՞նչ է թէ որ իր փոքրիկ աղջիկն ոտքերը աճկեց . . . :

— Երբ մարդս սյսալէս մուրացկան մ'է պէտք չէ որ զաւակ ունենայ :

— Ճիշտ է — յարեց Մալիքօրն , ապա Մօրէլին ուսին զարնելով — յառաջ անցիր , երթանք , բարեկամ , սարսալու ժամանակ չունինք , քանի որ սրարտը չես կրնար վճարել հրամէ բանալը :

— Բանտը' , Պ . Մօրէլ — գոչեց նորհաս և յստակ ձայն մը : Եւ թխերես , թարմաւէտ , վարդապոյն հերազարդ օրիորդ մը ձեղնայարկը մտաւ :

— Ահ , օրիորդ Ռիկօլէդ . . . — ըսաւ մանկիկներէն մին լալազին — որչափ բարեսիրտ ես : Աղտակ մեր հայրը , բանտ տանել կուզեն , և մեր փոքրիկ քոյրը մտաւ :

— Ատէլ մտաւ — գոչեց նորհաս օրիորդն , որուն սև փայլուն մեծ աչերը արտասքով լցան . — ի՞նչ , հայրդ բանտ կը տանին , անկարելի բան . . . :

Եւ անշարժ կը նայէր շուրջ թէ ակնահաստին , թէ կնիան և թէ դործակալներուն :

Պարսկէն Ռիկօլէդին մօտեցաւ :

— Ինձ նայէ , գեղանի աղջիկս , դու որ խելահաս կ'երեխս , սա միտմիտ մարդուն խօսք հասկըցուր , իր փոքրիկ աղջիկը մտաւ . ի՞նչ ընենք , պարտաւոր է մեղի հետ ֆելչի . . . բանտը գալ պարտքի համար , մենք առեւտրական ատեանին պահակներն ենք . . . :

— Ուրեմն իբրա՛ է , — գոչեց գեռահաս օրիորդը :

— Այո' , իբրա է . մայրն իր սղտի աղջիկն անկողնին մէջ առեր է , անկից չկրնար զատուիլ խելքն անոր տուեր է . . . : Հայրն այս պարագայն առիթ բռնելով պէտք է որ ճամբոյ ելնէ :

— Տէ՛ր իմ' , տէր իմ' , ի՞նչ դժբաղդութիւն — գոչեց Ռիկօլէդ — այս ի՞նչ դժբաղդութիւն է , ի՞նչ ընելու է հիմակ :

— Պէտք է վճարել կամ բանտ երթալ , ուրիշ ճար ճարակ չկայ , միթէ երկու երէք հապա՞նց գրամատումն ունին փոխ տալու . — հարցուց Մալիքօրն խեղկատակ դէմքով մը . — թէ որ իրօք ունիս քակէ ծրարդ ու համրէ , մեր ուզածն ալ այդ է :

— Ահ , ի՞նչ ստակալի մարդիկ — ըսաւ Ռիկօլէդ սրամտութեամբ :

— Ի՞նչպէս կը յանդգնիք այսպիսի թշուառութիւն մը կատակի առնել :

— Լաւ ուրեմն , կատակը մէկդի — վրայ բերաւ միւս պահակը — քանի որ ծառայութիւն մ'ընել է միտքդ , աչխտէ կնիան հետ խօսքի բռնուիլ որպէս զի էրիկը տանելնիս չտեսնէ : Այսպէս պահ մը զանի սրտխաղէ կ'ազատես :

Թէև գաղանական այս խրատը լաւ էր , Ռիկօլէդ անոր հետեւեցաւ և Մատէնի մօտ եկաւ : Իսկ կինը յուսահատութենէ մնորած՝ դեռահաս աղջիկն մօտինալը կարծես թէ չտեսաւ , որ միւս երեսաներուն հետ խշտեկին քովը ծունր դրաւ :

Իսկ Մօրէլ՝ պահ մ'իր վաղանցուկ մոլորութենէ սթափելով ա-

ւելի վշտաբեկ խորհրդածութիւններու մէջ ընկղմեցաւ . աւելի հանդարտ մտքով մ'իր վիճակին գծնէութիւնը սկսաւ քննել : Նստարն այս ծայրալիբ միջոյր զործածելով անշուշտ անհասարկն անդժուութիւնը երեսն կը հանէր , զործակալներըն իրենց պաշտօնը կը կատարէին :

Ախահատը հաճեցերեց :

— Աւերջապէս ճամբայ պիտի ելնե՞ս— ըսաւ Պուրտէն :

— Ձեմ կրնար այս անդամանդները հոս ձգել . կիներս կէս մը յիմար է— ըսաւ Վօրէլ իր տրասպլին վրայի ցիր ու ցան անդամանդները ցոյց տալով : Այս առտու կամ ետքէն պիտի դայ զիս աշխատեցնող միջնորդուհին վանոնք առնելու համար , մեծ դուռնար մը կ'առնեն այս թանկագին քարերը :

— Շատ աղէկ— ըսաւ Գօրբէլյար՝ որ միշտ կիս բաց դրան մօտ կը կենար— Լա՛ւ , լա՛ւ , լա՛ւ , լա՛ Շուէղին պիտի իմաց տամ այս բանս :

— Գոնէ մինչև վաղը թողուցէք զիս— վրայ բերաւ Վօրէլ— որպէս զի անդամանդները միջնորդուհին յանձնեմ :

— Անկարելի բան , շուա ճամբայ ելնե՞ք :

— Բայց չեմ կրնար , այս քարերը հոս ձգել որ կորսուին :

— Մէկտեղ ա՛ռ , մեր կառքը վարը կ'սպասէ , անոր վարձքն ալ պիտի տաս ծախուց հետ : Միջնորդուհիից տունը կերթանք , և լծէ որ չգտնենք զոհարները քլիշիի դիւանը կը թողուս , այն ալ Պանքաին չափ ապահով տեղ մ'է . . . Օ՛ն , շուտ ըրէ , ճամբայ ելնե՞ք , կիսիկ և զաւակներդ հիմակ մեկնիլդ չեն տեսներ :

— Մինչև վաղը հանդարտ թողէք զիս որ դոնէ զաւակս թաղել տամ— ըսաւ Վօրէլ աղերսաղին ձայնով մ'որ իր զսպած արտասուքէն այլայլեր էր :

— Ձէ՛ . . . արդէն ժամ մը կորուսինք այս տեղ . . . :

— Այս թաղումը ցաւերդ պիտի նորոգէ— ըսաւ Մալիքօրն :

— Ա՛հ , ճիշտ է . . . ցաւերս պիտի նորոգուին— ըսաւ Վօրէլ դառնապէս : — Որչափ զզուշ էք մարդկան ցաւ չաղդելու . . . : Ու՛

րեմն վերջին խօսք մ'ըսեմ . . . :

— Ըսէ՛ , ըսէ՛ , թշուառական , շուտ ըրէ . . . — ըսաւ Մալիքօրն կազանային անհամբերութեամբ մի :

— Չիս բանտ տանելու հրամանը ե՞րբ ելաւ :

— Գատալճիոն երէք ամսէ վեր տրուած է , բայց դեռ երէկ պաշտօնատան վարիչն զայն 'ի գործ դնելու հրամանը նստարէն ընդունեց . . . :

— Գեռ երէ՛կ . . . ինչո՞ւ համար այսչափ ուշ :

— Ես ի՞նչ դիտում . . . : Ելի՛ր , շուտ ծրարդ կապէ :

— Երէ՛կ . . . և Լուիզ դեռ մեզի չեկաւ : ո՛ւր է արդեօք , ի՞նչ եղաւ— ըսաւ ակնահատը տրասպլին զզոյցէն բամբակով լի տուփ մը հանելով որուն մէջ անդամանդները շարեց : — Բայց ասոր վրայ չմըտածե՛նք . . . բանտին մէջ խորհելու ժամանակ ունիմ :

— Ելի՛ր , շուտ ծրարդ կապէ և հաղուէ՛ :

— Ծրար չունիմ , մինակ այս անդամանդները պիտի առնեմ՝ դիւանատունը յանձնելու համար :

— Բայց գոնէ հաղուէ . . . :

— Ունեցած հաղուստս վրաս է :

— Ի՞նչ , այդ ցնցոտիներով պիտի դուրս ելնես— ըսաւ Պուրտէն :

— Անշուշտ կ'ամչնաք ինձիպէս մղկորի մը հետ երևելու— ըսաւ ակնահատը դառնաղին :

— Փո՛յթ չէ , քանի որ կառքովդ պիտի երթանք— պատասխանեց Մալիքօրն :

— Պասա՛ , մաման քեզ կը կանչէ— ըսաւ տղեկներէն մին :

— Մտիկ ըրէ— միմուս արագօրէն Վօրէլ զործակալներէն մէկուն դառնալով— անդուժ մ'ըլար . . . վերջին շնորհ մ'ըրէ ինձ : Սիրաս չգիմանար կնիքնս , զաւակներուս մնաս բարև ըսելու . . . պիտի հողիս խորտակի . . . : Բէ որ տեսնեն որ զիս կը տանիք , չորս կողմս պիտի առնեն . . . : Ատոր առաջն առնել կուզեմ , կ'աղերսեմ ձեզ , բարձր ձայնով ըսէք ինձ որ երեք չորս օրէն պիտի դառնաք և երթալու պէս ըրէք . . . վարի դատիկանը սպասեցէք . . . հինգ րո-

պէ՛հն դուրս կ'իջնեմ . . . Տրածարական բարեկներ տալէն կ'աղաղակմ' թէ ոչ ստոյգ եղիք որ , չպիտի դիմանամ . . . խելքս պիտի թուցրնեմ . . . ինչպէս որ քիչ մ'առաջ մաղ մնաց որ խենդութիւն պիտի գար վրաս :

— Հասկցայ . . . Բեշ նեթեւ է միտք . . . — ըսաւ Մալքոբն — և կ'իջիլը դնել . . . Տա՛, ծեր խափուսիկ :

— Ա՛հ , Աստուած իմ , Աստուած իմ — դոչից Վօրէլ վշտալի սրտմտութեամբ մը :

— Ձեմ կարծիք որ խաբել ըլլայ միտքը — ըսաւ ցած ձայնով մը Պուրտէն իր ընկերին — իր ինդիքը կատարե՛նք , թէ ոչ ասկից երեսիլք չունինք , ես դրան ետեւ կերթամ կը կենամ . . . ձեզնա՛յարկն անկից զատ ելք մը չունի , չկրնար մեր ձեռքէն պրծիլ :

— Ըստ աղէկ , բայց կրողը սանփ ղինքն , այս ի՛նչ որդեր են . . . ի՛նչ որդեր . . . — Ապա Վօրէլ ըսաւ կամացուկ մը : — Թո՛ղ խօսքը ըլլայ , չորրորդ գտնիկունը քեզի պիտի սպասենք . . . երեսդ շակէ և ժամ առաջ դուրս ելիր :

— Ընորհակա՛ւ եմ ձեզ — ըսաւ Վօրէլ :

— Լա՛ւ ուրեմն , սյապէս — վրայ բերաւ Պուրտէն բարձրաձայն լանդորին նշանացի ակնարկ մ'արձակելով — որովհետեւ դործն այնպէս է և խօսք կտաս վճարելու , քեզ կը թողունք կ'երթանք , հինգ վեց օրէն պիտի նորէն դանք . . . Բայց նայէ որ պարսպ չհասնես մեզ :

— Այո՛ , պարոններ , յուսամ որ այն ատեն վճարելու կարող պիտի ըլլամ — պատասխանեց Վօրէլ :

Քործակա՛նները քնործ ելան :

— Գորդիյար՝ առ ահի որ կը տեսնուի , ինքընքը սանդղէն վար նետեր անհետ նդրեր էր՝ այն միջոցին որ առևտրական պահակները ձեզնայարկէն դուրս կ'երևին :

— Տիկին Վօրէլ , կը լսե՛ք — ըսաւ Ռիլօէդ ակնահաստին կնկան դառնալով՝ որպէս զի իր սգալի մտմտութէն զինքն ազատէ — էրիկդ թողուցին գացին այն երկու մարդիկը :

— Մամա , կը լսե՛ս , հոյնս բանս չպիտի տանին — ըսաւ առջեւ նեկ աղան :

— Վօրէլ , միտ դիր , միտ . . . Խոշոր անդամանդներէն մէկն էաւ , ոչ որ կրնայ կասկածի երթալ և փորձանքէ կ'աղաղակնք — մըր մնաց Մատէն բողբոլին զառանցելով : — Մեր փոքրիկ Ատէլն այն ատեն ցրտէն չմնիր , և չմոռնիր . . .

Այն սրահուն որ ընտանիքէն ոչ մէկը ղենքը կը դիտէր , ակնահաստ առիթ գտաւ զգուշութեամբ մը դուրս ելնելու :

Ռուտրական սրահակն իրեն կ'սպասէր դուրսը , սանդղին զլուխը որուն սըրաքը նոյնպէս տամպին էր : Սոյն սանդղին զլուխը մտան մը կար որ մասամբ մը Վօրէլնց ձեզնայարկը կ'ընդարձակէր , և որուն մէջ Պ . Բիբլէ իր կաշեայ պաշարը կամփոփէր : Ասկից զատ (արդէն ըսինք) արժանի դարապանը սոյն խցիկը էր եղէքճակ՝ օբէտակ կ'անուանէր , վասն զի միջնորմին երկու տախտակին մէջ տեղ բացուած ծակէ մը Վօրէլնց տունն անցած դարձած տխուր տեսարանները կը դիտէր :

Պահնորդը մառանին գուրը տեսաւ : սրահ մը կարծեց թէ իր քանդորը (prisonnier) թերեւս նոյն ելքին վրայ յոյսը դրած է խոյս տալու կամ սրահուելու համար :

— Օն յառաջ , ճամբայ ելիր յետնորդ ապիրատ — ըսաւ նա սանդղին առաջին բազրտանին (marche) վրայ ոտքը դնելով , և նշան ըրաւ ակնահաստին որ ետեւէն երթայ :

— Վայրկեան մ'ալ ; կաղաչեմ . . . — ըսաւ Վօրէլ :

Քարին վրայ ծունր դրաւ , դրան մէկ ձեղքէն իր ընտանիքին վրայ աչք մը նետեց , ձեռները միացուց և առատ արտասուք թափելով մեզմիկ ու աղիտորմ՝ ձայնով մ'ըսաւ :

— Միտք բարե իմ ողորմելի զառակներս . . . մնաս բարե խեղճ կինս . . . մնաս բարե :

— Ի՛նչ նայէ , պիտի լմնցնե՛ս , այդ վայնասունդ . . . — ըսաւ Պուրտէն բըսօրէն : — Մալքոբն շատ իրաւունք ունի , այս ի՛նչ որդ է ; անիծից արմատ , այս ի՛նչ որդ է :

Մօրէլ ոտք ելաւ որ պահսորդին հետեի երբ սանդղին վրայ սան խօսքերը հնչեցին:

— Հայր իմ, հայր իմ:

— Լուիզ — գոչեց անհաստոր ձեռները դէպ երկին վերցնելով: Ի՞նչ բազդ, մեկնելէն առաջ պիտի կարենամ ղինքը համբուրել:

— Փա՛ռք Աստուծոյ, ժամանակին հասայ... — ըսաւ ձայնը փոքր տա փոքր մօտենալով:

Եւ նորաստի աղջկին սանդղէն վեր շտապաւ ելնելը լսուեցաւ:

— Անհո՛գ եղեր, փոքրիկ աղջիկս — գոչեց վարի կողմէն երրորդ անձ մ'անասորձ, թասուն (poussif) և ողէպառն ձայն ուլ մը — դա՛բան կը մտնեմ, ՚ի հարկին, ուղիին մէջ, մե՛նք երեքնիս, ես, աւերա և իմ սիրելի ձերուկս, և չպիտի թողունք որ դուրս ելնեն այն մուրաղիկները մինչև որ սնունց հետ չլսօսիս:

Անշուշտ ընթերցողը ճանչեց տիկին Բիրլէն, որ Լուիզին չափ թեթևատն չըլլալով՝ անոր կը հետևէր ծանրաբար: Քանի մը վայրկենէ ետքը՝ անհաստին դուստրն իր հօրը դրկիսց մէջն էր:

Գո՛ւ ես, Լուիզ, իմ բարի Լուիզ — կըսէր Մօրէլ լալով: — Բայց ի՞նչու համար գոյնդ այդպէս նետեր է, Աստուած իմ, ի՞նչ նշնիս արդեօք:

Բան մը չունիմ... բան մը չունիմ... — պատասխանեց Լուիզ կմկմալով: — Այնչափ շուտ վաղեցի որ... ահաւասիկ ստակը...:

— Ի՞նչ ստակ...:

— Աղատեցար:

— Ուրեմն գիտէիր գործը:

— Այո՛, այո՛...: Աո, պարոն, ահա ստակը — ըսաւ նորաստի օրիորդը ծրար մը ոսկի Մալքօրնի սալով:

— Բայց այս ստակը, Լուիզ, այս ստակն ուսկի՛ց է:

— Վերջէն ամէն բան կ'իմանաս... անհոգ եղեր...: Եկուք մօրս սիրտը հանդարտեցուր:

— Ոչ, քիչ մը համբերէ — գոչեց Մօրէլ դրան առջևը կենալով, իր աղջկին մահուան կը մտածէր, որմէ դեռ անտեղեակ էր Լուիզ:

Քիչ մը սպասէ, քեզի խօսի լիք ունիմ...: Բայց այս ստակը:

— Աեցիր նայի՛նք — ըսաւ Մալքօրն ոսկիներն համբռնելն և դրական դնելէն ետե: — Վաթսուն ու չորս, վաթսուն ու հինգ, այս հազար երեք հարիւր ֆրանք կընէ: Բոլոր ունեցածդ այս է, փոքրիկ մայրիկ:

— Բայց միթէ հազար երեք հարիւր ֆրանք չէ պարտքդ — ըսաւ Լուիզ ապշած իր հօրը:

— Այո՛ — ըսաւ Մօրէլ:

— Աեցիր նայի՛նք... — վրայ բերաւ թեղակալը (recors) — մուրհակը հազար երեք հարիւր ֆրանք է, իրաւ մուրհակդ աղատեցիր... բայց ծախսն ուր դնենք... առանց ձերբակալու թեան, արդէն հազար հարիւր ֆրանք տակքդ կը մնայ:

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ — գոչեց Լուիզ — կարծէի թէ հազար երեք հարիւր ֆրանք էր վիսյն: Բայց, պարոն... քանի մ'օրէն մնացածն ալ կը վճարենք... արդէն առ հաշիւ բաւական մեծկակ դումար մ'ստիք... այնպէս չէ, հայր իմ:

— Ետքէն... շատ լաւ... ստակը գիւտնը բեր և հայրդ այն ատեն կ'արձակուի: Ճամբայ ելիր, քալէ...:

— Ուրեմն հայրս պիտի տանիք...:

— Շիտակ ծակը...: Թեքհաշիւ է առուածդ... թնդ մնա՞ցորդն ալ հատուցանէ և այն ատեն կ'ազատի...: Պուրտէն անօջիր, շուտ ճամբայ ելնենք:

— Շնորհ... շնորհ ըրէք... — գոչեց Լուիզ:

— Ա՛հ, ի՞նչ ճիչ է... կախանները նորէն սկսան...: ալ ինն քրահնք կը մտնէ մարդ այս տեղ, ձմեռն խի... խաչ վիայ — ըսաւ գործակալը բրտօրէն: Ապա պէտք ՚ի Մօրէլի դիմելով: — Եթէ անմիջապէս ճամբայ չելնես, օձիքէդ պիտի բռնեմ և սանդղէն վար պիտի նետեմ, վերջապէս համբ հոտը փախուցիր:

— Ո՛հ, խեղճ հայրդ իմ... ես ալ կարծէի թէ աղատեցաւ — ըսաւ Լուիզ վշտաբեկ:

— 2է. չէ. . . Աստուած արդար չէ. . . — դոչեց ակնահասակ
յուսահաս ձայնով մ'ու ոտքը կատողութեամբ դեպինը զարկաւ :

— Մի վհատիր , ուղիղ մարդերու համար նախախնամու
թիւն մը կայ — ըսաւ անուշ և երերուն ձայն մը :

Նոյն պահուն փոքրիկ խցիկն դուռը երեցաւ Ռօտուլֆ , ուս-
կից մեր պատմած քանի մը տեսարաններուն գաղտնի ակնաւ
տես եղեր էր : Գունատ էր և յետին ծայր յուզուած : Այս
յանկարծական երևոյթէն թեւակալներն ետ ետ քաշուեցան .
Մօրէլ և իր աղջիկն այս անծանօթին նայեցան ապշու թեամբ :
Ռօտուլֆ իր բաձկոնակին դրոյանէն ծալլած դրամատոմսերու
փոքրիկ ծրար մը հանեց , երեք հատ առաւ և Մալիքօրնին
տալով ըսաւ .

— Ահաւասիկ երկու հազար հինգ հարիւր ֆրանք ձեզի . հի-
մակ ետ տուէք նայիմ այս օրիորդին յանձնած ոսկիները :

Եւս քան զէս զարմանալով՝ թեւակալն առաւ այն դրամա-
տոմսերը վարանմամբ , զինեց , ածդիս անդին դարձուց և հուսկ
ուրեմն զանոնք ֆրոյանէց : Յետոյ՝ իր ահուխառն զարմանքը քա-
նի փարատէր՝ կոշտութիւնը վրայ ելնելով՝ Ռօտուլֆը ոտքէն
ցլուխ չափեց և անոր ըսաւ .

— Ձեր դրամատոմսերը լաւ են , խօսք չկայ . բոյց այսչափ
գումար մ'ուսկից ձեր ձեռքն ընկեր է : Արդեօք ձերն է , —
յարեց նա :

Ռօտուլֆ շատ համեստ հազուեր և փոշիով ծածկուծ էր
Պ . Բիբլէի համբարակը բաւական ատեն սպասելուն համար :

— Բեզ ըսի որ այն ոսկին ետ տաս . . . այս դեռ հաս աղ-
ջիկին տաս — պատասխանեց Ռօտուլֆ սուղ և մեծասաստ ձայ-
նով մը :

— Բեզ ըսի . . . : Եւ ինչո՞ւ համար զիս կը դռնէ . . . —
պուայ թեւակալը սպառնական դէմքով մը Ռօտուլֆին վրայ
քալելով :

— Ոսկին . . . ետ տուր ոսկին — ըսաւ իշխանն այնպէս սաս-
տիկ սեղմելով Մալիքօրնի դաստակն որ սա անոր երկաթի ու-
ձին չտողալով՝ դոչեց :

— Ո՛հ , ձեռքս պիտի փրցնէք . . . թող տուէք . . . :

— Ուրեմն ետ տուր այն ոսկին . . . : Ապիրատ , ստակդ ա-
նիք , կործր դնա . . . և լիբը լեղուդ քեզի քաշէ , թէ ոչ
անդղէն վար կը դտնես ինքզինքդ :

— Շատ աղէկ , ահաւասիկ ոսկին — ըսաւ Մալիքօրն նորա-
տի աղջիկին յանձնելով ծրարը — բոյց զիս մի գուդէք և
հետս այգպէս դէշ մի վարուիք . . . իզնէ աւելի ուժեղ ը-
լալնուդ համար . . . :

— Ճիշտ , ըսաւ . . . դուք ո՞վ էք որ այգպէս մեծ մեծ կը
չարդէք — յարեց Պուրտէն իր ընկերին ետն ապաւէն մը
փնտուելով — դուք ո՞վ ոյիտի ըլլաք :

— Ի՞նչ կ'ըսէք , ո՞վ է մի . . . իմ տունուրս է . . . իմ ան-
ցիներուն թագաւորը , հասկցա՞ք , դուք վատամիտ , վատա-
սիրտ , վատազգի , վատանուն մարդիկ — պուայ տիկին Բիբլ-
լէ , որ վերջապէս հեւալով վեր ելաւ , միշտ տիտոսեան գեղ-
նորակ կեղծամը գլուխը դրած : Գունապանուհին միալի թանով
լի պտուկ մը ձեռքը բռնած՝ դիտարար Մօրէլն ու կը բերէր :

— Ի՞նչ կուզէ այս սյուաւ սամսարը — ըսաւ Պուրտէն :

— Թէ որ ֆիզիքական կողմն (անձին) գպիք՝ վրանիդ կը
ցատկեմ հիմակ , հա՛ , և ձեզ կը խածնեմ — պուայ տիկին
Բիբլէ — և թէ որ շատ խօսիք , իմ անեցին , անեցիներու
թագաւորն , ինչպէս որ կըսէ , սանդղէն վար դաւալ զլոր պի-
տի բերէ ձեզ . . . : Իսկ ետ ալ իբր կոյս մ'աղբնոց ձեզ տու-
նէս դուրս պիտի աւելմ :

— Այս պատուին բերանը դէշ է , բոլոր անեցիները կըք-
նայ մեզի դէմ գրողուել : Մեր ստակն առինք , ծախսն ալ հա-
նեցինք , ճամբայ ելնենք — ըսաւ Պուրտէն Մալիքօրնին :

— Ահա թղթերդ — ըսաւ նա Մօրէլի ոտքը նետելով պո-
մը (dossier) :

— Այդ պրակը գետնէն առ . . . քեզ վճարեցին , մարդա-
վար եղիւր — ըսաւ Ռօտուլֆ , և մէկ ձեռնով դորձակալը բը-
նած ուժգին , միւսովը թղթերը ցցուց :

Գործակալը այս նոր ու ահարկու թաթէն զղալով որ չպիտի
տի կարենայ այսպիսի ոսոխի մը դէմ սղորիլ, մըմաւում ծը-
ւեցաւ, պրակը գետնէն առաւ և Վօրէլի յանձնեց. Վօրէլ-
ալ մեքենայէս առաւ զայն :

Կարծէր թէ կ'երագէ :

— Գուք՝ որչափ որ ըմբշի դաստակ մ'ունիք, նայեցէք որ
մեր ճանկին տակ չընկնիք — ըսաւ Վալիքօրն :

Եւ Ռօտովֆին ցոյց տալով իր կուռփը սպառնալի, մէկ ոս-
տումով տաս աստիճան սանդղէն վար նեակեց ինքզինքը՝ իր
գործակցին հետ, որ տեսակ մը սոսկումով ետևը կը նայէր :

Տիկին Բիբլէ՝ թելակալին կողմէն Ռօտովֆին եղած սպառ-
նալեաց վրէժն առնելու պատրաստուեցաւ. երանգագին դէմ,
քով մ'իւր պտուղը նայելով՝ դիւցաղնօրէն պտալց :

— Վօրէլի պարտքը վճարուեցաւ... հիմակ ուտելիք ալ
կրնան ճարել, իմ թանիս կարօտ չեն, զի սըլ եղիք վարը... :

Եւ բազրիքին (rampe) վրայ ծռելով՝ պառաւն իր պտուկին
մէջի ապուրը գործակալներուն դիւէն վար թափեց այն միջո-
ցին որ առաջին դստրիկոնը կը հասնէին :

— Կորրորիք... անպիտաններ... կրկնեց դռնապանուհին—
ա՛հ, թըջած հաւեր դարձան... հէ, հէ, հէ, ճիշտ ընելու
տեղն է... :

— Յանկարծակներ թափին գլուխդ — գոչեց Վալիքօրն, որ
տիկին Բիբլէի խոհարարական կերակուրով լրացուեր էր —
կոյր ես, չես տեսներ վերէն... հոտած քաւթաւ... :

— Ալֆրէտ — պատասխանեց տիկին Բիբլէ՝ խիլ մ'ականջի
թանթը պատուելու չափ ուժգին և սուր ձայնով մը պոռաւով... :

— Ալֆրէտ, սիրական ծերուկս, կոփէ, թոպէ սա անպիտան-
ները... քու սրտիկիդ (Անաստազի) պատուին դպան, Պէ-
տէվիներու պէս վարուիլ ուղեցին, անամօթները... զիս
նախատանցին... դարկ, աւելին կ'ընտրէ զարկ... Բստրէվա-
ճառ կնկան և թանդարին ըսէ որ քեզ օղնեմ... Հասէք,
հասէք, հասէք, կատու, կատու... դո՛ղ, գո՛ղ կալ... քիս,

քիս, քիս... պրորբ... օշա... օշո... կոփէ, կոփէ,
սիրական ծերուկ... Պո՛ւմ... սրճ... :

Տիկին Բիբլէ այս փոխանուհու թիւններուն՝ զոր ըսելու ժա-
մանակ օտներն ալ կը արփէր մոլեղին, ահաւոր վերջարան
մը տալու համար՝ յաղթութեան երանգով արբշխ՝ սանդղին
դիւէն նեակեց վար իր հողէ պտուկն որ՝ սոսկալի աղմուկ մը
խորտակելով՝ այն պահուն որ թելակալները՝ սոյն գոռում
գոչումէն շմորած՝ շքա շքա վար կ'իջնէին, իրենց սարսափն
աւելցուց :

— Կորրորիք, այդպէս — գոչեց Անաստազի քահ քահ
խնտալով և յաղթական գիրքով մ'իւր թւերը խաչաձև ծալեց... :

Մինչդեռ տիկին Բիբլէ թելակալները կը հալածէր իր
թշնամալի արդաղակներովը՝ Վօրէլ Ռօտովֆին ոտքն ընկեր էր :

— Ա՛հ, պարոն, մեր կեանքն ազատեցիք... Այս անակ-
նունելի օղնութիւնը արդեօք որո՞ւ կը պարտաւորինք... :

— Բարէ յարգանք Աստուծոյ... — ինչպէս որ կըսէ ձեր ան-
մահ Պերանժէն... :

ԳԼՈՒԽ Զ.

ԲԻԿՕԼԷՔ

ԱԿՆԱՀԱՏԻՆ ԿՈՒՍՈՐԸ՝ Լուիզ՝ նշանաւոր գեղեցիկու-
թեան, շքեղ գեղեցիկութեան տէր օրիորդ մ'էր, մարմնով
նրբաւարտ և մեծ՝ հնատիպ Հերային կը նմանէր նա իր բարե-
ձև ու զգօն երեսին, և որսորդուհի Անահտայ իր բարձր հա-
տակին վայելչութեան կողմէն : Թէև խորշակաւ դոյն՝ և բոլո-
րաձև գեղանի ձեռներն թմուր կարմրութիւն մ'առեր էին,
առտնիւ աշխատութիւններէ կարծրացած՝ թէև ազքատիկ հա-
ղաւտ մը հագեր էր, բայց դաձեալ այս աղջկին կերպարանը
դերպղնիւ երևոյթ մ'ունէր :

Աւելորդ է նկարագրելու փորձ փորձել այս ընտանիքին ե-
րախտագիտութիւնը և զուարթ ապուլութիւնը, քանի որ ահա-
ւոր միճակէ մ'այսպէս անակնկալ կերպով կազատէր : Նոյն

իսկ փոքրիկ աղջկին մահը՝ ողջն յանկարծահաս խնդութեան ժամանակ՝ պահ մը մոռցուեցաւ : Միայն Ռօտովի գիտեր էր Լուիզին ծայրալիբ դեղնութիւնն և մթին մտախոհութիւնն ու ըով միշտ վշտաբեկ կերեէր : Թէև հայրն ազատում գտեր էր : Ռօտովի ուզելով բոլորովին ապահովել Մօրէլենքն իւրենց ապագային նկատմամբ , և իր առատաձեռնութիւնը բացատրել՝ քանի որ կրնար իր ծպտեալ վիճակին վրայ կասկածներ առաւ , ակնհասաին ըսաւ՝ սանդղին գլուխը աանելով մինչդեռ Ռիկօէդ Լուիզը կը պատրաստէր իր փոքրիկ քրոջը մահուան լուրն իմանալու :

- Առջի օրն առտու նորատի կին մը ձեզի եկաւ :
- Այո՛ , պարոն , և շատ վշտացած կերեէր մեզ այս վիճակին մէջ տեսնելով :
- Այն կնկան շնորհակալ ըլլալու պարտաւոր ես , և ոչ ինձ . . . :
- Միթէ ճիշտ է . . . պարոն , այն նորատի կինը . . . :
- Քու բարերարութիւնդ է : Սակայ անոր տունը կերպասներ տարեր եմ , երբ այս տեղ չորրորդ դատիկոնը սենեակ մը բռնելու եկայ , դռնապանուհիէն իմացայ ձեր աղէտալի վիճակը . . . : այն կնկան ողորմասիրութեան վստահելով՝ անոր տունը վազեցի . . . և առջի օրն անձամբ հոս եկաւ , որպէս զի աչքովը դատէ ձեր թշուառութեան աստիճանը . սիրտը շատ ցաւեր էր . բայց որովհետեւ այս թշուառութիւնը խառնակ վարուցարողիւնքը կրնար ըլլալ , ապսպրեց ինձ որ կարելի եղածին չափ շտտով՝ քու վրայօքդ տեղեկութիւններ ստանամ , վազն զի կը փափարէր քու ժուժկալութեանդ համեմատ բարերարել քեզ :
- Ի՛նչ բարեկիրտ ու ընտիր տիկին , իրաւունք ունէի ըսելու . . . :
- Ըսելու Մատէնին . Ի՛նչ հարուստները քեզմայն , այնպէս չէ :
- Ի՛նչ , պարոն , ուսկից զիպես իմ կնկանս անունը . . . ո՛վ դաւա քեզի թէ . . . :
- Այս առտու ժամը վեցէն՝ ի վեր — ըսաւ Ռօտովի Մօ ,

բէլին խօսքը կտրելով — ձեզնայարկիդ կից փոքրիկ համբարակին մէջ պահուըտեր էի :

- Գու . . . պարոն . . . :
- Եւ ամէն բան լսեցի , ամէն բան , պարկեշտ և ընտիր մարդ . . . :
- Տէր Աստուած . . . բայց ինչպէս հոն մտար :
- Գու միայն կրնայիր լուսաւորել զիս վիճակիդ վրայ . քեզ տեսնել ուզեցի և մտիկ ընել քեզնէ յանդէս . . . : Գունապանն այն փոքրիկ շտեմարանն առաջարկեր էր ինձ , որպէս զի փայտարանս ընեմ : Այս առտու զայն տեսնել ուզեցի , ժամ մը կեցայ այն տեղ և բոլորովին համոզուեցայ որ չկայ քու սրտիդ պէս լաւ , ազնիւ , արի և համբերող սիրտ մը :
- Տէր Աստուած , արժանիք մը չկայ , պարոն , այդ բանին մէջ , այսպէս ծնած եմ , ուրիշ մարդ չեմ կրնար ըլլալ :
- Գիտեմ , ասոր համար չեմ դովեր քեզ , այլ արժանիքդ կը ճանչեմ . . . : Այն թաղուստէս (réduit) պիտի ելնէի քեզ թեւակալներուն ձեռքէն ազատելու համար՝ երբ աղջկիդ ձայնը լսեցի : Անոր ուզեցի թողուլ քեզ ազատելու զուարճութիւնը . . . : Գժբազդաբար թեւակալներուն զօշաքաղութիւնը (rapacité) խեղճ Լուիզը զրկեց այս անուշ գոհունակութենէն . այն ատեն երևան ելայ : Քանի մը տեղէ առնելիք ունէի , երէկ ստացայ և կարող եղայ քու բարերարութիւնդ հաշուելին այն աղէտաբեր պարտքը քու տեղդ վճարել : Սակայն այնչափ ծանր էր ու բարեկիր թշուառութիւնդ , և արիապէս կը կրէիր , որ քեզ համար եղած հոգատարութիւնն՝ որուն արժանի ես , ասով պիտի չլինայ : Կարող եմ , յանուն ձեր ազատարար հրեշտակին , անդորր , երջանիկ ապագայ մ'ապահովել թէ քեզի և թէ ընտանիքիդ համար . . . :
- Միթէ կարելի է . . . : Բայց դոնէ , անունն , պարոն , այս երկնառաք հրեշտակին , այս կենսատու հրեշտակին անունն ի՛նչ է :
- Այո՛ , հրեշտակ մ'է . . . : Եւ ամէն զատ՝ իրաւունք ունեւ

հեղինակը ըստ իր թե մեծ ու պղտիկ այս աշխարհիս միջ իրենց
ցաւերն ունին :

- Ի՛նչ, միթէ այս տիկինն դժբանգ է :
- Ո՛վ վիշտ չունի . . . : Բայց իր անունը քեզնէ ծածուկ
պահելու պատճառ մը չկայ . . . : Այն տիկինը կանուանի . . . :

Ռօտոլֆ նոյն պահուն մտածելով որ տիկին Բիբլէ զիտէր
թէ տիկին ա՛ր վիշտ այն տունն եկեր էր Էրանուարը փնտուե-
լու , գունաստանուհիին անխոհեմ լեզուէն վախցաւ և վայր-
կեան մը լուռ կենալէն ետե՛ վրայ բերաւ .

- Այն կնիկան անունը կրնամ յայտնել քեզ . . . պայմա-
նով մը . . . :
- Ո՛հ , ըսէ , ի՛նչ է պայմանդ , պարոն . . . :
- Այս է թէ՛ մէկու մը չարտի հաղորդես . . . և ոչ մէկու
մը , կ'իմանաս . . . :

— Ո՛հ , կ'երգնում քեզ որ չեմ ըսեր . . . բայց գոնէ թըշ-
ուառներուն այս նախախնամութեան իմ շնորհակալութիւնս ալ
յայտնելու չպիտի ներուի ինձ :

- Պէտք է որ տիկին ա՛ր վիշտէն հրաման առնում , տարա-
կոյս չունիմ որ պիտի հաւանի . . . :
- Ի՛նչպէս կոչեցիր այս տիկինը :
- Տիկին ա՛ր վիշտ մարքիզուհի :

— Ո՛հ , երբեք այս անունը չպիտի մոռնամ : Իմ սուրբս
պիտի ըլլայ նա . . . իմ պաշտելի սուրբս . . . : Քանի մտածեմ
որ անոր շնորհիւն իմ կինս , իմ զաւակներս ազատեցան . . .
ազատեցան , չէ՛ , ամէնքը չէ . . . իմ փոքրիկ խեղճ Ատէլս ,
ա՛լ չպիտի տեսնենք . . . : Բա՛րէ , Աստուած իմ , իրաւ է որ օ-
րին մէկը անոր կորուստը պիտի տեսնելիք , քանի որ դատա-
պարտուած էր . . . :

- Եւ ակնհաստան իր արտաւեր սրբեց . . . :
- Իսկ փոքրիկ աղջկիդ թաղման վերջին պարտուցդ զալով
թէ որ ինձ կը վատահիս . . . զիտես ի՛նչ պէտք է ընել . . . :
Գիտես ես իմ խոյս չտեղաւորուեցայ . մեծ , ուրիշ և զովարար

է . արդէն անկողին մը կայ . պէտք եղածն ալ հոն կը փոխա-
դրուի որպէս զի դու և ընտանիքդ կարող ըլլաք բնակելու ,
մինչև որ տիկին ա՛ր վիշտ վայելուչ կերպով մը ձեզի տուն
տեղ շնորհէ . . . : Աղջկիդ մարմինը ձեզնայարկին միջ կը մնայ ,
և քահանայ մը պիտի գայ այս գիշեր , ինչպէս որ արժան է ,
անոր վրայ հսկելու և պահպանելու : Երթամ պիտի Գ . Բիբլ-
լէն աղաչեմ որ այս արամագի՛ն պատրաստութիւններն ընե-
լու հոգ տանի :

- Բայց , պարոն , ինչո՞ւ զրկուիս խցեդ . . . ա՛լ փոյթ
չէ . . . : Հիմակ որ հանդիստ ենք և բանս մանելու վախ չու-
նիմ . . . իմ աղքատիկ հղիկս պալատ մը պիտի երևի ինձ ,
մանաւանդ՝ եթէ իմ Լուիզս քովս մնալու ըլլայ . . . որպէս զի
առաջուան պէս ամէն բան հոգայ . . . :

— Քու Լուիզդ ա՛լ քեզնէ բաժնուելիք չունի . . . : Ա՛րսէիք
թէ ճոխութիւն մ'է քեզ համար աղջկիդ միշտ քովդ ունե-
նալդ . . . լա՛ւ , այսուհետեւ քովդ պիտի մնայ . . . և այս պիտի
ըլլայ վարձքդ . . . :

- Աստուած իմ : . . . պարոն , միթէ կարելի է , ըսածդ ե-
րազ մը կ'երևի ինձ . . . : Երբեք կրօնասէր եղած չեմ . . . միշտ
պատուի կրօնն ունեցած եմ . . . բայց այսպիսի անսկիւկալ բաղդ
մը . . . կը յորդորէ հաւատելու չէ թէ կրօնաւորներու . . . սյլ
Նախախնամութեան . . . :

— Եւ եթէ կարելի ըլլար հօր մը վիշտը վտխարինել — Ը-
սաւ Ռօտոլֆ արտամղին — պիտի ըսէի թէ աղջկինքը մէկը
կորուսիր իրաւ , բայց միւսը շահեցար :

- Ստոյդ է , պարոն , մեր Լուիզը մեր ծոցը դարձաւ . . . :
- Սենեակս պիտի ընդունիս , այնպէս չէ . թէ ոչ մեռելին
հսկումն ու յուզարկաւորութիւնն ինչպէս պիտի կատարեն . . . :
Անգամ մը խորհէ կնոջդ , որուն գլուխը արդէն սաստիկ տը-
կարացած է . . . այսպիսի վշտալի տեսարան մը քսան չորս ժամ
իր աչքին առջև կարելի է թողուլ :
- Գու ամէն բանի հոգը կը տանիս . . . ամէն բանի . . . քա-
նի բարեսիրտ ես , պարոն :

— Պարտաւոր ես բարերար հրեշտակիդ շնորհակալ ըլլալ :
իր բարեսրտութիւնը զիս կը ներշնչէ : Անոր ըսելքը քեզ
կ'առաջարկեմ, և վստահ եմ որ հաւանութիւն պիտի տայ . . . :
Այսպէս ուրեմն կ'ընդունիս, խօսք չկայ . . . : Հիմակ ըսէ ինձ
այն ժաք Գէրրամը . . . :

Սե ամպ մը Մօրէլի ճակտէն անցաւ :

— Այն ժաք Գէրրամը — վրայ բերաւ Ռօտովֆ — նոյն իսկ
այն ժաք Գէրրամն է, որ նստար է և Սանդիէ փողոցը կը
բնակի :

— Այո՛, պարոն . . . : Արդեօք զինքը կը ճանչես : — Յե-
տոյ նորէն Լուիզի մասին ունեցած երկիւղը միտքը պաշարե-
լով Մօրէլ զոչեց : — Քանի որ ամէն բան լսեցիր, պարոն,
ըսէ . . . ըսէ . . . միթէ իրաւունք չունիմ այն մարդը մեղադրե-
լու . . . և ո՛ր դիտէ . . . թէ որ իմ աղջիկս . . . իմ Լուիզս . . . :

Խօսքը չկրցաւ շարունակել և երեսը ձեռներովը ծածկեց :
Ռօտովֆ անոր երկիւղը հասկցաւ :

— Նստարին վարմունքն — ըսաւ նա — կասկածդ փարա-
տել պէտք է տարակոյս չկայ որ աղջիկդ դէմ կեցած է և ան
ալ իր վրէժը լուծելու համար քեզ բանտարկելու ելած է .
ինչ և է, իրաւունք ունիմ կարծելու որ չարասիրտ մարդ
մ'է . . . : Եթէ այս այսպէս է — ըսաւ Ռօտովֆ սրտ մը լռու-
թիւն պահելէն ետեւ — ապա ինչինք . . . Նախախնամութեան
վրայ զանի պատժելու համար . . . Եթէ Նախախնամութիւնը
ստէպ կը նիրհէ, երբեմն ալ կարծնայ :

— Շատ հարուստ ու շատ կեղծաւոր է նստարը, պարոն :

— Յուսահատ է իր, ազատիչ հրեշտակ մը քեզ հասաւ . . .
Թերևս անողորբելի վրէժխնդիր մ'ալ նստարին գլխին կայծակ
բերէ . . . Եթէ մեղապարտ է :

Նոյն պահուն Ռիկօլէդ ձեղնայարկէն դուրս ելաւ արտասուքը
սրբելով :

Ռօտովֆ դեռ հաս օրիորդին ըսաւ .

— Քու կարծիքդ ինչ է, դրացուհիս, Պ. Մօրէլ աղէկ

չըներ եթէ իր ընտանիքին հետ սենեակս բնակի, մինչև որ
իր բարերարն՝ որուն գործակալտարն եմ, իրեն յարմար բնա-
կարան մը ճարէ :

Ռիկօլէդ Ռօտովֆին դէմքը նայեցաւ զարմանքով :

— Ի՛նչ, պարոն . . . որչափ վեհանքն ես . . . :

— Այո՛, բայց պայմանով մը . . . որ քեզնէ կախում ունի,
իմ դրացուհիս . . . :

— Ո՛հ, ըսէ, պատրաստ եմ ընելու . . . :

— Գլխաւորիս քանի մը ստիպողական հաշիւները կան կար-
գադրելու . . . քիչ ասանէն պիտի գան առնուն . . . Թղթերս
վարն են : Եթէ, իբր դրացուհիս, ներես ինձ որ պամ այս
գործս քու խուցը . . . սեղանիդ մէկ անկիւնը նստիմ կատա-
րեմ . . . այն միջոցին որ դուն ալ կաշխատիս . ես քու գոր-
ծիդ արդեւք չեմ ըլլար, և Մօրէլէնց ընպանիքը կարող կըլ-
լայ շուտ մը՝ պարոն և տիկին Բիբլէի օչնութեամբը վար սե-
նեակս իջնել և տեղաւորիլ :

— Ո՛հ, թէ որ այդ է բոլոր ուղածդ, պարոն, յօժարա-
կամ կը կատարեմ, ամէն դրացի պէտք է իրարու օգնեն . . . :
Գու արդէն բարեմիտ Մօրէլի օգնելովդ այդ բանին օրինակը
կըլաւս . . . : Հրամէ, ինչպէս որ կ'ուզես, պարոն . . . :

— Զիս քրոջէդ է՞ անուանէ . . . թէ ոչ պիտի քաշուիմ և
չպիտի համարձակիմ ընդունիլ այդ ծառայութիւնդ — ըսաւ
Ռօտովֆ ժպտելով : —

— Բոլոր ուղածդ այդ ըլլայ : Շատ աղէկ, դրացիս կրնամ
անուանել քեզ, քանի որ իրօք դրացիս ես :

— Պատկա, մաման քեզ կ'ուզէ . . . եկուր . . . եկուր — ը-
սաւ փոքրիկ տղեկին մէկը ձեղնայարկէն դուրս ելնելով :

— Գնա՛, իմ սիրելի Պ. Մօրէլ, երբ ամէն բան վարը պատ-
րասուի, քեզ իմաց կտան :

Ախնահատը արտորնօք իր սնակը մտաւ :

— Հիմակ, իմ դրացուհիս — ըսաւ Ռօտովֆ Ռիկօլէդին —
որիչ ծառայութիւն մ'ալ ունիս ընելու ինձի :

— Ամենայն սիրով, իմ դրացիս, եթէ ձեռքէս գայ :

— Ատաճ եմ որ ընտիր փոքրիկ անտեսուհի մ'ես . հիմակ իսկոյն պէտք եղած բաները գնել, որպէս զե Մօրէլն ընտա, նիքն իմ սենեկիս մէջ շէնքով շնորհքով հազուի, սրտիկ և տեղաւորի . ինչու որ սենեկիս մէջ լոկ իմ ամուրիի կարա-
սիս կայ որ (շատ ծանր չէ) երէկ բերին : Այս ամէն բաներն անսխալ պէս ձեռք բերելու համար ինչ ընելու ենք :

Ռիկօլէգ պահ մը մտածեց և պատասխանեց .

— Երկու ժամ չքշեր ամէնն ալ կը հասնին հաս, աղւոր պատրաստ զգեստներ, որ մաքուր, տաքբեր են, բոլոր ընտա-
նիքին համար աղւոր ճերմակեղէն լաթեր, աղոց համար եր-
կու փոքրիկ անկողիններ, հատ մ'ալ մամին համար, վերջա-
պէս ինչ որ պէտք է կայ պատրաստ . . . բայց այս ալ ըսելու
է որ շատ, շատ ստակ պէտք է :

— Հայ թշուառական . . . և սրչափ :

— Ա՛հ, քիչէն քիչ . . . քիչէն քիչ հինգ վեց հասիւր
ֆրանք . . . :

— Ամէնուն համար :

— Ափսոս, այո . . . կը նայիս, շատ ստակ է . — ըսաւ Ռի-
կօլէգ աչերը մեծ մեծ բանալով և զլուխը ցնցելով :

— Եւ երբ պիտի ունենանք ըսիր :

— Երկու ժամէ առաջ :

— Բայց դուն իրաւ որ փէրի մ'ես (պարիկ), դրացուհիս :

— Տէր Աստուած, և ինչո՞ւ համար . ըսածս խիստ դիւրին
է . . . : Գա՛նքլը ասկից քանի մը քայլ հեռի է և ուղածդ կրնաս
գանել :

— Գա՛նքլը :

— Այո, Գանքլը :

— Ի՞նչ է այդ Գանքլը :

— Ի՞նչ, միթէ չէս զիտեր թէ Գանքլը ինչ է, դրացիս :

— Չէ, չգիտեմ, դրացուհիս :

— Սակայն քեզի և ինձի պէս մարդիկ եթէ խնայող են,

հոն կ'երթան կարասի և հաղուտ գնելու : Ամէն բան ածան
կը ծախուի հոն և աղւոր են, քան ուրիշ տեղ . . . :

— Իրաւ կ'ըսես :

— Տարակոյս մի կայ, նայէ, դիցուք թէ ինչ վճա-
րած ես թիկնոցիդ համար :

— Ճիշտը չգիտեմ . . . :

— Ի՞նչ, դրացիս, չգիտեմ թէ քանիի առիր թիկնոցդ :

— Մտերմօրէն կը խոստովանիմ քեզ, դրացուհիս — ըսաւ
Ռոտոլֆ ժպտելով — որ ապառիկ առած եմ . . . ուրե՛ն, լաւ
կ'իմանաս . . . որ դինն ինչ է չգիտեմ . . . :

— Ա՛հ, իմ դրացիս . . . դրացիս . . . ինձ կ'երևի որ կաթի
կանոն սիրող աղայ մը չես :

— Ափսոս, իրօք չեմ, դրացուհիս . . . :

— Պէտք է որ զղաստանաս, թէ որ կ'ուզես որ բարեկամ
ըլլանք . . . և արդէն կը տեսնեմ որ բարեկամ պիտի ըլլանք . . .
վասն զի բարեմոյն դէմք մ'ունիս : Գու ալ պիտի տեսնես ո՞ր
պիտի ախորժիս իմ դրացիութենէս : Գու պիտի օգնես ինձ . . .
ես ալ քեզ . . . աղէկ դրացիներ, ասանկ կը վարուին . . . : Ես
քու ճերմակեղէն լաթերդ կարգի կը դնեմ . . . դու ալ խուցս
մաքրելու համար, ինձ ձեռնաու կ'ըլլաս . . . : Ես առտու շատ
կանուխ կ'եղնեմ, քեզ ալ պիտի արթնցնեմ որ գործէդ ու՛
չմնաս և զրատուե՞դ ժամանակին գտնուիս : Սենեկիդ պատին
պիտի զարնեմ մինչև որ ձայն տաս ինձ և ըսես . Բարի լըյս,
դրացուհիս :

— Կը հաւանիմ, այսպէս դու ամէն առտու պիտի ձայն տաս
ինձ, ճերմակեղէնիս հոգը պիտի տանիս, և ես ալ խուցի
պիտի սրբեմ, մաքրեմ :

— Ասկէ զատ կարգ կ'առնո՞ւ պահել պիտի սորվիս :

— Ա՛նտարակոյս :

— Եւ թէ որ բանի մը պէտք ունենաս Գանքլը պիտի եր-
թաս ծախու առնելու . ահա օրինակդ վրադ է, կարծեմ թէ
թիկնոցդ ութսուն ֆրանք պիտի արժէ . լաւ, նոյնը երսուն
ֆրանքի կրնայիր գնել Գանքլ երթալով :

— Բայց, հրահարի է ըսածդ... : Այսպէս հինգ վեյջ հան-
 քիւր Ֆրանքով կարծեօքդ այն խեղճ Մօրէլենք կրնան... :
 — Հագուիլ կապուիլ և ուղածէդ աւելի, և բաւական ժա-
 մանակի համար :
 — Գրացուհիս, միտքս բան մ'ընկաւ... :
 — Ի՞նչ ընկաւ :
 — Անշուշտ տուն տեղ ինչպէս կը շտկեն պիտի գիտնաս :
 — Հապա... քիչ մը — ըսաւ Ռիկօլէդ անապարձութեան
 թեթեւ երեւոյթով մը :
 — Աւրեմն թեւ մտիր, շիտակ Գանբը երթանք և Մօրէլենց
 հայուսան ու կապուսար գնենք, այս բանիդ կգան :
 — Ա՛հ, ի՞նչ երջանկութիւն... խեղճ մարդիկ... բայց ըս-
 տակն ո՛ւր է :
 — Ունիմ :
 — Հինգ հարիւր Ֆրանք :
 — Մօրէլենց բարեբարը հրաման տուած է ինձ բան մը չի
 խնայել այս թշուառներն աղէկ մը... : Եթէ Գանբէն զամ-
 ուրիշ տեղ ալ կայ լաւագոյն կարասիներ ծախող... :
 — Չէ, ուրիշ տեղ աւելի աղւոր բաներ չեն ծախուիր,
 ասկէ զատ ուղածդ պատրաստ կրնաս գտնել, աղջիկներուն հա-
 մար պղտի շրջագոյններ, իրենց մօրը համար շրջագոյններ :
 — Աւրեմն Գանբըն երթանք, դրացուհիս... :
 — Ա՛հ, Աստուած իմ, բայց... :
 — Ի՞նչ կայ :
 — Ա՛հ ինչ... բանն այս է որ, չգիտես դու... ժամանակ
 կըս... իմ բոլոր դրամադ լուխս է. արդէն գործէս ուշ մնա-
 ցի... Մօրէլի եղիկը կինն ատեն ատեն հսկելուս համար. և
 կրնաս հասկնալ որ ժամ մ'ասկից, ժամ մ'անկից՝ քիչ քիչ
 օրն է կ'անցնի. մէկ օր, երսուն սու է, և երբ բան մը չվա-
 տկիմ օր մը, դարձեալ հաց պէտք է... բայց, վա՛շ...
 հոյս չէ... կորուստս գիշերը կը լեցնեմ... և կը նայիս :
 զուարճութեան առիթները միշտ չեն պատահիր, և այս ալ

ինձի համար բերկրանք մ'է... այսօր ինքզինքս հարուստ պի-
 տի կարծեմ... հարուստ, հարուստ, և անանկ պիտի երևի
 ինձ որ իմ ստակովս այն ամէն աղւոր բաները պիտի դէմ
 խեղճ Մօրէլենց համար... : Շատ աղէկ, պատրաստ եմ, եր-
 թամ շալք, գտակս դնեմ, և շուտ մը կը դառնամ, դրացիս :
 — Կոյն միջոցին կը ներես որ թղթերս սենեակդ բերեմ :
 — Ինչո՞ւ չէ, այս առթիւ սենեակս ալ կը տեսնես — ք-
 սաւ Ռիկօլէդ գոռոզաբար — վասն զի արդէն հաւքըտուքս ը-
 ռած եմ, ասկից պիտի հասկնաս որ շատ կանուխ կ'ենեմ, և
 թէ որ քնասէր և ծոյլ եօ... վայ գլխիդ, անշահ դրացուհի
 մը պիտի գտնես զիս... :
 Եւ՝ թոչնի պէս թեթեւ՝ Ռիկօլէդ սանդղէն վար իջաւ. Ռօ-
 տոլֆ անոր ետեէն գնաց, իր խուցը մտաւ որպէս զի Պ. Բիբ-
 լէի համբարակին (grenier) փոշին վրայէն թոթուէ : Աւերջս պի-
 տի ըսենք թէ ինչպէս Ռօտոլֆ՝ Ֆլէօր-տը-Մարիին առեան-
 դէն դեռ լուր մ'առած չէր, որ առջի իրկուս Պուզվալի աղա-
 բակը պատահեր էր, և ինչո՞ւ համար արկին տ'Արվիլի հետ ու-
 նեցած խօսակցութեան հետեւեալ օրը Մօրէլենց այցելութիւն
 ընելու չէր եկած :
 Ռօտոլֆ առ 'ի ցոյց՝ թղթերու ահագին ծրար մը բռնած՝
 Ռիկօլէդին խուցը մտաւ :
 Ռիկօլէդ իր բանտակից բարեկամուհի լա կոռալէօզին գրե-
 թէ տարեկից էր : Այս երկու աղջիկներն իրարմէ կը տարբե-
 ռէին՝ ինչպէս կը տարբերի ծիծաղն արասուքէ, խնդալի ան-
 հոյութիւնն՝ արտմային մտախօհութենէ... յանդուզն ան-
 հեռաստութիւնն՝ ապաղային վրայ տխուր և անընդհատ մտա-
 տանջութենէ... վշտապէս զգայուն, խղճի խայթէն անբուժօ-
 րէն կարեվէր՝ փափկասուն, ընտիր, վեհ, հրալիր բնութիւն
 մը... զուարթ, աշխոյժ, բարեբաղդ, համբոյր և զթասէր
 բնաւորութենէ մը : Ռիկօլէդ միայն ուրիշներուն հոյերը կը քա-
 շէր, բոլոր սրտով անոնց կը կարեկցէր, տառապեալի մը հա-
 մար հոգին և մարմինը կը նուերէր, բայց, ինչպէս որ ռամկօ-

նէն կ'ըսեն, եթէ անդամ մը կ'անալ Գարջէր, ամէն բան կ'ը մոռնար: Յակագ քահ քահ խնտալու ատեն՝ լացը կը բռնէր և սրտահաս կ'լար, երբեմն լացը կը կարէր՝ նորէն խնտալու համար: Ռիկօլէդ՝ Բարիզի Ջճմարիտ զակի մը պէս՝ շշուկն աւելի կը սիրէր քան անդորրութիւնը: շարժումը՝ քան հանգիստը: Շարքերէն կամ Բօլեդէի սրտահասնորէն նուազարանաց դժնէլուր ու սրտալիւր ներգաշնակութիւնը՝ քան հովին: Չրերուն և տերևներուն գնդճումը... Բարիզի քառուղիներուն խլրտիւնն՝ քան դաշտերու մենութիւնը... հրախաղութիւններու շարքումն, հրաբոյր փնջին շողջողիւնը, ուսմբերու պայթումը՝ քան աստեղազարդ երկնից պայծառութիւնը, նշուլագեղ ստուերներն ու լուսութիւնը: Աւաղ, ստոյգ է, այս սիրանուշ օրիորդն՝ Ժոյրապետին փողոցներու սալաատակը բացէ՝ ի բաց աւելի կը սիրէր՝ քան հովանուտ և մանիշակաբոյր ուղիներու թարմաւետ մամուլը, պարզարեք (պողոտայ) փողին՝ քան ոսկեղոյն հասկերու տատանումը, որ վայրի խաշխաշներու ծիւրանի և շուշաններու կապոյտ գոյներով արծնեալ կ'երևին...:

Մինակ կիրակի օրերն ու ամէն օր առտուն Ռիկօլէդ իր սենեկէն կ'ելնէր, որպէս զի իր Բանջարէն, իր հացն, իր կ'ալն և իր երկու Բանջարէններուն համար կ'ընէ ծախու առնու, ինչպէս որ կ'ըսէր Բիկին Բիբլէ. բայց նա Բարիզ կ'ապրէր Բարիզի սիրուն համար: Յուսահատութիւնը կ'առնուր զինքը եթէ իր Ժոյրապետին հետու տեղ մը բնակելու ստիպուէր:

Պճնուհիին (grisette) կերպարանին վրայ քանի մը խօսք ըսելէն ետև՝ Ռօտոլֆն իր դրայուհիին սենեակը պիտի տանինք:

Ռիկօլէդ հազիւ տասն ութ տարեկան, հասակը միջին, թերևս փոքր էր, բայց այնպիսի շնորհալի կարուածք, նուրբ և հեշտալի կըրուութիւն ունէր... այնչափ յարմար էր իր շոյտ և դողացիկ քալուածքին հետ որ կատարուն կ'երևէր. սլ որ իր սիրուն ոտներուն շարժումը տեսնէր, ոտներ՝ զօր փոքր ինչ հաստ ներբան ունեցող սև քաղմիրէ կօշիկներ կը պարուրէին միշտ, պիտի յիշէր լորին կամ հովնիկին կայտառ:

նաղելի ու խոհեմ քալուածքը: Կարծես թէ չէր քայլեր նա այլ այն ինչ սալարկին երեսը կը դպէր ու կը սահէր թեթևակի: Այս դնացքն՝ որ սընուհիբու (grifette) յատուկ է, և միանգամայն հշոյտ, հրապուրելի ու փոքր ինչ երկչոտ, անշուշտ երեք պատճառ ունի. — սիրուն երևելու իղձ մը. — երկի զ մ'որ իրենց ազգած զարմացումը նշանակելի մնջլատակութեան մը չդառնայ — մշտապես և հող մ'որ իրենց շրջապայութիւններու ատեն կարելի եղածին չափ քիչ ժամանակ կորուսեն:

Ռօտոլֆ դեռ ևս Մօրէլենց ձեղնայարկին մթալին լուսովը տեսեր էր Ռիկօլէդը, կամ սանդղին գլուխն՝ որ նուազ խաւարին չէր. ուստի ակնապիշ մնաց երբ անոր երկու լայն պատուհաններով լուսաւորած սենեակը մանեղով կամացուկ, նորատի օրիորդին փայլուն թարմութիւնը տեսաւ: Իր աչքին սրարդուած շնորհալի պատկերին առջև՝ պահ մ'անշարժ և ասուշ կեցաւ: Ռիկօլէդ՝ կրակարանին վերևը դրուած հայլին առջև կայներ՝ իր ծնօտին ներքև կապելու վրայ էր բանուած շարժէ փոքրիկ թաղհարի մը (bonnet) լարերը, որ կեռասի գոյն բարակ ժապուէնով (faveur) շրջանակի կիսուած էր: Այս թաղհարն, որ վերի գին շատ նեղ և գլխին ետևին կողմը դրեր էր՝ սև սաթի պէս փայլուն և ճակալին վրայ իջած երկու լայն խիտ, ու հարթ գիտակներ բայ կը թողուր. իր նուրբ ու նօսր ընթուխները՝ կարծես թէ մեղանով կորապիծ քաշուեր էին իր երկու խոշոր ու սև, վառվառն ու նենդապիշ աչերուն վերևը, իր պինդ ու ընցուն այտերը՝ թառչի նման՝ թարմաւետ վարդի պէս կը փայլէին իբր կարմրուն և առաւօտեան ցօղաւետ սաղուկ դեղձ մը՝ թարմաւետ թէ աչքի և թէ ձեռքի: Իր ցից, ամեղուկ, լպիւր փոքրիկ քիթը Լեղեղի մը կամ Մարգօնի մը բողբոլ կրնար շինել. եր փոքր ինչ մեծ բերանը, որ վարդաղոյն նամէտ շրթեր, սպիտակ, խիտ ու մարդաբաշար ակունքեր ունէր, խնտում էր և ծիծաղիտ. իր գէմբին ըմբօսա հրապոյր մ'ընծայող երեք սիրանիշ փախիկներէն (fossette) երկուսն այտերուն վրայ գրոշմուէր էին, խսկ միւսը թշին վրայ, պեղանի բծի մը մօտ, այս է, բերնին մէկ խորշ երեցած սևաթոյր մահատու պիտակ մը (mouche): Լայնածիր ու վարդաբուն վիզնոցին և կեռասի գոյն ժապուէնով բոթ բոթ եղած փոք-

քիկ թաղհարին մէջ տեղը դեղեցիկ մաղերու պուրակ մը կը տեսնուէր։ այս մաղերն այնչափ ընտիր ուղերն ու ցյուներ էին որ իրենց սևա-գոյն արմատն ակներև կերևէր, իբր նկարէն իր չքնաղ փղոկիւրի պէս վզին վրայ։ Արարողդ մերինոսէ շրջադղեստ մ'որ տափակ կունակէ և կարճ թևեր ունէր, և նոյն ինքն Ռիկիօլէդ օրօրէն կարեր էր, այնպիսի քնքուշ և նուրբ հասակ մ'երևան կը հանէր՝ որմէ յայտնի կը տեսնուէր թէ նորաւի օրիորդն բնաւ Կորթէ չէր հազներ․․․ խը նայողութեան նպասակաւ։ Եւ այս մասնաւոր պարագան մասնողը չփակին (corsage) և ուսերուն անսովոր, թեթև, շոյտ և թոյլ շարժումներն էին, որ կատուի մը շարժումներուն թուլակի ծիւղմը յուշ կ'ածեն։ Երևակայէ մարմարէ նրբակերտ ու բոլորաձև արձանի շրջադղեստ մ'ամրապէս կ'աւծ, և այն ժամանակ կրնաս վկայել որ Ռիկիօլէդ իրաւունք ունէր մեր ակնարկած հազուատի մասը զանց ընել։ Իր մէջքը՝ որ տաս մասի մէջ կը սեղմէր, մութ կանաչ կէրպասէ գողնոցին դօտիովը կ'ապեր էր։

Աճնուհին վստահ ըլլալով որ առանձին է, վասն զի Ռօտոլֆ միշտ գուռը կը կենար անշարժ և անտես, իր դողալիկ, սպիտակ և բոլորովին մաքուր ձեռքին ափովն մաղերը փայլեցնելէն ետև իր պղտիկ ոտքն աթուռի մը վրայ դրաւ իր կօշիկին լարը սեղմելու համար։ Այս դաղանի գործողութիւնը հարկաւ Ռօտոլֆին անխոհեմ ուզքին սուշև սրարդեց ձիւնի պէս ձերմակ բամպակէ դուրպայ մը, և զուտ ու անպատանելի ձև ունեցող սրունքի մը կէտը։

Ռիկիօլէդի այս հազուատին մանր նկարագրէն զխրին է գուշակել որ նա իր ամէնէն սիրուն գտակն և ամէնէն սիրուն դողնոցն ընտրեր էր, որպէս զի պարթև ընէ իր դրայիին երբ Գանրլին շուկան երթան։ Օրիորդը այս շինովն գործակատար—վաճառականն իր ճաշակին յարմար դուռ, անոր կերպարանն որ բարետէր նաև վէս ու ժայիճ էր, շատ կը հուսնէր. ասկէ զատ՝ Մօրէլենց վրայ այնչափ կը թարփար իր սենեակը վեհանձնօրէն անոնց տալով որ Ռօտոլֆ բարեսրտութեան, և թերևս իր գեմբին անուշութեան շնորհիւ՝ աճնուհին վստահութիւնը հիմնովին գրաւեր էր, թէև չէր կասկածեր։ Իսկ օրիորդը՝ գրայիութեան պահանջած փոխադարձ պարտուց և բռնի

մտերմութեան մասին ունեցած գործնական գաղափարներուն համեմատ ինք զինք իրապէս երջանիկ կը համարէր որ Ռօտոլֆին պէս դրայի մը՝ գործակատար ճամբորդի մը, Գապրիօնին և Քրանսուա Թէրմէնին յաջորդ կը տեսնէր. վասն զի սկսեր էր նեղանալ տեսնե-լով որ իր պատկից խուցը երկայն ժամանակ պարապ կը մնայ, և մանաւանդ կը վախնար որ անյարմար վարձուր մը չգայ։ Ռօտոլֆ անտես մնալով կը փութար հետաքննի ակնարկ մը նետել այս բնա-կարանին վրայ և շատ վեր կը դանէր զայն այն դովետաներէն զոր տիկին Բիրլէ Ռիկիօլէդին ներքին ծայրալիւ մաքրութեան համար վասնէր էր։

Եւ իրօք խիստ շէն ու կանոնաւոր էր սոյն սենեկիկը։ Պատերը կանաչափուրջ մոխրագոյն թղթով պատած էին. Գեղակարմիր ներկուած գետինը հայլի պէս կը փայլէր։ Առաւարանին մէջ սպիտակ յախճապակէ կրակարան մը կ'երևէր, և անոր մօտ այնչափ կարճ, այնչափ մանր կտրուած և զուգաչափ փոքրիկ փայտի պաշար մը կար՝ որ առանց չափազանցութեան ամէն մէկ կտորը ահագին վառկի մը հետ կարելի էր բաղդատել։

Աճակերպ մոխրի գոյն ներկուած քարաշէն վառարանին վրայ կանաչագեղ խաւով ծածկուած և հասարակ ծաղիկներ պարունակող երկու թաղար կային, իբր զարդ-տուսախէ փոքրիկ շրջազարդ (cartel) մը՝ որ արծթէ ժամացոյց մը կը պարունակէր, ճօճանակի տեղ կը բռնէր՝ մէկ կողմէ՝ ոսկիի պէս շողուն՝ պղնձէ աշտանակ մը կը փայլէր և պարթևի ծայրը կ'երևէր, միւս կողմէ կը փայլէր՝ ոչ նուազ շողունուն՝ պողովատէ արմի և կապարեայ ոտքի մը վրայ կանգուն՝ պղնձէ ցոլականով և զլանով կանթեղ մը։ Մեծկակ քառակուսե հայլի մը՝ որուն շրջանակն էր սև փայտէ՝ վառարանի վերևը դրուեր էր։ Պարսիկ կտաւէ գորշ ու կանաչաւէտ վարդադոյններ, զոր Ռիկիօլէդ իր ձեռք բամբակէ ժապաւէնով զարդարեր, ձևեր, բաներ, նոյնպէս իրենց սևադոյն երկաթի թեթև ձողերէն անցուցեր էր, կը գոցէին պատահաններն ու անկողինն զոր նոյն գունակ վերմակով ծածկեր էր։ Անկողին խորշին երկու կողմէն կ'երևէին սպիտակներկ սպա-կիաշէն երկու պղտի դահլիճներ՝ ուր անշուշտ տան անթմները տե-

դաւորեր էին, ինչպէս, դիւրատար փուռը, աղբիւրակը, օտելները և այլն, և այլն... որովհետև այս ամէն առարկաները չէին աւրեր սոյն սենեկին կոկիկ տեսքը: Անկուղեմի երակաւոր, յղիուն փայտե դարանակ մը, նոյն փայտէն չորս աթոռներ, աշխատելու և հարմար էի համար մեծ սեղան մը, որուն վրայ կանաչ բրդէ ծածկոյթ մը փուեր էր զոր երբեմն դեղացիները իրենց հիւղերուն մէջ կը դործածեն. յարդէ թիկնաթոռ մը, նմանակերտ աթոռիկ մը, որ կար կարուհիին սովորական նստելու վայրն էր ասոնք էին Ռիկօլէզի սարդ կարասիները: Աւերջապէս պատուհանի մը որմնածակին մէջ երկու գեղձանիկներու վանդակը կը տեսնուէր, որ Ռիկօլէզի հաւատարիմ սեղանակիցներն էին: Աղքատներու յատուկ հնրադէտ ճարտարութեամբ մը սոյն վանդակը մէկ ոտնաչափ խորունկ փայտեայ սնտուկի մը մէջ տեղը դրուած էր. այս սնտուկը զոր Ռիկօլէզ իր թոչուններուն պարտեղը կ'անուանէր՝ ձմեռը լորակտ հողով առլի է. իսկ դարնան նորաթի օրիորդը դաւարի կը սերմանէր և մանր ծաղիկներ կը սնկէր:

Ռօտուլֆ հետաքրքիր և ինսամատար աչքով կը դիտէր սոյն փոքրիկ սենեակը. քաջ կ'ըմբռնէր թէ ինչո՞ւ համար սքանչելի միշտ զուարթ բնութիւն մ'ունէր: Արեւակայէր թէ իրօք այս առանձնութիւնը շատ զուարճալի պիտի ըլլար երբ թոչունները իրենց դայլայլիկն ու Ռիկօլէզ իր երգը սկսին: Օրիորդը հարկաւ ամառը կ'աշխատէր իր բաց պատուհանին մօտ՝ որ կիսովին կը ծածկուէր վարդանուշ որուներու, նարնջագոյն կտտիմներու, կապոյտ ու սպիտակ բաղեղներու դադարակտ վարագուրով մը. ձմեռը իր փոքրիկ կը բակարանին մէկ անկիւնը՝ իր կանթեղին անուշ լուսին կը հսկէր:

Ռօտուլֆ այս խորհրդածութիւնները կ'ընէր՝ երբ՝ մերենապէս գրան կողմը դառնալով՝ ահագին պարզունակ մը տեսաւ... պարզունակ մ'որ բանտի մը դուռը կրնար շատ աղէկ զարգարել:

Այս սրբողանակը զինքը մտածութեան տարաւ:
Ըստ որում երկու նշանակութիւն՝ երկու տարբեր նպատակ կրնար ունենալ:

Սիրահարներու փէ՛ճ գուռը գոցել...
Սիրահարներու շրայ գուռը գոցել...
Ռօտուլֆ այս մեկնութիւնները չկրցաւ աւարտել, վասն զի Ռիկօլէզ գլուխը դարձուց, զանի տեսաւ և առանց դիմել փոխելու անոր ըսաւ:

— Ա՛յ, դրացիս, դուն հո՞ս ես:
Ապա սիրուն ոտքն իր կարմրագեղ շրջագլետտին լայն ծալքերուն տակ աներեկոյթ եղաւ, և Ռիկօլէզ յարեց. — Ա՛հ, ամեղուկ պարոն...:

— Այս տեղ կեցեր էի... լրիկ միջիկ զմայելով...
— Եւ ի՞նչ բանի վրայ կ'զմայլէիր... դրացիս:
— Այս փոքրիկ սիրուն սենեկին վրայ... վասն զի թագուհի պէս սուն տեղ շտկեր ես, դրացուհիս...:

Իրա՛ւ որ... կը նայի՞ս... այս է իմ ճոխութիւնս... դուրս բնաւ չեմ ելնէր... և այնքան ախորժելի չէ ինձ տունը նստիլ միշտ...:

— Բայց կը զարմնամ կը մնամ... ինչ սիրուն վարագոյներ... հասքս առ դարանակը... որ կահենի չափ աղոր է...
Վարժեմ թէ շատ, շատ ստակ ծախս'ըրած ես այս տեղ:

— Ա՛հ, խօսքը մի բանար... բանտէն ելնելու ատենս չորս հարկը յիսուն ֆրանք պատրաստ դրամ ունէի... ամէն ալ ջրի պէս դնաց...:

— Բա՛նտէն ելնելու ատենդ... դո՞ւ...
— Այո՛, ե՛ս... երկար է այս պատմութիւնը: Չես կարծեր անշուշտ, այնպէս չէ՞, որ դէշութիւն մ'ընելուս բանտը մտած ըլլամ:

— Անշուշտ... բայց ինչպէ՞ս:
— Բօլէրակէն ետքը միս մինակ անտէր գոսայ ինքզինքս... կարծեմ թէ այն ատեն տաս տարու էի...:

— Բայց մինչև այն ժամանակն ո՞վ ինսամեր էր քեզ:
— Ո՛հ, քանի մ'ընաիր մարդիկներ... սակայն քօլէրակէն մեռան... (նոյն պահուն Ռիկօլէզին սև ու խոշոր աչքը լեցուեցան):

Անոնց ունեցած քանի մը կտոր բաներ ծախու տուին քանի մը մանր պարտքեր հատուցանելու համար և մարդ մը չեղաւ որ զիս որդեգիր ընէ, ճարս հասնելուն՝ մեր տան զիմացը գտնուող պահարկի վնասներուն զացի և սրահայանին ըսի:— Պարոն զինուոր, ծնողքս մեռան, հիմա ո՛ր երթամ չգիտեմ, ի՞նչ պէտք է ընել:— Այս խօսքին վրայ զըսաւորնին եկաւ, զիս ոստիկանին զըկեց, ոստիկանն ալ բանտ գնել տուաւ զիս իբր գատարկաշրջիկ և ասան վեց տարեկան էի երբ բանտէն ելայ:

— Հասցա ծնողքդ:

— Չգիտեմ թէ հայրս ո՞վ էր, վեց տարու էի երբ մայրս կորուսի, որ զիս պիտակարանէն (Enfants-Trouvés) հաներ էր վասն զի ստիպուեալ էր առաջ այն տեղ ձգելու զիս: Այն իմ արդէն ակնարկած բարեհալ մարդիկ մեր տունը կը բնակէին. զաւակ չունէին, զիս որբ տեսնելով իրենց քովն առին:

— Եւ ի՞նչ վիճակ, ի՞նչ արհեստ ունէին:

— Քրէզիւ պապան, ասանկ կ'անուանէին զինքը, տուներու նկարիչ էր, իսկ կինը կար կարող էր...:

— Գոնէ ունեւոր էին այս բանւորները:

— Ինչպէս ամէն տունուոր. երբ տունուոր կըսեմ, մի կարծեր թէ կարողած էին, թէև զիրար էրիկ կ'իկի կ'անուանէին: Երբեմն ունեւոր, երբեմն չունեւոր էին. այսօր սուստութեան մէջ կ'ապրէին, եթէ գործ ըլլար, վաղը կարօտութեան՝ եթէ գործ պակսէր, բայց դարձեալ այր ու կին միշտ գոհ և զուարթ էին. (այս յիշատակին Ռիկօլէդին գեմբը կայտառ երևոյթ մը կ'առնուր: Թաղին մէջ չկար անոր պէս ընտանիք մը, միշտ շէն, միշտ երգեցիկ. ասիկէ զատ չտեսնուած բարի մարդիկ. ինչ որ ունէին ուրիշներուն հետ կը բաժնէին: Քրէզիւ մաման խնտուներս զիրուկ կ'ին մ'էր՝ երսուն տարեկան, կատուի պէս մաքուր, ասեղև պէս աշխոյժ, սարեկ կի պէս զուարթ: Իր էրիկն ալ նոր Ռօժէր-Պօնդան մ'էր, մեծ քիթ, մեծ բերան մ'ունէր, միշտ իր թղթէ խոյրը գըլխին վրայ, և անանկ ծաղրաշարժ, անանկ ծաղրաշարժ երես մ'որ տեսնողը չէր կրնար խնայուքը բռնել: Երբ անգամ մ'աշխատանքէն ետքը տուն

գառնար անդադար կ'երգէր, երեսը գեմբը կը ծռմուկէր և տղու մը պէս կը ցատկոտէր՝ ինձ պարել կտար, ծնկերուն վրայ կ'առաստաէր և իմ տարեկցին պէս հետս կը խաղար. իսկ իր կ'ինն ալ ինձ երես կտար, ո՛հ, ի՞նչ երանելի օրեր էին: Երիկ կ'իկի կը պահանջէին որ շէն ու խնտում ըլլամ, գոհութիւն Աստուծոյ հետ չէի մնարանոնց կամբը կը կատարէի: Անոնք Ռիկօլէդ անուամբ կ'ընեցին զիս և այս անունս մնաց ինձի: Չուարթութեան կողմէ՛ անոնք ինձ օրինակ կտային. Երբէք երբէք տխուր չեմ տեսեր զանոնք: Եթէ զերար յանդիմանէին կ'ինն իր էրիկն կըսէր:— Բան մ'ըսեմ, Քրէզու, համը հոսը փակցուցիր, շատ կը խնայես զիս:— Եւ կամ էրիկը կ'նկարը կըսէր:— Լուր կեցիր, նայիմ, Ռամօնէք (չգիտեմ թէ ինչո՞ւ համար Ռամօնէք կը կանչէր զանի) լուր սիրտս կը խաղցնես, շատ ծաղրելի ես...— Ես ալ անոնց ինտալը տեսնելով կը խնայի...: Ահա այս կերպով կ'ըսուեցայ և այսպէս բնութիւնս շտկեցի...: Յուսամ որ օգուտ քաղեցի:

— Սքանչելի՛ կերպով, գրացուհիս...: Այսպէս կուի ու վէջ չկար անոնց մէջ:

— Բնա՛ւ, բայց ամենեւին... Սիրակի, երկուշարթի, երբեմն ալ երեքշարթի ինչպէս որ իրենք կըսէին, հարկին կ'ընէին և զիս ալ միշտ իրենց հետ կ'առնուին կը տանէին...: Քրէզիւ պապան շատ քաջ բանւոր մ'էր, երբ աշխատիլ ուզէր, միտքը գրածը կը շահէր, նոյնպէս իր կ'ինը: Եթէ կ'իրակին ու երկուշարթի աղէկ անցնելու միջոցներն ունենային, և միւս օրերը քիչ շատ ապրուէին, շատ գոհ կը լլային: Անկից ետքը թէ որ գատարկ ալ մնային, դարձեալ գոհ էին...: Աղէկ կը յիշեմ որ երբ հայ ու ջուր միայն գտնուէր տունը Քրէզիւ պապան իր գրքատունէն զիրք մը...:

— Ի՞նչ, գրքատուն ալ ունէր:

— Այսպէս կ'անուանէր պզտի սնտուկ մ'որուն մէջ կը նետէր նոր ելած երգերուն ժողովածոյն...: Ծախու կ'առնուր և ամէնն ալ գոց դիտէր...: Ուստի երբ միանկ չորս հաց ունենայինք իր գրքատունէն խոհակերական հին գիրք մը կ'առնուր և մեզի կըսէր: «Նայինք այսօր ի՞նչ պիտի ուտենք, Այս՛, այն՛...»: Եւ մեզ

շատ մ'աղւոր կերակուրներու անունները կը կարգար, ամէն մէկն իր ուզած սնակը կ'ընտրէր. Գրէգիւ պապան պարասպ սան մը կ'առնուր և ծաղրաշարժ երեսներով ու միմտասական կատակներով աղւոր համարամ մ'եփելու համար պէտք եղածը սանին մէջ զնելու պէս կը նէր, և վերջն ալ խօսքով եփած կերակուրը սկաւառակի մէջ էրը թէ կը լեցնէր, թէ և սկաւառակը պարասպ էր, և սեղանին վրայ կը դնէր՝ միշտ այնպիսի ծաղրածու կերպով մ'որ խնտալէն կը ճայթէինը. ապա նորէն զիրքը ձեռքը կ'առնուր և կարդալու ատենը, թէ ինչ պէս օրինակի համար, մեր հաճած ընտիր հաւ մը կը խորովեն, այնպէս որ մեր բերնին ջրերը կը վաղէր... չոր հացերնիս կուտէինք... իր ընթերցումին հետ, խեւի պէս խնտալով:

— Միթէ Գրէգիւ պապան պարտքի տա՞լի էր:
 — Ամենեին... երբ ստակ ունենար, կը ածնէր, երբ չունենար նկարագրողէն կը ճաշէր, ինչպէս կըսէր Գրէտիւ պապան իր արհեստին ոճով:

— Եւ սպաղացին վրայ միթէ չէ՞ր մտածեր:
 — Ա՛հ, անշուշտ, մեզի համար սպաղան կիրակի և երկուշաբթի օրերն էին, ամառը քաղքին շրջախաները կ'անցնէինք, ձեռքը արուարձանին մէջ:

— Քանի որ սոյն բարի մարդիկն իրարու այսչափ յարմար էին, և ստէպ հարկէն կընէին... ինչո՞ւ համար ուրեմն չէին կարդուեր:
 — Այդ հարցումէ օր մ'իւրեց բարեկամներէն մէկն ալ իմ առջևս ըրաւ...:
 — Լա՛ւ ուրեմն...:

— Պատասխան տուին: « Թէ որ օրին մէկը զուակներ ունենանք, այն ատեն կը կարդուինք... բայց առ այժմ՝ այսպէս ապրիլ աւելի յարմար կը գտնենք... Ծախուց դուռ մ'է ամուսնութիւնը և աւելորդ ստակ չունինք...: Բայց կը տեսնե՞ս— վրայ բերաւ Ռիկօլէզ— ինչ լեզու կը կարեմ...: Իրաւ է որ երբ այս միամիտ մարդերուն խօսքը բացուի, որ ինձի մեծ բարիք ըրած են, ամէն բան կը մոռնամ և Երկար բարակ անոնց վրայ կը շողակրատեմ...: Հիմակ ինձ նայէ գրացիս, շնորհ ըրէ անկողնիս վրայէն շալս առնե-

լու և սա խոշոր ասեղով շապկիս օձիբին կցելու, որ շուտ մը վար իջնենք, վասն զի Գանբէն այն խեղճ Մօրէլենց համար ծախու առնելիքը ընտրելու համար ժամանակ պէտք է:

Ռօտուլֆ փութաց Ռիկօլէզին հրամանին հնազանդիլ. անկողնին վրայէն դորշագոյն և « րաշէր » (raie ponceau) շալ մ'առաւ և Ռիկօլէզին չքնաղ ուսերուն վրայ ուշի ուշով դրաւ:

— Հիմակ, դրացիս, վիզնոցս քիչ մը վեր հանէ, շրջադիստը ու շալն մէկտեղ աղէկ մը կըսէ՞նք, ասեղը խօթէ և մանաւանդ ուշ դիր որ զիս չիծես:

Իշխանն կատարեց այս հրամանները ճշտապէս և սըճնուհիլն ըսաւ ժպտելով.

— Օրիորդ Ռիկօլէզ, քու սենեկապանուհիդ չեմ ուզեր ըլլալ... շատ վտանգաւոր բան է...:

— Ինձի համար վտանգաւոր է, որովհետեւ կընայ ըլլալ որ զիս կիծես— վրայ բերաւ Ռիկօլէզ զուարթօրէն...:

— Հիմակ— յարեց նա դուրս ելնելով ու դուռը դոցելով— բանալիս առ... այնչափ խոշոր է որ կը վախնամ թէ դրպանս կը պատուէ...: Ճշմարիտ հրացանակ մ'է:

Եւ նորէն ծիծաղիլ սկսաւ:

Ռօտուլֆ ձեռքն առաւ այն ահաղին բանալի՝ բանալին մ'որ կըրնար շքով երևիլ այլաբանական սնակներուն մէկուն մէջ որ քաղքի մը յաղթողներու կ'ընծայուի խոնարհաբար յաղթուողներու կողմէն: Թէ և Ռօտուլֆ կ'զգար որ տարիներն իր կերպարանը փոխած ըլլալով Բօլիտորիէն չճանչցուիր, սակայն այս խաբեբային դրան առջևէն չանցած՝ իր թիկնոցին օձիկը վեր վերցուց:

— Դրացի, չմոռնաս Պ. Բիբլէի ըսելու որ զրկելիք կարասիք սենեակիդ հանել տայ— ըսաւ Ռիկօլէզ:

— Աղէկ ըսիր, դրացուհիս. պահ մը դռնապանին օթեակը մանենք:

Պ. Բիբլէ իր մշտնջենական լայն բերան փեղոյրը գլուխը դրած ըստ սովորականին՝ իր կանաչ զրեատը հաղեր ու ծանրաբար նստեր էր սեղանի մ'առջև՝ որուն վրայ անթիւ կաշիի կտորներ և մուճակ-

ներու բեկորներ կային, նոյն պահուն կօշիկ մը ներքանը նորոգելու կը պարապէր՝ իրեն յատուկ ծանր և խղճահար կերպերովը։ Անաստաղի օթեակէն բացակայ կը դատուէր։

— Ի՞նչ կընես, պարոն Բիբլէ—ըսաւ անոր Ռիկօլէդ—յուսամ որ նոր լուրերն իմացար... դրացիիս շնորհիւր սա ողորմելի Մօրէլնիք կարօտութենէ աղատեցան...։ Աը ստակամ քանի կը մըսածեմ որ թշուառ գործաւորը բանա պիտի նետէին...։ Ո՛հ, սա առևտրական ատենանին թեղակալներն իրաւօր անսիրտ մարդեր են։

— Եւ անձար (sans-moeurs)... օրիորդ—յարեց Պ. Բիբլէ զայրալիը ձայնով մը, մինչդեռ հղովակի կը շարժէր նորոգած կօշիկովը որուն մէջ խօթեր էր իր ձեռքն ու ձախ թևը։— Ո՛հ, Աստուծոյ և մարդերու առջև չպիտի միտնամ ըսելու որ անձար, անբարոյական մարդիկ են. սանդղին մթութենէ օգուտ քաղելով յանդգներ են իրենց կոշա ձեռքն իմ կողակցիս մէջքին տանելու...։ Իմ կնիկանս անարդեալ համեստութեան ձայները լսելով իմ աշխոյժ բնաւորութեանս թափը չկրցայ զսպել... և ի՞նչ մեղքս պահեմ, իմ առաջին շարժումս եղաւ՝ անշարժ կենալ...։

— Եւ յուսամ որ անկից ետքը անոնց ետևէն վազեցիր, պարոն Բիբլէ—վրայ բերաւ Ռիկօլէդ որ իր խնտուքը հաղիւ թէ կարող էր բռնել։

— Այսինքն, օրիորդ, երբ այն անառակներն օթեկիս առջևէն անցան, արինս զլսիս զարկաւ և խկոյն ձեռքս... աչքերուս տարի որպէս զի այն պակշտ անզղամներուն երեսը չտեսնեմ։ Բայց չեմ զարմանար այս դէպքին վրայ, այսօր փորձանք մը պիտի դարդլուս... վասն զի հրէշադէմ Գապրիօնն երազ տեսեր էի։

Ռիկօլէդ ժպիտ մ'ըբաւ, և Պ. Բիբլէի հառաչներուն ձայնը խառնուեցաւ կռանին կոփիւններուն, որով կը կոփէր իր հին կօշիկը։

— Իմաստօրէն խնաստունի պէս վարուեր ես, իմ սիրելի պարոն Բիբլէ, այս է, արհամարհել նախատինք մը։ Եկուր մոռցիր այն անօրէն թեղակալները, և խնդրեմ բարեհաճէ ինձ ծառայութիւն մ'ընելու։

— Մարդս իր նմանին օգնելու համար ծնած է—պատասխանեց Պ. Բիբլէ վճռական և տխուր ձայնով մը.— մանաւանդ երբ խնդրարկուն քեզի պէս բարի վարձկալ մ'է։

— Պիտի խնդրեմ որ վերն իմ սենեակս դնել տաս պահակէ մը զրկելիք բաներս...։ Այն բաները Մօրէլնից պիտի տրուին։

— Անհոգ եղիւր, պարոն, պէտք եղած հսկողութիւնը կընեմ։

— Ասկէ դատ—վրայ բերաւ Ռօտոլֆ արամաղին—քահանայ մը ալ բերել պէտք է որ այս դիշեր մեւնող փոքրիկ օրիորդին վրայ հակէ, նոյնպէս պէտքէ անոր մահը իմաց տալ և վայելուչ պաշտօնի և յուղարկաւորութեան մը պատրաստութիւնը տեսնել...։ Ահա քեզի ստակ... բան մը մի՛ խնայեր, Մօրէլի բարեբարն որուն գործակալն եմ միայն, կը պահանջէ որ ամէն բան օրինաւոր կերպով կատարուի...։

— Հանդարտ եղիւր, պարոն—ըսաւ Պ. Բիբլէ—կողակիցս դատնալուն պէս քաղաքապետարանն, եկեղեցին և ճաշավաճառին պիտի երթամ... եկեղեցին՝ մեռելին համար... ճաշավաճառին կենդանիներուն համար—յարեց փիլիսոփայօրէն և բանահիւսօրէն Պ. Բիբլէն։— Սեպէ թէ ամէն բան լմնցած է, պարոն, լմնցած է...։

Ռօտոլֆ և Ռիկօլէդ դաւթի գուռն որ երան Անաստաղին հետ դէմ առ դէմ եկան, որ շուկայէն կը դառնար պաշարով լի ծանր գամբիւղ մը ձեռքը։

— Աղէ՛կ, շա՛տ աղէկ—դոչեց դռնապանուհին խաբուսիկ և նշանակելի դէմքով մը դրացին և դրացուհին նայելով—ա՛հ, արդէն թե թեխի տուեր էք... շատ յարմար էք, իրաւ որ... եփեցէք... եփեցէք։ Ա՛յ... պէտք է որ ձեր ծաղիկ հասակը ուրախ զուաթ անցնէք... սիրուն աղջկան՝ դեղեցիկ պատանի մը... կեցցէ՛ սէրը... և օն առաջ, քա՛... քա՛... քա՛ շեցէք...— Ապա պառաւը անհետ եղաւ ուղիին խորը պոռալով։— Այժմե՛տ, իմ սիրական ծերուկս, սիրող մի՛ հասցնէր, ահա Ստաղիլ եկաւ և քեզի... իմ լոգի մարդս, անուշ... նէնէ (nanan) բերաւ...։

Ռօտոլֆ թևը Ռիկօլէդին տալով՝ Գամբլ փողոցի տունէն դուրս ելաւ։

ԳՆՈՒՄ Է.

ՊԱՆԻՆ

ՊԻՇԵՐՈՒԱՆ ձիւնին պաղուկ հով մը յաջորդեր էր, փոքրցին սալարկը՝ սովորաբար աղմուս՝ դրեթէ չոր էր: Ռիկօլէդ և Ռօտովֆ դէպ ՚ի այն պարբեր գիմեցին որ դաճէլ կը կոչուի: Ետևառի օրիորդն իր ընկերին թեկն կը կոթներ աներկիւղ և այնպիսի ընտել կերպով մ'որ կարծես թէ ՚ի վաղուց մտերմութիւն ունէին:

- Սա տիկին Բիբլէն իր դիտողութիւններովը ծիծաղաշարժ չէս գտներ—ըսաւ պճնուհին Ռօտովֆին:
- Իրաւի դրացուհիս, կարծեմ թէ իրաւունք ունի...:
- Ի՞նչ բանի մէջ, դրացիս:
- Ըսաւ թէ՛ Ժողովի հասանք պէտք է ստանալ զանցնէր...:
- Լա՛ւ, ի՞նչ ըսել ուզեց:
- Ես ալ անոր կարծիքն ունիմ:
- Ինչպէ՞ս:
- Իմ ծաղիկ հասակս քեզի հետ անցնել կը փափաքիմ... և գոչել. Կիցցէ՛ սերը:
- Կը նայիմ որ... բծախնդիր չես:
- Ի՞նչ վնաս ունի... միթէ դրացի չե՞նք:
- Եթէ դրացի չըլայինք, այսպէս քեզի հետ դուրս չէի ելներ...:
- Ռերեմն ըսել կուզես որ յուսամ:
- Ի՞նչ յուսաս:
- Որ պիտի սիրես զիս:
- Արդէն քեզ կը սիրեմ:
- Իրա՛ւ կըսես:
- Ի՞նչ կայ չհաւատարու. բարի ես, զուարթ ես. թէև դու ալ աղբամ՝ բայց ձեռքէդ եկածը կընես սա խեղճ Մօրէլենց՝ հարուստ անձերու կարեկցութիւնը հայցելով անոնց համար. կերպար

րան մ'ունիս որ շատ ախորժելի է ինձ, նոյնպէս սիրուն ձև մ'ըմբիշտ իմ աչքիս հաճելի է և դուռեւնի, ինձ որ թեկն տուեր եմ և շատ անգամ ալ պիտի տամ: Բաւական չե՞ն այս պատճառները քեզ սիրեւը համար:

Յետոյ Ռիկօլէդ խօսքը կիսկատար թողուլ՝ որ քահ՛ քահ խնայոյ, զոչեց:

- Նայէ՛, նայէ՛, սա խոշոր կիներն իր մշտակապատ հին մուճակներովը. կարծես թէ երկու անպոչ կատուներ կը քաշեն զինքը:
- Եւ նորէն քահ քահ ձգեց:
- Աւելի աղէկ ունիմ քեզ նայիլ, դրացուհիս. քանի մտածեմ՝ որ արդէն կը սիրես զիս երջանիկ եմ:
- Քեզ սիրաս բայց, որովհետև կը սիրեմ քեզ...: Եթէ չհաւանէի քեզ, դարձեալ բայց ՚ի բայ պիտի ըսէի...: Ինչո՞ւ համարաւ է, մէկը չկրնար ըսել թէ մարդ խաբեր, կամ իբր նաղանջ (coquette) վարուեր իմ. երբ անձ մը հաւանիմ, շուտ մը երեսին կըսեմ...:
- Յետոյ՝ նորէն խօսքը կտրելով՝ որպէս զի դրսպակի մ'ատջև կանկ առնու, պճնուհին զոչեց:
- Ո՛հ, նայէ անգամ մը սա սիրուն ճօճանակն և երկու աղւոք ամանները: Թէև երեք ֆրանք ու տասը սու խնայեր էի և իմ գանձանակիս մէջ կը պահէի ասոնց նման բաներ դնելու: Հինգ վեց տարիէն թերևս կարենամ փափաքիս հասնիլ:
- Իննայութիւն ալ կընես ուրեմն, դրացուհիս, ըսել է թէ կը վաստկիս...:
- Օրը դոնէ երսուն սու. երբեմն քատսուն. բայց մինակ երսուն սուի վրայ կը հաշուեմ, և ըստ այնմ իմ ծախքս կընեմ— ըսաւ Ռիկօլէդ այնպիսի ծանր կերպով մ'որ կարծես թէ դրամահան մեծակշիւ հաշուեկշուի մը վրայ կը խօսի:
- Բայց օրը երսուն սուով... ինչպէ՞ս կ'ապրիս:
- Հաշիւս երկար չէ... կուզե՞ս որ բացատրեմ, դրացիս: Շուտը լին մէկը կ'երեւիս ինձ, կընաս ինչե՛ օրինակ առնու:
- Նայինք հաշիւդ, դրացուհիս...:

— Իմ օրական երսուեն սուս ամիսը քառսուն հինգ ֆրանք կրնէ՛ այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Այս գումարէն տասն երկու ֆրանք տանս վարձ և քսան երեք ֆրանք կերակուրի կ'սպասեմ :

— Քսան երեք ֆրանք կերակուրի՛ :

— Տէր ողորմեա՛, հարկա՛ւ, այդչափ միայն : Խոստովանէ՛ որ ինձի պէս արտոյտի մը համար . . . շատ մեծ բան մ'է՛ այդ գումարը . . . : Բայց արի տես որ մէկ բանս պակաս չեմ ըներ :

— Կը տեսնե՛ս, սա պղտի որկրամոյլը . . . :

— Ա՛հ, բայց այն գումարին մէջ կը հաշուեմ նաև իր թռչնիկներու սնունդը . . . :

— Իրաւ է որ եթէ ա՛նով երեքնիգ կը կերակրիք, ծախսը այնչափ չափազանց չէ : Բայց օրականիդ հաշիւը մանր տուր ինձ . . . անշուշտ իմ օգտին համար :

— Աղէկ մտիկ ըրէ՛, մէկ լիպրէ հաց, չորս սու է, երկու սուի ալ կաթ՝ կրնէ՛ վեց սու, չորս սու ընդէդէն ձմեռը, կամ պտուղ և աղցան ամառը, կը խենամ աղցանի վրայ, վասն զի, ընդեղէնին պէս պատրաստելը մաքուր է, ձեռներս չաղտոտիր, ուրեմն ասով գումարըն եղաւ տաս սու, երեք սուի կողի կամ եղ, և համեմի համար քայտիս, եղաւ տասն երեք. երկու գոյլ յստակ ու ընտիր ջուր, ո՛հ, այս ալ իմ ճոխութիւնս է, տասն հինգ սուն արդէն դնաց, այնպէս չէ՞ . . . : Ասոնց աւելցուր նաև շարաթը սնդամ՝ մ'երկու երեք սուի կորեկս և հալեորիկս (mouron) թռչնիկներս կերակրելու համար, որ սովորաբար կաթով հացի միջուկ կուտեն, և հետևապէս ամիսը քսան երկու քսան երեք ֆրանքի կը հասնի ծախսս, ոչ աւելի ոչ պակաս :

— Եւ միթէ միս չե՛ս ուտեր բնաւ . . . :

— Մի՛ս, է՛հ . . . բան գործ չունի՛ս . . . մտին լիպրէն տաս տասն երկու սու է, միթէ կարելի է՞ ուտել : Ասկէ զատ՝ ձեռնձ կը հոտի պտուկը, իսկ ասոր ներհակ, կաթը, բանջարեղէնը, պտուղները շուտ մը պատրաստ կը դտնեմ . . . : Ճշմարտը, կերակուր մը

կայ զոր կը պաշտեմ, դիւրին է պատրաստելը և եթէ եփեմ մատեն ըրդ հեաղ կուտես . . . :

— Ի՞նչ կերակուր է այն :

— Կրակարանիս փուռին մէջ արուր ու դեղնուկ գետնախնձորներ կը դնեմ. երբ եփին, քիչ մը կաթով կը ճըմեմ . . . վրան հունիկ մը (pincée) աղ կը ցանեմ . . . և դից արժանի ուտելիք մը կը դառնայ . . . : Եթէ խելօք նստիս, քեզի սնկից պիտի ճաշակել տամ . . . :

— Սիրուն ձեռներովդ եփածդ՝ անշուշտ ընտիր բան մը պիտի ըլլայ : Բայց մեր խօսքին դանք, հիմակ համբերք դրացուհիս . . . : Արդէն ուտեստի համար քսան երեք ֆրանք ունիմք, վարձի համար ասան երկու ֆրանք, որով կըլլայ ամիսը երսուեն հինգ ֆրանք . . . :

— Քառսուն հինգ, յիսուն ֆրանքի երթալու համար, որ վաստկածս է, տաս, տասն հինգ ֆրանք կը մնայ՝ ձմերուան փայտիս և եղև համար, ուտելիքիս և լաթ լուացքի համար . . . այսինքն քրն սապոնիս, վասն զի, սաւաններէս զատ՝ իմ լաթերս ես կը լուամ . . . այս ալ իմ ճոխութիւնս է . . . լաթ լուացող և հարթող կին մը տուն փրէչ բան մ'է . . . ես ինքս ճերմակեղէնս կը հարթեմ (repasser) և իմ գործս ձեռքով կը տեսնեմ . . . : Չըմերային հինգ ամիսուան մէջ մէկ սայլակ (une voie de bois) փայտ կայրեմ . . . և կանթեղիս համար չորս հինգ սուի եղ կը սպառեմ . . . ըսել է թէ տարին փայտիս և եղիս համար գրեթէ ութսուն ֆրանք ծախս ունիմ :

— Այնպէս որ ասըրուստիդ համար շատ շատ հարիւր ֆրանք կը մնայ քեզ :

— Այո՛, և ահա այդ գումարէն խնայեք էի իմ երեք ֆրանք ու տաս սու :

— Հարգա շրջազգեստներդ, այս օրիկներդ սիրուն դտամիդ :

— Մի՛նակ երբ գուրս ելնեմ՝ դտակ կը դնեմ և այս կողմէն մեծ ծախս չունիմ, որովհետև ես անձամբ կը շինեմ, իսկ տասն մէջ մնայլերս բուսական կը սեպեմ . . . : Իսկ շրջազգեստի և կօշիկ դա-

լով... միթէ Գանբլի պազարը իր տեղը չէ՞:

— Ա՛հ, մոռցայ... այն երանելի Գանբլը... լա՛ւ, ի՛նչ կ'առնուս անկից... :

— Ընտիր և խիտ սիրուն շրջազգեսաներ: Մտածէ անդամ մ'որ մեծամեծներուն սիկինները սովորութիւն ունին սենեկասպայ կիներուն տալ իրենց հին զգեսաները...: Հին ըսելովս... իմացիր որ մէկ կամ երկու ամիս հազած են կառքի մէջ... իսկ սպասուհիներն ալ կ'առնուն զանոնք ու Գանբլ կը տանին ծախելու... ոչ ինչ գնով մը...: Այսպէս, նայէ՛... սա իմ խիտ կորնթոսի խաղողի գոյն աղւոր մերինսէ շրջազգեստս տասն հինգ ֆրանք առած եմ. կարելի է վաթսուն է բուն գինը և հազիւ քանի մը հեզ հազուած է, իմ հասակիս յարմարոցի... և յուսամ որ վայլ կտայ ինձ :

— Գու փայլ կտաս անոր, դրացուհիս...: Բայց քանի որ Գանբլի գանձը կայ՝ քիչ քիչ կը հաւտամ որ տարին հարիւր ֆրանքով կընաս ապրիլ:

— Հարկա՛ւ, այն տեղ կը գտնուին հինգ վեց ֆրանքնոց ամառուան չքնաղ շրջազգեստներ, հազած իս պէս Բեբլօշիկներ, զրեթէ նոր, երկու երեք ֆրանքի. նայէ՛, կարծես թէ իմ ոտքիս համար շինուած են. — ըսաւ Ռիկօլէդ, որ կեցաւ ու իր սիրուն օտնին ծայրը պցուց և արդարեւ շատ աղւոր աղուցեր էր:

— Ատքդ չքնաղ է, իրաւ. բայց անոր յարմար կոշիկ մ'անշուշտ հեշտիւ չես կարող գտնել...: Ասկէ՛ զատ պիտի ըսես նաև որ Գանբլի մէջ տղու ոտքի ամաններ ալ կ'ծախեն:

— Գու շողքորդ մ'ես, դրացիս. բայց խոստովանէ որ փոքրիկ մինակուկ աղջիկ մը՝ որ իր գործը գիտէ՛, որ ՚ի հարկին օրը երսուն սուռով ապրիլ: Այտք է նաև ըսել որ բանտէն բերած չորս հարիւր յիսուն ֆրանքս մեծապէս օգնեցին ինձ տուն տեղ շտկելու համար...: Երբ անդամ մը տեսան զիս ըր շէնքով շորհքով Գու Էդէր Ե՛, վատհոթիւն ունեցան վրաս և տանս մէջ աշխատելու կար սուին ինձ. բայց գտնելէն առաջ՝ հարկ եղաւ երկայն ժամանակ սպասելու, բարեբաղդարար երեք ամիսուան ապրուստի համար

պէտք եղածը պահեր էի, յոյսս իմ աշխատանքիս վրայ չգնելով:

— Արդեօք գիտե՛ս, դրացուհիս, որ թէև անխորհուրդ կերպեր՝ այլ շատ կարգ ու կանոն ունիս:

— Անշուշտ. երբ աղջիկ մ'աշխարհիս վրայ մարդ չունի և ուրիշի չուզեր սարսաւոր մնալ, պէտք է որ ինքն իր գլխին ճարը նայի, իր բոյնը շինէ, ինչպէս որ կըսեն:

— Եւ քու բոյնդ հիանալի է:

— Այնպէս չէ՞. և իրօք պակաս մը չունիմ. իմ վիճակէս վեր իսկ վարձ կտամ. թուչուններ ունիմ, ամառը վառարանիս վրայ գոնէ երկու ծաղկալիւր թաղար կը գտնուի, բայց ՚ի պատուհանիս մէջի ածուներն և վանդակիս սնտուկը. և սակայն, ինչպէս որ արդէն ըսի, գանձանակիս մէջ երեք ֆրանք ու սոսս սու ունէի, որպէս զի վառարանիս վրայ գնելու զարդ մը ձեռք ձգեմ:

— Եւ ո՛ւր գացին այն խնայած դրամներդ:

— Տէ՛ր Աստուած, այս վերջին ատեններս ողորմելի Մօրէլի ընտանիքն այնքան թշուառ, այնքան թշուառ տեսայ որ ըսի իւրօրվի. Խեղք չէ երեք հատ անբան ֆրանքներ ունենալ գանձանակի մը մէջ, որ օգուտ մը չունին, երբ քու քովդ կան այնպիսի սարկելտ մարդիկ որ անօթութենէ կը մեռնին... ուստի այն երեք ֆրանքս Մօրէլից փոխ սուի: Փոխ սուի կըսեմ... որ իրենց պզտիկութիւն մը չըլլայ, ինչու որ սրտովին կը բաշխէի գումարը:

— Ար լսե՛ս, դրացուհիս, քանի որ հիմակ հանդիստ պիտի դրտնեն, անշուշտ ստակդ պիտի հատուցանեն:

— Իրաւ է, ես ալ չեմ մերժեր... միշտ սկիզբ մ'է վառարանիս կահը գնելու... այս իմ միտակ երազս է:

— Ասկէ զատ պէտք է քիչ մ'ալ ապագայիդ վրայ մտածել:

— Ապագայինս:

— Եթէ հիւանդ ըլլաս, օրինակի համար...:

— Ե՛ս... հիւանդ:

Եւ Ռիկօլէդ նորէն մեծաձայն ծիծաղել սկսաւ:

Այնչափ մեծաձայն որ առջևէն քալող և թևին տակ շուն մը

կրող խոշոր մարդ մը՝ բոլորովին սպառնալից՝ զլուխը դարձուց՝ կտրած ելով որ իր վրայ կը խնայ :

Ռիկիօլէք՝ ծանր դէմք մը դասելով՝ կէս խոնարհութիւն մ'ըբառ խոշոր մարդուն, թեկն տակի շունը ցոյց տալով :

— Բերեմն Ազօրդ յորնա՞ծ է :

Խոշոր մարդն իր ճամբան շարունակեց մըմուտով :

— Խե՛ւ ես, ի՞նչ ես, գրացուհիս. — ըսաւ Ռօտոլֆ :

— Յանցանքը քո՛ւկդ է . . . :

— Ի՞նչ է :

— Այո՛, քո՛ւկդ, խեղդ ու խելատ բաներ կըսես ինձ . . . :

— Խեղդութիւն է ըսել թէ կարելի է հիւանդ ըլլաս :

— Ե՛ս, հիւանդ :

Եւ նորէն սկսաւ խնայալ :

— Եւ ինչո՞ւ կը վարմանաս :

— Միթէ հիւանդանալու դէմք ունի՞մ :

— Երբէք դէմքիդ պէս վարդագոյն ու թարմաւէտ երես տեսած չունի՞մ :

— Լա՛ւ ուրեմն . . . ինչո՞ւ համար կուզես որ հիւանդ ըլլամ :

— Ի՞նչ :

— Տասն ութ տարեկան հասակիս մէջ, այս իմ վարած կեանքովս . . . միթէ այդ կարելի՞ բան է . . . : Ամառ ձմեռ առտու ժամը հինգին կ'ենեմ, իրկունք՝ տասին կամ տասն մէկին կը պառկիմ՝ կշտանալու շափ կ'ուտեմ, թէև շատակեր չեմ՝ երաւ . պաղ չեմ առնուր, օրն ՚ի բուն կ'աշխատիմ, արտոյտի պէս կ'երգեմ, խլուրդէ պէս կը քնանամ, սիրտս աղաս, զըւարթ ու դո՛հ է, վտտահ եմ սր միշտ գործ պիտի ունենամ, որովհետև ըրած գործէս ամէնքը գո՛հ են . . . : Հիմակ ի՞նչ պատճառաւ կուզես որ հիւանդ ըլլամ . . . : Երաւ որ ծիծաղելի կըլլար հիւանդութիւնս . . . :

Եւ նորէն սկսաւ ծիծաղիլ :

Ռօտոլֆ սոյն օրիորդին սպաղային վրայ ունեցած կոյր ու երանելի վտտահութենէ հիանալով՝ ինք զինքը մեղադրեց զայն սա- ջանելու փորձ փորձելուն . . . : Ար խորհէր նա ահարեկ որ միամենայ

հիւանդութիւն մը կրնար կործանել այս գեղածիծաղ և անդորրաւէտ կեանքը : Ռիկիօլէքին այս խորին հաւատն իր արիութեան և տասն ութնամեայ հասակին վրայ . . . իր մինակ ստացուածքը . . . Ռօտոլֆին ակնածելի և նուիրական կ'երևէր . . . : Նորտի օրիորդին կողմէն այս բանս . . . անհողութեան, անհեռատեսութեան արդիւնք չէր, այլ երկնային արդարութեան վրայ ընդաբոյս յոյս ու հաւատ մ'էր, որ անշուշտ երեսի վրայ չէր թողուր պարկեշտ . . . ժիր և բարեսիրտ էակ մը, խեղճ օրիորդ մ'որուն միակ յանցանքն էր Աստուծմէ ընդունած երիտասարդութեան և առողջութեանը ասպաւինիլ . . . : Երբ ըոր դարնան երկնից թռչունները՝ հողաթե կուարթուն, ու երդեցիկ՝ վարդագոյն առուցաներու վրայէն ահն ՚ի սահ կը քսուին կ'անցնին, կամ եղի ու կապոյտ օդին մէջ կը սրանան . . . միթէ փոթորկալի ձմեռուան համար հող կընե՞ն :

— Այսպէս ուրեմն — ըսաւ Ռօտոլֆ պճնուհիւն — բանի մը չես տեսար :

— Եւ ոչ բանի մը :

— Ամենեկ՞ն :

— Ո՛չ ինչ . . . այսինքն . . . կեցի՛ր . . . վառարանիս զարդ . . . և զայն պիտի ստանամ անշուշտ . . . չդիտեմ երբ . . . Բայց միաքս դրի որ առնում . . . և պիտի առնում . . . գիշերային ժամերէս պիտի գողնամ . . . :

— Եւ այն կահէն զատ, ոչ ի՞նչ :

— Ուրիշ տեղ մը չունիմ . . . միմակ այս օրէն սկսեալ . . . :

— Եւ ինչո՞ւ համար . . . :

— Ասան զի առջի օր ինձ հաճելի դրացիի մը կը տեսչայի որ պէս զի, ինչպէս որ իմ սովորութիւնս է . . . հետը տեսնուիմ, անոր մանր մունր ծառայութիւններ ընեմ և փոխարէնը ստանամ :

— Արդէն համամիտ ենք այդ մասին, գրացուհիս . . . դու իմ լաթեղէնս պիտի հողաս և ես քու սենեակդ պիտի սրբեմ . . . աս կէ զատ առտու կանուխ պիտի արթնցնես զիս . . . իմ միջնորմիս զարնելով . . . :

— Եւ կը կարծես թէ այդ չափով պիտի ազատիս :

— Աւրիշ ի՞նչ կայ՞

— Լա՛ւ, դեռ շատ բան կայ : Միթէ կիրակի օրեր քաղաքին չըջակաները կամ պալատները պէտք չէ որ տանիս զիս . . . : Մինակ կիրակի օր հանդիստ ունիմ . . . :

— Շատ աղէկ, ամառն ալ զիւզ կերթանք :

— Չէ՛, դեղը կատեմ, մինակ Բարիզ կը սիրեմ . . . : Սակայն աստե՛ն մը, մարդախարութեան համար, Մէօսոն և Սէն-ժէրմէն դաջի զուարճանալու իմ բանտակից ընկերուհիներէս մէկուն հետ, անունն էր լա Կուալէօլ, վասն զի միշտ կերգէր, փոքրիկ բարի աղջիկ մ'էր :

— Ի՞նչ եղաւ այն աղջիկը :

— Չգիտեմ, բանոր վաստկած ստակը կը վատնէր, թէ և բնաւ զբօսնու երես չունէր, միշտ արտում էր, բայց անուշ և դժասէր . . . : Երբ միասին դուրս կենէինք, դեռ գործ չունէի՝ երբ ստաջայ՝ ալ տունէս դուրս չելայ . . . իմ հասցէս տուի անոր, բայց զիս տեսնելու չեկաւ, անշուշտ ի՞նչն ալ իր կողմէ գործի սկսած է . . . : Ըսել կուզեմ, գրայցիս, որ Բարիզ ամէն բանէ աւելի կը սիրէի : Ուստի, եթէ կարող էս, կիրակի օր զիս ճաշարան կը տանիս, երբեմն ալ թատրոնը : Ըսպ թէ ոչ, եթէ ստակ չունիս, ծառայողներու մէջ զեղեցիկ խանութներն ինձ ցուցնել կտաս . . . : Երբ ալ նոյնչափ զուարճալի են ինձի համար, բայց հանդարտ եղիր . . . : այս փոքրիկ զբօսանայ ժամանակ քեզն պարծանք պիտի բերեմ . . . : Պիտի տեսնես թէ ո՞րչափ սիրուն պիտի երեւիմ կապոյտ կերպասէ աղոր շրջագցեստով՝ զոր մինակ կիրակի օրեր կը հագնիմ. թագուհի պէս կը վայելէ ինձ՝ այն հագուստ՝ անոր հետ քանակաւորեմ և նարնջագոյն հանգոյցներով զարգարուն գտակ մ'ունիմ՝ որ սէ մազերուս հետ բաւական աղէկ կը յարմարի . . . : տաճիկի ստուռնէ կոշիկներ զոր յատկապէս շինել տուած եմ . . . : քաջմորի ձե հաստ մետաքսէ շալ մը : Այո՛, վատա՛հ եղիր, գրայցիս, որ տեսնելու համար ստէպ պիտի դառնան նայելու մեզ : Մարդիկ պիտի ըսեն : « Առտու՛մ վկայ, այս նորատի աղջիկը շատ օգրուն է : » Եւ միւս կողմէն կիները պիտի ըսեն : « Բայց, իրաւ

օր, ընտիր ձե մ'ունի սա նրբակազմ և բարձրահասակ պատանին . . . : ազնիւ է կերպարանը . . . : և իր փոքրիկ գորշագոյն պեխերն իրեն շատ կը վայելն . . . : » Եւ էս ալ սոյն կիներուն համամիտ պիտի ըլլամ, վասն զի պեխերը կը պաշտեմ . . . : Գծբաղդօրէն Պ, Ժէրմէն պէիս չունէր իր դիւանական պաշտօնին պատճառաւ : Պ. Գապրիօն ունէր, ասկայն իր մեծ մօրուսին սէս կարմիր էին, և էս ալ մեծ մօրուսները չեմ սիրեր. ասկէ զատ փոքրցները ստահակի պէս կը վարուէր և մեր խեղճ Պ. Բիբլէն կը տանջէր : Օրինակի համար, Պ. Ժիրոսոն (Պ. Գապրիօնէն առաջիկ գրայցիս) աղոր վարք մ'ունէր, բայց շալին էր . . . : Առջի ատեններն այս բանս շատ կը նեղէր զիս, վասն զի միշտ այնպէս մը կը նայէր որ կարծես թէ քովս մարդ մը կայ, և առանց մտածելու, կը դառնայի նայեելու թէ ո՞վ է . . . :

Եւ նորէն կ'իծաղի :

Ռոտովի մտիկ կընէր այս թրթրակ լեզուն հետաքրքրութեամբ . . . : Ինքնովին կը հարցնէր թէ Ռիկօլէդի առաջինն Վոյա ի՞նչ կարծիք ունենալ պէտք է : Երբեմն սքնուհիին աղաւթսուութեան և խոշոր պարզունակին յիշատակէն հաւտալու կը յորդորուէր որ այս օրիորդն իր գրայցիներն իբր եղբայր, իբր ընկեր կը սիրէր, երբեմն իր դիւրահաւանութեան վրայ կ'իծաղէր, մտածելով ար անհաւանական կը թուէր թէ՛ այսպիսի նորատի, ընկեցիկ օրիորդ մը Պ. Ժիրոսոն, Գապրիօնին և Ժէրմէնին հրապարանքէն զերծ մնացած ըլլայ : Այլ սակայն Ռիկօլէդի անկեղծութիւնն և բնատուր ընտանութիւնը նոր նոր կասկածներ կը զարգէին իր մտքին մէջ :

— Գրայցուհիս, այսպէս իմ կիրակի օրերս կարգադրելով զիս՝ կ'զմայլեցնէս — ըսաւ Ռոտովի զուարթալիս. — անհոգ եղիր, նշանաւոր կերպով պիտի զբօսանուք . . . :

— Շատ մի՛ շատալիք, շուրջ պարտն, էս պիտի բռնեմ քսակը, աս հիմայէն կըսեմ : Ամառը կընանք շատ ընտիր . . . : բայց շատ ընտիր ճաշ մ'ընել . . . : երեք Փրանքով՝ ի Շարդէօլ կամ Մօնմարգրի-Էրմիլաժը, ասկէ զատ հինգ վեց անգամ թեթեւ մը կը պարենք, կամ կը վախենք, փայտէ ձիերու վրայ մէկ քանի հեղ կ'ար-

շաւերք . . . և ասով հարիւր սուգ կ'երթայ , և ոչ սաակ մ'աւելի . . . միթէ վալսել գիտես :

— Հաս աղէկը գիտեմ :

— Լա՛ւ ուրեմն : Պ . Գապրիօն միշտ ոտներս կ'կոխէր և ապա իբր կատակ՝ դետինը հրացայտ դնտակներ կը նետէր , և ասոր վըրայ մեզ չուզեցին ընդունիլ 'ի Շարիբէօղ :

— Յիրող հանդարտ պահէ , և վստահ եղիւր որ հրացայտ զընտակներ չեմ գործածեր . բայց ձմեռն ի՞նչ պիտի ընենք :

— Արո՛վհետև ձմեռն մարդ ախորժակ չունենար , քառսուն սուով մեր ճաշը կը ըննչենք և թատրոնի համար երեք ֆրանք կը մնայ մեզ . վասն զի չեմ ուզեր որ հարիւր սուգ ծախս ընես . արդէն բաւական սուղ է . բայց եթէ միմակալ երթամ նոյնը պիտի սպառես ճաշարանը , գնդատեղանի , այնպիսի անսպիտան մարդերու հետ որ սոսկալի կերպով ծխախոտ կը հոտին : Միթէ աւելի աղէկ չէ՞ օրդ զուարթօրէն անցնել բարեմիտ , ծիծաղիլու փոքրիկ օրիորդի մը հետ , որ ժամանակ ալ պիտի գտնէ փողկապներդ չֆելու , և սուղ տեղդ շտկելու :

— Բայց այդ անտեսութեան մէջ մեծ շահ կը տեսնեմ , դրացուհիս : Մինակ եթէ բարեկամներս թեւս առած տեսնես իմ փոքրիկ սիրուն դրացուհիս , այն ատեն . . . :

— Լա՛ւ , այն ատեն , պիտի ըսեն . սա սառտանայ Ռօստոլֆը դըժբաղդ չէ :

— Իմ անուն ուսկի՞ց գիտես :

— Երբ խնայայ որ քովն սենեակս վարձու բռներ են , հարցուցի թէ ո՞վ է բռնողը :

— Այո՛ , բարեկամներս պիտի ըսեն , Հաս երջանիկ է սա Ռօստոլֆը . . . և ի՞նչ պիտի նախանձին :

— Աւրիշ ի՞նչ կուզես :

— Եւ պիտի կարծեն թէ իրօք երջանիկ եմ :

— Հա՛տ աղէկ . . . շա՛տ աղէկ . . . :

— Եւ թէ որ երեցածին չափ երջանիկ չեմ :

— Ի՞նչ մնաս ունի , բաւական է որ այնպէս կարծեն . . . : Մարդիկ ասկէ աւելի բան չեն փնտռեր :

— Հասա՞ք քու համբաւդ :

Ռիկիօլէդ այս խօսքին վրայ քահ քահ մ'է ձգեց :

— Պա՛նուհի մը համբաւը . միթէ այս օրերէս յիշուա՞ն հիմակ հատացող կայ — վրայ բերաւ նա : — Եթէ հայր ու մայր , եղայր ու քոյր ունենայի , այն սատն վայրահասներուն խօսքը բանի տեղ կը գնէի . . . : Չոր դուխ մ'եմ , իմ անունս իմ գիտնալիք բանս է . . . Բաւական է որ իմ աչքիս առջև սրբկեշտ աղջիկ մ'ըլլամ , մնացածը փոյթս չէ :

— Բայց ես շատ դժբաղդ պիտի ըլլամ :

— Ինչո՞ւ համար :

— Ինչու որ բարեբաղդ պիտի համարուիմ , մինչդեռ պիտի սիրեմ քեզ . . . : Ինչպէս ֆրեդու պապին տունը կը կերակրէի . . . : չոր հացդ ուտելով՝ խոհարարական գրքի մը ընթերցումին ատենը :

— Բա՛ , բա՛ , կը վարժիս . այնքան անուշ , երախտաղէտ , բարեվարդ պիտի գտնես իս , որ իւրօրի պիտի բես : Կրաւի , աւելի աղէկ ունիմ կիրակիս անոր հետ անցնելու քան ընկերի մը հետ . . . : Եթէ շարթու մէջ իրիկունն ազատ ըլլաս , և եթէ հաճօք զլաս , նոյն իրկունը ինձի հետ անցնելու կ'գաս , իմ կրակէս և կանթեղէս օգուտ կ'բաղես , վէպեր վարձու կ'առնուս և ինձի կը կարդաս . . . : Աւելի շահաւէտ կըլլայ այս քեզ քան գնտախողէ համար ստակը սպառելը : Ապա թէ վարպետիդ դործէն ուշ ազատիս , կամ աւելի աղէկ սեպես սրճարանն երթալ , տուն գալուդ բարձրիկուն կրես ինձ եթէ դեռ կը հսկեմ : Ապա թէ միւս սուտու բարի լոյս կ'ըսեմ քեզ միջնորդն արթնցնելու համար . . . : Գիտես որ , Պ . Թերմէն , իմ վերջին դրացիս , բոլոր գիշերն այսպէս կ'անցնէր ինձի հետ , և ամենեւին չէր գանդատեր . . . : Վօղբ Աքօղի բոլոր գործերն — ինձ կարդաց . . . : Ահա այս էր զուարճալին : Երբեմն կիրակի օրերը , երբ օդը դէշ ըլլար , փոխանակ ելնելու և թատրոն երթալու , ծաղարարէն քանի մը բան կը գնէր և սենեկիս մէջ աղւոր ճաշ մը կընէինք , և ետքը կը կարդայինք . . . : Այսպէս թատրոնէն աւելի կը զուարճանայի : Ըսել կուզեմ թէ դիւբաւ ամէն բանի կը յարմարիմ և ամենուն հաճոյից համեմատ կը վարուիմ : Նոյնպէս , թէ որ հի-

ւանդ ըլլաս . . . քանի որ ասկէ առաջ հիւանդութեան վրայ կը խօսէիր , ես պիտի ըլլամ քու հիւանդպահ . . . հարցո՛ւր Մօրէլենց . . . Իրաւ որ բաղդիկ արժէքը չես ճանչեր , պարոն Ռօտոլֆ . . . Ինձի պէս դրացուհի մ' ունենալդ վիճակահանութեան մէջ աղւոր երկհնդեակ (guine) մը ձեռք ձգել է օ :

— Ստոյգ է միշտ բաղդս կը բանի : Բայց , Ժէրմէնի գալով , ո՛ւր կը դսնուի հիմակ :

— Կարծեմ թէ Բարիզ է :

— Բնաւ տեսած չունիս զինքը :

— Տունէն ելնելէն վեր իս տեսնելու չեկաւ :

— Բայց ո՛ւր կը բնակի , ի՞նչ կընէ օ :

— Այդ հարցումներն ինչո՞ւ համար կընես ինձ , դրացիս օ :

— Արովհետեւ անորմէ կը նախանձիմ — ըսաւ Ռօտոլֆ ժպտելով — և կը փափաքէի . . . :

— Կը նախանձիս . . . : Եւ Ռիկօլէդ ծիծաղն սկսաւ : — Կար խանձելու բան մը չկայ , հաւաստի եղիւր . . . խեղճ պատանի . . . :

— Կատակը մէկդի , դրացուհիս , մեծ է փափաքս զիտնալու թէ Պ . Ժէրմէնը ո՛ւր կընամ գտնել , անշուշտ իր բնակարանը գիտես , և առանց պարծենալու , կընաս հաւաստի ըլլալ որ հարցուցած գաղտնիքս երեւան չեմ հաներ . . . կ'երդնում որ իր շահուն համար է . . . :

— Տարակոյս չունիմ , դրացիս , որ Պ . Ժէրմէնի բարիքը կուզես սակայն խօսք առաւ իզնէ որ հասցէն մարդու մը չըսեմ . . . և քանի որ չեմ յայտներ , կընաս երեւակայել որ անկարելի բան է . . . : Այս բանիս համար պէտք չէ որ ինձի դէմ բարկանաս . . . : Թէ որ ինձ գաղտնիք մը յայտնէիր , անշուշտ զո՞հ պիտի ըլլայիր այս ընթացքէս :

— Բայց . . . :

— Քեզ վերջին խօսքն ըսե՛մ , դրացիս , այդ կիտին վրայ ալ մի՛ խօսիր ինձ . . . խոստում մ' ըրի , և այս խոստումս պիտի պահեմ , և ինչ որ ըսես զարձեալ մի և նոյն բանը պիտի պատասխանեմ քեզ . . . :

Նորաստի օրիորդը թէև վառվուն ու թեթեամիտ , այնպիսի հաստատ չէր շտով մ' արտասանեց այս խօսքերը , որ Ռօտոլֆ ցաւ 'ի սիրտ

զգաց որ չպիտի կարենայ խմանալ փափաքածն անորմէ քաղել : Իր մտքին դէմ էր Ռիկօլէդին վստահութիւնը շահիլ խորամանկութեամբ՝ ուստի համբերեց և զուարթօրէն ըսաւ :

— Այդ խնդրին վրայ ալ չխօսինք , դրացուհիս : Կրո՞ղ , այնպէս լաւ կը պահես ուրիշներուն գաղտնիքը՝ որ քու գաղտնիքդ ալ պահելուդ վրայ չեմ զարմանար :

— Գաղտնիք , ե՛ս : Երանի թէ ունենայի , շատ զուարճալի կըլլար , իրաւ որ :

— Ինչպէ՞ս , հիմակ սրտի պզտի գաղտնիք մը չունիս :

— Սրտի գաղտնիք մը :

— Ա երջասպէս . . . բնաւ մէկը սիրած չե՛ս — ըսաւ Ռօտոլֆ՝ ակնայիշ նայելով Ռիկօլէդին երեսը՝ ճշմարտութիւնը գուշակելու համար :

— Ինչպէ՞ս , սիրած ըլլամ . . . : Հապա Պ . Ժիրոտօն , Պ . Գապրիօնը , Պ . Ժէրմէնը և քեզ . . . :

— Մի՛թէ զանոնք իզնէ աւելի . . . կամ ուրիշ կերպով չսիրեցի՞ր :

— Իրաւ որ , չէ՛ , կարելի է աւելի քեզ սիրեցի՛ վասն զի Ժիրոտօյին շիւ աչերուն , Գապրիօնին կարմիր մօրուսին և խեղկատակ ընթացքին , և Պ . Ժէրմէնին տրտմութեան վարժելու պէտք ունէի , և իրօք շատ տխուր էր այս պատանին : Ընդ հակառակն դու , դու շուտ մ' աչքս մտար . . . :

— Աւրիշ բան մը պիտի ըսեմ , դրացուհիս , մի՛ սրամտիր , իբր ճշմարիտ ընկեր . . . պիտի խօսիմ հետդ . . . :

— Խօսէ՛ . . . խօսէ . . . աղէկ բնաւորութիւն ունիմ . . . : Ասկէ դատ՝ այնչափ բարի էս որ տարակոյս չունիմ որ բերանդ չերթար իս վշտացնող բան մ' ըսելու . . . :

— Անշուշտ . . . : Լաւ ուրեմն բացէ 'ի բաց ըսէ , մի՛թէ ամենեւին սիրահար ունեցած չե՛ս :

— Սիրահար . . . ա՛հ , աղէկ դուշակեր ես . և ինչպէ՞ս ալ ժամանակօ կը ներէ :

— Ժամանակդ ի՞նչ արգելք ունի այս բանին օ :

— Ի՞նչ արգելք ունի՛ շա՛տ մեծ . . . : Ախ Վաղրի պէս նախանձ

ձոտ եմ, անդադար սրտի ցուներ պիտի ստեղծեմ, և քեզ կը հարձ
ցնեմ հիմակ, միթէ բաւական ստակ կը շահիմ որ օրն երկու երեք
ժամի կորուստ մ'ընեմ լաբու և կոծելու համար: Հասցա թէ որ
սիրահարս իս խարէ... Գատէ անդամ մը, ի՞նչ արտասք ի՞նչ
վիշտ... ա՛հ, աներկմիտ եմ... որ աղւսը մը դործէս ետ պի-
տի մնամ:

— Բայց ամէն սիրահարներն անհաւատարիմ չեն, ամէնքն իրենց
սիրուհիներն չեն լացներ:

— Աւելի՛ գէշ է... թէ որ չափազանց ալ բարեսիրտ ըլլան:
Միթէ այն ատեն կրնամ վայրկեան մ'առանց անոր ապրելու, . . . և
որովհետեւ հաւանականաբար պէտք է որ իր դրատունը, դործա-
րանը կամ խանութը դատուի, ևս իր բացակայութեան ատեն պիտի
հաշիմ մաշիմ: հազար տեսակ կասկածներու պիտի երթամ... պի-
տի երեւակայեմ թէ ուրիշները զանի կը սիրեն... թէ անոնց մօտն
է...: Եւ թէ որ վերջը իս երեսի վրայ ձգէ... մտածէ անդամ
մը... ի՞նչ պիտեմ... ո՛ր գիտէ, ի՞նչ ձուներ կրնայ դալ գլխիս:
Այս իրաւ է որ աշխատանքս պիտի մնասի... և այն ատեն ի՞նչ
պիտի ըլլամ: Ես բաւական կը համարեմ, այս իմ անդորր վիճակիս
մէջ, իմ ապրուստս ճարել, օրը տասն երկու տասնհինգ ժամ աշ-
խատելով...: Ա՛ւր կ'երթայ իմ բանս թէ որ շարաթն երեք չորս
օր տառապելով անցունեմ ՚ի զուր... Ինչպէս այն կորուստս կրնամ
լեցնել... անկարելի բան...: Աւրեմն պէտք պիտի ըլլայ այն ատեն
ուրիշին հրամանին տակ ըլլամ... ո՛հ, սոց ալ չեմ ուզեր... իս
աղատութիւնս շատ կը սիրեմ...:

— Քու աղատութի՛ւնդ:

— Այո՛, կրնամ եթէ ուզեմ իբր, առաջին բանորուհի ինձ
գործ տուղ կրկան առնը մտնել... չորս հարիւր Ֆրանք կրնամ
ստանալ, նոյնպէս սենեակ, կերակուր ունենալ:

— Եւ այդ առաջարկութիւնը չե՞ն ընդունիր:

— Ի՛հ հարկէ... ուրիշներուն մօտ իբր վարձկանուհի պիտի
ըլլամ, մինչդեռ, թէև աղքատ եմ, դոնէ իմ յատուկ տանս
մէջ եմ և ուրիշ պարտական չեմ...: Արիութիւն, սիրտ...:

ուղղութիւն, զուարթութիւն... և քեզ պէս բարի դրացի մ'ու-
նիմ. ասկէ աւելի ի՞նչ կուզեմ:

— Եւ բնաւ կարգուելու փափաք չունեցար:

— Կարգուի՛լ — ինձի պէս չունեորի մը հետ կրնամ կարգուիլ:
Մօրէլնոյ օրինակն աչքիս առջևն է...: Կայէ՛ ուր կը ստանի ա-
մուսնութիւնը... իսկ եթէ մարդ մինակ ինք զինքը հողայ... կա-
րող է գլխին ճարը գտնել...:

— Այսպէս ուրեմն երազներ, սպանիական պալատներ չես շիներ:

— Այո՛ կրնեմ... վառարանիս զարդը կ'երայեմ... ասկէ
զատ... ի՞նչ կուզես որ փափաքիմ:

— Բայց թէ որ ազգական մը փոքրիկ ատացուած մը... օրի-
նակի համար, հազար երկու հարիւր Ֆրանք... թողուր քեզ որ
հարիւր Ֆրանքով կ'ապրես:

— Ճիշտն ըսելով, այդ ըսածդ կրնայ բարեք մը, կրնայ չարեք
մ'ըլլալ:

— Չարի՛ք մը:

— Այս վիճակիս մէջ ինք զինքս երջանիկ կրնայեմ. վարած
կեանքս գիտեմ, եթէ հարուստ ըլլամ չգիտեմ ինչ տեսակ կեանք
պիտի վարեմ: Մտիկ ըրէ, դրացիդ իմ, երբ օրական աշխատու-
թենէս ետքը իրկունը կը պառկիմ, կանթեղս կը մարեմ և կրակա-
րանիս մէջ մնացած քանի մը հրատներու լուսին՝ իմ կոկիկ խցի-
կրս, վարադոյրներս, դարանակս, աթոռներս, թուշուններս, ժա-
մացոցս, ինձ յանձնուած կերպաններով լի սեղանս կը տեսնեմ և
առանձին կրսեմ: « Աւերջապէս այս ամէն բաներն իմն են, մինակ
իմ աշխատութեանս պարտաւոր եմ զանոնք...: Ճշմարիտը դը-
րացիս, այն ատեն այս խորհուրդները սիրապէս կ'որդրեն իս...
ուստի միշտ գո՛հ սրտով կը քննամ: Բայց նայէ անդամ մը,
ահա հասանք Գամբը, խոստովանէ որ փառաւոր տեսք մ'ունի:

Թէպէտև Ռօստոփ Ռիկօլէզին պէս չէր հիանար Գանբի տեսլին
վրայ, սակայն այս ահագին պաղարին եղական երևութիւն իր հետա-
քըրքուութիւնը շարժեց, պաղար մ'որ իր թաղերն ու անցքերն
ունի: Գանբը փողոցին մէջ տեղը, մեծ հրապարակի մ'անկիւնը
գտնուած արջիւրէն քիչ մը հեռու, ահաղին զուգահեռակերտ մը

կը տեսնուի որ տակտակէ և յարկի քարէ ծածկուած գազաթով մը շինուած է : Ահա այս է Գանբլը : Չախ կողմէն Տիւրքի-Թուար փողոցը, աջ կողմէն Բէրսէ փողոցը ունենալով՝ սոյն պողոցը բոլորը շէնքի մը կը հասնի, սկստապէս գմբէթաւոր շէնք մ'որուն բոլորաբար կամարաձև սրահներ կան :

Երկար ճամբայ մը՝ զուգահեռակերտը մէջ տեղէն՝ ըստ երկայնութեան կտրելով՝ երկու հաւասար մաս կը բաժնէ . ստոնք ևս կը բաժնուին ու կ'ստորաբաժնուին անհունս ուղղակի ու շեղակի շատ մը փոքրիկ գոբհներով՝ որ ամէն կողմէն խաչաձև զերար կը կտրեն և շէնքին տամալիով անձրեւէն կը պահպանուին : Ամէն նոր զգեստի վաճառումն արգիլուած է սոյն պողոցին մէջ, բայց որ և է կերպասի չնչին կապերա մը, բայց երկաթի, սղինձի և ձուլի կամ պողպատի ամենէն ստորին կտորն իր ծախողն ու գնողն ունի :

Այն տեղ կը գտնուին այնպիսի վաճառականներ որ պէս պէս գոյնէ, երանգէ, տեսակէ, ու քաղցիտ չախաներ կը ծախեն, որպէս զի ծախող կամ պատահուն հաղուսաներու կտորներուն յարմարցնեն : Այն մթերանոցներ՝ որոց մէջ կը տեսնուին կոյտ կոյտ հին, անկուկ, ծակասկէն, ոլորուն, ճեղքուած մուճակներ, անանուն, տձև, անոցն բաներ, և անոնց մէջ սաղիս անդին կ'երևին քանի մը քրծոյ ներբաններ՝ բթամատի չափ հաստ՝ բեւերակու՝ բանտի դրան մը պէս, կարծր ձիւ սմբակին պէս, հողաթափի ճշմարիտ կեանքներ, որոց բոլոր յարակից մասերը ժամանակը լափեր է . այս ամէնը մըլտա, պրիուն, ծակտա ու կրծուն են և իրր սպրանք կը ծախուին : Այն վաճառականներ որ այս առուտուրով կ'ապրին : Ար գտնուին նաև մանրավաճառներ՝ որ լարեր, ծոպեր, դարգմանակներ, ժապաւէններ. մէտաքսէ, բամպակէ, գերձանէ ծիւեր և քակուկներ կը ծախեն և որոնք բոլորովին անգործարելի և աւերած վարպետներէ հանուած են : Աւրիշ վաճառորդներ կ'ենթու գտակներ կը ծախեն, այս քաղակները փերեզակուհիներու ձեռք միայն կը հասնին իրենց կրպակը պարկերու մէջ՝ այլանդակ շրջաններ, բունս այլափոխութիւններ, անհաւատալի զարդարանքներ կրեւէն ետև : Եւ որպէս զի քրծոյն ահալին տփի մը չափ տարածութիւն ունեցող մթերանոցին մէջ շատ տեղ չբռնէ :

այն գտակները կոկիկ մը երկուքի կը ծալեն, յետոյ կը տափակցնեն և խիտ առ խիտ կը դիզեն իրարու վրայ : Բայց 'ի աղաջրէն, տառեխներու պահպանութեան համար ճիշտ մի և նոյն միջոցը կը դործածեն, ուստի անկարելի է երևակայել թէ այս կերպ զեօնդէն չորս ոտք քառակուի վայր մը քանի քանի բաներ կը պարունակէ :

Երբ գնորդ մը ներկայի վաճառուհին սոյն քրջերը՝ որ իրարու տակ ձմլուած են կը հանէ, ձեռնովը գտակին խորը հարուած մը կտայ բնական շարժումով մ'որ վեր վերցնէ, անոր բերանն իր ծրուկին վրայ կ'ընդլայնէ, և ահա աչքիդ առջև կը տեսնես այլանդակ անըջական առարկայ մը՝ որ խառն ու շիտ միտք կը բերեն այնպիսի սուսապելական զլին ծածկոյթներ՝ զոր մասնաւորապէս դաւառական թատրոններու սպասուհիներ, դուստներու մծրաքոյրներ կամ խնամակալուհիներ կը հագնին : Անկից քիչ մը հետո Գանբլը երկու մաս բաժնող լայն ճամբուն ծայրը կանդած գմբէթի վաճառներուն ներքև և քրծոյն ճաշի նշանադիր կրող իբր հրաշալի բաներ կ'ախուած են իւրաւոր զգեստներ՝ որ կ'ենթու հին գտակներէն աւելի տարօրինակ և տարասպայման գոյներ, ձևեր ունին : Այսպէս, այն տեղ կը գտնես մոխրագոյն վէ մեկնոցակներ՝ որ հոսարեան ձևով՝ երեք շար կոկիկ կոճակներով՝ և աղուեսներ փոքրիկ օձիքով մը ջերմօրէն զարդարուն են . . . տառապաններ՝ որ առաջ շէնքոյն կանաչ (ver-bouteille) և ժամանակին ուժովը գեղարարեան կանաչ (vert-pistache) դարձեր են, սև ժապաւէնով մը եզրները պատած և սկովտիական կապոյտ ու դեղին աստառով նորոգուած գեղածիճազ տեսք մ'առեր են . . . հաղուսաներ՝ որ երբեմն յոգնոյն (à queue de morue) կը կոչուէին, լցիկի գոյն ասուի ձոխ օձիք, առեն մը արծաթէօծ, բայց այժմ սղինձի զարնող կարմիր գոյն մ'առնին : Նոյնպէս կ'երևին այն տեղ շաղանակալոյն բաճկոններ (polonaise) կատուի մորթէ օձիքով, և կիսամաշ սև բամպակէ զարդերով և նարոսներով կողմնակի բանուած, ստոնցմէ հետո՝ կան հին վտառակներէ՝ եռածալ օձիքներն հանելով՝ վարպետութեամբ շինուած պարեղօտներ, որոց ներսի կողմը գունաւոր կտաւի կտորներ անցուցեր են . ամենէն յարգիւնքն են կապոյտ

կամ բայ կանաչ, ասոնք իբր զարդ ունին երկնադոյն կապերաներ, որ մաշած դէր ձանով կարուեր են և որոյ աստուան է կարմիր երեսի վրայ նարնջադոյն վարդերով լի կտաւ մը, մի և նոյն թշկիներով ու օձիքով, զանդակի մ'որորած բրդէ հին չուանէ շինուած լաւ մը այս վայելչուչ սլարեղօտներուն իբր դօտի կը ծառայէր, որոց մէջ Ռօպէր Մարէր անշուշտ շիանալով գլուխ կրնար բռնել: Հարեւանցի պիտի խօսենք խել մը Գրօպէնէն զդետներու վրայ որ փոքր 'ի շատէ կասկածելի, բարբաբիկ զդետներ են, թէ և ասոնց մէջ կը գտնուին նաև արքունական կամ իշխանական դրոշմ կրող քանի մը պաճառազարդ հազուստներ, զոր ամէն տեսակ յեղձօրիտութիւններ սղալառներէ քաշքշելով Գանբլի գմբէթին կամարներուն տակ բերեր նետեր էին:

Հին մուճակներու, հին գտակներու և ծաղրաշարժ հին հազուստներու այս հանդէսը սոյն պաղարին այլանդակ կողմէն էր, պարծենկոտութեամբ զարգարուած և այլակերպ հնոտիներու թաղն է այս բայց պէտք է խօստովանել, կամ լաւ ևս, սրբաւ է հռչակել որ աղքատ և չունեոր մարդերու համար այս հիմնարկութիւնը մեծ օգտակարութիւն մ'ունի: Այս տեղ խիստ դիւրագին կը գնեն ընտիր և գրեթէ նոր բաներ, որոց տեղուտութիւնը գրեթէ երեւակայական է: Գանբլի ննջարանի առարկաներու սահմանուած կողմը դէզ դէզ ծածկոցներ, սաւաններ, պատառներ և բարձեր կան: Փոքր ինչ հեռուն օթոցներ, վարագոյրներ, խոհանոցի ամէն տեսակ դործիներ կ'երևին, այլուր, ամէն վիճակի, ամէն հասակի յարմար ոտքի ամաններ, գլխի կապեր: Այս իրերն որ առ հասարակ յետին ծայր մաքուր էին՝ աչքի անսխորժ երևոյթ մը չունէին: Եթէ մարդ այս պաղարը պատած չէ, չկրնար հաւատալ թէ որչափ քիչ ստակ ու ժամանակ պէտք է երկու երեք կարօտ տունորի կարևոր եղած բաները սայլակի մը մէջ լեցնելու համար:

Ռօտով կը զարմանայ տեսնելով իրենց կրպակներէն դուրս կեցող վաճառողներուն եռանդուն, պաշտօնասէր և զուարթուն կերպերն, որով անցորդները կը կոչէին բան գնելու այս կերպերն որ ակնածելի անուշութեան զրոշմն ունէին, կարծես թէ ուրիշ ժա-

մանակի մարդերու յատուկ էին: Հաղին թէ Ռիկօլէդ և իր ընկերն անկողնի վերաբերեալ իրեր ծախողներու մեծ անցքը երեցան և ահա հրատարակել հրատեքներն իրենց չորս կողմը սկսան լսել ըլլալ:

— Պարոն, հրամէ՛ տես անգամ մը մեր անկողնները, նորի պէս են. եթէ կուզես մէկ ծայրէն կը քակեմ, և աչքով կը դատես մէջն բուրդը. կարծես թէ ոչխարինն է, այնչափ կակուղ ու ձերմակ է:

— Իմ սիրուն փոքրիկ տիկինս, աղւոր կտակ սաւաններ ունիմ, նորերէն աւելի ընտիր. ինչու որ իրենց առջև կարծբութիւնը չունին, ձեռնոցի պէս դիւրածալ և սրղովատի պէս հաստատուն:

— Աղնիւ ամուս, եկէք սա ծածկոցները գնեցէ՛ք. տեսէ՛ք, փափուկ, տաքուկ ու թեթեւ են, փետուրներու պէս քնքուշ և նորաչէն, հաղու թէ քան անգամ դործածուած են: Փոքրիկ տիկին, սա է իկիդ միտքն ըրէ... արի իմ յաճախորդս եղիր և սուեդ տեղք շատ ածան գնով կը շտկեմ... դո՛ս պիտի ըլլաս և նորէն Պուվար խաթունը տեսնելու պիտի գաս: Իմ քովս ամէն բան կայ...: Երէկ նոր նոր ու փառաւոր բաներ գնելու առիթ մ'ունեցայ... հիմակ պիտի աչքով տեսնէք: Եկէք, ներս մտէք նայիմ... տեսնելը ստակով չէ:

— Իրաւ որ դրացուհիս — ըսաւ Ռօտով Ռիկօլէդին — այս խոշոր կինը ամենէն նախապատիւ կը համարիմ...: Արծէ թէ նոր ամուսիններ ենք, զգուելի կարծիք մ'է այս... ուստի անոր խախտթը մանելու միտք ունիմ:

— Թո՛ղ այս խոշոր կինն ըլլայ — ըսաւ Ռիկօլէդ — ես ալ իր դէմքը կը հաւնիմ:

Պաճառահին և իր ընկերը Պուվար խաթունին կրպակը մտան: Վեհանախութեամբ մ'որ թերեւս միտակ Գանբլի մէջ կը տեսնուի օրինակը քան այլուր, Պուվար խաթունին հակառակորդ վաճառահիններն անոր տրուած նախապատուութենէն չգժարեցան. իր դրացուհիներէն մին մինչև անգամ մեծատրուութիւն ունեցաւ ըսելու:

— Աւելի աղէկ է որ Պուվար խաթունը այս վաստակն ընէ քան ուրիշ մէկը. վասն զի ընտանիք ունի. և Գանբլին դահերեցուհին և պարծարքն է:

Եւ իրաւի Գանձը լի սոյն դահեղեղուհիին չափ հրաւիրելի , անկեղծ
և զուարթ դէմք մը կարելի չէր ունենալ :

— Ահաւասիկ , փոքրիկ սիրուն տիկինս — շտաւ Ռիկօլէզին , որ
դիտակ աչքով մը կը զննէր շատ մ'առարկաներ — ահաւասիկ ակ-
նարկած իրերս : Երկու անկողնի ամբողջ կազմը , կարծես թէ նոր
են : Եթէ կամք ունիս փոքրիկ հին դրասեղան մը դնել , որ սուղ չէ ,
ահաւասիկ հատ մը , (չոր Պուվար խաթունը ձեռքովը ցոյց տուաւ)
մի և նոյն ամուրդէն առի : Թէպէտ կարասի դնելու սովորութիւն չու-
նիս , ստիպան չկրցայ դէմ կենալ , քանի թշուառ էին այն անձերն
որոցմէ սոյն իրերը ծախու առի : Ողորմելի կին . . . այս հին կահին
վաճառումը մանաւանդ սիրտը կ'արիւնէր . . . կ'երևի թէ տոհմային
կահ մ'է այն . . . :

Այս խօսքին վրայ՝ և այն միջոցին որ խանութպանուհին Ռի-
կօլէզին հետ զանազան իրերու տակարկութիւնը կընէին , Ռօտոլֆ
Պուվար խաթունին ցոյց տուած դրասեղանն ուշի ուշով քննեց : Հի-
նօրեայ և վարդափայտէ շինուած ցրէթէ եռանկիւնաձև դրասեղան
մ'է այն , կողմնակի տախտակով մը դոյրուած որ եթէ բացուի և պը-
ղնձէ երկու երկայն ծխնիով բռնուի՝ դրի սեղանի տեղ կը ծառայէ :
Նոյն կողմնակի տախտակին մէջ տեղն , որ երկին երկին դրուպով
զարդարուն էր , Ռօտոլֆ եպեճոսէ դրոշմեալ երկու սիլընատուեր
նշմարեց , որ Մ և Ր էին , և որոց վերելք կոմսալրան թագ մը կար :
Մտածեց թէ այս կարասիին վերջին անէրն անշուշտ ընկերութեան
բարձր դասէ մտող մը պիտի ըլլայ : Իր հետաքրքրութիւնը աւելցաւ
սոյն դրասեղանն , նոր ուշադրութեամբ մը զննեց . դրոշմներն հետզհե-
տէ կը քննէր մեքենայէս , երբ , վերջինը բանալու դժուարութիւն
մը զգալով և ասոր պատճառը փնտրելով , դիտեց որ թղթի թերթ
մը կայ որ կիսովին խրեք է գրոցին ծակին խորը , ու զայն զգուշու-
թեամբ իրեն քաշեց : Մինչդեռ Ռիկօլէզ Պուվար խաթունին հետ սակը
կը լմցնէր՝ Ռօտոլֆ իր գիտն ուշադիր կը քննէր : Այս թղթին
բաղմամբ իւր քերթուած տեղերէն դիւրին էր մտաբերել որ կիսկա-
տար նամակի մը տրուագիծն էր : Ռօտոլֆ բաւական դժուարու-
թեամբ հետեւեալ տողերը կարդաց :

(Պարոն)

Հաւաստի եղիր որ ամենաստակալի թշուառութիւն մը միայն կը
բռնադատէ զիս այս փորձը փորձել ձեր մօտ :

Գծարտուհի գոռոզութենէ չէ որ կը քաշուիմ , այլ միայն բնաւ
իրաւունք չունիմ՝ քեզնէ ազատորէն խնդրելիք ծառայութեանս :
Աղջկանս վիճակն որ ինձի պէս սոսկալի կարօտութեան մէջ ընկեր
է , իմ շփոթութիւնս կը զսպէ : Քանի մը խօսք պիտի ըսեմ միայն
զիս ճնշող աղէտից վրայ : Իմ ամուսնոյս մահուանէ ետքը՝ ինձ ե-
րեք հարիւր հաշար Ֆրանսի ժառանգութիւն մնացեր էր և այս գու-
մարը եղբորս ձեռք Պ . Ժաք Ֆէրրան նօտարին քով շահու դրուեր
էր : Երբ Անժէ կը դանուէի անոր տոկոսը եղբորս միջոցաւ կըն-
դունէի : Երդէն դիտես թէ ի՞նչ զարհուրելի զխաւածով իր կեան-
քը վերջացուց . կ'երևի թէ դադունի ու անյաջող շահագիտական
գործերէն մեծ վնասներ կրելուն ութ ամիս կայ ինքզինքը սպաննեց :
Այս աղէտալի պատահարէն առաջ երկտող զիր մը ստացայ իրմէ .
որուն մէջ կըսէր թէ՛ զայն կարդալու ատենս հողին փչած պիտի
ըլլայ : Նամակը կը վերջացնէր ըսելով թէ՛ իմ անունովս Պ . Ժաք
Ֆէրրանի մօտ շահու դրած գումարին փոխարէն ամենևին ձեռքը
մուրհակ մը չունի և թէ այս մարդը բնաւ ընկալազիր տալու սովոր
չէր , վստան զի , պատիւ և բարեպաշտութիւն նոյն ինքն էր , թէ բա-
ւական էր որ ես նօտարին տունը ներկայիմ որ ըստ օրինի այս գոր-
ծը կարող դրուի : Երբ եղբորս ահուելի մահուանէ զատ բաներու խորհե-
լու կարող եղայ , Բարիզ եկայ , ուր միայն քեզ կը ճանչէի , պարոն ,
և այս ալ անուղղակի կերպով ամուսնոյս հետ ունեցած ազգակա-
նութեանդ պատճառաւ : Երդէն ըսի , Ժաք Ֆէրրանի մօտ յաւանդ
դրուած գումարը բոլոր հարստութիւնս կը կազմէր , և եղբւյրս վեց
ամիսն անպամ մը այս ստակին բանուած տոկոսներն ինձ կը լրկէր :
Վերջին վճարումէն վեր տարիէ մ'աւելի անցեր էր երբ Պ . Ֆէրրա-
նի տունը ներկայացայ ինձ անհրաժեշտ եղած եկամուտս խնդրելու
համար :

Այն ինչ անունս տուի որ նօտարն , առանց իմ վիշտս յարգելու ,
ամբաստանեց իմ եղբայրս՝ որպէս թէ 2000 Ֆրանք իրմէ փոխ ա-

ներ և իր մահուան պատճառաւ կորուսեր է. նոյնպէս յարեյ՝ թէ ոչ միայն իր անձնասպանութիւնն Աստուծոյ և մարդկան առջև ոճիր մ'էր, այլ նաև յափշտակութեան գործ մ'որուն ինքը, Ժաք Ֆէրբան, զո՛հ ընկեր էր: Այս լեզուն զիս զայբացայց, եղբօրս անբասիր ուղղութիւնն ամենուն յայտնի էր. իբրև է որ ինչէ և բարեկամներէ գաղտնի վտանգաւոր ձեռնարկութիւններու մէջ իր հարստութիւնները կորուսեր էր, սակայն անարատ համբաւ և ամենուն ցաւ թողով, և բաց ՚ի նօտարին պարաքէն, առանց տալիքի մեռեր էր: Աստասխան սուի Պ. Ֆէրբանի որ իսկոյն կրնայ իմ եղբօրս ունեցած 2000 Փրանք պարտքը 30000 Փրանքէն, որուն աւանդաստան էր, վար դնէ. . . : Այս խօսքին վրայ ապուշ գէմբալ մ'ինձ նայեցաւ և հարցուց թէ ի՞նչ տեսակ 30000 Փրանքի կ'ակնարկեմ: — Այն դումարն զոր սասն ութ ամէ վեր եղբայրս քու քովդ շահու գրած է, պարոն, և որուն տոկոսները մինչև ցարդ անոր ձեռք ինձ կը հասցնէիր— ըսի անոր, ըրած հարցումը չկրնալով հասկնալ: Նօտարն ուսերը բարձրացուց, ցաւակցութենէ շարժեալ ժպտեցաւ, իբր թէ կատակ կրնեմ և պատասխանեց ինձ թէ՛ ոչ միայն եղբայրս իրեն շահով ստակ տուած չէ, այլ 2000 Փրանք ալ իրմէ փոխ առած է: Անհար է նկարագրել իմ սարսափս այս պատասխանին վրայ: — Ապա ուրեմն այն դումարն ի՞նչ եղաւ— գոչեցի ես: — Աղջիկս և ես ուրիշ ապաւէն մը չունինք, թէ որ այն դումարը մեր ձեռքէն երնէ՛ յետին թշուառութիւն մը պիտի ըլլայ մեր բաժինը: Ի՞նչ պիտի ըլլանք: — Չգիտեմ— պատասխանեց սլաղութեամբ մը նօտարը: Հաւանական է որ եղբայրդ, փոխանակ այն դումարն ինձ աւանդելու, ինչպէս որ քեզ ըսեք է, գաղտնի ձեռք զարկած ձախորդ գործերուն մէջ կ'երաւ:

Սխալ է, պարոն— գոչեցի: — Եղբայրս նոյն իսկ ուղղապարտութիւն էր: Ոչ միայն միտքէն չէր անցներ զիս և աղջիկս կողոպտելու, այլ մեզի համար ինքզինքը զո՛հ կ'ընէր: Երբէք սմուսնանալ չուզեց, որպէս զի իր ունեցածը պակիս թողու. . . : — Տիկինս կրնայի՞ր յանդգնիլ ըսելու որ ինձ յանձնուած աւանդ մ'ուրանալու կարող եմ— հարցուց ինձ նօտարն այնպիսի պատուաւոր և ան-

կեղծ սրամտութեամբ մ'որ անոր պատասխանեցի. — Ամենեկն, պարոն, քու արդարասիրութեան հնչակն ամէն մարդ զխտէ, բայց չեմ կրնար սղախիտ անգութ անխտահարութեամբ մ'եղբայրս նշաւակել: — Սակայն ի՞նչ յետկարի վրայ կը հիմնես սրահանջումդ— հարցուց Պ. Ֆէրբան. — Թուղթ չուրիմ, պարոն, Տասն ութ ամիս կայ՝ եղբայրս՝ որ իմ գործերուս հոգը յօժարակամ վրան առաւ, ինձ դրեց: « Հարիւրին վեցով ստակդ շահու տալու ընտիր « տեղ մը գտայ. արժէթով երդ ծախելու համար զիս փոխանորդ « կարգէ. 30000 Փրանքը լրացնելով շահու պիտի տամ Պ. Ժաք « Ֆէրբան նօտարին: » Հետեւագէս եղբայրս փոխանորդ կարգեցի. քանի մ'օրէն ետև իմաց տուաւ ինձ որ գործողութիւնն աւարտեր է և վեց ամէ վեր բանած տոկոսներն ինձ զոկեց: — Բայց գէթ այս նիւթիս վրայ անոր ձեռագիր նամակներն ունի՞ս, տիկին: — Աչ, պարոն: Ինձ գրած նամակներն այլ և այլ գործելու վրայ կը դառնային և զանաք չտահեցին: — Գժբարգաբար չեմ կրնար բան մ'ընել քեզ, տիկին— պատասխանեց նօտարը: — Եթէ իմ հաւատարմութիւնս զուտ և անարատ չըլլար՝ քեզ պիտի ըսէի: Գատաւ տանական ստեանները բաց են առջևդ, զիս դատի կոչէ, դատաւորներ կարող են զանազանել պատուաւոր անձի մը խօսքն որ երստէն տարիէ վեր հասարակաց համարումը կը վայելէ, մեռելու մարդու մը յայտարարութենէ որ, յիմարական գործերու մէջ պաշտնուողին իր տոացուածը կորուսելէն ետև՝ մինակ ինքնասպանութեան մէջ ապաւէն գտաւ. . . : Աերջասպէս պիտի ըսեմ քեզ. դատ վարէ ինձի դէմ, տիկին, եթէ կը համարձակիս, և եղբօրդ յիշատակն անշուշտ պիտի արսափ: Բայց կարծեմ թէ խօհեմութեամբ կը հանդուրժես այս ձախորդութեան որ անտարակոյս մեծ է և սրուն անտեղեակ եմ: — Բայց վերջասպէս, պարոն, մնայ եմ, թէ որ ստացուածս կողոպտուի, ես և աղջիկս ուրիշ ապրուստ չունինք այլ միայն սարղ կարասի մը. . . : Եթէ զայն ծախեմ, վերջս թշուառութիւն է, պարոն. . . սոսկալի թշուառութիւն մը: — Աճա՛ս, խաբեր են քեզ, ձեռքէս բան մը չգար— պատասխանեց նօտարը: — Նորէն կրնեմ, երբայրդ քեզ խաբեր է: Եթէ աւելի անոր խօս-

քին հաւատ ունիս քան թէ իմ, դատի ել. դատաւորները թող
վճռեն: — Սօտարին տունէն մահ 'ի սիրտ դուրս ելայ: Այս յեալին
խեղճութեան մէջ ի՞նչ կրնայի ընել: Իմ առնելիքիս վաւերականու-
թիւնը հաստատելու արձանագրէ մը զուրկ եղօրս անաչառ ուղղու-
թեան վրայ վտահ, Պ. Ֆէրրանի աստուածութեան շփոթած՝ ոչ որ
ունենալով որպէս զի խորհուրդ հարցնելու դիմեմ (այն ժամանակը
ճամբորդութիւն կրնէիր), գիտնալով որ իրաւագէտ անձերու կար-
ծիքը ստանալու համար ստակ պէտք է, և իմ փոքր ինչ ունեցած
զոյքս ձեռք ձգելու տրամադիր, չէի համարձակեր այնպիսի դատ
մը բանալ: Ահա այն ատենն էր . . . :

Նամակին այս ուրուագիծը այս տեղ կ'ընդմիջէր, վասն զի յե-
տագոյ տողերը անընթեռնելի կերպով ջնջուեր էին: Արջապէս
վարի կողմը և թերթին մէկ անկիւնը Ռօտովֆ տեսակ մը յիշատակել
մը կարգաց որ է այս:

Գրել առ Կիւնի Կր. Լեւոնի Կոստանի, Պ. Կր. Սէն-Բըթի համար
Նամակին այս հատուածը կարդալէն ետև՝ Ռօտովֆ սկսաւ մտա-
փել և զարմանալ այն երկու անուններն այսպէս իրարու մօտ տես-
նելով: Թէև այս նոր վաստութիւնը՝ որով ծաք Ֆէրրան ամբաս-
տանուած կ'երևէր՝ տակաւին հաստատուած չէր, սակայն այս մար-
դը թշուառ Յօրէլէնց դէմ այնչափ անդուծ, Լուիզին՝ անոր աղջ-
կին դէմ այնչափ վատ կերպով վարուեցաւ որ եթէ անպատիժ մը
նալու հաստատ յուսով իրեն յանձնուած աւանդը ուրանար, հա-
ղիւ զարմանք կրնար պատճառել, այնպիսի անշահ ասիրատի մը կող-
մէն ըլլալով:

Այս մայրն՝ որ այսպիսի այլանդակ կերպով աներևոյթ եղած հա-
րատութիւնը կը սահանջէր՝ անշուշտ դիւրակեցութեան վարժ էր:
Յանկարծազաս հարուածէ մը կործանելով՝ Բարիզի մէջ մարդ մը ճան-
չելով ինչպէս որ նամակէն կ'իմացուէր, ինչ պիտի ըլլար արդեօք
սոյն երկու կիներուն կեանքը, ամէն բանէ թերևս զուրկ և այն
ահագին քաղքին մէջ միայնակ:

Իշխանն, ինչպէս որ արդէն ղիտենք, տիկին տ'Արվիլն քանի
ք խաղէր խոտացեր՝ և սուսնց մտածելու՝ անոր միտքը զեղեցնելու

համար՝ ապագայ բարեգործական դեր մ'որոշեր էր, վստահ ըլլա-
լով որ միտքարեղութեան թշուառներ կը գտնէ մարքիզուհիին հետ մօ-
տալու տեսութիւն մ'ունենալէն առաջ: Մտածեց որ գիտուածը
կրնայ իր առջևը հանել ազնիւ թշուառութիւն մը՝ որ՝ իր նպատա-
կին համաձայն, թերևս տիկին տ'Արվիլի սիրտն ու երևակայութիւ-
նը կը գրաւէ: Իր ձեռքն ունեցած նամակին ուրուագիծը՝ որուն
օրինակն անշուշտ ուղղուած չէր օգնութիւն խնդրուած անձին, կը
յայտնէր որ զրոզը հարար և համըրդ բնաւորութեան տէր մ'էր
և անտարակոյս ողորմութեան մ'առաջարկութեան պիտի դժարէր:
Հետևապէս ինչ զուրկութիւններ, ինչ դարձուածներ, ինչ փա-
փուկ հնարներ գործածել պէտք էր առատասիրտ նպատակի աղբիւ-
րը սքողելու կամ զայն ընդունել տալու համար . . . : Եւ ակէզ զատ
ինչ հնարագիտութիւն հարկ էր սոյն կնկան տունը մտնելու, որպէս
զի մարդ կարող ըլլայ դասելու՝ եթէ իրօք արժանի է այն համակ-
րութեան զոր առ երևոյթս կը ներշնչէր: Ռօտովֆ այս պարագայիս
մէջ անթիւ նոր նոր, հետաքրքրական, սրտաշարժ այլալու թիւններ
կը նշմարէր, որով տիկին տ'Արվիլ մեծապէս պիտի շօշուօք
ինչպէս որ արդէն անոր խոտացեր էր:

— Ինչնայէ՛, երբէ՛ս — ըսաւ Ռիկօլէզ զուարթօրէն Ռօտովֆին —
ի՛նչ է այդ կարդացած թղթի կտորը:

— Իմ փոքրիկ կէն — պատասխանեց Ռօտովֆ — շատ հետաքրք-
քիր ես . . . ուրիշ անգամ կը յայտնեմ քեզ . . . գործք լինողցի՛ր:

— Անշուշտ, և քու նպատած անձերդ թագաւորի պէս պիտի
տեղաւորուին. հիմակ կը մնայ վճարել. տիկին Պուվար խօսքի
պաւկող է, պէտք է արդար ըլլալ . . . :

— Իմ փոքրիկ կէն, ուրիշ բան մ'ալ կայ . . . : Ես ստակը վճ-
ճարելու ատենս, դեմ տիկին Յօրէլի և իր գաւակներուն համար
պէտք եղած հազուատներ ընտրէ, կը խոտտովանիմ որ ասանկ բա-
ներու մէջ համբալ եմ: Քնեղք բաներդ այս տեղ բերել տուր, ա-
մէնը մէկէն կը տանին տունը և այն ողորմելի մարդիկ բոլոր պէտք
եղածը կ'ունենան:

— Միշտ իրաւունք ունիս, երբէ՛ս: Քիչ մը սպասէ ինձ, չեմ
ուշանար . . . : Երկու վաճառուհի կը ճանաչեմ որոց սովորական յա-
ճախորդն եմ, անոնց խանութն ամէն պէտք եղածը կը գտնեմ: — Եւ

Յիսուսի զուրս ելաւ ըսելով :

— Յիկին Պուվար, քեզ կը յանձնեմ էրէկ . չըլայ որ անոր հետ աչք ունը ընես :

Եւ խնայողով թեթեակի հետացաւ :

— Աէտը է խոստովանիլ — ըսաւ Պուվար խաթուհը ԳօտոյՖին՝ Յիսուսի մեկնելէն ետեւ — պէտք է խոստովանիլ որ նշանաւոր տան տիկին մ'ունիս : Ի՞նչ վարպետ է բան դնելու մէջ : Ասկէ զառքանի սիրուն է, վարդապոյն ու սպիտակ է, մեծ գեղեցիկ աչքերով ու նոյն պոյն մազերով . . . :

— Չքնաղ կին մը չէ՞, ի՞նչ կըսես, և ես ալ երջանիկ ամուսին մը, տիկին Պուվար :

— Ա՛րջափ բարեբաղդ ամուսին՝ նոյնչափ բարեբաղդ կին մ'է այն . . . կասկած չունիմ ասոր վրայ ,

— Կարծիքդ սխալ չէ : Բայց բէ նայիմ, ի՞նչ է քեզ պարտքս :

— Քու փոքրիկ տան տիկինդ 330 Ֆրանքէն տոսկ մ'աւելի չուղեց ատլ ընտրած բաներուն համար : Աստուած վկայ որ մինակ 13 Ֆրանք կը վաստիկիմ, ինչու որ ուղածիս պէս աժան չընեցի այս բաները . . . սիրտս չըլմացաւ սակարկելու . . . զանոնք ծախող անձերը շատ գժբաղդ կ'երեւէին :

— Իբրև, միթէ սա փոքրիկ դրասեղանն ալ այն անձերէն առիւր :

— Հա՛, պարոն . . . Ճանարիտը, քանի մտածեմ սիրտս կը խշտըլայ : Երեւակայէ անգամ մ'որ առջի օրը նորասփի և գեղանի կին մը հոս կ'ըլայ, բայց այնչափ գունատ, այնչափ նիհար, որ անոր գէմքը տեսնողը կը ցտի . . . մենք աղէկ կը հասկնանք այս վիճակէն : Թէեւ, ինչպէս որ կըսեն, վրան գլուխը կը ծփար, իր հին սեւատի անթաւ շալն, իր բէրիական սև և ցաւատած շրջազգեստն, իր յարգէ գտալին՝ յունվար ամսեան մէջ (այս կինը սգի մէջ էր) կը յայտնէին, ինչպէս որ սովոր ենք ըսելու, «սպանիկ ըշտատու-թիւն» մը, վասն զի ստոյգ եմ որ սողիւ կին մ'է . վերջապէս կարմրելով հարցոյց ինձ եթէ կուզեմ երկու ամբողջ անկողին և հին փոքրիկ դրասեղան մը դնել : Ես ալ կը պատասխանեմ թէ՛ որովհետեւ կը ծախեմ : Հարկաւ դնելու ալ պէտք ունիմ, և եթէ ինձ յարմար անեմ, գործը մնգածէ միայն անգամ մ'այն բաները տեսնել կու-

զեմ : Այն ատեն սոյն կինն աղաչեց զիս որ իր տունն երթամ, որ հետու չէ, այլ Պուվարէն անդին՝ Սէն-Մարգէնի շրանցքին քարափին վրայ : Խանութի մօրաքեռս աղջկին կը ձգեմ, կնկան հետ կերթամ, և կը հասնինք՝ տուն մ'որ բակի մը խորն ու աննշան մարդերու բնակարանն էր : Չորրորդ դասիկները կ'ենեմք . կինը դուռ մը կը զարնէ, տասն չորս տարեկան օրիորդ մը բանալու կ'ըլայ . այն ալ սպառու էր, դեմնած և վախտ, թէև արևու պէս գեղեցիկ . . . այնչափ գեղեցիկ որ կ'ապշիմ կը մնամ :

— Եւ ո՛վ էր այն գեղեցիկ նորաբոյս օրիորդը :

— Սպառու կնկան դուստրն էր . . . Թէև ցուրտ կար, խեղճ աղջիկը մինակ սև բանաքակէ ոլոսած աղիկ շրջազգեստ մը և սուղի բուրովին մաշած շալ մ'ունէր :

— Եւ միթէ իրենց բնակարանն աղքատիկ էր :

— Երևակայէ, պարոն, երկու մաքուր այլ մերկ խուցեր, բայց այնչափ սանալի որ մարդ փէտ կը կտրի . կար վատարան մ'որուն մէջ մոխրի հատիկ մ'անգամ չէր տեսնուեր . բաւական ատենէ վեր կը բակ վատած պիտի չըլային անոր մէջ : Իրենց բոլոր կարասին էր, երկու անկողին, երկու աթոռ, դարասակ մը, հին սնտուկ մը և սպիտի դրասեղանը . իսկ սնտուկին վրայ ալ մետաքսէ թաշկինակով ծրար մը կար . . . : Այս փոքրիկ ծրարն էր բոլոր մօրն ու աղջկին ունեցածը, կարասին ծախուէլէն ետեւ : Տանտէրը իր անտէլլըին փոխարէն վար պիտի դնէր, ինչպէս մեզի հետ վեր ելնող դոնապանն ըսաւ, անկողնի երկու փայտ, աթոռներ, մտաւկն ու սեղանը : Այն ատեն սոյն կինը պարկեշտութեամբ աղաչեց զիս որ անկողինս, սաւաններուն, վարապոյններուն և վերմակներուն գին մը տամ : Խաչ վկայ, պարոն թէև իմ արհեստս է վար գնով առնել և սուղ ծախել, երբ այն խեղճ օրիորդին լայալին աչքերը տեսայ, նոյնպէս իր մայրն՝ որ կարծես թէ սրտին ներսէն կ'լար, այն բաներուն արժեքէն զրեթէ 13 Ֆրանք վար տուի : Հաւանեցայ նաև՝ զանոնք պարտաւորելու համար, սոյն փոքրիկ դրասեղանն ծախու առնուլ, թէև իմ գործիս չէր դար .

— Այն դրասեղանը պիտի ես դնեմ, տիկին Պուվար . . .

— Իրա՛ւ կըսես, չնորհակալ եմ, պարոն, թէ որ չառնէիր երկար ժամանակ զնող մը պիտի չեղնէր. . . Սոի զայն խեղճ կնիւնն ծառայութիւն մ'ընելու մտօք: Ուստի ըսի անոր թէ ի՞նչ զին ընծայեմ սոյն առարկաներուն համար. . . : Ար յուսայի որ հետս կը սակարկէ և աւելի կուզէ. . . ամենեւին բերասնը չբացաւ : Ասկից ալ հասկցայ որ հասարակ կարգի կին մը չէ, իրաւ որ ~~առնէի~~ իշխանութիւն մ'է, պարոն : Ուստի անոր կըսեմ : — Այսչափ կը վճարեմ, — Ան ալ ինձ կը պատասխանէ. — Շատ աղէկ : Հիմա ձեզի երթանք, որ վճարես որովհետեւ ալ չպիտի դամ այս տունը : — Այն ատեն ըսաւ իր աղջկին որ սընտրելին վրայ նստած կ'լար : — Քէր, առ ծրարը. . . (աղէկ միտքս պահեցի անունը, ճշտիւ Քէր անուանեց զանի) : Կորատի օրիորդը ոտք կ'ելնէ, բայց փոքրիկ զբասեղանին քովէն անցնելու ատեն, ծունր կը դնէ յանկարծ անոր առջև և կսկսի հեծկլտալ : — Ձաւակս, սիրտ առ, մեզ կը նային — կըսէ անոր մայրը կէս ձայնով մը, թէ և ես աղէկ լսեցի : Ար նայիս, պարոն, որ աղքատ ընտանիք մ'է, բայց հպարտ : Երբ տիկինը պզտի զբասեղանին բանալին տուաւ ինձ, անոր կարմրած աչքուն մէջ արտառք մը տեսայ, կարծես թէ սրտէն արիւն կ'երթար այս հին կարասիէն բաժնուելուն, տակայն իր պաղարիւնութիւնն ու արժանապատուութիւնը կը ջանար պահել օտարներու առջև : Աերջայէս դո՛ւսպանին իմաց տուաւ որ պիտի դամ վերցընելու այն ամէն բաներն որ տանսէն չպիտի առնու և ելանք հոս եկանք : Կորաբայս օրիորդը մօրը թեք մտեր և ձեռքը բռներ էր իրենց ամէն ինչքը պարունակող ծրարը : Իրենց ստակը, որ էր 315 ֆրանք, վճարեցի և այնուհետև անոնց երեսը չտեսայ :

- Հապա իրենց անունը ի՞նչ է :
- Չգիտեմ. տիկինը դո՛ւսպանին առջև ծախեր էր ինձ իր կարասին, պէտք չունէի իր անունը հարցնելու. . . իր ծախածն ի հարկէ իրն էր :
- Իրենց նոր հասցէ՞ն ալ չգիտես :
- Այդ ալ չգիտեմ :
- Տարակոյս չկայ որ իր առջև նստած տան մէջ գիտեն :
- Ո՛չ, պարոն, չգիտեն : Երբ գնած բաներս առնելու համար

գարձայ, դո՛ւսպանը ըսաւ ինձ, մօր ու աղջկին վրայ խօսելով : — Շատ հանդարտ, շատ յարգելի և շատ թշուառ հողիներ էին անոնք, կը վախեմ միայն որ փորձանքի մը չհանդիպին : Գրտէն այնպէս խաղաղ կերեւին, բայց մտիր անոնց սիրտը, կը տեսնես որ յուսահատ են : — Բայց այս միջոցիս ո՛ւր բնակելու դացին — հարցուցի անոր : — Իրաւոր, չգիտեմ — ըսաւ ինձ. — առանց բան մ'ըսելու ձեռքդ դացին. . . և վտահ էմ որ ալ չպիտի երեւնայս կողմերը :

Ռօտորֆին պահ մը յղացած յոյսերն մարեցան : Ուր գտնուելու էր այն երկու տարաբաղբ կիները, քանի որ մինակ աղջկին անունը, Քէր, զիտէր և հատուկօրոք նամակի մ'ուրուարիծն ունէր ձեռքը, որուն ներքեր սա խօսքերը կային :

— Գրէ՛ւ ~~առնէի~~ ~~որ~~ Լիւսնէյ Պ. որ Սէն-Բը՛նէ համար : Ուրեմն այն թշուառներուն հետքը գտնելու միակ ու տկար յոյս մը տիկին տը Լիւսնէյի վրայ էր, որ բարեբաղբօրէն տիկին տը Արվիլի ծանօթ անձ մ'էր :

— Ահա՛ առ, տիկին, առ թուղթը և քեզի տալիքս վար դիր — ըսաւ Ռօտորֆ վաճառուհիին 500 ֆրանքնոց դրամատուն մը ներկայելով :

- Հիմակ մնացածը կտամ քեզ, պարոն. . . :
- Այս բաները փոխադրելու համար ո՛ւր գտնել պէտք է սայլակ մը :
- Եթէ ձեր տեղը հեռու չէ ~~առ~~ Բեն սայլակ մը կը բաւէ. . . աղբարիկ Թէրօմն ունի այս կողմերս հաս մը, այն է իմ սովորական բեռնակիրս. . . ի՞նչ է ձեր հասցէն, պարոն :
- Գանբլ փողոց, թիւ 47 :
- Գանբլ փողոց, թիւ 47. . . : Ո՛հ, լա՛ւ, լա՛ւ. . . գիտեմ ո՛ւր է :
- Բնաւ գացած ես, այն տունը :
- Շատ անդամ. . . նախ և առաջ գրաւի վրայ փոխ տուող կնիկէ մ'որ այն տեղ կը բնակի այլ և այլ լաթեր գնած եմ. . . իրաւ է որ աղւոր արհեստ մը չբանիր այն կնիւն. . . բայց այդ իմ

սրբանալիք բանս չէ . . . ան կը ծախէ, ես կը գնեմ, ու առնելիք ապիւր չունիմ . . . : Անդամ մ'ալ, գրեթէ վեց շաբաթ առաջ, գացի չորրորդ դասիկները բնակող պատանիի մը կարասիին համար, որովհետեւ տունէն կ'երևէր . . . :

- Կարելի է Պ. Քրանտուս ժէրմէն էր—գոչեց Ռօտովֆ :
- Ճիշտ, այն էր . . . միթէ վանի կը ճանչնուի :
- Շատ աղէկ կը ճանչեմ : գծբաղդաբար իր նոր հասցէն Գանբըլ փողոցը չլծողուց և չգիտեմ թէ ո՛ւր կը գտնուի :
- Եթէ այդ է փախաբզ, հիմա քեզ դո՛ճ կ'ընեմ :
- Ի՞նչ, ուրեմն ուր բնակիլը գիտես :
- Ճշտիւ չգիտեմ, բայց կընամ ըսել քեզ թէ ո՛ւր կընաւ գտնել զանի . . . :
- Ո՛ւր :
- Նօտարին տո՛ւնն ուր կ'աշխատի :
- Նօտարի՞ մը :
- Այո՛, այն նօտարին որ Սանդիէ բողոցը կը նստի :
- Պ. Թաք Ֆէրբանի՞ն—գոչեց Ռօտովֆ :
- Նայն ինքն, սուրբ մարդ մը . իր գրասենեակը խաչ և օրհնեալ փայտ կայ . երբ ներս մտնես կարծես թէ սրբատուն կը հոտի :
- Բայց ուսկի՞ց իմացար որ Պ. Թէրմէն այն նօտարին տունը կ'աշխատի :
- Ըսեմ քեզի . . . : Այս պատանին իր փոքրիկ կահ կարասին ամբողջապէս գնելու առաջարկեց ինձ հոս գալով : Այս անդամ ալ՝ թէև ունեցածն իմ բանիս չէր գար, առի ամէնն ալ և ապա կտոր կտոր ծախեցի, այն երիտասարդին համբելի բըլայու համար, ինչպէս որ իրօք շատ դո՛ճ եղաւ : Ուստի իր կարասին ծախու առի, լա՛ւ, վճարեցի . . . լա՛ւ : Տարակոյս չունիմ որ շատ դո՛ճ եղաւ ինձ, ինչու որ տասն հինգ օրէն հոս եկաւ անկողնի մը կազմը գնելու : Փոքրիկ սայլակ մ'ու բեռնակիր մը բերեր էր հետը . ամէնը մէկ կը հօկէն (emballer) լա՛ւ, բայց ստակ տալու միջոցին կը նայի որ քսակը տուն մտցեր է : Այնպիսի սլարկեշտ պատանիի մը գէմք ունէր որ անոր կըսեմ : Փոյթ չէ՛, առ սար կարասին, ստակին

համար ես անձամբ տունդ կ'գամ : — Շատ աղէկ, ըսաւ ինձ, բայց ըսաւ առնը չեմ նստիր . վաղը Սանդիէ փողոցը Պ. Թաք Ֆէրբան նօտարին բնակարանն եկուր, ո՛ւր տեղ կը ծառայեմ, և ստակդ կտամ : — Միւս օրը գացի, գրամն վճարեց, մինակ ինձ դարմանալի երեցած բանն այն է որ իր կարասին ծախեց տասն հինգ օրէն ետքը ուրիշ մը գնելու համար :

Ռօտովֆ գուշակել կարծեց և գուշակեց այս տարօրինակ ընթացքին պատճառը : Թէրմէն ղինքն հալածող անձերէն իր հետքը անտես ընել կը փախաբէր : Անշուշտ վախելով որ իր հալածիչներն տուն փոխելուն վրայ նոր բնակարանին ճամբան կը գտնեն, խոհեմով ին սեպեր էր իր կահ կարասին ծախել և ապա ուրիշ ծախու առնուլ : Իշխանն ուրախութենէ գողաց տիկին Թօրթին երջանկով թեան մտածելով, քանի որ ՚ի վաղուց և ընդունայն փնտրած որդին վերջապէս պիտի տեսնէր : Քիչ ատենէ Ռիկօլէզ ներս մըտաւ, խնդալիք աչօք և ժպտան ՚ի շուրթ :

— Լա՛ւ, իրաւունք չունէի՞ ըսելու—գոչեց նա—չեմ սխալեր . . . որ 640 Ֆրանքով մեր գործը պիտի լմնցնենք, և Վօրէլէնք թաղաւորի պէս պիտի տեղաւորուին . . . : Նայէ՛, նայէ՛ սա եկող խանութպանները . . . ի՞նչպէս բեռնաւորուած են . . . : Աչ ինչ չպիտի պակսի տան համար . ամէն ուզածդ կայ . . . մինչ անդամ կատարաց մը, նորոգ անաղեալ երկու դեղեցիկ սաներ և սրբաձաման մը : Ինքնովին ըսի, որովհետեւ ամէն բան մեծէն կուղին բռնել, մեծէն բռնենք և մենք . . . : Իսկ այս ամէն աշխատութեան համար, հաղիւ թէ երեք ժամ կորուսի . . . : Հիմակ շուտ մը վճարէ, գրացիս, և ճամբայ եղնենք . . . : Արդէն օրհարսակ է, պէտք է որ ասեղս կրակի պէս բանեցնեմ որպէս զի այս առաւօտեան կորուստս լեցնեմ :

Ռօտովֆ ստակը վճարեց և Գանբըլէն հեռացաւ Ռիկօլէզին հետ : Այն միջոցին որ սքճուհին և իր ընկերն իրենց տան ուղին կը մտնէին, քիչ մնաց որ թաւալ զլոր պիտի դային սիկին Բիրլէէն, որ կը վազվզէր մտայցող, շուարած և և ահարեկ . . . :

— Ա՛հ, Աստուած իմ—ըսաւ Ռիկօլէզ— Ի՞նչ ունիք, տիկին

Բիբլէ, այդպէս ո՞ւր կը վազվզէր:

— Գո՞ւ ես, օրիորդ Ռիկօլէ՛դ... — պոռայ Անաստաղի—ողորմած Աստուած զընկեց քեզ անշուշտ... օգնէ ինձ Ալֆրէտին կեանքն աղատելու համար... :

— Ի՞նչ կըսես:

— Իմ սիրական խեղճ ծերուկս մտրեցաւ, զ[Թա՛] մեր վրայ... շուտ մը վաղէ դնա գեղադործէն երկու սուի օշնդիր առ... շատ զօրաւոր ըլլայ. այս է իր դեղն երբ անհանդիսա ընէ զինքն... իր ստամոքսի ցաւը... կարելի է անով ինք զինքը գանէ... զ[Թա՛] սիրտ եղեր, մի մերժեր խնդիրս որ ես ալ Ալֆրէտին քովն երթամ, բոլորովն շնորհեր եմ:

Ռիկօլէ՛դ Ռօտովֆին թեւը թողուց և գեղադործին վաղեց:

— Բայց ի՞նչ փորձանք հասաւ, տիկին Բիբլէ— հարցուց Ռօտովֆ գունապանուհին ետեւէն դնալով, որ օթեակը կը դառնար:

— Ես ալ չգտեմ ի՞նչ, յարդի պարոն: Գուրս ելեր էի որ քաղաքապետին, եկեղեցին և ճաշարանն երթամ... և Ալֆրէտն այս պրոյսններէն սպասեմ: Տունը գառնալուս... ի՞նչ տեսնեմ աղէկ... իմ սիրական ծերուկս չորս ոտքերն օդին մէջ՝ գետինը ընկեր փոռե՛ր էր...: Ահա տե՛ս, պարոն Ռօտովֆ— ըսաւ Անաստաղի իր որջին գուռը բանալով— տես անգամ մը սիրտդ կտոր կտոր չըլլա՞ր:

Ողորմելի՛ տեսարան... միշտ իր լայնբերան գլխարկը գլուխը դրած, և սուրբաբանէն սուելի վար իջած, վասն զի կասկածելի կղքնին բռնապէս մղուելով անշուշտ (ինչպէս որ կերեւէր շեղակի ծալքէ մը) իր աչերը ծածկեր էր, Պ. Բիբլէ անկողնին ոտքը կախած գետինը լարուեր նստեր էր: Մարմնօքն անցեր էր, Ալֆրէտ սկսեր էր ձեռներով թեթեւ շարժումն ր ընել, որպէս թէ իր առջևէն բան մը կամ մարդ մը վանել կուզէր, յետոյ փորձ փորձեց իր նորահար ակնապահակը (visière) հանել զլիսէն:

— Ահա կը տատանի... աղէկ նշան է... խեղքը գլուխը կգայ... պոռայ գունապանուհին: Եւ ծռելով անոր ակամջէն վար դռնէց: — Ի՞նչ ունիս Ալֆրէտս... Ստաղիդ է քեզ խոսողը... Ինչ պէ՛ս ես...: Հինակ քեզն օշնդր պիտի բերեն...: աղէկ պիտի

դառնաս... — Ապա իր ամենէն նուրբ ու դուրեւի ձայնն հանելով յարեց. — Ի՞նչ, ի՞նչ ձուն բերին իմ այս սիրական ծերուկիս զլիսին, վերադրեցին, դանակ քաշեցին վրան, ինչ ըրին քեզ, հէ՛յ:

Ալֆրէտ խորին հառաչ մը ձգեց և իբր մահչիւն մը սա բաղդադէս բառն արտասանեց:

— Գապրի՛ծն:

Եւ իր երեքուն ձեռները կարծես թէ նորէն ահաւոր տեսիլ մը վանել կուզէին:

— Գապրի՛ծն, նորէն այն ասիբրատ պատկերհանն է— դռնեց տիկին Բիբլէ: — Ալֆրէտ բոլոր գիշերն այնչափ երազեց անոր վրայ որ կիցերովն հողիս հանեց: Կրաւ որ այն հրէշը խրտուիլակ մ'է: Այ միայն անոր օրերը թունաւորեց, այլ և իր գիշերները կը թունաւորէ. մինչև անգամ քունին մէջ կը հալածէ զինքը... այո՛, պարոն, իբր թէ Ալֆրէտս աճրագործ մ'է, և այս Գապրիծնը, որ Աստուծոյ կրակին գայ, անհաշտ խղճի խայթ մ'ըլլայ:

Ռօտովֆ անշմարելի կերպով ժպտեցաւ, և գուշակեց որ Ռիկօլէ՛դի վաղեմի դրացին նոր խաղ մ'ըրած պիտի ըլլայ:

— Ալֆրէտ... պատասխան տուր, համը մի կենար, սիրտս փորս կը խաղցնես— ըսաւ տիկին Բիբլէ— նայիմ քեզ ինք զինքիդ եկուր...: Ի՞նչ պէտք ունիս այն ստահակին վրայ մտածելու: արդէն աղէկ գիտես որ քանի անոր խորհիս մի և նոյն ցաւը կուսնենաս, ինչպէս երբ կաղամբ ուտես... ստամոքսիդ ծակը կը խանգարի և կարծես թէ քեզ կը խեղդեն:

— Գապրի՛ծն— կրկնեց Պ. Բիբլէ, վեր հանելով իր գլխարկն ճղով մ'որ իր աչերուն վրայ լիովն իջեր էր, և մոլորած գեմբով մը չորսղին նետեց զըրեց: Ռիկօլէ՛դ ներս մտաւ հետը բերելով օշնդրի որուակ մը:

— Շնորհակալ եմ, օրիորդ, որչափ բարեսիրտ ես,— ըսաւ պառաւը. ասա յարեց նա. — Առ նայիմ, սիրական ծերուկս, կլլէ սա, խեղքդ գլուխդ պիտի բերէ:

Եւ Անաղտասի աշխուժով մը Պ. Բիբլէի շրթերուն մօտեցուց

շիշը և աշխատեցաւ անոր խմել տալու օշինդրի ջուրը : Ալֆրէտ պարապ տեղը կը տարուբերէր . կինը՝ հիւանդին տկարութենէ օգուտ քաղելով՝ ուժղին ձեռքով մ'անոր գլուխը բռնեց , միւսովը շիշին ճարձկը անոր ակուններուն մէջ խօթեց և ստիպեց օշինդրը խմելու . ապա յաղթանակ տարածի սէս սյուսայ :

— Է՛՛հ , հայտէ է՛՛հ . հիմա՛ ռաջ պիտի ելնես , սերական ծերուկս :

Եւ յարաւի , Ալֆրէտ ձեռնին յետնակողմովը բերանը սրբելէն ետեւ՝ աչերը բացաւ , սորը ելաւ կանդուն և վայրագ ձայնով մը հարցուց :

- Տեսա՞ք դանի :
- Ո՞վ :
- Գնա՞ց :
- Բայց ո՞վ , Ալֆրէտ :
- Գապրի՛օնը :

— Ինչպէ՞ս յանդգնեցաւ . . . դոչեց դոնապանուհին :

Պ . Բիրբէ նաւապետին արձանին պէս համը՝ ծոցեց սոյն ուրուս ակնին պէս իր գլուխը երկու անդամ հաստատական կերպով մը :

— Ի՞նչ . Պ . Գապրի՛օն հո՞ն եկաւ . հարցուց Ռիկօլէդ իր բուռն ծիծաղը բռնելով :

— Այս հրեշն ինչո՞ւ համար Ալֆրէտին ետեւէն ընկեր է . սրուայ տիկին Բիրբէ : — Ա՛հ , թէ որ այս տեղ դանուէի . . . աւելիս կոթովը գլուխը պիտի պատուէի : Բայց խօսէ , Ալֆրէտ . . . սրտմէ մեզի գժբադրութիւնդ :

Պ . Բիրբէ ձեռքի շարժումով մը հասկցուց որ պիտի խօսի : Լայնբերան դիւարի կրող մարդուն բարեպաշտական լութեամբ մը մտիկ ըրին : Յետին ծայր յուզուած ձայնով մը «յո՛ւ յո՛ւ» խօսեցաւ :

— Իմ՝ ամուսինս այն ինչ գուրս ելեր էր՝ որ պարոնին հրամանին համեմատ (Ռոտորֆին առջև խոնարհութիւն մ'ըրաւ) քաղաքապետին , կեղեցիկն և ճաշարանն երթայ , զիս սոյն աշխատանքէն ազատելու համար . . . :

— Այս սիրական ծերուկս բոլոր դիշեր ստակալի երազներով

դրադնապեր էր , . . . : Սոյն ծանրութիւն չուղեցի տալ անոր — ըստ Անաստազի :

— Այս երազն ՚ի վերուստ իբր ազգարարութիւն մը զբիւրած էր ինձ — վրայ բերաւ դոնապանը ջերմեանդութեամբ : — Գապրի՛օնը երազս տեսիր էի . . . հեռեւապէս Գապրի՛օնին երեսէն ձուռն մը պիտի դար գլխիս . . . : Ուստի սա տեղ . . . սեղանիս առջև հանդարտ նստեր էի և կը մտածէի թէ սա կօշիկն երեսը ինչպէս փոխել պէտք է . . . երբ շուկ մը ընցի . . . կարծես թէ մէկը օթեկիս ապակին կը շփէր . . . : նախազգածում մը տեսէ . . . կամ երկնային ազգարարութիւն մը . . . սիրտս սկսաւ ձկնել , գլուխս վերուցի . . . և ապակիին մէջէն . . . տեսայ . . . տեսայ . . . :

— Գապրի՛օնն անշուշտ . — սրուայ Անաստազի ձեռները միացնելով :

— Այո՛ , Գապրի՛օնը — սրտատխանեց խոր ձայնով մը Պ . Բիրբէ : — Իր նողկալի դէմքը սա , սա սրտահասնին փակած էր և կատուի աչերովն ինձ կը նայէր . . . ի՞նչ կըսեմ . . . վազրի աչերովը . . . ձի՛շտ , ինչպէս որ երազիս մէջ տեսայ . . . : Խօսի՛ք ուղեցիք լեզուս բերնիս մէջ կպեր էր , ուղեցի սոր ելնել . ալմոխս կպեր էի . . . : Աօշիկս ձեռքէս վար ընկաւ և , ինչպէս կենացս ամէն փափուկ և ծանրակշիւ պարազաներուն մէջ , այս անգամ՝ ալ բոլոր լորովին անշարժ մնացի . . . : Այն ատեն բանալին դրան նիզի մէջ գարձաւ , դուռը բացուեցաւ , Գապրի՛օն ներս մտա՛ւ :

— Ներս մտա՛ւ . . . ի՞նչ երես . . . — վրայ բերաւ տիկին Բիրբէ , որ իր էրկին պէս ինքն ալ այս յանդգնութենէ քար կտրեր մնացեր էր :

— Ասմացուկ մը ներս մտաւ . . . յարեց Ալֆրէտ — դրան վրայ կանկ մ'առաւ իր ակնարկովը թերեւ զիս թողելու համար . . . վայրենի ակնարկ մը . . . ապա դէպ ինձ մտեցաւ , ամէն մէկ քայլին կանկ աւելով՝ աչքովը զիս թափ զարնելով , առանց բառ մ'ըսելու շիտակ , անմեռո՛նչ և ուրուականի մը պէս սարսուռի . . . :

— Մարմնոյս բոլոր մազերը կը քտամին ըսածներէդ — վրայ բերաւ Անաստազի :

— Հեաղհեաէ աթոռիս վրայ նստած անշարժ կը մնայի... իսկ Գապրիօն ծանր ծանր կը յառաջանար միշտ... իր ակնարկով սեւերելով զիս, ինչպէս օձը թռչունը... վասն զի սոսկում կ'ազդէր ինձ... և ակամայ ես ալ անոր կը նայէի ակնասպիշ... բոլորովին մօտս կ'այայ... անոր զգուելի տեսքը չեմ կրնար տանիլ... շատ ծանր էր ինձի համար... ճարս կը հասնի... աչերս կը դուցեմ... այն ատեն կըզամ որ ձեռներն իմ զլսարկիս տանելու կը յանդգնի, վերէն կը բռնէ... մեղմիկ մը գլխէս կը հանէ... և կնտակս բայ կը թողու, . . . : Թալուկ մ'է զիս կը բռնէ... շունչս կը կտրի... ակնաշնորս կը բզզան... աւելի ևս աթոռիս կը կըսպիւմ... աչերս աւելի ևս սլինդ կը դոցեմ... : Այն ատեն Գապրիօն կը ծոխ... իր երկու մեռելի պէս սրազ ձեռներովը զլուսս կը սեղմէ... և իմ սառնաթոր ճակտիս վրայ... լալերը համբոյր մը կը դրոշմէ... անամօթը :

Անաստազի թեւերը դէպ 'ի երկին տարածեց :

— Ի՞մ ամէնէն անհաշտ թշնամիս դայ ճակատս համբուրէ' : Այս կերպ դազանական գործ մը մտածել տուաւ և շատեց զիս : Գապրիօն իմ սպշութենէս օգուտ քաղելով զլսարկիս զլուսս դրաւ, ապա բռնցի զարնելով մինչև աչերուս իջեցուց, ինչպէս որ տեսաք : Այս վերջին նախատիկնքը զիս տակն ու վրայ ըրաւ, չափը լցաւ, ամէն բան աչքիս առջև կը դառնար, և մարեցայ այն միջոցին որ տեսայ փեղցրիս եղններուն տակէն՝ անոր գուրս ելնելը՝ հանդարտ և ծանր կերպով մ'ինչպէս որ ներս մտեր էր :

Յետոյ, իբր թէ այս նկարագրէն ուժաթափ Գ. Բիբլէ աթոռին վրայ ընկաւ ձեռներն դէպ յերկին վերջնելով լին անէճք կարդալու կերպով մը : Ռիկօլէդ յանկարծ գուրս ելաւ, արիւթիւնը հատաւ, ծեծաղելու վախաբէն կը խղրուէր, և չէր կրցեր ինք զինքը աւելի ևս զսպել : Նոյն իսկ Ռօտուլի գժուարաւ իր ծանրութիւնը անվողով պահէր էր :

Յանկարծ խառն ու շիտթ աղմուկ մ'որ ժողովրդային ամբոխի մը գալուստը կաւեաէ, փողոցին մէջ հնչեց, դրան ուղիւն դրսի կողմը մեծ ժխոր մը բռդաւ, և քիչ ատենէ դրան սալարկին վրայ հրաշքաններու բռններուն թնդիւնն ըսելի եղաւ :

ՉԵՐՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

— Տէ՛ր Աստուած, սպարոն Ռօտուլի—դոչեց Ռիկօլէդ վազելով գունատ ու դոյրջուն— աստիկան մը և պահնորդ մը կայ դուրսը :

— Աստուծոյ օղորմութիւնը մեր վրայ հսկէ— ըսաւ Գ. Բիբլէ եռանդուն ու երախտապէտ երկիւղածութեամբ մը, — Գապրիօնը բռնելու եկան անշուշտ... դժբաղդաբար ուշ հասան... :

Աստիկան մ'որ իր սև հագատին ներքև կապած դօսիէն կը ճանչցուէր, օթեակը մտաւ : Զդօն, արծանի և խիտ կերպարան մ'ունէր :

— Պարոն ոստիկան, շատ ուշ է... ո՞ճրադործը փայտաւ... ըսաւ Գ. Բիբլէ արամալի : Բայց կրնամ անոր նկարագրերը տալ քեզ... վայրադ ժպիտ... լպիրշ ակնարկ... ձեւեր... :

— Որո՞ւ վրայ է խօսքդ— հարցուց պաշտօնատարը :

— Գապրիօնի վրայ, սպարոն ոստիկան... : Բայց թէ որ ետևէն ինքը, կարելի է անոր համար ու բռնէք— պատասխանեց Գ. Բիբլէ :

— Ես չըիտեմ թէ այդ Գապրիօնն ո՞վ է— ըսաւ պաշտօնատարն անհամբեր : — միթէ այս տունը կը բնակի ակնահատ բանւոր թէրօմ Մօրէլ անուն անձը :

— Այո՛, ոստիկանս— ըսաւ Բիբլէ զինորական բարև տալով :

— Զիս իր բնակարանը տար :

— Այնահատ Մօրէլին— վրայ բերաւ դճնապանուհին յետին ծայր զարմանալով— բայց բարի Աստուծոյ մէկ դառնուկն է այն... անհար է որ... :

— Թէրօմ Մօրէլ այս տե՛ղ կը բնակի, այո՛ կամ ոչ :

— Այո՛, այս տեղ, ձեռնայարկի մը մէջ կը բնակի իր ընտանիքին հետ :

— Զիս այն ձեռնայարկի առաջնորդէ :

Ապա, իրեն ուղեկից գտնուող մարդու մը դառնալով պաշտօնատարն ըսաւ :

— Թող քաղաքապետական երկու պահակները վարը սպասեն և

գաւթէն չհեռանան : Ժխտէնը զրկէ որ երկանիւ մը բերէ :

Մարդը հեռացաւ այս հրամանը կատարելու համար :

— Հիմակ — վրայ բերաւ պաշտօնատարը Պ. Բիբլէի ուղղելով խօսքը — Մօրէլին բնակարանը սայր զիս :

— Եթէ արգելք մը չկայ, պաշտօնատարա, ես Արփրէտին գործը սխտի կատարեմ. Գապրիօնի պատճառաւ անհանգիստ եղաւ, որ կաղամբներուն պէս ստամուրսին վրայ կը կենայ :

— Գու եղեր ես կամ էրիկդ, նոյն բանն է, առաջ անցեր . . . :

Եւ տիկին Բիբլէի ետեւէն երթալով սկսաւ սանդղէն վեր ելնել. բայց քիչ ատենէն կանկ մ'առաւ, անտնելով որ Ռօտղֆ և Ռիփօէդ իրեն կը հետեւին :

— Գուք ո՞վ էք, ի՞նչ կուզէք. — հարցուց անոնց պաշտօնատարը :

— Չարորդ գատիկոնին երկու վարձկաններն են — ըսաւ տիկին Բիբլէ :

— Ներէ՛, պարոն, չղիտէի որ տունէն էք — ըսաւ Ռօտղֆին : Ռօտղֆ՝ ոստիկանին մարդավար կերպերէն նպատաւոր դաղաբար մ'առնելով, ըսաւ անոր :

— Հիմակ յուսահատ ընտանիք մը պիտի տեսնէք, պարոն. չղիտեմ թէ ինչ նոր հարուած մը կ'սպառնայ այս ողորմելի արհեստաւորին, բայց այս ղիշեր անդ թաքար տառապիցաւ . . . : Իր աղջիկներէն մին, որ արդէն հիւանդութենէ հիւժեր էր, մեռաւ իր աչքին առջև . . . ցրտէն և կարօտութենէ մեռաւ :

— Միթէ կարելի՞ է :

— Ճշմարիտ, ոստիկանդ եմ — ըսաւ տիկին Բիբլէ : — Եթէ այս պարոնն՝ որ քեզ կը խօսի, չըսար, և վարձկաններուս թաղաւորն է, որովհետեւ իր բարեբարութեամբ խելո՞՞ Մօրէլը բանաւարկութենէն ազատեց, ակնահաստին բոլոր ընտանիքն անօթութենէն պիտի մեռնէր :

Պաշտօնատարը Ռօտղֆին երեսը կը նայէր զարմանօք և հետաքրքրութեամբ :

— Չարմանալի չէ ըրածս, պարոն — յարեց Ռօտղֆ — գթաւէր անձ մ'իմանալով որ Մօրէլ՝ որուն պատուաւոր և շխտակ մարդ

մ'ըլլալը կ'ապահովեմ՝ քեզ : աղէտալի նոյնչափ անարժան կացութեան մէջ կը գտնուի, արսպրեց ինձ որ վճարեմ այն փոխանակապիւրն որուն համար առեւտրական ատենակն թերակաշներն (recors) այս խեղճ գործաւորը, բաղմամբիւ ընտանիքի մը միակ նեցուկը՝ պիտի քաշէին բանտ տանէին :

Նոյնպէս պաշտօնատարը Ռօտղֆին տնիս կերպարանէն և տոհմիկ կերպերէն զարնուելով անոր պատասխանեց :

— Մօրէլի ուղղութեան վրայ չեմ տարակուսիր. կը յաւիմ միայն որ ծանր պաշտօն մ'ունիմ՝ կատարելու քու առջևդ՝ քանի որ եռանդալիս ինսամբ կը տանիս այս ընտանիքին վրայ :

— Ի՞նչ ըսէլ կուզես, պարոն :

— Մօրէլեցը ըրած ծառայութիւններէդ, խօսելու, կերպէդ կը տեսնեմ, պարոն, որ բարեսէր անձ մ'ես : Այլ սակայն ձերբակալելու համար ինձ արուած հրամանադիրը քեզնէ պահելու պատճառ մը չունենալով՝ կը խոստովանիմ՝ քեզ որ ակնահաստին դուստրը, Լուիզ Մօրէլն առնուլ տանելու համար եկած եմ :

Նորաստի օրիորդին կողմէ թերակաշներուն տրուած ոսկիչիւր ծրարին յիշատակը Ռօտղֆին միտքն ընկաւ :

— Եւ ի՞նչ ամբաստանութիւն կայ անարդէմ, տէ՛ր Աստուած :

— Իբր տղայասպան ամբաստանուած է :

— Ա՛ն, ա՛ն . . . : Ո՛հ, ի՞ր հայրը :

— Քու բաժնէդ կը դուշակեմ, պարոն : որ արդի տիրալի օրաբաղաներուն նայելով այս նոր հարուածը տակալի պիտի ըլլայ արհեստաւորին : Գժբաղդօրէն ինձ տրուած հրամանին հնազանդելու պարտաւոր եմ :

— Բայց զուտ ամբաստանութիւն մ'է կարծեմ — գոչեց Ռօտղֆ : — Ահա զուտ փաստ չկայ :

— Այս մասին չեմ կարող աւելի բացբոշ խօսիլ . . . : Այս փոքրին հետքը դանդաղ պէտք եղած խուզարկութիւնները սկսան, կամ լաւ ևս ըսել, կասկածները ստուգելու համար : ամէն կերպով արժանապատիւ անձի մը յայտարարութեան համամաս . . . այս է Լուիզ Մօրէլի գլխաւորին :

— Ժաք Ֆէրրան նօտարի — ըսաւ Ռօտղֆ սրտմտած :

— Այո, պարոն . . .

— Պ. Ժաք Ֆէրրանն ապիրա՛տ մ'է, պարոն :

— Կը ցաւիմ որ ախարկած մարդդ չես ճանչեր, պարոն :
Պ. Ժաք Ֆէրրանն աշխարհիս ամէնէն պատուաւոր մարդն է, աշխարհածանօթ ուղղութեան տէր է :

— Դարձեալ կը կրկնեմ, պարոն, որ այդ նօտարդ ապիրատ մ'է . . . Մօրէլը բանտարկել ուզեց, որովհետեւ իր աղջկին անոր վատշուէր առաջարկու թիւնները մերժեց : Եթէ այստիսի մարդու մը յայտարարութեան վրայ ամբաստանուած է Լուիզը . . . խոստովանէ, պարոն, որ այս ամբաստանութիւնը հաւատարմութեան արժանի չէ :

— Պարոն, ինձ չիմար և ոչ կը վայլէ Պ. Ֆէրրանի վկայութեան արժէքը կըսել — ըսաւ պաղօրէն պաշտօնատարը . — դործը դատաստանի ստակ է և աստանները սխտի վճռեն, իսկ ես հրաման ունիմ միայն Լուիզ Մօրէլը բռնել և ահա այս հրամանը պիտի կատարեմ :

— Իբաւունք ունիս, պարոն : Կը ցաւիմ որ թերևս օրինաւոր սրտմտութեանէ շարժեալ չմտածեցի որ այսպիսի վէճ մը յարուցանելու ոչ տեղն է հօս և ոչ պատեհ ժամ մը : Այլ խօսք մ'ուռիմ միայն, Մօրէլի կորուսած զուկին մարմինը ձեղնայարկը կը դանտի . այս ընտանիքին յանձնեցի իմ յատուկ սենեակս որպէս զի այն դեակին տեսքէն հեռանայ : Ուստի իմ տունս պիտի դառնես ախահատար և թերևս իր աղջիկը : Կաղերսեմ քեզ, պարոն, յանուն մարդասիրութեան, մի՛, յանկարծուստ ձերբակալ մի՛ ըներ Լուիզը այն թշուառներուն առջև՝ որ այն ինչ ահուելի վիճակէ մ'աղատեցան : Այս դիշեր Մօրէլ այնքան ցնցումներ կրեց որ այս նոր փորձանքէն կարելի է խեղքը թոցնէ, նոյնպէս իր կիներ ծանր հիւանդ է, այս հարուածը կրնայ անոր մահ սրածաւուր :

— Ես միշտ իմ պաշտօնս, պարոն, պէտք եղած զգուշութիւններով կատարեմ եմ, այս պարագայիս մէջ նոյնը պիտի ընեմ :

— Եթէ ներես, շնորհ մը պիտի խնդրեմ քեանէ, պարոն : Ահաասիկ առաջարկելիքս . դռնապանուհիին հետ եկող օրերորդը

խմիսիս պատկից խօսց մ'ունի . աներկիմա եմ որ զայն քեզի կը բանայ : Կրնաս այն տեղ կանչել Լուիզը, ապա, եթէ կուզես, Մօրէլն ալ, որպէս զի իր դուստրն անոր հրաժարական բարեւր տայ . . . : Գոնէ հիւանդ և ապիկար մօր մը ուղքէն կը հեռայնես կըսել ծաւի տեսարան մը :

— Եթէ այդ կերպով գործը կրնայ կարգի դրուիլ, պարոն, ընդդիմութեան մը չունիմ :

Մեր այս յառաջ բերած խօսակցութիւնը կիսաձայն կ'անցնէր, մինչդեռ Ռիկօէդ և Թիլին Բիբլէ պաշտօնատարէն և Ռօտուֆէն քանի մը բաղրոսն հետի կեցեր էին խոհամար . իշխանը սքնուհիին մօտ իջաւ, որ պաշտօնատարին ներկայութենէ կը դողդողար և անոր ըսաւ .

— Իմ բարեմիտ դրացուհիս, քեզնէ նոր ծառայութիւն մը կը սպասեմ, ժամուան մը համար սենեակդ մեզի յանձնելդ պիտի խնդրեմ :

— Որչափ որ կը հաճիս, պարոն Ռօտուֆ . . . բանալիս քովդ է : Բայց, տէ՛ր Աստուած . ի՞նչ կայ նորէն :

— Ետքը կը հասկըցնեմ քեզի . . . : Այս բաւական չէ . շնորհ պիտի ընես նաև Գանբլ երթալ և ըսել որ մեր գնած բաները ժամէ մը բերեն :

— Ամենայն սիրով, պարոն Ռօտուֆ . . . : Բայց արդեօք Մօրէլնց զլիկին նոր դժբաղդութիւն մ'ալ հասաւ :

— Այիսո՛ս, այո՛, աւելի ցաւալի բան մը հասաւ իրենց . անշուշտ քիչէն կ'իմանաս :

— Ուրեմն, դրացիս, Գանբլ ահա կը փութամ երթալու . . . : Աստուած իմ, ես ալ կը կարծէի թէ այն ողորմելիները քու շնորհիւ չնեղութեանէ ազատեցան . — ըսաւ սքնուհին . և շուտ մը սանդղէն վար իջաւ :

Ռօտուֆ ուզեց մանաւանդ Լուիզի ձերբակալութեան տխուր տեսարանէն Ռիկօէդը հեռացնել :

— Պաշտօնատարդ իմ — ըսաւ տիկին Բիբլէ — քանի որ անեցիներուս թագաւորը քեզ կ'առաջնորդէ, կրնամ Այֆրետիս քով

երթալ : Սիրտս դողի մէջ է , հազիւ թէ Գապրիօնի պատճառաւ
քիչ մ'առաջ ունեցած անհանգստութենէ ինք դինջը դտաւ :

— Գու դնա՛ . . . դնա՛ — ըսաւ պաշտօնատարը , և Ռօտուֆին
հետ առանձին մնաց :

Երկուքնին ալ չորրորդ դասիկոնին վերնագաւիթը հասան՝ այն
սենեկին գիմացն , ս'ը ակնահասան ու ընտանիքը թա ժամանակեայ
կերպով տեղաւորուէր էին :

Յանկարծ դուռը բացուեցաւ :

Լուիլ՝ դունատ ու լալազին՝ յանկարծակի դուրս ելաւ :

— Մնա՛ս բարև , մնա՛ս բարև . հայրդ իմ — գոչեց նա — պիտի
դառնամ , բայց հիմա պէտք է որ երթամ :

— Լուիլ , իմ աղջիկս , մտիկ ըրէ ինձ — վրայ բերաւ Վօրէլ ,
որ իր աղջկան ետեւէն կը վազէր և դանի կեցնելու կը ջանար :

Երբ Լուիլ և ակնահասար Ռօտուֆին ու պաշտօնատարը տեսան՝
անշարժ մնային :

— Ա՛հ , պարոն , դո՛ւ ես , դո՛ւ , մեր աղատարարը — ըսաւ արհես-
տակար Ռօտուֆը ճանչելով — եկու ինձ օգնէ որ Լուիլը չթողունք
երթալու . չգիտեմ թէ ի՞նչ ունի , ահ ու դող կ'ազդէ ինձ , մեկնիլ
կուզէ : Պէտք չէ որ իր սիրովք տունը դառնայ , այնպէս չէ՞ . Գու
ալ այսպէս չըսի՞ր : « Լուիլ չպիտի հեռանայ քովէդ » այս պիտի
ըլլայ վարձդ » : Ա՛հ , այս երանելի խոստումն վրայ , ճշմարիտը
կըսեմ , որ իմ սրբոյ աղջիկս Ատէլին մահը պահ մը մոռցայ . . . :
Բայց չեմ ուզեր քեզնէ դատուիլ այսուհետեւ , Լուիլ , երբէ՛ք ,
երբէ՛ք չեմ ուզեր :

Ռօտուֆին սիրտը կտոր կտոր եղաւ , խօսք մ'անգամ ըսելու
արիւթիւն չունեցաւ :

Պաշտօնատարն Լուիլին հարցուց խօսի :

— Միթէ անունդ Լուիլ Վօրէլ է :

— Այո՛ , պարոն , — պատասխանեց նորատի օրիորդն յայլած :
Ռօտուֆ Ռիկօլէզին սենեակը բացեր էր :

— Իսկ դու ժէրօմ Վօրէլ , իր հայրն ես . — յարեց պաշտօնա-
տարն ակնահասարին դառնալով :

— Այո՛ . . . պարոն . . . բայց . . .

— Ներս՛ սա խոցը մտիր աղջիկդ հետ :

Եւ պաշտօնատարը ցոյց տուաւ Ռիկօլէզին խոցն , ս'ը արդէն
Ռօտուֆ մտեր էր : Այս վերջնոյն ներկայութենէ սիրտ առնելով
ակնահասան ու Լուիլ մտայոյլ ու դարմանցած՝ պաշտօնատարին հը-
նազանդեցան : Սա դուռը գոցեց և Վօրէլի ըսաւ այլայլութեամբ :

— Գիտեմ թէ որչափ պարկեշտ ու թշուաւ ես . ուստի ցա-
լի սիրտ կը յայտնեմ քեզ յանուն օրինաց . . . որ աղջիկդ ձերբա-
կալ ընելու համար եկեր եմ :

— Ամէն բան երևան ելեր է . . . կորսուեցայ . . . — գոչեց Լու-
իլ ահաբեկ իր հօրը թեւերուն մէջ ընկնելով :

— Ի՞նչ կըսես . . . ի՞նչ կըսես դու . . . — յարեց Վօրէլ ա-
պուշ կրթած : — Գու յիմար ես . . . ինչո՛ւ համար կորսուած պիտի
ըլլաս . . . քեզ պիտի ձերբակալ ընեն . . . ինչո՛ւ ձերբակալ պիտի
ընեն . . . ո՛վ պիտի համարձակի ձերբակալ ընելու . . . :

— Ես պիտի ընեմ . . . օրինաց ու ժողով — և պաշտօնատարն իր
գօտին ցոյց :

— Ա՛հ , թշուաւս . . . թշուաւս . . . գոչեց Լուիլ գետին ըն-
կննելով ծնրապիլ :

— Ինչպէս օրինաց ու ժողով — ըսաւ ակնահասար՝ որուն գլուխն
այս նոր հարուածէն տատիկ տատանելով սկսեր էր տկարանալ —
ինչո՛ւ համար պիտի բռնես աղջիկս օրինաց ու ժողով : Ես , ես իմ
Լուիլիս համար կ'երաշխաւորեմ . իմ աղջիկս , իմ ընտիր աղջիկս
է . . . այնպէս չէ՞ , Լուիլ : Ինչպէ՞ս , քեզ բռնե՞ն , երբ մեր բա-
րի հրեշտակը քեզ կը յանձնէ ընտանիքիդ զիրկը՝ որպէս զե՛ իմ
փորբիկ Ատէլիս մահուան համար մեզ միխիթարես : Օ՛ն անգոր ,
այդ կարելի բան չէ . . . : Ասկէ դատ՝ պարոն պաշտօնատար , նեղէ
համարձակութեանս , մինակ ապիրատներ ձերբակալ կընեն , կը բռն
. . . և Լուիլ , իմ աղջիկս , ապիրատ մը չէ : Հաւատարի եղիւր աղ-
ջիկս որ այս պարտնը կը սխալ . . . : Իմ անունս Վօրէլ է , ուրիշ
չապ Վօրէլներ կան . . . քու անունդ Լուիլ է , քանի քանի Լու-
իլներ կան . . . : Ճշմարիտն այս է , վստահ եմ , պարոն պաշտօնա-

տար, սխալմունք կայ բանին մէջ, անտարակոյս սխալմունք մը կայ:

— Գժեբողորէն սխալմունք չկայ... Լուիզ Մօրէլ, հօրդ մնաս բաւ բաւ:

— Ի՞նչ, դու պիտի աղջիկս աննես տանին, դո՛ւ... — զոչեց բանսորը վշտովը մոլեղին և սպառնալի դէմքով մը դէպ ՚ի պաշտօնատարը դիմելով:

Ռօտովֆ ակնահաստին թեէն բռնեց և անոր ըսաւ:

— Հանդուրտէ և յուսա՛, աղջիկդ նորէն քեզ պիտի դառնայ... իր անմեղութիւնը պիտի հաստատուի, անտարակոյս յանցաւոր չէ:

— Ի՞նչ յանցանք ունի... չկրնար յանցանք մը գործած բլլալ... ինքզինքս կը կախեմ թէ որ... — Յետոյ՝ փոխանակազիրը վճարելու համար Լուիզին բերած ոսկին յիշելով, Մօրէլ պոռաց: — Հասա՛ այն ստակը... հասա այս առաօտեան դումարը, Լուիզ, եւ իր աղջկան վրայ սոսկալի ակնարկ մը նետեց.

Լուիզ հասկցաւ հօրը միտքը:

— Ե՛ս, գողութիւն ընե՛մ, — գոչեց նա, և վեհանձն դայրոյ թէն շտաղուհած այտերն, ձայնին շեշտն, շարժումը հօրը կասկածը փարատեցին,

— Քաջ գիտէի — գոչեց ակնահաստը: — Ար տեսնե՞ս, պարոն պաշտօնատար... կը ժխտէ... և իր կենացը մէջ կ'երդնում քեզ որ սուտ խօսած չունի...: Ձինքը ճանչողներուն հարցուր եթէ կուզես, ամէնքը խմ ըսածս պիտի ստուգեն...: Աղջիկս սուտ խօսի՛, ա՛հ, քաջ գիտցիր... իր հպարտութիւնը ջնկեր որ այդպիսի բան մ'ընէ, և յայտնի է որ փոխանակազիրը վճարողը մեր բարերարն է...: Այս ոսկիները չպիտի պահէ, փոխատուն դարձնելու պիտի երթար հիմա, և այս փոխատուն պատուիրեր է որ անունը չյայտնէ... այնպէս չէ՛, Լուիզ:

— Աղջիկդ իբր գող ամբաստանուած չէ — ըսաւ պաշտօնատարը:

— Ռերեմն, անէր Աստուած, ի՞նչ է անոր դէմ եղած ամբաստանութիւնը, ես, իր հայրը, կերդնում քեզ թէ ինչ որ է ամբաստանութիւնը, աղջիկս սնմեղ է, և կենացս մէջ սուտ բան չունիմ:

— Ի՞նչ հարկ կայ դիմալ սոյն ամբաստանութիւնը — ըսաւ անոր Ռօտովֆ, անոր ցաւերէն յուզուելով — Լուիզին անպարտութիւնը պիտի վորձով հաստատուի. քեզ խնամեղ անձը պիտի պաշտպանէ աղջիկդ...: Ե՛ս աբիացիր... այս անգամ այնչափ խնամութիւնը քեզ օղնու թեան պիտի հասնի: Գրէ՛ աղջիկդ, և քիչ ատենէն պիտի տեսնես դանի:

— Պարոն պաշտօնատար — գոչեց Մօրէլ առանց Ռօտովֆին միտ դնելու... — Օրէն չէ աղջիկ մ'իր հօրը ծոյէն կորել և առանց ըսելու թէ ի՞նչ է անոր յանցանքը: Ամէն բան խնամալ կուզեմ... Լուիզ պիտի խօսի՛ս:

— Քու աղջիկդ... իբր տղայատան... ամբաստանուած է... ըսաւ պաշտօնատարը:

— Ձե՛մ... չե՛մ... հասկնար... միտքդ...:

Եւ Մօրէլ դեանէ դետին անցած քանի մը կիսկաւոր բառեր թոթովեց:

— Աղջիկդ ամբաստանուած է որպէս թէ իր դաւաիր սպաններ է — վրայ բերաւ պաշտօնատարը այս տեսարանէն սատիկ յուզուած: Սակայն դեռ հաստատուած չէ անոր դէմ սոյն յանցանքը:

— Ո՛հ, ո՛չ, այդ ճիշտ չէ՛, պարոն... ճիշտ չէ՛... — ուժգին գոչեց Լուիզ սոթ կ'սկսէր: — Աերդնում որ մեռած էր, շունչ չունէր... սառած էր... խեղքս կորուսի... ահա իմ յանցանքս...: Ե՛ս իմ դուախ սպաննեմ, ո՛հ, երբէք...:

— Քու զաւակդ... վատ դո՛ւ — գոչեց Մօրէլ իր երկու ձեռները Լուիզին վրայ վերցնելով, իբր թէ այս շարժումով ու անէծքով զանի բնաջինջ ընել կուզէր:

— Շնորհ, հայր իմ, շնորհ... — պոռաց նա:

Չարհուրելի լուծիւնէ մ'եակէ՛ Մօրէլ ըսաւ աւելի զարհուրելի հանդարտութեամբ մը:

— Պարոն պաշտօնատար, ա՛ն, տա՛ր այս արարածը... իմ իմ աղջիկս չէ նա...:

Ակնահաստը դուրս ելնել ուղեց. Լուիզ անոր ոտքն ընկաւ, երկու ձեռներովը ծունկերը գրկեց և զլուխը ետին ծռած՝ աղէկեղ...

աղբըմադին ձայնով մը գոչեց :

— Հայր իմ, մտիկ ըրէ . . . պահ մը միայն մտիկ ըրէ ինձ :

— Պարոն պաշտօնատար , առ տար ըսի զանի , բոլորովին քեզի կը թողում . — կըսէր ակնասատը և բոլոր ճիղը կը թափէր Լուիզին բռուն ձեռքէն սզատելու համար :

— Մտիկ ըրէ անոր . . . — ըսաւ Ռօտորֆ ակնասատը կեցնելով

— ինչո՞ւ համար այդչափ անգուժ ես :

— Ա՛յն , Աստուած իմ , Աստուած իմ . . . այն — կը կրկնէր Մօրէլ իր երկու ձեռները ճակատին տանելով — այն իր պատիւը կորուսեր է . . . ո՛հ , վատազգիւն . . . վատանո՛ւնը :

— Բայց թերևս իր պատիւը կորուս քե՛զ ազատելու համար . . .

— ըսաւ անոր Ռօտորֆ ցած ձայնով մը :

Այս խօսքերը Վօրէլի վրայ կայծակի պէս իջան . իր լալաղին աղջկին նայեցաւ , որ ոտքն ընկած կ'աղերսէր . յետոյ աննկարագրելի նշմայր մ'ընելով անոր , խոր ձայնով մը և կատաղութենէ՛ ակնաները սեղմելով պուսայ :

— Նօտարը : . . .

Լուիզին լեղումն ծայրը պատասխան մը կար . . . պիտի խօսէր նա , բայց խոհեմութիւն սեպելով թերևս լռել , գլուխն ծռեց անմուռնչ և ասի ՚ի բերան մնաց :

— Բայց ո՛չ . . . նօտարն այս ատու զիս բանտարկել կուզէր — վրայ բերաւ Վօրէլ որոտակեր — չէ՛ , այն չէ՛ . . . : Ո՛հ , աւելի՛ աղէկ . . . աւելի՛ աղէկ . . . իր յանցանքին պատրուակ մ'իսկ չունի , իր անպատուութեան պատճառը ես չեմ . . . կարող եմ հանդարտ խղճով զանի անիծել . . . :

— Մի՛ . . . զիս մ'անիծեր , հայր իմ . . . քեզի ամէն բան պիտի ըսեմ , քեզի միայն , և պիտի տեսնես . . . պիտի տեսնես եթէ չեմ արձանի ներողամտութեանդ . . . :

— Գթա՛ , միտ զիր ըսածին . — ըսաւ անոր Ռօտորֆ :

— Ի՞նչ ունի ըսելիք ինձ , բայց եթէ իր անուանարկ ընթացքը . . . անուանարկութիւն մ'որ հրապարակային պիտի դառնայ , պիտի սպաւնեմ որ . . . :

— Պարոն . . . — գոչեց Լուիզ պաշտօնատարին դառնալով — զըթա՛ , թոյլ տուր որ քանի մը խօսք ըսեմ հօրս . . . ի՞նչե՛ թերևս ՚ի սպառ հեռանալէն առաջ . . . : Եւ քու առջևդ , ազատարարդ իմ , խօսիմ պիտի . . . այլ միայն քու և հօրս առջև . . . :

— Կը հաւանիմ — ըսաւ պաշտօնատարը :

— Միթէ կրնամ անզոյս ըլլալ , այս յետին միութարու թիւնը կրնամ զլանալ զաւելի — հարցուց Ռօտորֆ Վօրէլին : — Եթէ իմ բարեխօսութեամբս ստացած բարեացող փոխարէն դոյզն երախտազիւտութիւն մ'առ իս պարտաւորիլ կը կարծես . . . աղջկիդ աղաչանքին անաս . . . :

Պահ մը վայրագ և մթին լռութիւն մը սրահէն ետև՝ Վօրէլ պատասխանեց :

— Երթա՛նք . . . :

— Բայց . . . ո՛ր պիտի երթանք . . . — հարցուց Ռօտորֆ — ընտանիքդ անդին է . . . :

— Ո՛ր պիտի երթանք — գոչեց ակնասատը դառն հեգնութեամբ մը — ո՛ր պիտի երթանք մի : Ա՛րը . . . վերը . . . ձեղնաբեր . . . իմ աղջկիս դիակին մօտ . . . այս խոստովանութեան համար այն տեղ յարմար է . . . այնպէս չէ՛ : Ե՛նե՛նք , երթանք . . . տեսները եթէ Լուիզ պիտի յանդիմի իր քրոջը դիակին առջև սուտ խօսիլ . . . : Երթա՛նք :

Եւ Վօրէլ շտապաւ և մղորդային դէմքով մը դուրս ելաւ առանց Լուիզին նայելու :

— Պարոն — ըսաւ մեղմաձայն պաշտօնատարը Ռօտորֆին — կ'աղաչեմ , մ'երկարեք այդ խօսակցութիւնը , սոյն խեղճ մարդուն օգտին համար կըսեմ . . . : Ճիշտ էր ըսածդ , իր գլուխը չսխախ դիմանայ այս ցնցումին , քիչ մ'առաջ դիտեցի որ իր նայուածքը զրեթէ խենդի մը նայուածքն էր . . . :

— Աւա՛ղ , պարոն , ես ալ քեզի պէս կը վախեմ որ նոր և սոսկալի դժբաղդութիւն մը չպատահի . ձեռքէս եկածը պիտի ընեմ իրենց աղիողորմ հրաժեշտը փութացնելու :

Եւ Ռօտորֆ զնայ միացաւ ակնասատին և Լուիզին :

Թէև այնպէս ու սգալի էր Մօրէլի որոշումը, սակայն կերպով մը տեղական պարագաները յայն կը բռնադատէին զինքը: Պաշտօնատարը կը հաւանէր սոյն խօսակցութեան վախճանին ազատել Ռիւօլէին սենեակը: Մօրէլի ընտանիքը Ռօտտօֆին խոյր կը բնակէր: մինակ ձեռնայարկը պաշտպ էր: Սոյն դամբանական վայրը եկան Ղուիլ, իր հայրը և Ռօտտօֆ:

Սգալի՛ և անագորոցն տեսարան:

Մեր արդէն նկարագրած ձեռնայարկին մէջ տեղը՝ խելագարին խշտիկն վրայ առատ մեռնող փառքիկ օրիորդին մարմնը կը հանդէս տեսնէր կտոր մ'անոր վրայ ծածկիւր էին: Կեղ երգիլէն սրբաբաժնի ցանցատ ու վառվառն լոյսը՝ այն տեսարանիս երեք անձերուն վրայ նշոյններ ու ատուերներ կը սիւէր որոշակի: Ռօտտօֆ՝ որ կանգուն էր ու սքալին կ'ընծա՝ խիստ յուզուած կ'երևէր: Մօրէլ իր տրտալին ծայրը նստեր էր, կոր 'ի կոր, ձեռներն առ 'ի կախ, ակնդէտ, վայրագ՝ և աչերը չէր հեռացներ իր վորքիկ Ասէլին պատկած անկողնին վրայէն: Այս տեղէն՝ ակնհաստին զայրութիւն, սրտմտութիւնը մեղմացան և դառնադառն տրտմութեան փոխուեցան: Իր արիւթթե՛կ կը թուրնար և այս նոր հարուածին ներքև կը մնար ուժամբար:

Լուիզ՝ որուն երեսին վրայ մահապաղ զեղնութիւն մը կը փրէր՝ նուազելու վիճակի մէջ կը գտնուէր: Ընելիք յայտարարութիւնը ահ ու սարսափ կ'աղղէր իրեն: Սակայն իշխեց իր հօրը ձեռքը բռնել դողդողով, այն ձեռքն՝ որ աշխատանքէ հաշմեր մաշեր էր: Սկիսահատը ձեռքը թողըց՝ այն ասեն օրիորդը՝ յանկարծ հեծեծելով՝ զայն իր համըղըներովը ծածկեց և զոտը որ թեթևակի իր շրթերուն կը մօտենար: Մօրէլի բարկութիւնը դադրեր էր, իր արտաքը՝ որ բաւական առեն զայր էր, վերջապէս սկսան հոսիլ:

— Հա՛յր իմ, եթէ դիտնաս — զոչեց Ղուիլ — եթէ դիտնաս թէ որչափ կարեկցութեան արժանի եմ:

— Ա՛հ, կը տեսնես, կը հաւատաս, Ղուիլ, կենացս ամենէն կրկնածալի վեշտը պիտի ըլլայ — պատասխանեց ակնհաստը լալով: — Ետ Թէ՛ր Աստուած... գո՛ւ բանտ մանես... գո՛ւ յանցարարներուն

դասը անցնին... դու որ Եփեսոսի հպարտ էիր, և հպարտ ըլլալու իրաւունք ունէիր...: Ա՛հ — զոչեց նա յուսահատ վշտակութեամբ մը նորէն համակուելով — ո՛չ, աւելի աղէկ ունիմ տեսնել քեզ քու պղտի քոջը պատանքին տակ...:

— Եւ ես ալ կը փութաքէի նոյն պատանքին մէջ ըլլալ — պատասխանեց Ղուիլ:

— Լուի՛, թշուառ աղջիկ, օրիօր կը ցտցնես...: Եփեսոսը չունէի այս ուխտս բնելու, շատ հեռուն դացի...: Երբ, խօսէ՛ս բայց յանուն Աստուծոյ, մի՛ սուտ ըսեր...: Ռ'ըջափ ահո՛ե ի ալ ըլլայ ճշմարտութիւնը, յայտնէ ինձ... քեզէ՛ իմանամ ուրն...: Եփեսոսի ծանր չարտի երևի ինձ...: Խօսէ՛, առա՛ղ, մեր ժամերը կը համրեն, վա՛րջ... քեզ կ'աղաչես: Ա՛հ, ի՞նչ տրամալի մնաս բարեկեր են ասոնք, ողորմած Աստուած:

— Հայրը իմ, ամէն բան պիտի յայտնեմ... վրայ բերաւ Ղուիլ արիւթթեամբ զինուելով, բայց խօսք տուր ինձ, նոյնպէս մեր ազատարարն ալ խօսք տայ որ այս դաղանքը մարդու մը... մարդու չարտի ըսեր...: Եթէ իմանայ այն անձը որ գործը երևան հանեցի, գիտէ՛ք արդեօք...: Ա՛հ, — յարեց նա սարսափէն սարսու երով — բնաջինջ կը տայ... բնաջինջ ինձի պէս... վառն զի գեո չդիսէք թէ որչափ մեծ է այն մարդուն զօրութիւնն ու զազանութիւնը:

- Ռ'ը մարդուն:
- Իմ ախրոջս...
- Կօտարի՞ն:

— Այո՛, ... — ըսաւ Ղուիլ ցած ձայնով և չորսդին նայելով քեր թէ կ'երկնէր որ ձայնը կ'ըսուի:

— Հանդարտէ՛ — վրայ բերաւ Ռօտտօֆ. — այս մարդն անդու թէ ու դօշաւոր, փոյթ չէ, անոր դէմ կը մաքտի՛նք: Սակայն եթէ երբէք իրևան հանեմ ըսելիքդ, սրտաճառը մի միայն քու կամ հօրդ օղուտը պիտի ըլլայ:

— Եւ ես ալ թէ որ խօսիմ այս մասին, Ղուիլ, մի միայն քեզ աղատելու համար պիտի ըլլայ ճիգս: Բայց ի՞նչ ըրաւ քեզ այն անդամ մարդը:

— Գեռ ուրիշ բան մ'ալ կայ — ըսաւ Լուիլը վայրկեան մը մտածելէն ետեւ — այս պատմութեանս մէջ պիտի խօսիմ նաև անձի մը վրայ որ ինձ ծառայութիւն մ'ըրաւ . . . որ իմ հօրս և ընտանիքիս համար մեծ բարեբարութիւն մը ցցուց . երբ Պ. Պէրրանի տունը մտայ, այն անձը հոն կը ծառայէր և երդում ընել տուաւ ինձ որ անունը չյայտնեմ :

Ռօտտլֆ՝ մտածելով որ թերևս Պ. Պէրրանի ակնարկել կուզէր՝ Լուիլին ըսաւ . . .

— Թէ որ խօսքդ Քրանսուա Պէրրանի վրայ է . . . անհող եղեր, այս գաղտնիքը թէ հայրդ և թէ ես պիտի պահենք :

Լուիլը զարմանօք նայեցաւ Ռօտտլֆին երեսը :

— Ի՞նչ, կը ճանչես՞ զանի — ըսաւ Լուիլը :

— Ինչպէ՞ս, այս բարի, ընտիր պատանին որ երեք ամիս այս տեղ բնակեցաւ, նոտարին մօտ կը ծառայէր երբ դու անոր տունը մտար — ըսաւ Մօրէլը : — Երբ ատաջին անգամ այս տեղ տեսար, զանի չճանչելու զարկիր . . . :

— Այսպէս որոշեր էինք մեր մէջը, հայր իմ, ծանրակշիռ պատճառներ ունէր Պ. Պէրրանի մօտ ծառայելը պահելու : Ես ըսեր էի անոր որ այս տեղ չորրորդ դատիկունը վարձու սենեակ մը կայ, զխոնարով որ աղէկ դրացի մը կրնայ ըլլալ ձեզի համար :

— Բայց — ըսաւ Ռօտտլֆ — ո՞վ աղջիկը նոտարին քովը դրաւ :

— Իմ կնկանս հիւանդութեան ժամանակ այս տեղ բնակուլ և աւանդի վրայ դրամ փոխ տուող Պիլբէրդ տիկինին ըսեր էի որ Լուիլը տուն մը ծառայութեան մասնէ կուզէ մեզ օրնելու համար : Տիկին Պիլբէրդ նոտարին տնտեսուհին կը ճանչէր . յանձնարարական զիր մը տուաւ ինձ որով Լուիլը իբր ընտիր սպասուհի մը կը դուլէր, Անիճե՛ալ . . . անիճեալ ըլլայ այն նամակը . . . այս է մեր բոլոր թշուառութիւններուն պատճառը . . . : Աերջպէս, պարոն, ահա այս կերպով աղջիկս նոտարին տունը մտաւ :

— Թէև Պ. Պէրրանի հօրդ գէմ ունեցած ատելութեան քանի մը պարզականքը գիտեմ — ըսաւ Ռօտտլֆ Լուիլին — Աղաչեմ համարօք պատէ ինձ նոտարին ծառայութեան մտած օրէք անոր

և քու մէջ անցած գացած բաները . . . այդ պատմութիւնը թերևս քու պաշտարանութեանդ նպաստէ :

— Երբ ատջին անգամ Պ. Պէրրանի տունը մտայ — վրայ բերաւ Լուիլը — իբրէ զանդատելու առիթ մը չունէի : Հաս դեղաղունք ունէի, տան տեսչուհին ստէպ կը սաստէր զիս, տխուր կեանք մը կը վարէի, բայց համբերութեամբ ամէն բանի կը տանէի . ծառայութիւնը միշտ ծառայութիւն է, եթէ ուրիշ մօտ ըլլայի ուրիշ նեղութիւններ պիտի քաշէի : Պ. Պէրրան խստակրօն կեցողբան մ'ուներ, պատարալի կ'երթար, ստէպ քահանաներու հետ տեսութիւն կ'ընէր . իբրէ կասկած չունէի, ատջի օրերը հազիւ թէ երեսս կը նայէր, խափա կը խօսէր ինձ՝ մանաւանդ օտարներուն երկայութեան, Բայ՝ ի դժնապանէն՝ որ փողոյին վրայ, նոտարին դրասունը գետնուած դատիկունին կողմը կը բնակէր, ասն մէջ իբր սպասուհի միջնակ ես և տիկին Սերաֆէն տեսչուհին կաք : Մեր նօտած տաղաւարը՝ որ բակին և պարտիզին մէջ տեղ կը դսնուէր՝ մեկուսի էր : Իմ սենեակս ամենէն վերի կողմն էր : Հատ անգամ՝ կը վախնայի՝ երբ իրկունը մինակուկ կը մնայի՝ կամ խօհանոցը՝ որ ստորեկրեայ էր, կամ իմ խոցս :

Գիշեր մ'ուշ մնացեր էի քանի մը ստիպողական կարկտքներ աւարտելու համար . պատկելու կերթայի՝ երբ փոքրիկ նրբազալ թին մէջ՝ որուն ծայրը կը դսնուէր սենեակս, թեթև ոտքի ձայն մը լսեցի . դրանս առջև կանկ առին, նախ կարծեցի թէ տեսչուհին է, բայց քանի որ ներս չէր մտներ, դարձաւ առաւ զիս . չէի համարձակեր թնտալու, ակննջ կը դնէի, ձայն ձուն չ'կար, սակայն հաւաստի էի որ դրան ետին մէկը կայ : Երբու անգամ հարցուցի թէ ո՞վ է այն . . . պատասխան չառի . . . : Գարանակս դրան ետին դրի, որ ոչ նիք, ոչ պարզունակ ունէր : Անդադար ակննջս կախեր միտ կը դնէի, ամեն կնիս ձայն մը չառի, կէս ժամէ ետքը՝ որ շատ երկար երեցաւ ինձ անկողինս ընկայ, և գիշերը անկողով անցաւ : Միւս օր՝ տեսչուհին հրաման ինդրեցի որ սենեակս դրան պարզունակ մը շինել տամ, քանի որ նիք չունէր, և ատջի գիշերուն կրած եղկիւղ պատմեցի . պատասխանեց թէ անշուշտ երազ տեսած պիտի ըլլամ և թէ նիգի համար հարկ էր Պ. Պէրրանի դիմել : Նոտարն ուսերը բարձրա-

չորս երբ առաջարկութիւնս ըրի և ըսաւ թէ խել եմ, այնուհետեւ չհամարձակեցայ այս բանին վրայ բերանս բանալ: Անկից քիչ մ'ա-
տեն ետքը՝ անդամանդին դժբաղդութիւնը հասաւ: Հայրս յուսա-
հատութենէն ինչ ընեւերը չդիտէր: Տիկին Սէրաֆէնին պատմեցի
ցաւս և նա պատասխան տուաւ: — Պարոնք այնչափ ողորմաւէր է ո՞ր
կարելի է հօրդ համար բան մ'ընէ:» — Իրկունն խոյ՝ սեղանը կը
սպասուող էի, Պ. Ֆէրրան ըսաւ ինձ յանկարծ. — «Հայրդ հաղար
եքեք հարիւր ֆրանկի սէտք ունի. դ՛նա այս իրկուն անոր ըսելու որ
վաղը գրատունս դայ և իր սաակը կ'ստանայ: Պարկեշտ մարդ է, ար-
ժանի է մեր հողատուութեան:» — Այս բարութեան գործը տեսնելով
առաաւարտութեան թափեցի, չգիտէի ինչպէս շնորհակալ ըլլամ տիրոջ՝ որ
իր սովորական խտուութեան ըսաւ ինձ: — «Լա՛ւ, ըս'ւ, ըրածս սարդ
բան մ'է...: — Իրկունը՝ գործէս ետքը, այս աղւոր լուրը հօրս
խմաց տալու եկայ, և միւս օրը...»

— Ստացայ հաշար երեք հարիւր ֆրանքը՝ փոխաբէն եռամսեայ
պայմանաժամով բաց ընկալադիր մը տալով — ըսաւ Մօրէլ: — Ես
ալ Լուիզին սէս ըրի, երախտագիտութենէս լացի. այս մարդն
իմ բարերարս... իմ ազատարարս կոչեցի: Ո՛հ, քանի անգամ
էր իրեն ուխտած շնորհապարտութիւնս և պատկառանքս չարաչար
գործածեւուն համար...»

— Եւ միթէ կասկածի չդացիր — հարցուց Քօտուլֆ — երբ տեսար
որ մնադիր էր անպիսի կարծ պայմանաժամով բաց ընկալադիր մը
առտադրել առ լքեղ որ կարելի չէր քեզ վճարելու:

— Ա՛յ, պարոն. կարծեցի թէ նօտարը լոկ դիւրուութեան համար
կընէ. ահա բանն այս է: Աս'է զատ՝ ըսաւ նաև ինձ որ հոգ չընեմ,
և թէ երկու տարիէն ետքն ալ կրնամ հատուցանել սոյն գումար-
ըր. մինակ կանոնադրութեան համար երեք ամիսն անդամ մը
թուղթս նորոգելու պարտաւոր եմ. սակայն մութհախ երեք ամէն
ներկայացուցին ինձ, չկրցայ վճարել՝ երրորդ անձի մը ձեռք ինձի
դէմ դատաւճիւր մը հանեց. բայց իմաց տուաւ ինձ որ անհամբախտ
չըլլամ այս բանին համար... և թէ իր բարապանը սխալմուտք
մ'ըրեր է:

— Այս կերպով քեզ իր իշխանութեան ներքեւ պահել կու-
նէր... — ըսաւ Ռօտուլֆ:

— Բաբէ՛, ճիշտ է, պարոն. ինչու ո՞ր այս դատաւճուէն 'ի
վեր է որ սկսաւ... բայց, շարունակէ, Լուիզ... շարունակէ
...: Ո՛ր ըլլալ չգիտեմ... դուրս կը դառնայ... կարծես թէ
տեղէն կը թնայ... նիսի խենդանամ...: չափն սնցաւ... ան-
ցաւ չափն, այո՛...»

Ռօտուլֆ հանդարտեցուց ակնհաստը: ... Լուիզ շարայարեց:

— Աւելի մեծ եռամիսով սկսայ աշխատիլ որպէս զի ձեռքէս
եկածին չափ իմ շնորհապարտութիւնս յայտնեմ Պ. Ֆէրրանի երախ-
տեաց փոխարէն: Այն ատեն տեսչուհին սկսաւ անհաշտ աչօք նայիլ
ինձ, զիս տանջել կ'ախորժէր և Պ. Ֆէրրանի հրամաններն ինձ
չիմացնէլ, որպէս զի պակասաւոր դատուիմ: այս նեղութիւններէն
սիրտս կը ցաւէր, կը փափաքէի ուրիշ տեղ երթալ, սակայն հօրս
առ նօտարն ո՛նեցած պարտքն արդեւք մ'էր: Պ. Ֆէրրան երեք
ամէն վեր փոխ տուեր էր այն դումարը, զիս տիկին Սէրաֆէնի առ-
ջև շարունակ կը յանդիմանէր: սակայն երբեմն պարտնի կը նայէր
ինձ այնպիսի կերպով մ'որ կը շփոթէի, և կարմիրս տեսնելով
կը ժպտէր:

— Ա՛ր հասկնաս անշուշտ, պարոն, որ ճիշտ այն միջոցին զիս
բանտարկելու վճիռը կը հանէր:

— Օր մը — յարեց Լուիզ — ճաշէն ետքն իր սովորականին հա-
կառակ տեսչուհին դուրս կ'երնէ. զպիտները դրատունէն կ'երթան:
դուրսը կը բնակէին: Պ. Ֆէրրան գոնապանն ալ գործի կը զրկէ:
ես սունը կը մնամ միայնակ տիրոջս հետ: նախասենեկին մէջ կ'աշխա-
տէի: զանգակի ձայնով զիս կը կոչէ: Կ'ընջելու խուցը կը մննեմ:
վառարանին առջև կանդուն կեցեր էր, անոր կը մօտենամ, յանկարծ
կը դառնայ և զիս կը գրկէ... իր գէմքը արևնի սէս կարմիր էր,
աչերը կը փայլէին: Սաստիկ ահ ու դող մը պաշարեց զիս, 'ի սկզբան
ղարմանքս արդիւնց զիս շարժում մ'ընելու: բայց՝ թէև շատ ու-
ժեղ է, այնչափ կուռեցայ որ ձեռքէն պրծայ. նախասենեակը փա-
խայ, դուրս գոցեցի և բողոք ուժովս սկսայ հրել, վաճառ զի բա-
նային դրսի կողմն էր:

— Կը լսե՞ս, պարոն . . . կը լսե՞ս . . . — ըսաւ Մօրէլ Ռօտդֆին — տե՛ս սա ընտիր բարերարին վարմունքը :

— Քանի մը վայրկեանէ ետքը՝ այնչափ ճիշդ թափեց որ դուսը բացաւ — վրայ բերաւ Լուիլ . — բարեբաղդօրէն կանթեղը քօլօս էր, ասիկեցայ զայն մարելու : Նօտարին կեցած տեղը նախասենեկէն հեռու էր . յանկարծ ինք զինքը խաւարի մէջ գտաւ, կոչեց զիս, ձայն չտուի . այն ատեն բարկութենէ գողգող ձայնով մ՛ըսաւ ինձ : — Եթէ փախչելու փորձ փորձես, հայրդ բանա պիտի երթայ հազար երեք հարիւր Փրանք պարտքին համար, զոր կարող չէ հատուցանել :» — Աղաչեցի, պաղատեցի որ զթա՛ վրան, խօսք տուի բոլոր ճիշդ թափելու և գործօս անթերի կատարելու իր բարութեան փոխարէն, սակայն բացէ ՚ի բաց յայտնեցի որ երբէք իզնէ վատթար գործ մը չսպասէ :

— Եւ յիրաւի, այս է ահա Լուիլին լեզուն — ըսաւ Մօրէլ — իմ Լուիլին երբ հպարտ ըլլալու իրաւունքն ունէր : Բայց ինչպէ՞ս . . . : Վերջապէս, շարունակէ . . . շարունակէ . . . :

— Միշտ նոյն խաւարին մէջն էի . պահէ մը նախասենեկին զբսի գրան դոցուիլը կը լսեմ, զոր առ խարխաբ գետեր էր նօտարը : Այսպէս իր ճանկին տակը մնացեր էի . շուտ մ՛իւր սենեակը կը վազէ, և շատ չանցնիր մտնով մը կը գառնայ : Չեմ իշխեր, հայր իմ, պատմելու քեզ անոր հետ ըրած կտիւս, իր սպառնալիքն ու սենեկէ սենեակ ետեւս վազվեցը, բարեբաղդօրէն յուսահատութիւնը . երկիւղը, բարկութիւնը ուժս աւելցուցին . իմ ընդդիմութիւնս զինքը կը կատարեցնէ, ինք զինքէն բոլորովն ելեր, զիւսհարեր էր : Չիս թշնամանեց, զարկաւ ինձ, երեստ արիւնջուայ էր . . . :

— Աստուած իմ, Աստուած իմ — գոչեց ակնահատն իր ձեռները գէպ ՚ի երկին ամբառնալով — և սակայն այս բաները ոճիւրներ են . . . և այսպիսի հրեշի մը համար սրապիժ չկայ . . . չէ՛, չըկայ . . . :

— Կարելի՛ է — ըսաւ Ռօտդֆ, որ խորին մտածութեան մէջ կ'երեւէր . ապա Լուիլին դառնալով — Արեացի՛ր, ամէն բան ըսէ :

— Այս կուրբ բաւական ատենէ վեր կը տեսնէ . ուժէ կ'ընկնէ

Երբ դռնապանն որ տուն դարձեր էր, երկու անգամ զանգակը զարկաւ, որով նամակ մը կայ ըսել կուզէր : Պ . Քէրրան վախճաշով որ եթէ ես չերթամ այն դիրն ատնու, դռնապանն ինքը անձամբ կը բերէ, ինձ ըսաւ . — « Կորի՛ր . . . : Եթէ բառ մը բերնէդ հանես, հայրդ կորսուած սեպէ . թէ որ տունէն ձգես երթաս, դարձեալ կորսուած է հայրդ . թէ որ քու վրայ տեղեկութիւն ուղեն՝ պիտի հասկցնեմ, առանց հաստատելու : որ դողութիւն ըրիր : Ասկէ դատ պիտի ըսեմ որ դարչելի սպասուհի մ՛եմ . . . : » — Այս տեսարանէն հետեւալ ծրը տիրոջս սպառնալիքին անմտադիր՝ վազեցի, եկայ հօրս դռնագաններ ընելու, թէև չհամարձակեցայ ամէն բան խոստովանելու . . . : Կուզէր որ անմիջապէս նօտարին տունէն ելնեմ . . . սակայն բանտն անդին կ'սպասէր . . . : Մօրս հիւանդութեան վեր գոյն վատտակն անհրաժէշտ էր ընտանիքիս . . . : Եւ քանի որ Պ . Քէրրան իմ մասին գէշ վիպութիւն տալու կ'սպասնար՝ չպիտի կարենայի երկայն ատեն ուրիշ տուն սպասուորութեան մտնել :

— Այս — ըսաւ Մօրէլ միտն գտնութեամբ մը — վատութիւն, ինքնասիրութիւն էր թողուլ որ նորէն այն տեղ դառնայ մեր զաւակը . . . ո՛հ, աղէկ կըսէի քեզ թէ թշուառութիւնը . . . թշուառութիւնը . . . ի՞նչ անուամարկ բաներ ընել կտայ մարդու . . . :

— Աւա՛ղ, հայր իմ, միթէ ամէն միջոց ՚ի գործ չդրի՛ր այն հազար երեք հարիւր Փրանքը ձեռք ձգելու համար : Երբ անկարելի եղաւ, նախադեցանք ամէն բան համբերութեամբ կրել :

— Ճիշտ է, ճիշտ, շարունակէ . . . : Քու սիրելիներդ եղան քու գահիճներդ՝ մենք քեզ հասած դժբաղդութեան համար քեզնէ աւելի յանցաւոր ենք — ըսաւ ակնահատն իր ձեռներուն մէջ պահելով գէպը :

— Երբ նորէն նօտարը տեսայ — յարեց Լուիլ — այն գէպէն առաջ վարձածին պէս խիտ և բիրտ կերպով վարձեցաւ հետս . անցածին վրայ բառ մը չըսաւ ինձ, տեսուհին շարունակեց զիս շարձարելու, հազիւ թէ կերակրելու համար պէտք եղած անունը կը հայթայթէր ինձ, և հացը բալքի տակ կը պահէր . Կրքեմն շարձ

կամութենէ ինձ մնացած կերակուրը կ'աւրէր իմ առջև , վասն զի ,
 գրեթէ միշտ Պ. Ֆէրրանի հետ կը ճաշէր : Գիշերը հաղիւ կը քնա-
 նայի , ամէն վայրկեան կը վախնայի որ նոտարը սենեակս կը մտնէ ,
 քանի որ բայ էր , այն դարանակը որ դրանս ետեր կը գնէ ի պահպա-
 նուելու համար խցես հանել տուաւ , և մինակ աթոռ մը , փոքրիկ
 սեղան մը և սնտուկ ունէի : Այս կահերով սրահէշ մը շինելու
 կը ջանայի և հագուած անկողին կը մտնէի : Ատեն մը զիս հան-
 դարա թողուց , և ոչ իսկ երես կը նայէր : Սխալ քիչ մ'ապա-
 հովութիւն ունենալ , կնթաղութիւն որ ալ ինձի չմտածեր : Կերակի օր
 մը թոյլ տուաւ որ դուրս ելնեմ , տուն եկայ այս ուրախալի լու-
 ըր հօրս և մօրս իմաց տարու . . . ամէնքնիս ալ ուրախ զուարթ է-
 ինք . . . : Մինչև այս սեղ ամէն բան գիտէիր , հայր իմ . . . : Այ-
 սուհետե պատմելքս . . . — և Լուիզի ձայնը , դողողաց . . . — ահ-
 ոելի է . . . քեզնէ դաղանի պահեցի :

— Ո՛հ , քաջ գիտէի . . . քաջ գիտէի . . . որ դաղանիք մը կը
 պահէիր խնէ — դուչեց Մօրէլ տեսակ մը մոլորապին շարժումով
 և գիւրբաբանութեամբ մ'սրմէ Ռօտովֆ զարմացաւ : — Երեսիդ
 դեղնութիւնը , կերպարանդ . . . սէտք էին զիս լուսաւորել : Հարևր
 սնդամ ըսի նոյն բանը մօրդ . . . բայց , բա՛ , բա՛ , բա՛ , նա հակա-
 ոակը կը սխտէր . . . : Ահա՛ գործը , ահա՛ , դժբաղդութենէ մ'աղա-
 տելու համար այս հրէշին տունը թողուցինք մեր ազգիկը . . . : Եւ
 հիմակ մեր ազգիկն ուր կերթայ , մեղապարտներուն ասեանը . . .
 ահա՛ գործը : Ա՛հ , բայց դարձեալ . . . վերջապէս . . . ո՞ գիտէ
 . . . ճիշմարիտ է . . . քանի որ աղքատ ենք . . . այո՛ . . . բայց
 միւսները . . . բա՛ . . . բա՛ . . . բայց միւսները . . . , — յետոյ Մօրէլ
 կանկ առտո որպէս թէ իր գաղափարներն՝ որ միտքէն կը խուսէին
 հաւաքել կողէր , ճակատի զարկաւ և սոռաց : — Ի՞նչ , ալ բրաժս
 դրաժս չգիտեմ . . . զուիս սոսկալի կերպով կը ցաւի . . . կար-
 ծես թէ գինով եմ . . . :

Եւ իր զընկը երկու ձեռներուն մէջ պահեց :
 Ռօտովֆ չուզելով յայտնել Լուիզին , թէ որչափ վախ կ'զգայ
 ակնահատին անհեթեթ լեզուէն ծանրաբար ըսաւ :
 — Անիրա՛ւ ես , Մօրէլ . մինակ իրեն համար չէր , այլ իք

ձօրը , զաւակներուդ , նոյն իսկ քեզի համար կինդ կը վախնար որ
 նոտարին քովէն Լուիզին ելնելը աղետաբեր հետեւութիւններ կ'ունե-
 նայ . . . : Աւրիշը մի՛ մեղադրեր . . . : Մինակ մէկ մարդու վրայ
 անէժը կարգայ , ասելութեանդ կրակը թափէ . . . կեղծաւորու-
 թեան այն հրէշին վրայ , որ աղջիկդ երկու սրի մէջ , անպատու-
 թեան և կործանումի . . . թերևս իր հօրը և ընտանիքին մահուան
 մէջ՝ կը թողուր , այն տիրոջ վրայ որ իր տիրական իշխանութիւնը
 վատորէն կը գործածէր . . . : Քայց համբերութի՛ւն , արդէն ըսի
 վրէժնագրութեան բոցեր կը թափէ ոճրագործին գլխին վրայ :
 Վրէժնագրութեան բոցեր կը թափէ ոճրագործին գլխին վրայ :

Ռօտովֆին խօսքերը կերպով մ'այնպիսի ստուգութեան և համո-
 զումի արդիւնք մը կերեւէին սոյն նախախնամական վրէժնագրու-
 թեան վրայ խօսելու ասեանը , որ Լուիզի ազատարարին զարմանօք
 գրեթէ երկիւղով նայեցաւ :

— Շարունակէ , աղջիկս — վրայ բերաւ Ռօտովֆ Լուիզին ուղղե-
 լով խօսքը — բան մը մի պահէր . . . կարծածէդ աւելի կարևոր են
 ըսելիքդ :

— Ռատի քիչ մը հանդարտութիւն գտեր էի — ըսաւ Լուիզ —
 իրբ իրկուն մը Պ. Ֆէրրան և տեսչուհին զատ զատ դուրս ելան :
 Տունը ճաշ չըրին և մինակ մնացի . ըստ սովորականին իմ ջրի ,
 հացի և գինիի բաժինս ձգեցին , մատանները բանալիով գոցելէն
 ետեւ : Երբ գործս աւարտեցի , ճաշ ըրի , և մինակս մեծ սրահին
 մէջ վախնալուս , խուցս ելայ , Պ. Ֆէրրանի կանթեղը վառեղն
 ետեւ : Երբ իրկունը դուրս ելնէր , անոր չէինք սպասեր : Ռատի
 սկսայ կար կարել , և իմ սովորականիս հակառակ , քիչ քիչ քու-
 նըս կոխեց . . . : Ա՛հ , հայր իմ — դուչեց Լուիզ ահ ու դողով
 մը սրատմութիւնը ընդհատելով — սխտի չհաւատաս ինձ . . . պիտի
 ըսես սր սուս կը խօսիմ . . . և սակայն , ահա իմ փոքրիկ խեղճ
 քրոջս մարմնին վրայ կ'երգուում որ իրօք ճշմարտութիւնը պիտի ը-
 սեմ քեզ :

— Խօսէ՛ , բացայայտ ըսէ՛ — յարեց Ռօտովֆ :
 — Աւա՛ղ , պարոն , եօթ ամսէ վեր ընդ ունայն կ'աշխատիմ մեկ-

նեւու առանձին այն ահոեղի գիշերը... և անխորոզ եմ. քիչ մնաց խենդութիւնս պիտի գար վրաս այս գաղտնիքը բացատրելու ջանքիս մէջ:

— Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ պիտի ըսէ... — գոչեց ակնահայտը՝ պատմութեանս սկիզբէն զինքը ատեն ատեն սրաշարող անասի մ'անտարբեր թմբութեանէ սթափելով:

— Յովորականիս դէմ աթոռիս վրայ քնայեր էի... — վրայ բերաւ Լուիզ: — Ահա առիկ վերջին յիշած բանս: Առաջ... առաջ... մ'է՛հ, հայր իմ, ներքէ...: Արդո՞ւմ որ ամենեւին յանցաւոր չեմ, ամենեւին...:

— Կը հաւատամ... կը հաւատամ... բայց խօսէ՛:

— Չգիտեմ թէ քանի ատենէ վեր այնպէս ննջեր էի երբ արթնցայ, միշտ սենեկիս մէջ... բայց պտուկեր և լիւուեր էի Պէթերանէն, որ քովս կեցեր էր...:

— Սո՛ւտ... ա՛ւտ կը խօսիս... — գոչեց ակնահայտը կատողութեն. — Խոտտվանէ՛ որ կամքը կատարեցիր, որովհետեւ բո՞նացաւ բու վրայ և վախցար որ զիս բանտ կը տանին... բայց այդպէս սուտ մի՛ խօսիր:

— Հայր իմ, երդում կընեմ քեզ որ...:

— Սո՛ւտ... սուտ կը խօսիս...: Ինչո՞ւ համար նոտարը զիս բանտ դնել տալու ելաւ, քանի որ անոր զնջեր էիր:

— Չիջայ, ո՛հ, չէ՛, հայր իմ, բունս այնքան խորունկ եղաւ որ մեռելն պէս էի...: Տարօրինակ, անկարելի կ'երևի քեզ այս բանս... Աստուած իմ, քաջ գիտեմ, վասն զի ես ալ մինչև այս օր չեմ կարող հասկնալ:

— Իսկ ես ամէն բան կը հասկնամ — վրայ բերաւ Ռօտովֆ Լուիզին խօսքը ընդմիջելով — այդ ոճիւրը պակաս էր սոյն մարդուն...: Իբր ստախօս մի ամբաստաներ աղջիկդ, Մօրէլ...: Ըսէինձ, Լուիզ, սենեակդ երեսէն առաջ՝ ճաշդ ընելուդ ամենեւին ոչանդակ համ մը չզղացիր խմած ըմպելիքիդ մէջ: Չանա՛ այս քարազան լաւ մը յիշելու:

Վայրկեան մը խորհելէն ետե՛ւ Լուիզ պատասխանեց:

— Իբրեւ, կը յիշեմ որ տիկին Սերաֆինի ինձ ձգած ջրախօսն

զինին դառն համ մ'ունէր, այն ատեն այս կիտին ուշ չլիք, ո՞րովհետեւ տեսչուհին ակորժ կ'զգար խմածիս մէջ ալ կամ պղծ պեղ զնեւու...:

— Եւ այն օրը խմած ըմպելիքդ դա՞նն երեցաւ քեզ:

— Բայց չխմուելու չափ դառն չէր, կարծեցի թէ դինին քացիսը է:

Մօրէլ ակնասլիշ և վայրագ՝ Ռօտովֆին հարցումներն և Լուիզին պատասխանները մտիկ կընէր և կարծես թէ անոնց իմաստը չէր ըմբռներ:

— Աթոռիդ վրայ քնանալէն առաջ... զլիտի ծանրութիւն... և ոտներուդ վրայ թմբիւր մը չզղացիր:

— Այո՛, պարոն... քունքս կը բախէին, թեթև սարսուռ մը ունէի, շատ անհանդիստ էի:

— Ո՛հ, անօրէ՛ն... անօրէ՛ն... — գոչեց Ռօտովֆ. — դիտե՛ս արդեօք, Մօրէլ, թէ այն մարդն ինչ խմցօց աղջիկդ:

Ակնահայտը Ռօտովֆին նայեցաւ սուանց պատասխան տալու:

— Տեսչուհին, անոր դաւակիցը, Լուիզին ըմպելիին մէջ քնածու հիւթ, անշուշտ աֆիոն խառնած է. քանի մը ժամ աղջիկդ դժը ու խելքը թմբած է, և սոյն թմբական քունէն արթնալէն ետեւ... ինքզինքը բռնաբարուած դտած է:

— Ա՛հ, հիմակ — գոչեց Լուիզ — իմ դժբաղբութեանս պատճառը երեան եղաւ...: Կը տեսնե՞ս, հայր իմ, երեցածին չափ յանցաւոր չեմ: Հայր իմ... հայրդ իմ... պատասխան տուր կ'աղաչեմ:

Ակնահայտին ակնարկը զարհուրելի անշարժութիւն մ'ունէր: Իր անմեղ և բարեկիր միտքը չէր կարող ըմբռնել այսպիսի սոսկալի անօրէնութիւն մը, հազիւ այս ահարկու յայտնութեան իր խելքը կը հասնէր: Ասկէ զատ՝ հարկ է ըսել, քանի մը վայրկեանէ վեր բանականութիւնը խանդարեր էր, . . . ատեն ատեն իր դաղափարները կը մթագնէին, այն ժամանակ կը դբբէր մտածութեան այնպիսի դատարկութեան մէջ՝ որ իմացականութեան նկատմամբ է, ինչ որ խաւարն է տեսանելեաց... մտային յիմարութեան ահեղ

երևոյթ մը . . . : Սակայն Մօրէլ վրայ բերաւ խոր , սուղ և արագ ձայնով մը :

— Ո՛հ , այո՛ , շատ դէշ . . . շատ յոռի՛ . . . շատ յոռի՛ է :

Եւ իր անզգայութեան մէջ ընկաւ : Ռօտովֆ անոր նայեցաւ վըշտակին , կարծեց թէ սրամտութեան զօրութիւնն անդամ հետզհետէ կ'սպառի սոյն թշուառ մարդուն վրայ , ինչպէս որ բուռն վիշտերէ ետքը՝ արատաւքը շատ անգամ կը ցալօթի : Կարելի եղածին չափ շուտով այս խօսակցութեան վերջ ապու համար , Ռօտովֆ Լուիլին ըսաւ :

— Սիրտ ա՛ւ , աղջիկս , և այս սոսկալի գործերուն հիւսը մեր աչքին առջևը բանալու շտապէ :

— Ափսո՛ս , պարոն , լրածդ դեռ բան մը չէ . . . : Պ . Ֆէրրանի իմ քովս տեսնելով սարսափի աղաղակ մը թողուցի : Փախչել ուղեցի , բռնի զին կեցուց , դեռ այնչափ տկար , ծանր էի , անշուշտ ըսած ըմպելիքիդ պատճառաւ , որ իր ձեռքէ չկրցայ աղափիլ : — Ինչո՞ւ համար փախչել կուզես հիմակ — ըսաւ ինձ Պ . Ֆէրրան այնպիսի զարմացած դէմքով մ'որ զին շփոթեց : — Խելքիդ ի՞նչ վըշեց : Միթէ քու հաւանութեամբ չէ՞ որ սենեակդ եկայ : — Ա՛հ , պարոն , ի՛նչ վատութիւն է այդ — դոչեցի . — Իմ քունէս օգուտ քաղեցիր զիս ՚ի կորուստ մասնելու համար : Տօրս պիտի իմաց տամ : — Կօտարը սկսաւ քահ քահ խնայալ : — Ես քու քունէդ օգուտ քաղեցի՞ , ե՛ս , բայց դու կատակ կընես : Ո՛վ կը կլէ այդ սուտը : Առաւօտեան ժամը չօրս է : Տար ժամէ վեր հոս կը դանուիմ , կ'երևի թէ քունդ շատ ծանր ու խորունկ է : Աւելի աղէկ կընես եթէ խոտովանիս թէ քու յօժար կամքդ օգուտ քաղեցի : Օ՛ն , այդպէս թեթևօտիկ մ'ըլլար , թէ ոչ կ'աւրուինք ետքը : Հայրդ ձանկիս տակըն է , ալ իրաւունք չունիս զիս մերժելու . հլու եղեր և միշտ բարեկամ կը մնանք , թէ ոչ , զդուշացիր : — Ամէն բան հօրս պիտի յայտնեմ — դռնէցի նորէն . անշուշտ վրէժս պիտի լուծէ : Արդարութիւն մը կայ . . . — Պ . Ֆէրրան զարմանաք ինձ նայեալ : — Բայց երօք խեղդ մ'ես դու . և ի՛նչ պիտի ըսես հօրդ . ի՛նչ , պիտի ըսես որ զիս սենեակդ ընդունելու հաճեցար : Ա՛ւ , աղապ

իս , գիտցածդ ըրէ . . . և կը տեսնես թէ ինչպէս կընդունի քեզ : — Աստուած իմ , բայց ճշմարիտ չէ ըսածդ . . . : Քաջ գիտես որ կամքիս հակառակ հոս եկած ես . . . — Կամքիդ հակառակ : Ի՛նչ , ատանկ սուտեր , բռնութիւններու խօսքեր ընելու աներեսութիւնն ընի՛ս : Վտուութեանդ մէկ ասպայցյցը կուզե՛ս : Պ . Թէրմէն , իմ գանձապետիս հրահանգներ էի որ երէկ իրկուն ժամը տասին զայ և ստիպողական դործ մը լմացնէ . առաւօտեան մինչև ժամը մէկ աշխատեցաւ այս սենեկին տակի խցին մէջ : Միթէ ձայնեղ չէ՞ր լսեր , միթէ չէ՞ր լսեր աղմուկ մը՝ եթէ արդէն վարը քեզի հետ ունեցած կոխ մկէլի , անզգամ , երբ այսօրուան պէս իոհեմ չէիր : Ա՛ւ ուրեմն , վաղը Թէրմէնին հարցուր , ճիշտը կ'իմացնէ քեզ , այսինքն թէ այս գիշեր տան ամէն կողմը հանդարտութիւն կը ախրէր :

— Ո՛հ , ամէն տեսակ զգութիւն ձեռք առեր էր անպատիժ մնալու համար . — ըսաւ Ռօտովֆ :

— Ճիշտ է , պարոն , անոր համար դեմնին տակ կ'անցնէի : Պ . Ֆէրրանի բոլոր ըսածներուն չգիտէի ի՛նչ պատասխան տամ : Չգիտէի թէ ի՛նչ ըմպելի տուեր էր ինձ , և չէի կարող բացատրել թէ ի՛նչ պատճառաւ այնչափ ծանր քուն եղեր էի : Արտաքին երևոյթներն ինձի դէմ էին : Եթէ գանդատէի , ամէն մարդ պիտի մեղադրէր զիս . ասոր տարակոյս չունէի , վասն զի նոյն իսկ ինձի համար այն սոսկալի գիշերն անթափանցելի զաղանկը մ'էր :

Ռօտովֆ Պ . Ֆէրրանի ահաբեկ կեղծաւորութեան վրայ շուարած մնաց :

— Այսպէս ուրեմն — ըսաւ նա Լուիլին — հօրդ չհամարձակեցար գանդատելու հօտարին նողկալի ոճիրէն :

— Ո՛հ , պարոն , անտարակոյս պիտի կարծէր թէ Պ . Ֆէրրանի հետ դաւակնց եմ , ասկից զատ կը վախնայի որ հայրս չմոռնայ թէ իր աղասութիւնը , մեր ընտանեաց ասպրուստը միշտ հօտարէն կախում ունէին :

— Եւ հաւանական է — յարեց Ռօտովֆ սոյն տաժանելի խոսքովանութիւններուն մէկ մասը Լուիլին պատմել չտալու համար — հաւանական է որ այն անօրէն մարդուն ձեռքը զո՛հ ընկար շարու

հակ, բռնի և ահ ու դողեց որ չըլայ թէ կամբը չկատարելով հօրք կորուստը պատճառես :

Լուիզ աչքերը վար առաւ կարմրելով :

— Եւ միթէ այնուհետեւ աւելի մեղմ վարուեցաւ քեզի հետ :

— Ձէ՛, պարոն . առէ՛ն կասկած վարատելու համար, երբ պատահամբ Պօն-Նուվէլի երէցն ու իր փոխանորդը իրեն սեղանակից կըլային, հօտարն անոնց առջև խառն կը յանդիմանէր զիս . կ'ազաչէր երէցն որ ինձի յորդորական խրատներ տայ, կըսէր անոր թէ օրին մէկը պիտի հողիս կորուսեմ, թէ իր դրատան զրազիրնեւ ըուն հետ արձակ համարձակ կը վարուիմ, թէ անհող եմ, թէ հօրս վրայ գլխաւորն զիս իր տունը կը պահէ, և թէ հայրս ալ բարեմիտ մարդ մ'էր և անոր աղէկութիւն ըրած է . . . : Բայ 'ի հօրս ըրած ծառայութենէ, միւս բոլոր բաժնեւոր սուտ էին : Երբէք զըրատան դպիրներուն հետ չէի տեսնուէր, մեր նստած տան զատ սըրբահի մը մէջ կ'աշխատէին :

— Իսկ երբ Պ. Ֆէրրանի հետ առանձին մնացիր երէցին առջև քու մասիդ բռնած ընթացքը ինչպէ՞ս կը մեկնէր :

— Աը հաստատէր ինձ որ կատակ կընէ . . . : Սակայն երէցն այն ամբաստանութիւններուն իբր ճշմարիտ՝ կը հաւատար . խտօրէն կըսէր ինձ որ կրկնակի մոլը ըլլալ պէտք եմ որ սուրբ տան մը մէջ ինքզինքս մուցած ըլլամ, քանի որ իմ աչքիս առջև կը ծնուի ընթացքս օրինակներ կան : Այս յորդորին չգիտէի պարասխանելիքս, գլուխս կը ծոկէի կարմրելով իմ ընթացքս, իմ շփոթութիւնս ինձի դէմ կը խօսէին . կեանքն այնչափ տաժանելի կը թուէր ինձ որ շատ անգամ քիչ մնաց որ ինքզինքս պիտի ջնջէի, սակայն կը մտածէի իմ հօրս, իմ մօրս, իմ եղբայրներուս և քոյրերուս վրայ, որոց քիչ մը կ'օգնէի . . . կը համբերէի, իմ վատթարութեանս մէջ սփոփում մը միայն կը գտնէի . գէթ հայրս բանտէն ազատեցաւ, կըսէի : Նոր թշուառութիւն մը զիս տագնապեց, մայր եղայ . . . տեսայ որ բոլորովին կորսուած եմ : Չգիտեմ ինչու համար նախազգածում մ'ունեցայ որ Պ. Ֆէրրան, իմանալով այս գէտքը որով ինչ խտօթիւնը իմ մասիս պարտ էր նուազիլ, աւելի դէշ պիտի վար-

ուի հետս . սակայն ամենևին մտքէս չէր անցներ թէ ի՞նչ ձուներ պիտի դային զիս ևս զլեռս . . . :

Մօրէլ, իր վայրկինական յնարումէն սթափելով՝ զարմանքով չորս գին նայեցաւ, ձեռքը ճակոխն տարաւ, յիշատակներն ամբողջ և աղջկին ըսաւ :

— Կարծեմ թէ պահ մը ցնդեցաւ ինչքո՞ւ . . . աշխատութիւնը . . . վիշտը . . . կըսէի . . . :

— Երբ Պ. Ֆէրրան իմացաւ որ յղի եմ . . . : Ախնահատը յուսահատական շարժում մ'ըրաւ, Խօտուցի ակնարկով մը զանի հանդարտեցուց :

— Օ՛ն, մինչև վերջը պիտի մտիկ ընեմ . . . ըսաւ Մօրէլ . — Շատ բունակէ . . . շարունակէ . . . :

Լուիզ վրայ բերաւ :

— Պ. Ֆէրրանի հարցոյցի թէ ի՞նչ հնարքով կրնամ պարտիկ նախապիքս և վերջակի մը հետևութիւնները՝ որուն հեղինակն ինքն էր . . . : Բարե՛ք, հաղիւ թէ պիտի հաւատաւ ըսածիս, հայր իմ . . . :

— Լա՛ւ, ի՞նչ է . . . :

— Պ. Ֆէրրան սրտմտութեամբ խօսքս կորեց . . . և զարմանք կեղծելով՝ ըսածս չհասկնալով զարկաւ . հարցուց ինձ թէ յիմար եմ : Ահաբեկ գոչեցի : — Բայց, Սպտուած իմ, հիման ի՞նչ կուզես որ ըլլամ թէ որ վրաս գտի չունիս, դնէ զաւկիդ վրայ գլխաւոր : — Ի՞նչ ստիպի բան . . . պողոպ Պ. Ֆէրրան ձեռները զէպ երկին տարածադրով :

— Ի՞նչ ըսիր . թշուառական . ի՞նչպէ՞ս կը յանդգնիս ամբաստանել զիս, իբր թէ այնչափ վատ ու ապականակիք ըլլամ որ մինչև քեզի պէս ստորին կարգի աղջկան մը հետ գործ ունենամ . . . այնչափ ըրենի աղջիկ մ'ես որ քու կրկնող հետևութիւններն ինձի կը վերադրես, ես հազար անգամ կրկնեցի յարգելի վկաներու առջև որ պիտի կորսուիս, պիտի մոլորիս գու . վատազգի վարարդ գու : Շուտ ատենէս ելի՛ր դնա՛, քեզ կը վճռես . . . :

Խօտուցի և Մօրէլ սարսափած մնացին . . . այսպիսի դժոխային կեղծաւորութենէ մը շանթահար եղան . . . :

— Ո՛հ, կը խոստովանիմ . . . — ըսաւ Ռօտուլֆ — սպի ամենէն սուգիլալի կանխատեսութիւնները կը գերազանցէ :

Մօրէլ բան մը չըսաւ, զարհուրելի կերպով մ'աչերը մեծցան . ջլածիլ ցնցում մը կերտարնը սլակեց, նստած տրապզին վրայէն վար իջաւ, արտօնօք զզրոց մը բացաւ. երկայն սրածայր հաստ սղոց մը առաւ՝ որ փայտէ կոթ մ'ուռէր՝ և դէպ ՚ի դուռը վաղեց . . . Ռօտուլֆ անոր խորհուրդը դուշակեց, լմեն բռնեց և դանի կեցոց :

Մօրէլ, ո՛ր կերթա . . . ՚ի կարուս կը դիմես, թշուա՛ռդ դու . . . — Զոյշ կեցիր — գոչեց կատաղի բանորրը տարուբերելով — Տիմակ երկու աղէտ կը սրտաձառեմ փոխանակ մէկի :

Եւ անմիտր Ռօտուլֆին պատնայ :

— Հայր իմ . . . մեր ազատարարն է . . . գոչեց Լուիլ :

— Մեր քթին կը խնայ . . . բա՛, բա՛, նստարն աղատել կուզէ . . . նստարը — պատասխանեց Մօրէլ գլխովն մտորած՝ Ռօտուլֆին դէմ մաքառելով : Վայրկե՛նէ մ'եօթը՝ սա զգուշութեամբ ա՛նոր դէնքը ձեռքէն առաւ, դուռը բացաւ և սղոցը սանդղին վրայ նետեց : Լուիլ անխաճատին վազեց, իր գրկացը մէջ դանի սեղմեց և անոր ըսաւ :

— Հայր իմ . . . մեր բարերարն է այն . . . անոր վրայ ձեռք վերցնիր, խելքդ գլուխդ ժողվէ . . . :

Այս խօսքերը սթափեցին Մօրէլը. դէմքը ձեռներուն մէջ պահեց, և Ռօտուլֆին ոտքն ընկաւ անմոռնչ :

— Ոտք ելիր, հայրդ թշուաւ — վրայ բերաւ Ռօտուլֆ բարեմը մատթեամբ : — Համբերութիւն . . . համբերութիւն . . . կըմբրունեմ կատղութիւնդ, մանակից եմ ատելութեանդ, բայց նոյն իսկ յանուն վրէժխնդրութեանդ, փտանդի մէջ մի ձղեր գայն . . . :

— Աստուած իմ, Աստուած իմ — գոչեց անխաճատը ոտք ելնելով : — Բայց ի՞նչ կընայ ընել արդարութիւնը . . . օրէնքը . . . այս բանին դէմ : Ի՞նչ խեղճ արարածներ ենք : Եթէ երեսնը այն հարուստ, հզօր և յարգելի մարդն ամբաստանենք, մեր քթին պիտի խնտան, հա՛, հա՛, հա՛ : — Եւ սկսաւ ջլածիլք ծիծաղ մը ծիծաղել : — Եւ իրաւունք պիտի ունենան . . . Ռ՛ւր պիտի գտնենք մեր

գանդին փաստերն, այ՛, մեր փաստերը : Ռ՛ւլ պիտի հաւտայ մեզ՝ Ռուսի ես քեզ կըսեմ, ե՛ս — գոչեց անխաճատը յիմարական կատղութիւնը սաստկանալով — ե՛ս կըսեմ քեզ որ մինակդանակիս անկողնակալութեան վրայ վտասհութիւն ունիմ . . . :

— Լուիլին, Մօրէլ, վիշտդ քեզ կը մօլորէ — ըսաւ անոր Ռօտուլֆ սրտաօրէն . . . — Թո՛ղ որ աղջիկդ խօսի . . . ժամերը թանկագին են, պաշտօնատարն անոր կ'սնդսէ, պէտք է որ ամէն բան իմանամ . . . կըսեմ քեզ . . . ամէն բան . . . : Հարունակէ աղջիկս :

Մօրէլ իր աթոռակին վրայ ընկաւ վշտագին :

— Անօգուտ է, պարն — յարեց Լուիլ — պատմել քեզ իմ արատաքս, իմ աղաչանքս. ձեռքէ դացեր էի : Այս բանս աւտու ժամը տասին Պ. Գէրրանի դահլիճը կանցնէր, նոյն օրը երէցը պիտի զար իրեն հետ ձաշիլու. ներս մտաւ այն միջոցին որ տէրս զիս շարաչար կը յանդիմանէր և կը նախատէր . . . յանկարծ քահանայի տեսքն իրեն վերաւ պատձառեց :

— Եւ այն ատեն ի՞նչ ըսաւ անոր :

— Շուտ մ'ի՛ր որոշումն ըրաւ. անունս տալով պոռայ : — Լա՛ւ ուրեմն պատուելի երէց, ես քեզի չէի ըսեր որ թշուառուհին փորձանքի մը պիտի դայ . . . արդէն փորձանքի հանդիպած է . . . բոլորովին ՚ի կորուստ մասնուած է. հիմակ խոստովանեցաւ ինձ իր յանցանքն ու անարգութիւնը . . . աղաչելով որ զինքն աղատեմ : Եւ մըտած է անգամ մ'որ գթասիրութենէ շարժեալ այսպիսի թշուառուհի մ'իմ տունս պատուարեցի :

— Ի՞նչ — ըսաւ երէցը սրտմտութեամբ — իմ առջևս քու տիրոջ տէպ քեզ տուած խորհրդներուն միտ չդնելով, ինչպէս այս աստիճան վատթարացար : Ռ՛հ, աններելի է յանցանքդ . . . : Բարեկամ այս թշուառ աղջիկն և ընտանիքին համար ըրած բարերարութեանդ ետքը, նորէն գթութիւն ցոց տալ տկարութիւն է . . . : Անողերելի եղիր — ըսաւ երէցը, ամենուն պէս Պ. Գէրրանի կեղծաւորութենէ խաբուելով :

— Եւ ինչպէ՛ս նոյն պահուն այն վատազգիին դիմակը վար չ'առիք — ըսաւ Ռօտուլֆ :

— Տէր Աստուած, սարսափեր արձան կտրեր էի, պարոն. զքեզ լուսս իմն չէր, չէի իշխեր, չէի կարող բաձ մ'արաասանել, թէ և ազնիյի խօսիլ, և ինքզինքս սրաշտարանն է: — Բայց, պարոն... — զոչեցի... — Չայդ կարէ, անարժան էակ — ըսաւ ինձ Պ. Ֆէրրան խօսքս ընդ միջեւով: — Արդէն լսեցիր պատուելի երէցին ըսածը... զթու թիւնը անբարութիւն է... ժամէ մը տունէս դուրս պիտի ելնես: — Ազա պատանօտան տալու ժամանակ չթողլով ինձ, երէցն առաւ ուրիշ սենեակ մը անգամ, Պ. Ֆէրրանն մեկնելէն ետեւ — յարեց Աուիլը — կարծես թէ պահ մը զստանցումի մէջ ընկայ. ինք զինքս տունէն արտաքսուած կը սեպէի, և ուրիշ տեղ մանկելու անկարող, դաճուած վիճակիս և Եփրոջս իմ մտօխտ տալիք դէշ միտա յու թեան սրտաճառաւ. աներկիւտ էի նսաւ որ իր անաջին բարկութեան ժամանակ հայրս կը բանտարկէ, ի՞նչ ըլլալս չգիտէի. Խուցոքաշուեցայ լալու և ողբալու համար: Երկու ժամէն Պ. Ֆէրրան հոն դարձաւ: — Ծրարդ պատրաստ է — ըսաւ ինձ: — Ընորճ, ըսի անոր, ստքն ընկնելով — այս իմ դանուած վիճակիս մէջ զիս տունէդ մի վճնտեր: Ի՞նչ պիտի ըլլամ, տեղ մը չեմ կրնար մանել: — Աւելի աղէկ, Աստուած կը պատժէ քեզ այգպէս քու ցովութեանդ և սուտերուդ համար: — Ինչպէս կը համարձակիս ըսելու որ սուտ կը խօսիմ — զոչեցի սրամտութեամբ — ինչպէս կը համարձակիս ըսելու որ իմ կորստեանս պատճառը դու չես: — Անմիջապէս տունէս դուրս ելիր, վատաղի, քանի որ սրաշտարանութիւններդ կը շարունակես — զոչեց նօտարը ստակալի ձայնով մը: — Եւ քեզ պատժելու համար, վաղը հայրդ բանտ պիտի դնել տամ: — Աս'ա, ո՛չ, ո՛չ, — ըսի անոր ահաբեկ — սը չպիտի ամբաստանեմ քեզ, սրարոն... խօսք կտամ քեզ, բայց զիս մի վճնտեր...: Պ. Ֆէրրան իմ հօրս վրայ, այս տեղ իմ գոյն ինչ վատկած ստակալս ընտանիքս կը հողամ...: Պահէ զիս տունդ... բան մը չպիտի ըսեմ...: Պիտի աշխատիմ իմ վիճակս ծածուկ պահելու, և երբ անկարող ըլլամ զայն պարտկելու, է՛հ, այն ատեն միայն տունէդ ձամբէ զիս: — Արկին և կրկին աղերսելէն ետեւ Պ. Ֆէրրան յանձն առաւ զիս իր քովը պահելու. այս բանս իբր մեծ ծառայութիւն մը նկատեցի

այնքան ահաւելի էր իմ կայութիւնս: Այս տաժանելի տեսարանէն ետքը օրերս թշուառութեամբ, ստապանօք անցուցի. մինակ երբեք չիմ, Պ. Թէրմէն, զոր ուր ուրեմն կը տեսնէի, իմ վիշտերուս պատճառը կը հարցնէր բարեհարութեամբ, սակայն անօթես չէի կարող բան մը խոստովանիլ անոր:

— Միթէ այն ատենը չէ՞ր որ Պ. Թէրմէն եկաւ հոն բնակելու:

— Այո, պարոն, Գամբլի կամ Արսէնալի կողմերը խոց մը կը վնասէր. այս տեղ վարձու սենեակ մը կար, նստած խոցը ցոյց տուի անոր, պարոն, և անոր յարմար եկաւ: Գրեթէ երկու ամիս առաջ երբ զայն թողուց, աղաչեց զիս որ իր նոր հասցէն ուրիշ մէկու մը շայտանեմ, և կը կարծէին թէ Պ. Ֆէրրանն տունը կը բնակի:

Ռօտովի այս պարտութիւններուն պատճառը կը մեկնէր մասածելով որ Պ. Թէրմէն պարտաւոր էր իր հալածիչներուն երեսէն խոցս տալու:

— Եւ միթէ միտքէդ չանցաւ երբեք Թէրմէնի բանալու սիրտդ — հարցուց Ռօտովի Աուիլին:

— Այ, պարոն, ինքն ալ Պ. Ֆէրրանն կեղծաւորութենէ խաբուեր էր. կրօէր թէ խոստալիտ է և բռնաւոր, սակայն կը կարծէր նաև որ աշխարհիս ամենէն պարկեշտ մարդն է:

— Երբ Թէրմէն այս տեղ կը բնակէր, երբեմն հօրդ գանգատը չէր լսեր նօտարին դէմ որ քեզ հրապուրել կուղէր:

— Հայրս երբեք օտարներու անջև իր երկիւղը չէր յայտնէր. սակէ զամ այն ատեն իր կասկածները փարատելու կը ջանայի, կ'ապահովէի զինքն ըսելով որ Պ. Ֆէրրան ալ իմ ետեւս չէր ընկնէր...: Աւա՛ղ, խեղճ հայրդ իմ, հիմակ պիտի ներես անշուշտ այս սուտ ու պատիւ խօսքերուս: Քեզ հանդարտեցնելու համար ոյսպէս կը խօսէի կ'իմանաս ըսածս, այնպէս չէ՞:

Մօրէլ բան մը չպատասխանեց. զրոխն իր տրապաղին վրայ խաչաձև դրած թևերուն վրայ կ'ընկնելով կը հեծկկտար:

Ռօտովի նշան ըրաւ Աուիլին որ իր խօսքը նորէն հօրը չ'ուղղէ. ուտի շարունակեց նա:

— Այսպէս արտաքի և անընդհատ անձկութեան մէջ ապրեցայ: Անդադար պարտութիւններ ընելով՝ ամենուն աչքէն իմ վիճակս պար

Տեղու կարող եղայ ; բայց չկրցայ նոյն կերպով սքողել զայն երբ մէկ
 դէտաւի վախճանին վերջին երկու ամիսներուն հասայ . . . : Ապա
 դաս օր ըստ օրէ ահա երկ երեւոյթ մը կատնուր իմ աչքիս ; Պ.
 Ֆէրրան բացէ ՚ի բայ յայտներ էր որ զիս իր տունը չպիտի պահէ
 . . . : Քիչ ատենէն պիտի զրկուէի այն անպրօտէն սրով ընտանեացս
 կը նստատէի : Իբր անիծարեր անձ մը , և հօրս տանիւէն տարազիր
 ի՞նչ պիտի ըլլար իմ վախճանս ; ո՛ւր պիտի տարուէն մը ; պաշտօն
 մը դանէի . . . սոյն ողորմելի վիճակիս մէջ , վասն զի հայրս՝ զինքը
 հանդարտեցնելու համար ըսած սուտերէս պիտի կարծէր թէ Պ :
 Ֆէրրանի մեղաւորացնելու եմ և ոչ անմեղ նահատակ մը : Այն ատեն
 դատապարտելի խորհուրդ մը մտքէս անցաւ : Բարեբաղդաբար սիրտ
 չըրի զայն ՚ի գործ դնելու . այս խոստովանութիւնը կընեմ քեզ , պա-
 րոն ; վասն զի ոչ ինչ չեմ ուզեր քեզնէ դադրանի պահել , նոյն իսկ
 իմ յանցանքս , որպէս զի հասկնաս թէ ի՞նչ անհնարին վիճակի
 մէջ ընկեր էի Պ . Ֆէրրանի անդթութենէ : Եթէ աղէտաբեր խոր-
 հուրդ մը կատարէի ; միթէ իմ մեղաւորացնելը ըլլար :

Պահ մը լուս կենալէն ետև՝ Լուիզ ճիզ մ'ընելով շարունակեց
 դողդոջուն ձայնով մը :

— Գոհասարանուհին ըսած էր անգամ մ'որ ճամբարտակ մը կը բը-
 նակի այդ տան մէջ որ . . . :

Լուիզ չկրցաւ խօսքն աւարտել :

Ռօտուֆնոյն պահուն յիշեց օր տիկին Բիբլէի հետ առաջին ան-
 գամ տեսութիւն ընելու ատեն երբ նա բացակայ էր ; ցրուիչէն ,
 հաստ թղթի վրայ շինովի տառերով գրուած նամակ մը ստացեր էր
 և որուն վրայ քանի մ'արտառքի նշաններ նշմարեր էր . . . :

— Եւ դու այն ճամբարտակին դիր մը գրեցիր , խեղճ աղջիկ . . .
 երէք օր առաջ . . . նոյն նամակին վրայ լացեր էիր , կեղծ զեր մը
 դրեր էիր ,

Լուիզ ահ ու դողով Ռօտուֆին երէտը կը նայէր . . . :

— Աւսկից զիտեն , պարոն . . . :

— Անհոյ եղիր , Տիկին Բիբլէի օթեկին մէջ առանձին էի երբ
 այն նամակը բերին , և պատահումով զայն նշմարեցի . . . :

— Այո՛ , ճիշտ է , պարոն : Այն անստորագիր նամակիս մէջ
 Պ . Պարտաւանդիկն կը գրէի թէ՛ չլինա՞ով իր տունը երթալ ,
 հորհ ընէ ինչը իր կոնքը Շաշօ-տ՝ (ի կողմերը դառ . . . : Գլուխս
 ինն չէր , կը վախարէի սոյն ճամբարտակէն ստակի խորհուրդներ
 ինքրել . . . : Տիրջս առնէն դորս ելայ զանոնք կատարելու մտք ,
 սակայն քանի մը վայրկեան ետքը խեքս զլուխս եկաւ , հասկցայ թէ
 ինչ մեծ ոճիր սլուի դուժեմ . . . : Տուն դարձայ և ժամադրու-
 թիսն սեղը չլացի : Այն իրկուն տեսարան մ'անցաւ որուն հետև-
 թի նները զիս տանջալ յիսին թշուառութեանս առթ տուին : Պ .
 Ֆէրրան կարծէր թէ երկու ժամուան համար դորս ելեր էի , մինչդեռ
 շատ չանցաւ դարձայ : Պարտակին վրէժի գոնէն անցնելու ատենս
 դարմանք տեսայ որ կէս բաց էր , անկցներս մնայ և անոր բա-
 նակն Պ . Ֆէրրանի դահլիճը բերի ձգեցի , որ սովորաբար կը ձը-
 դէին : Աս սենեակին ին նշմարանին առջև կ'ընկէր և տան ամե-
 նէն առանձնախան վարն էր . ահա այս տեղ գաղտնի ունչնըրու-
 թիւններ կտար . և ի՞նչ քիտնին ինքնայնի գործերը կը կատարէր :
 Հիմակ պիտի տեսնես , պարոն . թէ ինչու համար այս մանր պարա-
 դաները կը սրտմեմ . բնակարանին ամէն կողմերը զիս նստովս՝ սեղա-
 նատունէն՝ որ յուսաորբած էր , անցնէ և ետև՝ առանց լո սի սը-
 բահը մտայ , յետոյ դահ իճը՝ որուն ներսի գլին էր նշմարանը : Եյս
 նշմարանին դորս բացուեցաւ ճիւղ այն միջոցին որ բանակն սեղա-
 նին վրայ կը դէի : Հաղիւ թէ սերս իր սենեկին մէջ չ'առած կան-
 նին վրայ կը դէի : Հաղիւ թէ սերս իր սենեկին մէջ չ'առած կան-
 թիղին լո սովն զիս տեսաւ որ անտոնոջ դուրը դոց՛ց անձի մը վրայ
 զոր չկրցայ տեսնել , ապա թէև մութ էր չ'ոսս յարձակեցաւ ,
 վիչս բոնեց այնպէս որ կարծես թէ զիս խեղդել կ'օգէր և ցած՝
 . . . զայրազին ու միանգամայն ահաբեկ ձայնով մ'ինձ բար : —
 « Կը լռեսե՞իր , գոնէն մտիկ կընէիր . ի՞նչ լսեցիր . . . պատաս-
 խան , պատասխան տուր , թէ ոչ քեզ հիմա կը խեղդեմ : » —
 Բայ յանկարծ միտքս փոխեց , բար մ'աբաւսանե ու իսկ ինձ ժա-
 մանակ չտուաւ , սեղանատունն ընկ կեղծով տարաւ զիս , մատանը բաց
 էր , կոշտաբար զիս անոր մէջ նետեց և դուրը դոցեց :

— Եւ միթէ իր խօսակցութենէ բան մը չլսեցիր :

— Ա՛չ ինչ, պարոն, եթէ գիտնայի որ ուրիշի հետ իր սենեակին է, ամենևին դաճլիճը չէի մտներ. նոյն խօսակցին Յէրաֆէն արտօնութիւն չուներ մանկու :

— Իսկ երբ մտանէն ելար ի՛նչ ըսաւ քեզ նոտարը :

— Տեսչուհին եկաւ զիս անկից հանելու և նոյն իրկուն Պ. Ֆէրրանը շտեայ : Արած տաղնապս ու երկիւզս շատ տկարացուցին զիս : Միւս օր, վար իջնելու ատենս, Պ. Ֆէրրանի հանդիպեցայ. սարսուռ մ՛ղզացի առջի իրիկուան սարտնալիքը յիշելով. քանի մեծ եղաւ զարմանքս երբ զրեթէ հանդարտութեամբ մ՛ըսաւ ինչ :— « Եւ սակայն արդէն գիտես որ արգիլած եմ որ և է մէկու գաճլիճքս մտնելու, երբ սենեակը մարդ ունիմ, բայց որովհետև շատը գնաց քիչը մնաց, և պիտի երթաս, աւելորդ է աւելի սատտել քեզ : » Եւ յետոյ իր գիւնատուներ գնաց : Եր առջի օրուան բրունաթեկէ ետքն՝ այս չափաւորութիւնը զիս զարմացուց : Ըստ սովորականին իմ ծառայութիւնս շարունակեցի, և իր ննջարանը շտակելու գացի. . . : Բողոր զիշեր օտարակեր էի, տկար էի ու նկուն : Ննջարանին մօտ՝ խիստ մութ գաճլիճի մը մէջ գտնուած հալուստները կարգի դնելու ատենս, յանկարծ յաւազին զլիսի պտոյտ մը բռնեց զլուխս. զգացի որ նուաղելու վրայ էի. . . : զետին ընկնելու ատենս, մեքենայէս ինք զինքս բռնել ուղեցի միջնորմէն կախուած վերարկուի մը փաթթուելով, սակայն ընկայ և նոյն զգեստը վար ձգեցի և անու՛ղ զրեթէ բողբոջին ծածկուած գտնուեցայ : Երբ ինք զինքս գտայ ննջարանին գաճլիճի ապակեայ դուռը դոց էր . . . Պ. Ֆէրրանի ձայնը լսեցի. . . բարձրաձայն կը խօսէր. . . : Նախորդ իրիկուան տեսարանը յիշելով մտածեցի որ եթէ շարժիմ անպատճառ մահս կը պատճառեմ, ենթադրեցի որ վրաս ընկած վերարկուին տակը պահուրտած ըլլալով՝ նոտարը՝ սոյն մութ զգեստաւանին դուռը դոցելու ատեն, զիս տեսած չէ : Եթէ զիս այն տեղ տեսներ ինչպէս կարելի էր հաւտացնել անոր այս անմեկնելի գիպուածը : Աւտի շունչս բռնեցի, և ակամայ լսեցի խօսակցութեան մը վերջն, որ անշուշտ բաւական ժամանակ ստաջ սկսած պիտի ըլլային :

— Եւ ո՞վ էր այն անձն որ նոտարին սենեկին մէջ վախուած անոր հետ կը խօսակցէր :— Հարցուց Բոտոլֆ Լուիզին :—

— Չգիտեմ, պարոն. անոր ձայնն ինձ անծանօթ էր :

— Եւ ի՛նչ կըսէին իրարու :

— Խօսակցութիւնն արդէն սկսած պիտի ըլլար. վասն զի ահաւասիկ լսածս :— Շատ պարզ բան մ՛է այդ— կըսէր այն անծանօթ ձայնը— Պէ՛տ— Բո՛տ— անունով թշուտտական մը, քիչ մ՛տառ ըրեղ ըսած գործիս համար, ահա զբէ քոյակներու ընտանիքի մը հետ զիս ծանօթացուց, որ Անիէրի մօտ կը գեղի մը ծայրը կը բնակի. աշխարհիս ամենէն նշանաւոր կը զգաներն են. հայր ու որդի զլիսատեցան, որդիներէն երկուքը մշտապէս թիարանի դատասարտուած են. բայց զեռ կ՛ապրին մայրը, երեք տղայն և երկու տղիկը, ամէնքն ալ անողամեկն : Արսեն թէ, զիշերը, Յէն գեալին երկու ափունքը գուլութիւններ ընելու համար նաւակով երբեմն մինչև Ալբանի կողմերը կ՛ապտտակեն : Մէկ Ֆրանցի համար արիւն թափող մարդիկներ են, բայց մեք անոնցմէ պէտք չունինք. բաւական է որ քու դատաւարիկ տիկինը հիւրընկալեն : Մարտիակները, (այս է սոյն ջրատգտակներուն տեսնը) անոր աչքին ձկնորճներու պարկեշտ ընտանիք մը պիտի համարուին, ես ալ քու կողմից քանի մ՛անդամ այցելութեան կ՛երթամ քու նորատի տիկնոջդ, անոր գեղջուր մը կսամ. . . և ութ օրէ ետքը Անիէրի գերեզմանատան հետ պիտի երթայ անշուշտ ծանօթութիւն ընելու : Գեղերուն մէջ մեռելները կ՛անցնին անտես, ինչպէս նամակ մը թղթատուէն, սակայն Բարիդ աւելի մօտէն կը նային անոնց : Բայց քու գեղջուհիք երբ Անիէր պիտի զրկես, որ ես ալ ժամանակին իմաց տամ Մարտիակներուն թէ ինչ գեր պիտի խաղան :— Ատղը պիտի դայ հօս այն անձը, միւս օրն անոնց տունը պիտի գտնուի— վրայ բերաւ Պ. Ֆէրրան— և անոր պիտի յայտնեմ որ իմ կողմէս տորքօյի Աէնտանը պիտի գայ զինքը խնամելու :— Գոյթ չէ որ զիս Աէնտան կ՛անուանես— ըսաւ ձայնը.— աւելի լաւ ունիմ այդ անունը քան ուրիշ անուն մը. . . »

— Ի՛նչ կընայ ըլլալ այս նոր ոճիին ու վատանունութիւնը— լսաւ

Ռօտո:Փ ՏեողՏեանէ զարմանալով:

— Կո՞ր, ոչ սարսն: Տիմակ սխաի տեհեա որ քեղ արդէն ծանօթ օճոյի մը հետ կապակցութիւն ունի— վրայ բերաւ Առիկ և շար լնակեց: — Աթուռնեբու շարժիչը լսելի, խօսակցութիւնն աւարտեր էր: — « Չեմ ստղարեր քեղ որ այս բանս դադու՞ի պահեա — բաւ Պ. Վերջան, — ինչպէս դու զիս, նոյնպէս ևս քեղ բոս նամ եմ: — Հեանապէս միշտ իրաշու ծառայեա և ևր էք չփնտսեա տնայրուած ենք — սրատուխան առաւ ձայնը: — Տես սնդամ մ'իմ եոանդս, երէկ իրկուն ժամը տասին ստացայ գիրդ, և ահա այս աոտու տունի եմ: Անաս բալև, նոյն կը տեսնու ինք: Առ նիւրի կը ին մի մոանար, նոյնպէս Վերջան ձիորսուա ու Երանու: Այս երեք մողական բառերուն շնորհիւր՝ դեղու հիդ հալիւ թէ ութ օր կրնայ սպրի: — Վեցիր—բաւ Պ. Վերջան — երթամ զորս շութեան պարզութեան քաշեմ դահլիճիս դոնէն, և նայմ թէ աշխօշ նախաստիտալը մարդ կայ, որպէս զի տարախ զին ուղէն դորս երես, ինչպէս որ մտար... » — Պ. Վերջան պահ մը դորս երա, սպա դարձաւ, և վերջապէս հեռացաւ այն մարդուն հետ որուն ձայնը լսեր էր... Վրասա երեակայեղ, պարուն, թէ այս խօսակցութեան ստեն քանի մեծ էր սաշտափս և յուսահատութի նս որ սկիանայ այնպիսի գաղտնիք մի մի Տանկի: Այս ահտակցութենէ երկու ժամ ետքը՝ արիկին Աերու Փէն խուցս եկաւ զին վնտուեա, ուր երեք էր բոորովն գողութուն և առաջուանէն աւելի հիւանդ, — Պարոնը քեղ կուգէ — բաւ տես: Տիմ ինչ. — արժանիքէ արեի բաղդ կը բանի. երբ վար իջնենք: Շատ դուստա ես քեղ տալիք նոր լուրը երեսիդ գոյն պիտի բեկէ: Տիկին Սերաֆէրին ևսնէն գացի, Պ. Վերջան իր գահլիճն էր: Չանի տեսնելու ախանայ գող մ'եկաւ վրաս, թէ և ստիգականին պէս ժանտ գէր մը չո ներ. բաւական տեսն ախայիչ նայցաւ ինչ, երբ թէ իմ մարիս խորը թափանցել կուէր: Աչբս վար առի: — Շատ ցատողար կ'երկիր — բաւ ինչ: — Այս, սարսն — պատ ստիանեցի առոշ, զարմանալով որ բոտ ստիգրականին չգող գեր ինչ: — Չարմանալի չէ — յարեց նա — ձեր վիճակին և զայն

աշողեա: համար բրած Ֆիդերուն հեանութիւն է. բաց ձեր սուս սեռուն, զէշ ընթացքին և երէկուան անխոհեմութեան հայե լվ — Եւր բերաւ նա աւելի անո շ ձայնով մը — կը յիմամ ձեր վրայ քանի մ'օ է: անկարեի սխաի բրայ ձեղ յղութիւնդ ծածկել: Եւ երէցին առջև պէտք կը լսին պէս ձեղ սաստեցի, սակայն հասարակութեան աչքին այդպիսի դիտուած մ'իմ անարատ տանս աղտ կ'նայ բեղել, ասկէ զատ ձեր ընտանիքը յուսահատութեան մը պիտի ընին: ... Այս սարաղայիս մէջ կը հաւանիմ ձեզի սջալց գառուի: — Ա՛հ, սարսն, գոչեցի — այդ ձեր համակիր խօսքին ամէն բան մոյնիւր կտան ինչ: — Ի՞նչ մոյնիւր կտան — հարցուց ի խախ: — Ա՛չ ի՞նչ, ո՛չ ի՞նչ... Երէցիք սարսն — յարեցի որ զինքը չպարայնեմ, քանի որ իմ մասիս իստա բարեւէր արամաղութեան մը մէջ կը գտնուէր:

— Արեմն մաիլ ըէք ինչ — յարեց նա — այսօր պիտի երթանք ձեր հարր տեսնելու, սխաի իմացնենք անոր որ երկու երեք ամիստ ան համար զիւր պիտի զրկեմ ձեզ որ նոր գնած մէկ տունս նայիք. ձեր բացակայութեան ստեն ես ձեռքը կը հասցնեմ ամ սակախ: Ատը Բարիէն կ'երեք, յանձնարարական գիր մը պիտի տամ ձեզ արիկին Վարսիաի վրայ, որ Անիէրի մօտ բնակող ձրկնոյններու պարիշտ լնտանեաց մայր է: Եւ քեզ ըսել անոց որ գաւառէն կգաք առանց ուրիշ բացատութիւն մը տաու: Աե չէն պիտի իմանաք այս յանձնարարութեանս նպատակը, որ ձեզի շատ նպատաւոր է: Վարսիայ խաթուրը ձեզ զտկին սէս պիտի ինամէ, իմ բարեկամ մէկ բժիշկիս, Աեռան տորսօրը, ձեր վիճակին պահանջած ամէն հող պիտի տանի... Աը տեսնեք թէ քանի բարետիրտ եմ ձեր համար: »

— Այս ինչ ահտեի որոգայթ է — գոչեց Ռօտո:Փ — Տիմակ ամէն բան կը հասնամ: Թերես կարծեով որ սաջի օր ստկալի գաղտնիք մ'անանլնաւս իմացար, քեղ ջնջիլ կուգէր: Հաւանական է որ իր գաւակիցը խարխուր շահ մ'ունէր, քեղ իրր գաւառս բրնակ կին մը նկարագրելով: Արդեօք ինչ սաշտափ պաշարեց քեղ այս առաջարկութեան վրայ:

— Ստակալի հնարուած մը կրեցի, բողբոջովն շուտեցայ: Զէի կարող պատասխան տայ, ո՛հ ու դողով Պ. Ֆէրրանի երեսը կը նայէի: դըուխս կը մնարէր: Մազ մնաց կեանքս վտանգի մէջ պիտի գնէի բնելով անոր որ առտու իր խորհուրդներուն անգեկացայ, երբ բարեբաղդօրէն սոյս խոստովանութենէն յառաջ գալիք նոր վրտանդները յիշեցի: — Արդեօք ըսածս չհասկցար — հարցուց ինձ նոտարն անհամբերութեամբ: — Այո՛ . . . պարոն . . . : Բայց — ըսի անոր դողդոջուն — աւելի աղէկ ունիմ դեղ չեմ թալ: — Ինչո՞ւ համար, ձեզ զրկած տեղս կատարելապէս պիտի խնամուէք: — Զէ՛, չէ՛, չե՛ս պիտի երթամ, լաւագոյն կը սեղեմ Բարիդ մնալ, ընտանիքէս չհեռանալ, լաւագոյն կը համարիմ անոր ամէն բան խոստովանիլ, և ՚ի հարկին ամօթէս մեռնիլ: — Ուրեմն կը վերժեալ — ըսաւ Պ. Ֆէրրան, իր բարկութիւնը դեռ ևս զսպելով և ինձ ուշադրութեամբ նայելով: — Ինչո՞ւ համար յանկարծ միտքդ փոխեցիր: Քիչ մ'առաջ կ'ընդունէիր . . . : — Գիտեցի որ եթէ մտքս գուշակէր, կորսուած օրս էր, անոր պատասխան առի թէ չէի կարծեր որ խնդիրը Բարիդէն, ընտանիքէս հեռանալու վրայ էր: — Բայց դու, անպիտան, ընտանիքդ կ'անպատուես: — դոչեց նա: — վաղը ասկից պիտի ելնես Մարտիալե՛նց տունը երթալու կամ հօրդ դատնալ ըսելու համար որ քեզ վրնասեցի և թէ ինքն ալ նոյն օրը բանա պիտի մանէ . . . : Մինակս՝ գիտնալ տարածուած մնացի, այժ չունէի սոք ելնելու: Տիկին Սերաֆէն տիրոջը բարձր ձայնը լսելուն՝ վաղելով եկեր էր: անոր օգնութեամբը և գայթ 'ի գայթ սենեակս ելայ: Երբ ներս մտայ՝ անկողնիս վրայ ընկայ, մինչև գիշեր հոն մնացի: այսքան ցնցումներ տակալի հարուած մը սուշին ինձ: Առաւօտուն ժամը մէկին վրաս հասած գծողակ ցաւերէն զգայի որ ժամանակէն առաջ այն թշուար զտիկին ծնունդ պիտի տամ:

— Ինչո՞ւ համար օգնութեան չխնայեցիր: — Ո՛հ, չհամարձակեցայ: Պ. Ֆէրրան զիս բնաջնջ ընել կը փախարէր: անշուշտ տղասօր Աւեսանը բերել պիտի սար, որ փոխանակ Մարտիալե՛նց տունը զիս սպաննելու՝ տիրոջն առնը կ'ըսպաննէր: . . . և կամ Պ. Ֆէրրան զիս կը խեղդէր, և յետոյ կըսէր

թէ ծննդաբերութեան ասեն մեռեր եմ: Աւա՛ղ, պարոն, այս երկիւզս կարելի է անհիմն էր . . . բայց նոյն միջոցին զիս համակեցին, և այս եղաւ իմ դժբաղդութեանս պատճառը, սպա թէ ոչ ամօթն աչքս կ'առնուի և չէի ամբաստանուեր իբր տղայասպան: Օգնութիւն պոռալու տեղ, և առ ահի որ ցաւերուս սողաղակը չլսեն, սաւանները խածնելով կը խեղդէի ձայնս: Դ՛ վերջէ՛ ահուելի տառապանք կրելէն ետե . . . մինակս, մութին, այն ողբմելի էակը ծնայ, որուն մահուանս պատճառն անշուշտ տարածամ ծննդաբերութիւնս եղաւ . . . վասն զի, չսպաննեցի զանի, Աստուած իմ . . . ոչ, չսպաննեցի . . . ո՛հ, ո՛չ: Այն գիշերը գառն ուրախութիւն մ'զգայի՛ երբ գաւակըս գրկիս մէջ սեղմեցի . . . :

Եւ Լուիզին ձայնը մարեցաւ հեծկտանքէն: Մօրէլ այնպիսի անզգայութեամբ և անտարբերութեամբ մտիկ ըրեր էր իր աղջկանս պատմութիւնը որ Ռօտուֆ սոսկաց: Մակայն տեսնելով որ յորդ արտասօք կը թափէ իր աղջիկը, ակնահաստն որ միշտ տրապղին վրայ իր արմուկները դրած, իր երկու ձեռները բռնքերուն կպեր էր՝ ակնասլիշ նայեցաւ Լուիզին և ըսաւ: — Աղջիկս կ'ըսայ . . . կ'ըսայ . . . ինչո՞ւ համար կ'ըսայ նա: — Ապա վայրկեան մը վարանելէն ետե յարեց: — Ո՛հ, այո՛ . . . գիտեմ, գիտեմ . . . նօտարը . . . այնպէս չէ՞: Շարունակէ, իմ խեղճ Լուիզ . . . դուն իմ աղջիկս ես . . . միշտ կը սիրեմ քեզ . . . քիչ մը առաջ . . . չէի ճանչեր քեզ . . . կարծես թէ արտասուքս մնթ էին: Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, զըուխս . . . որչափ կը ցաւի գըուխս . . . :

- Կը նայես որ յանցաւոր չեմ հայր իմ, այնպէս չէ՞:
- Այո՛ . . . այո՛ . . . :
- Մեծ դժբաղդութիւն մ'է այս . . . բայց նօտարէն այնքան կը վախնայի . . . :
- Նօտարը՞ . . . ո՛հ, կը հաւտամ՝ քեզ . . . այնքան չար, այնքան չար է . . . :
- Հիմակ ալ ինձ կը ներես հայր իմ:
- Այո՛ . . . :

— Իրան կրտս :

— Այո՛ . . . իրան . . . Բ՛Տ, միշտ կը լինեմք քեզ . . . հաւատա՛ . . . թէ ե չեմ կրնար . . . ըսել . . . կը նային . . . լաւն լի . . . Բ՛Տ, դու խա . . . դու խա . . . :

Լուիշ Բօտո Ֆին երեսը նայեցաւ ահաբեկ :

— Յաստիկ կը ստատարի, թո՛ղ որ քիչ մը հանդարտ : Շաբունակէ :

Լուիշ յարեց, քանի մը մ'անդամ Մօլէլին նայլով աւձու թնամբ :

— Ձաւակս դրկիս մէջ սեղմցի . . . շունչ չէր առնուր, և կը դարմանայի. բայց կըսէի ինքնուրիշ : Այս խել վորիկ տղկի մը չնչառութիւնը . . . հաղի կը լսուի . . . : Սակէ զատ՝ շատ չորս կը գտնէի օղբ . . . լոյս չէի կրնար գտնել, միշտ առանց լոյսի կը ձգէին զիս . . . : Սպասեցի որ լուսնայ, և ջանացի կրցածիս շափ զանի սարցիւնի, բայց կը թուէր ինձ որ զաւակս հետզհետէ կը սուէր : Առանձին կըսէի : Այնչափ շատ ձիւն կը վազի, որ անշուշտ ցորսէն թմբերէ : Այգուն, զաւակս պատահանին մօտեցուցի . . . անոր նայեցայ . . . կարկամեր . . . ստուեր էր . . . : Բերանս բերնին փակուցի անոր շունչն զգաու համար . . . ձեռքս սրսին վրայ դրի . . . չէր զարնէր սիւսը . . . մտե՛ր էր . . . :

Եւ Լուիշ յորդ արատք թալեց :

— Բ՛Տ, նոյն պահուն— վրայ բերաւ նա — ներսի դիս այնտիսի բան մ'անցաւ որ հնար չէ նկարագրել : Կատու շփոթ կը լիւնէմ անկէ վերջն անցածը, իբր ելազ մ'. յուրահաստ լին, և ալուսի, կատու թին միահամոյն սաշարեր էին զիս, նա մանտուրդ ուղի ըրիւղով մը համակուեր էի : չէի վախնար որ Պ. Ֆելլբանը իղիէ զիս, այլ կը վախնայի որ երէ գտական մտած սեւնն իմ քովս՝ կամբաստանն զիս, որպէս թէ ես սպաննեցի. այն ասեն մտնուք մը միտն ո՛րէի, այս է ամենւն աչքէն պահել անոր մարմնը՝ այս կերպով իմ անուատութիւնս դարձնի կը մտք. հօրս բարձու թինէ զԲԵԺ կըրայի. Պ. Ֆելլբանի զէժիկողութէ կ'աւուրի. վանն զի այսպէս սրծելով՝ կրնայի առնէն հեռանալ, ուղիչն մօտ

մտնել և ընտանիքիս պիտոյքը հաթայթելու գործը շարունակել իմ վարձքովս . . . : Ավսո՛ս, պալան, ահա այս պստնար յորդուց զլսբան մը չեռատուանն, և զաւակս մարմնը ամբողջ սեւն սարճել : Անտարակոյս վաղը եմ, լոյս այն իմ ամբաստանաւ ալ, վշտաբեկ, զլի թէ ինչպէս ինչու մէջ չմտնեիք կի լէ ինչ վտանգնե, ու կրնայի հանդիսիլ թէ որ լուծու եկան էլէր . . . :

— Այո ի՛նչ տանջանք են . . . ինչ սանջանք— լուս Բօտոյ՞ :

— Վիշերը կը լուսնար— վրայ բերաւ Լուիշ — հաղի թէ քանի մը բողէ ունէի տան մարդիկը չաթիցած . . . : Աւելի չէալանուցայ, զաւակս կրցածիս շափ վաթթեցի, կամեցուի մը վաթթայ, սալսելին խորը դայի որ ծակ մը բանամ հողին մէջ և զաւակս լաւեմ, ւաւկան բողըր զիշեր ձիւն վազեր էր, գետնը շատ կալծէր : Այն ասեն մարմնը տեւակ մը նկղի իորը սահելի՛ ուր ձմեռը երկը մարդ չէր մտնէր. ծաղի սարապ անտիվ մը ձածլիցի, և իտոյս դարձայ, ոչ որ իմ գորս երէլս սետա : Այս բողըր լուծն բոս պարուն, շփոթ յիշատակն ունիմ : Կմ տարր թիւնս յիշե ոչ՝ գեռ չեմ կ'նար ըմբոնել թէ ինչպէս այս ամէն բանին լինու ոյժ ու արիւթիւն ունեցայ : Օ ամր իննին սիկին Աէլաէէն եկաւ ինձ հարցնելու թէ ինչու համար դեռ անկողնէն չեմ եւած : Լիւսնայ լէ շատ հիանդեմ, և աղաչեցի որ զիս թողու այն օրը ստիկու. միւս օրը ստիկն սլսի ել թամ, լսի, քանի որ Պ. Ֆելլբան զլս կը ձամբէր, ը ամէ ետքն ինչն եկա : — Պեր նայիմ որ շատ հիւանդ ես. այս է ահա քու յամատ թեանդ հլուսութիւն, — բաւ նա ինձ. թէ որ իմ երախտիկէս օղտա քուիլ տէրը հիւնի յարեբարոյ մարդերու մօտ անդադուած և անոնց ամէն խղի լուծ ինամըր վայելած պիտի բլուլիք : Բայց զարձեալ այդ ինչուիդ մէջ մարդասիրտար անինամ շալսի թողում քեզ. այս իլիսն Պէլանս ստըսօր դայ պիտի քեզ տեսելու : » Այս սպանա իբր լուս վալէս գող եայ : Պ. Ֆելլբանի լսլ թէ անիւս էր ա ջի օր իր առաջարկութիւնը մեծելու, թէ զայն կ'ընդունիմ, բայց անմիջապէս մեկնելու կարողութիւն չունենալով՝ քանի մ'օր ետքը նաբելանց տրանը պիտի ելթամ և թէ անօդուա է ստքսօր Աէլասանը կանչել

տալ: Իմ մտքս ժամանակ շահիլ էր. հաստատ որոշեր էի տունէն
 ելնել և միւս օրը հօրս գառնալ. կը յուսայի որ այս կերպով ամէն
 բան չիմանար: Այս խոստումիս վրայ Պ. Ֆէրրանի սիրտը հանդար-
 տեցաւ, դրեթէ մեծ բարեսիրութեան ցոյց տուաւ ինձ, և ստաջին
 անպանն էր որ իր կենաց մէջ զիս տիկին Սէրաֆէնի խնամոց յանձ-
 նեց: Բոլոր օրը մահազոյժ կակիծներու մէջ անցուցի, ամէն վայրկեան
 ահ ու դող մէջ էի որ գիտուածով զաւկիս մարմինը չդռնեն: Բան
 մը միայն կը փափարէի, այս էր որ ցուրտը դադրի, որպէս զի հո-
 ղը կակիցնալով՝ կարող ըլլամ բորելու...: Սկսաւ ձիւն դալ
 ... ասով յոյս առի...: Յորեկը պատկած մնացի: Երբ գիշեր ե-
 դաւ, սպասեցի որ ամէն մարդ քնանայ, բաւական ոյժ ունեցայ ել-
 նել, փայտարանն երթալ տապար մ'առնուլ, որպէս ձիւնապատ
 հողին մէջ ծակ մը բանամ...: Անհնարին ներութենէ հաքը՝ յա-
 ջողեցայ...: Այն ատեն զաւկիս մարմինն առի, անոր վրայ նորէն
 շատ մը լացի և կրցածիս չափ ծաղկի սնակին մէջ թաղեցի...: Մե-
 ռեւոց աղօթքը չզիտէի, և այր ձեր մ'ըսի: աղաչելով զԱստուած որ
 զաւակս իր արքայութեան արժանի ընէ...: Արձեցի թէ ուժէ պի-
 տի ընկնիմ՝ երբ հարկ եղաւ այն իմ շնորհ տեսակ մը գաղաղին վա-
 ռայ հող թափել...: Մայր մը... իր զաւակը կը թաղէ...: Աեր-
 ջապէս կարող եղայ...: Ո՛հ, ինչ արիւն քիրտ թափեցի, Աս-
 տուած իմ: Հողին վրայ ձիւն սփռեցի, որ նշան մը չտեսնուի...:
 Առանակը զիս լուսաւորեր էր: Երբ ամէն բան լրացաւ, չէի կարող
 այն տեղէն հեռանալ...: Խեղճ փոքրիկ զաւակս, ստունապատ հո-
 ղին մէջ... ձիւնին տակ...: Թէև մեռած էր... կարծէի թէ պի-
 տի մնի...: Աերջապէս սենեակս գարձայ... բուն տենդով մը
 պառկեցայ: Առտու Պ. Ֆէրրան մարդ զրկեր էր իմանալու համար
 թէ ինչպէս եմ. պատասխան տուի թէ աւելի աղէկ եմ, և թէ
 անտարակոյս միւս օրը դեղը երթալու պիտի կարենամ: Կոյն օրն
 ալ պառկած մնացի անկողինը, որպէս զի քիչ մ'ոյժ առնում...:
 Երեկոյեան դէմ ելայ խոհանոցն իջայ տաքնալու, միս մինակ մը-
 նացի այն տեղ ուշ ատեն: Պարտեղը դացի վերջին աղօթք մ'ը-
 նելու. սենեակս ելնելու միջոցին՝ երբեմն աշխատած դահլեճիս սան-

գողն զլուխը հանդիպեցայ Պ. ժէրմէնի. շատ դուհատ էր...: Եր-
 տապաւ ինձ ըսաւ, ձեռքս ծրար մը տալով: — «Ապն առտու կա-
 նուխ հայրդ ձեբբակալ պիտի ընեն հաղար երեք հարիւր ֆրանքի
 փոխանակադրի մը համար. կարող չէ սոյն գումարը վճարելու...
 ահաւասիկ քեզ ստակը... լուսնալուն պէս՝ շուտ անոր տունը վա-
 ղէ դնա...: Գեո. այսօր ճանչցայ Պ. Ֆէրրանը... անդամ մարդ
 մ'է... անոր դիմակը վար պիտի առնում...: Կա մանաւանդ մի
 ըսեր թէ այս գումարն իզնէ առիւր...:» — Եւ Պ. ժէրմէն ժամա-
 նակ անպամ չտուաւ ինձ շնորհակալութիւնս յայտնելու, այլ վա-
 ղելով վար իջաւ:

— Այս առտու — յորեկը Լուիլ — դեո Պ. Ֆէրրանի տունը
 մարդ մը քունէն չելած, Պ. ժէրմէնի տուած ստակովը հոս եկայ
 հայրս աղատելու համար. բայց այն գումարը բաւական չէր և ե-
 թէ վեհանախորէն մէջ չմտնէիր չպիտի կարենայի հայրս թեւակալ-
 ներուն ձեռքէն աղատել...: Հաւանական է որ Պ. Ֆէրրանի տու-
 նէն ելնելէս ետև՝ խոյս ելած... և այն աղէտարեք զիւսն ընելու
 նշաններ դուած են...: Աերջին ծառայութիւն մը կը ինդրեմ, պա-
 ըոն — բաւ Լուիլ իր գրպանէն ոսկելը ծրարն հանելով — այս
 գումարը Պ. ժէրմէնի ձեռքը հասցնելու շնորհ ընէիւր...: Խօսք
 սուեր էի անոր թէ Պ. Ֆէրրանի տունը գտնուիլը մարդու չպիտի
 ըսեմ, բայց որովհետև արդէն գիտէիք, կարծեմ թէ մասնաւ-
 չեղայ... Հիմակ, պարոն, նորէն կը կրկնեմ... Աստուծոյ սոջև
 որ զիս կը լսէ, պատմութեանս մէջ բաւ մը չըսի որ ճշմարիտ
 չըլլայ...: Իմ յանցանքս ալ թեթեւցնելու պատրուակ չփնտեցի,
 և...:

Բայց Լուիլ յանկարծ դադրելով՝ գոչեց ահաբեկ:
 — Պարոն, նայէ հայրս... տե՛ս... ի՛նչ ունի:
 Մօրէլ սոյն պատմութեան վերջին մասը այնպիսի մթին անտար-
 բերութեամբ մտիկ ըրեր էր որ Ռօտուֆ կարծեր էր թէ այս թըշ-
 ուտին տառապանքն են պատճառը...: Այս բուն, մօտալուս ցըն-
 ցումներէն ետև՝ Մօրէլ արատուրը ՚ի հարկէ պիտի ցամքէին, իր
 զգայնութիւնը պիտի բլթանար, և հետևապէս սրտմտելու գօրու-

Թիւնն ալ պիտի դադրէր... և ահա, այսպէս կը մտածէր Ռօստօֆ... բայց Ռօստօֆ կը սնուէր: Մարտու մօտ ջահի մը հետեւ հետէ երեքսն և վեասայր բոցին պէս, Բօրէի բանակաւոր թիւնն ա՛ որ արդէն սաստիկ սարսեր էր, սրահ մը երեքայ, իր խնայողութեան յիսին նայինքն ուր ուրեմն արձակից, և ապա կարծ... միջացաւ:

Ահնահասան իր շորս դին անցած ու խօսուած բաներուն բոբրովն անդրայ՝ քանի մը վայրկեւէ գեր խեցեր էր: Բէէն սրապղն միւս կը զմն էր գրուած յետանը՝ և իր ձեռքն ոչ անդամանդ և ոչ դործի տնէր, արհեստաւորն մտադիր և բազմազաղ՝ երևակայական գործիներով իր սովորական աշխատութիւնը կը կերպարանէր: Այս մինչև կատակութեան հետ իր լիզուն կերպով մը քմայր կը շփէր, որպէս զի յետանին հստակի շարժումներուն ձայնը հանէ:

— Բայց, պարոն — վրայ բերաւ Նոիլ հետազննէ երկխոյն աւելնալով — սե՛ս, նայէ անդամ մը հօշոտ երեսը:

Ապա արհեստաւորին մօտեւալով բտաւ անոր: — Հա՛յր իմ... հա՛յր իմ...:

Սօ էր նայեցաւ իր սղջկանն այն ի ի շփով, անբռն, տարբար, ցնդած ակնարկով մ՛որ յիմարներու յատկէ...: Առանց իր յիմարական գործը դադրեալ, արհեստաւորը մեղմիկ սրասախան արուստ անոջ և արտում ձայնով մը:

— Հաղար երեք հալիւր Փրանք նուարին սարբաւոր եմ... Նոիլի պեան գինն է... սէտք աշխատիլ, աշխատիլ, աշխատիլ: Ո՛հ, պիտի վճարեմ, վճարեմ, վճարեմ...:

— Էէ՛ր Աստուած, բայց, պարոն, մի՛նէ՛ կարեի բան է... ժիթէ՛ կարեի է որ այսպէս շալո նակէ... բոբրովն յիմար շէ, ինչ կ'սես — գո՛ւց Նոիլ ողորմազին ձայնով մը: — Անշուշտ հիւսիկ խեղճ գլխիւր կ'զայ... ժամանակաւոր խեղճորո թիւն մ'է...:

— Սօ է՛լ... բա՛նկամէ իմ — բտաւ անոր Ռօստօֆ — մենք հոս ենք...: Աղ՛կիլ հաս քո՛լի է, անմեղ է...:

— Հաղար երեք հալիւր Փրանք... Ըսաւ ակնահասան առանց Ռօստօֆին նայելու, և իր շինովի աշ

խատու թիւնն շարունակից:

— Հա՛յր իմ... — բտաւ անոր Նոիլ անոր ոտքն ընկնէ ու և բոնի անոր ձեռներն ի կնիւրուն մէջ սղջմելով — Ե՛ս եմ, Նոիլից: — Հաղար երեք հալիւր Փրանք...:

Արինից ակնահասար սղջկան բտուն զգուանքէն աշխատեալ ճիղ մը ընձ լով:

— Հաղար երեք հալիւր Փրանք... տա թէ ոչ — յարեց նա մեղմ ձայնով և իրր դաղանասէս խօսելով — ապա թէ ոչ... Նոիլ սխալի գրեալս ի...:

Աւ նորէն սխալ իր յետանը կեղծիօք դարձնել: Նոիլ ահա ելի ձայն մ'արձակից:

— Ելմա՛ր է — գո՛ւց նա — յիմա՛ր է... և ե՛ս... ե՛ս եմ առտոր սրածաւոր...: Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, թէ և յանցանք շունիմ... երբ էր գէշութիւն մը մնէս անցած էր... այն հիշէն է որ...:

— Աղէ՛, խեղճ աղ՛կի, մի՛ վհատիր — բտաւ Ռօստօֆ — յուսանք... այս յիմարութիւնը վաղանցուկ է անշուշտ: Հալիւր... շատ ստառապանք քաշից... պոչախ բաղմապասիկ վիշտը մարու կառուցիլ սէ վեր է... Պահ մ'իր խեղճ կերպ... անշուշտ քիչ ատենէն կ'զլատատայ:

— Բայց մայրս... հանխ... քոյրերս... երբայրեհրս... ինչ սխալի ըլան — գո՛ւց Նոիլ — ահա առիկ հօ էս և իրէ կը գրուիր ին... ո՛րեմն անօթն թեւէ, թշտաութեան և յուսահատութեան սխալ միտնիմ:

— Մի՛նէ՛ ես հոս շեմ... անհող կղեր լրե՛ց սէտք է զածը սխալի հողամ: Արեւայի՛ր, կրտսմ՝ քեզ: քու յայտարարութիւնդ մեծ յանցար ոչի մը սրատահար սխալի փութայրէ: անմեղ թիւնդ զբայ համալիցիր գին, այդ անմեղութիւնը սխալի շանչցուի, հընչակուի տարակցս չոնիմ:

— Ա՛հ, պարոն, ահա կը սեռնես... անստառութիւն, յիմարութիւն, մահ...: Ահա այն մաղոն սրածաւած շարիքը և բան մը շեն կարող ընել այն մարդուն դէմ... բան մը... Ա՛հ

այս գաղափարն իմ' արէտիցս չափը կը լնու . . . :

— Այդպէս մի' մտածեր, տաղը հակառակ գաղափարը թող օղջի՛նք թեղ զանոնք կրելու :

— Ի՞նչ բտել կուզես, պարոն :

— Այս վտասահութեամբ գ'նա՛, թէ հօրդ, թէ քու և թէ բոլոր ընտանեացդ վրէժը պիտի լուծուի :

— Մեր վրէժը ուրիշի լուծուի :

— Այո՛ . . . : Եւ ես կ'երգնում քեզ, ես — սրատասխանեց Ռօտովի հանդիսապէս — կ'երգնում որ իր ոճիրները հաստատուելէն ետե՛ այն մարդը չարաչար պիտի քուէ իր պանծառած անսրտու թիւնը, յիմարտ թիւնն ու մահը : Եթէ օրէնքներն անդօր են անօր դէմ, եթէ իր խորամանկութիւնն ու հարազատութիւնը կը հաւասարին իր ոճիրներուն, այն ատեն իր խորամանկութեան դէմ խորամանկութիւն, հարազատութեան դէմ հարազատութիւն, ոճիրներուն դէմ ոճիրներ պիտի գործածենք, բայց պիտի այնպէս վայելին իրեն անօրէնութիւններուն, ինչպէս որ անողբելի ձեռօք մեղապարտի մը տրուած տրգար և վրէժինդիր տանջանքը կը վայել վատ ու գողունի մարդաստանտ թեան :

— Ա՛հ, պարոն, Աստուած լէ բերնէդ : Են անձնական վրէժս չեմ ուղեր ալ լուծել, այլ իմ խելաղար հօրս . . . այլ իմ մեռելածին զաւկիս . . . :

Վերջը Մօրէլի յիմարտութիւնը փարատելու մտօք յետին ձիգ մ'ընելով Լուիզ նորէն պոսաց :

— Հայրդ իմ, մնաս բարե . . . : Բանա կը տանին զիս . . . ալ չե պիտի տեսնեմ քեզ, Լուիզդ է քեզ մնաս բարե ըսողը . . . : Հայր իմ . . . հայր իմ . . . հայր իմ . . . :

Այս աղէկէզ կոչումներուն ձայն մը չարտասխանեց : Մօրէլի աւեր հօլւոյն մէջ ո՛չինչ չհնչեց, ո՛չ ի՛նչ . . . իր սրտին հայրական լարերն՝ որ միշտ վերջը կը խորտակին, չթրթրացին . . . :

Չեղնայարկին գուռը բացուեցաւ :
Պաշտօնատարը ներս մտաւ :

— Իմ ժամերս համբուած են, պարոն — ըսաւ Ռօտովիին : — ցաւօք սրտի կը յայտնեմ քեզ որ անկարելի է ինձ թողուլ որ այս խօսակցութիւնը ուեղի ևս շարունակէք :

— Այս խօսակցութիւնը լմնցաւ, պարոն — սրատասխանեց գառնապէս Ռօտովի ակնահասար ցոյց տալով . — Լուիզ ուրիշ բան մը չունի ըսելու իր հօրը . . . հայրն ալ իր աղջկէն բան մը լսելու պէտք չունի . . . վասն զի խենդացաւ . . . :

— Տէ՛ր Աստուած . . . ես ալ այդ բանէն կ'երկնչի . . . : Ա՛հ, սոսկալի է : — դռչեց պաշտօնատարը :

Եւ գործաւորին մօտենալով աշխուժով մը՝ վայրկեան մը քրննէն էն ետե՛ համողութեամ այս աղէտալի իրողութիւնէ :

— Ա՛հ, պարոն — ըսաւ Ռօտովիին տրտմալի — արդէն սրտագին կը բաղձայի որ այս աղջկան անմեղութիւնը հաստատուի . . . : Բայց այսպիսի դժբաղդութիւնէ ո՛րեքը՝ բաւական չպիտի սեպեմ միայն բաղձալ . . . ո՛չ, ո՛չ, պիտի խօսիմ այս զգաստ, այս վշտաբեկ ընտանիքին վրայ, պիտի խօսիմ զինքը տառապող այս յետին սոսկալի հարուածին վրայ, և աներկիմա եղեր, դատաւորներն ամբաստանեալը անպարտ գանելու նոր գրդիւ մը պիտի ունենան . . . :

— Լա՛ւ, լա՛ւ, պարոն, — ըսաւ Ռօտովի — այս կերպ վախուշ լով չէ թէ լոկ պաշտօնդ՝ այլ նուիրական պարտաւորութիւն մը կատարած կը լլա . . . :

— Հաւ տա ինձ, պարոն, մեր պաշտօնն այնքան տաժանելի է՛ որ երջանկութիւն կ'զգանք երբ պարկեշտ և բարի անձերու հող տանելու առիթ մը գտնենք . . . :

— Խօսք ո՛ր ալ ունիմ, պարոն. Մօրէլեաց Լուիզին խոստովանութիւնները ակն յայտնի հաստատեցին ինձ իր անմեղութիւնը . . . : Կբրնաս բտել ինձ թէ ինչպէ՛ս երեւան ելաւ, կամ լաւ ևս, բերան ընկաւ իր կարծեցեալ յանցանքը :

— Այս առտու — ըսաւ պաշտօնատարը — Պ. Ֆէրրան նոտարին ծառայող տեսչուհի մը եկաւ ինձ յայտնելու թէ՛ երբ Լուիզ Մօրէլ, որուն եօթ ամիսուան յղե ըլլալը գիտէր, շտապաւ տունէն ելեր գացեր է, ինքը սոյն նորատի օրիորդին սենեակը ելեր՝ և գող-

այցի՛լ ծննդաբերո՛ւ թեան մը հետքը նշմարեր է. քանի մը խուզարկու՛մ թի՛ննէ, է ետքը՝ ձի նի՛ւրջայ նշանակուած բարի նշաններ սեւեւեւ լվմինչև սարսէկը լճէր և նուաճին սղու մը մայմինը չաւր Լն ։ Սոյն կն՛ան յայտարարո լեւէն էտքը՛ Վանդէ վողցը չալի . Պ . Ճար Աէրանը սևայ որ սաստիկ սրամներ էր այսպիսի դա թակդը թի ն մ իր սան մէջ սրասահետն ։ Պ.ժն-Ղուվէլ եկի զեյլին Լրէցի՛ն որուն դառու մտրդ զը՛հր էր , նոյն էս յայտնեց ինձ որ Վօբէլի գուտրն Լուիլ իր նեբկայո թեան խոսուվաներ էր յանցանքը՛ օր մ՛որ այս աթիւ իր ախոջը ներդրամտո թիւնն ու դո՛ւթը կը հայցէր . թէ սէս Պ . Աէրանի ծանր յորդորներ Լուիլին տալը սած է . դո՛ւ շակիւթով որ օբին մէկը ախի անունը աբասէ . դուշակո թիւն մը՛ որ դժբողոքաբար կիլանար ահա . յարեց ելէցը . Պ . Աէրանի սրամն թիւնն — չրայ բելաւ սաշս ծնատարն — այնքան լրա ալի եւեցա ինձ , որ անոր մանակից Լրայ ։ Ղօտարն բտա ինձ որ Լուիլ Կօէլ հօրը սո նը ապա Լն մը վիճառած պիտ իրայ ։ Աստի իս՛ոյն այս աղ իկայ . յանցանքն իւկան ղրա ղն՛ իրաւունք աւելմ՛ անմիջապէս յանցաւ որը ձ լբ աւալ Ըն իւր ։

Բօտո Ֆ ինք ինքը հալիւ դսւլց Պ . Աէրանի օրհորաւ լիսուք լսե ուն և պաշտօնատարին բտա ։

— Աեծ է քեղ շնորհակառ թիւնս . պարոն , բաբ սրտու թեանդ և Լուիլին տա իք պաշտօնանու թեանդ համար . թշուառ Մօլէն հիմակ յիմա անոցը ախի զը՛հմ , ն յուէս մայրն ու կիւր . . .

Նետոյ՛ խօսքը՛ Լուիլին ուղղե լվ որ միւտ իր հօրը մնա ծոնը դրած՛ յնդոնայն կաշի աւէր զանի չդաւառ լեւան լիլիլու , լբաւ ։

— Յանն աւ համ երո թեամէ , աղ իկս , առանց հայրդ դիւր կեռ մե՛նի . . . մի՛ խորատի եր սիրտը կս՛ծա ի հրածաբակն բաբեներ տառով . . . ։ Ան լիլթ Լուիլ իր վիճակն մրայ . լան մի շտի սակիսի ապահեան քո լնտանիքիդ . մայրդ խնամ լու և քոյրերդ ու եղայններդ հողառ համար կին մի ախի դաննը՛ քու բարի դրացուհի , օշխորդ Ա՛կա էլին հսկողա թեան ներքև ։ Իսկ հօրդ դառով՛ բան մը շախի խնայուի որպէս զի շուտ մը և կասարեալ

կերպով մ՛իւր բոյժը գանէ . . . ։ Արիու թիւն , հաւտա ինձ , պարկեշտ մարդիկ ստէպ դժբողոք թեանէ ծանր փորձանքներ կը կրեն իրաւ , սակայն այս կուիւներէն աւելի անարատ , զօրաւոր և պատկառելի կ'ե ընեն և կը յաղթանակեն . . . ։

Լուիլին ձերբախալու թեանէ երկու ժամ ետքը՛ Ռօտոլֆին հրամանին համեմատ՛ ակնահատն ու պառաւ խեղաղարը Պիսէդը տարուեցան Գաւթին ձեռօք . այն տեղ յատուկ սենեկի մը մէջ մանաւոր կերպով պիտի խնամուէին ։ Վօբէլ Գանբլ փողցի տուէն ելաւ անգիմազիբ՛ իբր անդղայ՛ ուր որ տարին գնաց , իր յիմարութիւնը , անուշ , անմիաս և տրամադին էր ։ Հանին անօթի էր . միս և հաց ցոյց տուին անոր , և այս հացին ու մսին ետեւէն գնաց ։ Ակնահատին գոհարները՛ որ կնկանը քոմի էին , նոյն օրը տիկին Մաթիէօին տրուեցան , զոր եկեր էր անկու ։ Գժբողոքէն Գօրդիլյար լրտեսեր և այս կնկան հետեւեր էր . այս ստահակն ծածուկ իմացիբ էր որ սուտ կարծուած քարերն մեծագին անդամանդներ են , երբ թեւակալներն դառով Վօբէլը ձերբախալ ընելու համար կը խօսակցէին . . . ։ Պրա-Ռուժին որդին ստուգեց որ միջնորդուհին Սէն-Տընի պուլվարը թիւ 11 տունը կը բնակի ։

Ռիկօլէդ մեծ զգուշութեամբ իմաց տուաւ Մատլէնին ակնահատին յիմարութիւնը և Լուիլին բանտարկութիւնը ։ Ի սկզբան Մատլէն շատ լացաւ , ողբաց . . . յուսահատական աղաղակներ արձակեց , ապա երբ իր ցաւերուն այս ստաջին յուզմունքն անցաւ , այս խեղճ տիկար , շարժուն արարածը միթիմարուեցաւ փոքր առ փոքր տեսնելով որ ինքն ու տղաքը հանգիստ կեսնը մը կը վարեն իրենց բարեբարին վեհանձնութեան շնորհիւր ։

ՎԵՐՁ ԵՐՐՈՐԳ ԳԱՅՈՐԻ



ՅԱՆԿ ԳՆՈՑ

Եջե

ՉԼԱԽ Ը.	ՆԱՄԱԿ.....	5
Բ.	ԴԱՐ ՈՒ ՓՈՍ ՃԱՄԲԱՆ.....	34
Գ.	ՔԼԷՄԱՆՍ Տ՝ԱՐՂԻԼ.....	40
Դ.	ԲՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ.....	88
Ե.	ԴԱՏԱՎՃԻՌ.....	113
Զ.	ՈՒԿՕԼԷԻ.....	133
Է.	ԴԱՆԲԼ.....	157
Ը.	ՉԵՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ.....	192



75

30-11-18

182

182	182
183	183
184	184
185	185
186	186
187	187
188	188



102

171
2 202

2469

2970

14 56

2013

